Էջմիածին



Ա

2000

ԾՁ ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե-Ն-Ա-Ր
2000

Հանրային գրադարան
Ֆունդամենտալ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

(31 դեկտեմբեր 1999 թ.)

Սիրելի ժողովուրդ հայոց.

Տարեմուտ է վերստին: Նոր՝ 2000 թվական մուտք ենք գործում՝ թեթևացած հրաժեշտ տալով 1999 թվականին, որ ամեն դրականով հանդերձ մեր պատմության մեջ մնալու է որպես մեծ փորձության ու ցավալի կորուստների տարի: Դեռ չեն ամոքվել մեր հոգիները ցավից ու տխրությունից Գարեգին Ա Հայոց Հայրապետի անժամանակ մահվան և Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի ու պետական բարձրաստիճան վեց պաշտոնյաների ողբերգական սպանության: Մտահոգ

նոր ամենքս: Հայրենիքում ներքաղաքական լարված վիճակը, տնտեսական և ընկերային կյանքի վճիռների ապատող դժվարին ու բարդ խնդիրները հուզում և խորապես անհանգստացնում են մեր ազգայնա գավակաց ամենուր: Սակայն լավատեսությամբ են համակված մեր հոգիները, քանզի տարեմուտը դարակազմիկ է և նշանավորված մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու 2000-ամյա տարեդարձով: Համայն քրիստոնյա աշխարհի հետ մենք ևս, սիրելի բարեպաշտ հայորդիք, ցնծությամբ ու սիրով տոնախմբելու ենք Ամենտոն ու Սուրբ Ծնունդը՝ հազարամյակի վերջին տարին հաջողություններով ու հաղթանակներով պսակելու աներկրա հավատով:

Քրիստոսով իմաստավորված կենաց ճանապարհը 2000 տարի անցել ենք՝ հայթահարելով բազում փորձություն ու դժվարություն. «Հաստատ քո կնգուսցի գբեզ»: Հեներեր վստահությամբ ստանձնել ենք ամենայն գրկանքներ վասն հավատի, վասն հայրենյաց: Այսօր վերահաստատված Հայոց նոր անկախությունը, Արցախի ազատության անօտարելի իրավունքը ձեռք ենք բերել ապահով, երջանիկ գալիքի ամենակարևոր գրավականներից մեկը: Մեր երկիրը զորացնելու, մեր կյանքը բարօր դարձնելու սրբազան պարտականության հանձնառությունը մղում է մեզ սիրով միարանության, խաղաղ, ստեղծագործ կյանքի, որպեսզի 3-րդ հազարամյակ մուտք գործենք վստահելի իրավունքով մեր տեղը հաստատած ժողովուրդների մեծ ընտանիքում:

Լավատես եմ որպես Հայոց Հայրապետ: Հավատում եմ մեր ժողովրդի ստեղծարար ուժին, հանճարեղ մտքին ու կատուցող բազկին, հպարտ եմ նրա կենսահաստատ ոգով, զոհաբերելու, համբերելու, հաղթահարելու և հաղթելու կամքով, լի եմ մխիթարությամբ, քանզի նեղությունների ու հոգսերի մեջ լցված ենք հույսով, և ամուր է գալիքի հանդեպ մեր հավատը՝ խարսխված աստվածային Սիրույն, որ ոչ երբեք անկանի:

Նոր տարվա շեմին, նոր հազարամյակի արշալույսին, երբ հրաժեշտ ենք տալիս մեր կյանքի որոշակի մի ժամանակահատվածի, ինքնաբերաբար հակվում ենք անդրադառնալու և գնահատելու անցածը, ապրված օրերի միջից ընտրելու անհրաժեշտը, արդյունավետը և մերժելու անտեղի վատնվածը, անօգտակարը:

20-րդ դարը մարդկային պատմության մեջ նշանավորվեց գիտական անսահմանութաց նվաճումներով: Մարդը նյութական աշխարհի ճանաչողության մեջ հաճախ մոռացավ Աստուծո գոյությունը, անտեսեց, որ անհրա-

ժեշտ է հավասարազոր և առավել ևս զորացնել հոգևոր աշխարհը իր կյանքի: Նոր դարը կարոտ է հոգևորով իմաստավորման, քրիստոնեական բարոյականի վերարժևորման, որպեսզի գիտության նվաճումները ծառայեն միայն բարիքի ստեղծմանը, մարդկային երջանկությանը: Քաղաքակրթությունը փակուղի է մտնում, երբ չենք տեսնում, որ արարչագո՛րծ է տիեզերքը, ուր ամենայնը շաղկապված է ներդաշնակորեն, ուր ամենայնը բարիք է ծնում, երբ մենք Աստծուց մեզ շնորհված կամքի ազատությամբ ընտրում ենք բարին, առաքինին, արդարն ու ճշմարիտը՝ Աստուծո կամքը:

Արդ, սիրելի զավակունք հայոց, զորացնենք քրիստոնեական մեր հավատքը՝ բարոյականության բյուրեղյա, զուլալ ակունքը ազգային-հասարակական մեր կյանքի, որպեսզի հավատավոր գործերով իրական դարձնենք Հայրենի մեր երկիրը շենացնելու և մեր ժողովրդի բարօր գալիքը կերտելու Հույսն ու Հավատը, որպեսզի Բարձրյալի օրհնությունը հանապազօր իջնի մեր հողին և ուղեկից լինի մեզ ամենուր՝ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի:

Տարեմուտի անդրանիկ Մեր աղոթքն ենք առաքում առ Տերն Ամենակալ, որ խաղաղ ու ապահով պահի աշխարհը համայն, Հայաստան և Արցախ Հայրենիքը մեր, պահպանի և իմաստությամբ առաջնորդի հայրենի իշխանությունները, մեր ժողովրդի բոլոր զավակաց պարգևի ապահովություն, ստեղծագործ կյանքի ձեռքբերումներ ու հաղթանակներ՝ Հայոց Եկեղեցու մշտական օրհնության ներքո: Թող աստվածապարգև Սերը թագավորի մեր հոգիներում, ընտանեկան բոլոր հարկերից ներս և շաղախը դառնա մեր ժողովրդի միասնության: Սիրով փոխըմբռնում, բարի կամեցողություն, եղբայրաբար համագործակցություն բոլոր ժողովուրդներին, որպեսզի «ողորմութիւն և ճշմարտութիւն հանդիպեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»:

Շնորհավոր Նոր տարի:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ, ԿԵՍԳԻՇԵՐԻՑ ՀԵՏՈ

(1 հունվարի 2000 թ.)

Անհուն ուրախություն և բերկրանք եմ ապրում այս պահին, երբ բոլորս միասին եկեղեցականաց մեր դասի հետ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միություն հետ համախումբ, հավաքվել ենք լուսեղեն այս կամարների, այս նվիրական հարկի տակ՝ Նոր տարվա շեմին մեր աղոթքն առ Աստված բարձրացնելու, առ Երկնավոր Հայրը մեր և հայցելու, որ կարին այդ լինի բարերար մեր ժողովրդի համար, որ այն օրհնարար լինի Հայոց աշխարհի համար: Առաջին տարին է, որ դրպես Հայրապետ Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Սեղանի առաջ, աղոթք եմ վերառաքում առ Տերն մեր և հավատում եմ, որ մեկամսյա ձեր աղոթքները, մեր հայցն ու խնդրվածքը կամար պիտի կապեն Նոր տարվա շեմին, որի միջով անցնող յուրաքանչյուր հայորդի պիտի սրբի, մաքրագործի իր զգացումները և, որպես բարի հատկություններով առլեցուն անձ, անհատ և Աստուծո արարած, պիտի մուտք գործի Նոր տարուց ներս՝ բարի զգացումներով շաղախելու հոգու և մտքի, սրտի և ձեռքի իր բոլոր գործերն ու արարքները, որոնք պիտի շենացնեն հայրենիքը մեր, որոնք պիտի զորացնեն և՛ Եկեղեցին Հայոց, և՛ համայն հայ ժողովուրդն ի Սփյուռս աշխարհի: Նոր տարվա առաջին այս աղոթքը թող թև առնի և մուտք գործի յուրաքանչյուր հայ օջախից ու ընտանիքից ներս՝ լույսով ու ջերմությամբ լեցնելու հայոց հարկերը, որպեսզի Տիրոջ ամեն ողորմությունը, Տիրոջ սերը և խաղաղությունը բնակություն հաստատեն՝ աղոթք, խաղաղություն և երջանկություն բերելով այդ հարկի տակ կայք և բնակություն հաստատած ժողովրդի գավակաց:

Մեր աղոթքն է, որ Տերն իմաստությամբ շնորհազարդի հայրենի մեր պետությունը, սիրով շաղախի հոգիները հայոց մեջ, ազատի մեզ ամեն տեսակ անպարկեշտությունից, քինախնդրությունից, չար ու վատ զգացումներից: Թող Աստուծո բարի հայացքը միշտ Հայոց աշխարհի վրա լինի՝ պահելով ու պահպանելով անվրդով ու ապահով, շեն ու պայծառ:

Եկեք բոլորս միասին Նոր տարվա այս առաջին ժամին սրտաբուխ մեր հայցը վերառաքենք առ Աստված և խնդրենք Ամենակալ Տիրոջից, որ կյանքի շավիղներում առաջնորդի մեր ընթացքը, որպեսզի մենք միշտ բարու մեջ քայլելով՝ գոհություն և փառք մատուցանենք Ամենակալ Աստծուն այժմ և հավիտյանս. ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԵՂԱՆԱՏՄԱՆԸ

(6 հունվարի 2000 թ.)

Ես ցանկանում եմ շնորհավորել ամենքիս՝ Քրիստոսի հրաշափառ Սուրբ Ծննդյան առիթով, որ ուրախությամբ ու բերկրանքով է լցրել ուրախանյուրիս հոգին այս պահին: Բայց, կարծում եմ, առանձնակի ուրախություն եմ ապրում՝ տեսնելով հավատքի վերազարթոնքը մեր ժողովրդի, տեսնելով այն հավատքի ամրությունը, որ մեր ժողովրդի գավակաց առաջնորդում է դեպի Մայր Աթոռ Միածնաւոր Սուրբ Տաճար: Ահա Նոր տարուց սկսյալ եթե եկեղեցու դռները մենք ամբողջ գիշեր բաց պահենք, վստահ եմ, որ հոսքը պիտի չդադարի: Մեր ժողովուրդը պետք ունի աղոթքի, պետք ունի հոգևորով իր կյանքն իմաստավորելու: Սուրբ Ծննդյան այս երեկո իմ աղոթքն ու մաղթանքն է, որ Տերը մեզ զորացնի մեր ծառայության, մեր առաքելության մեջ՝ կարողանալու կատարել մեր պարտքը Հայրենիքի, Եկեղեցու և ժողովրդի առջև փառք ու պատվով, որ մեր Եկեղեցիով և քրիստոնեական հավատքով, բազում փորձություններ ու արհավիրքներ վերապրած այս ժողովուրդը կարողանա շարունակել ապրել հույսով լի, հավատով լի՝ կերտելով իր վաղվա օրը դեպի հավիտենություն ձգվող:

Թող Աստված օրհնի այս Նոր տարին Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրհնությամբ, ջերմացնի մեզ ամենքիս և պարգևի առողջություն, ուժ, նոանդ՝ մեր աշխատանքով ու գործով մեր փառքը շարունակ երգելու նորածին մանկան, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի:

Աստուծո օրհնությունը ամենքիս: Բարի, ուրախ Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Գոհություն և փառք Քեզ, Տեր Ամենակալ, որ շնորհը պարգևեցիր ինձ՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, Միածնաէջ Հայոց Բեթղեհեմի մեջ, ի լրումն դարի և երկրորդ հազարամյակի, Քո Սուրբ Ծննդյան ավետաբերը և քարոզիչը լինելու հավատավոր իմ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի:

«Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն, զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» (Ղուկ. Բ 10):

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ.

2000 տարիներ առաջ հրեշտակաձայն այս ավետիսը առաջինը լսեցին Բեթղեհեմի պարզ հովիվները և շտապեցին գտնելու Փրկչին, տեսան «խանձարուրով փաթաթված և մսուրի մեջ դրված մանկանը... և ճանաչեցին նրան»:

Աշխարհը սպասում էր Փրկչին: Աշխարհը լի էր սպասումով: Հին աշխարհը բռնատիրության իր բարքերով, մարդկանց ու ժողովուրդներին օտարացնող, թշնամացնող հարաբերություններով ավելի ու ավելի էր կորցնում բարոյական իր արժեքն ու պատկերը և ճիրաններում մեղքի կապանքների ու հոգեկան տվայտանքների՝ սպասում էր Ավետաբերին ազատության, արդարության ու խաղաղության: Եվ Նա եկավ ի լրումն ժամանակի: Մարդասեր Աստված Արարչական Իր Միրով վերստին ընդառաջ ելավ տկարացած և անկյալ մարդուն՝ առաջնորդելու նրան դեպի հավիտենական կյանքի փրկարար ուղի. «Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զՈրդին իւր Միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք» (Ա Հովհ. Դ 9):

Հիսուս աշխարհ եկավ գերեվարված, աննշան մի երկրի փոքրիկ քաղաքում, ամենահամեստ ընտանիքում: Նա եկավ հռչակելու և հաստատելու, որ Աստուծո առաջ չկա խտրականություն, չկա մեծ և փոքր, զորեղ ու տկար,

հարուստ ու աղքատ: Նկավ բժշկելու, մխիթարելու, փրկելու խեղված հոգիներ, ձախողված կյանքեր, նկավ ճշմարտությունն ուսուցանելու, ազատելու մարդկային հոգին մեղքի կապանքներից և հարություն պարգևելու: Մուրի խոնարհ ծածկի տակ ծնունդ առած Արքան սիրով մուտք գործեց խրճիթներ, նվաճեց մարդկանց սրտերը, խաչով ու հարությամբ հաղթեց աշխարհին՝ ճշմարտելով բոլոր ժամանակների համար իր խոսքը. «Ահա պիտի կա ժամանակ և արդեն իսկ եկել է... բաժանվեցեք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺՁ 33): Արդարև, Նա չուներ հարստություն, գորք ու զենք, սակայն Սիրով էր Աստվածային հաղթեց աշխարհին:

Պատմության մեջ ակնթարթ է, կարճատև այն ժամանակահատվածը, որ Մարդացյալ Աստված՝ Հիսուս Քրիստոս, գործեց մարդկանց մեջ: Այդ ակնթարթը փոխեց ժամանակի ընթացքը՝ ամենուր հաստատելով առ Աստված Հավատքի վստահություն, Հույսի լավատեսություն, Սիրո ջերմություն, Սիրով՝ հաշտություն միմյանց և Աստուծո հետ: Եվ արդ, սիրելիներ, բաց է ճանապարհը դեպի Աստված, և մեզ է թողնված ընտրությունը:

Սիրելի բարեպաշտ, հավատավոր հայորդիք.

Վերստին կանգնած ենք Աստվածահայտնության հրաշքի առջև և երկուհազարերորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» երկնառաք մեծ ավետիսին: Մարդկային հոգիներում երկուհազարերորդ անգամ այս ավետիսը նորոգում է վեհախորհուրդ գիշերվա հիասքանչ պահը Բեթղեհեմի: Երկուհազարերորդ անգամ մեր հոգու աչքով հետևում ենք երկնքում պայծառ շողացող աստղի ընթացքին և լույսի արձակ շիթերի մեջ վերուվարող հրեշտակների հետ սաղմոսերգում. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14): Երկուհազարերորդ անգամ Մանուկ Հիսուսի սնարի առջև Արևելքի խորագետ մոգերի հետ «խոնարհեալ երկիւղիւ» երկրպագում, օրհնում և փառաբանում ենք Մարդացյալ Աստծուն՝ բերկրանոք սրտի, որ խոնարհ մսուրին փոխարինել են փառաշուք տաճարները, տոնական հրապարակները ու սրահները, մոգերին և հովիվներին՝ քրիստոնյա պետություններ ու ժողովուրդներ՝ առաջնորդ հովվապետներով, բազմահազար եկեղեցականներով, քրիստոնյա նախագահներով ու վարչապետներով: Փառք Քրիստոսի ամենազոր Ծննդյան, որ լուսապսակ գարդարում է ամեն տարեմուտ:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Քրիստոս ծնվեց, սակայն ոչ այլոտ, եթե ոչ՝ մարդկանց՝ մեր հոգիներում՝ Իր Ավետարանի կենարար խոսքով ազնվացնելու մարդկանց մտածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտության և բարու արժեքներով իմաստավորելու մարդկային կյանքը:

Բայց ո՞ւր է խաղաղարար Քրիստոս, երբ մարդկությունը հոշոտվում է պատերազմներում, ո՞ւր է կարեկից ու ողորմած Քրիստոս, երբ միլիոնավոր մարդկանց կոկորդն են սեղմում մուրացիկությունն ու սովը, ո՞ր է ազատարար Քրիստոս մարդու և ազգերի ազատ ապրելու իրավունքի աղաղակող ոտնահարումների կողքին: Ի վերջո, ո՞ւր է Քրիստոս ազգային-հասարակական մեր կյանքում, երբ հավատո՛ւմ ենք, որ Սիրո հաղթանակն է Քրիստոս. Աստուծո Սերն է առ մարդը, մարդու Սերը առ Աստված, մարդու Սերը առ իր նմանը: Արդ, ուրեմն չթերանանք եղբայրասիրության մեջ, խաղաղության փնտրումի ճանապարհին, չվարանենք միմյանց սպարելու, դժվարությունների մեջ համբերելու, հավատավոր գործերով ապրելու: Չուշանանք միաբանվելու, չպարտվենք հող հայրենին պահելու և շենացնելու, համազգային հրամայականներին պատասխաններ գտնելու, մեր նախնյաց ու մեր երազները իրական դարձնելու գործերում: Հոգու ողջ հանձնառությամբ ստանձնենք մեր ժողովրդի գալիքի պատասխանատվությունը՝ ժողովուրդների մեծ ընտանիքում հարատևելու հաստատուն կամքով:

Հավատո՛ւմ ենք, որ Երկնային մեր Վարդապետը հաղթեց Իր խոսքին համարժեք գործով: Հավատո՛ւմ ենք, որ իրական է Քրիստոսով Հարությունը: Հավատո՛ւմ ենք, ուրեմն ինչպե՞ս ուրանանք ինքներս մեզ, ժամանակավոր հոգսերից դրդված լքենք մեր Հայրենիքը, փոխենք մեր չափանիշներն ու արժեքները և վատնենք Աստծուց ու մեր նախնիներից մեզ վստահված ժառանգությունը:

Սիրելիներ.

Նոր հազարամյակի շեմին համայն քրիստոնյա աշխարհի հետ այսօր մենք ևս՝ Հայ Առաքելական Եկեղեցու զավակներս ի Հայաստան, ԼԱրցախ և ի Սփյուռս, կրողն ու ընդունողն ենք «մեծ ու սքանչելի» խորհրդի՝ Սուրբ Ծննդյան բերկրալուր ավետիսի՝ լի սպասումով խաղաղության, բարի կամեցողության, համերաշխության ու սիրով համագործակցության վերահաստատմանը աշխարհում: Թող Արդարության Արեգակի խավարացիր շողերը բացեն առավոտը նոր դարաշրջանի: Թող Սիրո Ավետաբերի օրհնության

մեջ և խաղաղության Իշխանի երեսփոխանության ներքո Երկիր մոլորակը շարունակի իր ոլորտը հավերժ:

Մարդազյալ Փրկչի հրաշափառ Հայտնությունը մշտապես խաղաղությունը է համակում հոգիները բազում փորձություններ ապրած մեր ժողովրդի գավակների: Արդարև, Տիրոջ 2000 թվականը դիմավորում ենք հույսով, բարի ակնկալիքներով, որոնց երաշխիքը հայրենի մեր հողում՝ Հայաստանում և Արցախում հաստատված խաղաղությունն է եան՝ որպես մեր ժողովրդի ուսցեող դժվարին փասնամյակի վաստակյալ ձեռքերում, մեր գոհաբերությունների անուրանալի արդասիք:

Այսօր Հովվապետիս հայցն է աո Աստված ու խնդրանքը, որ թանկ ձեռք բերված խաղաղությունը լինի աներկանելի, որ այն Բեթղեհեմի Լուսաստղի շողերով հաստատվի եան յուրաքանչյուր հայորդու կյանքում՝ բերելով հոգու անդորր, հաշտություն ու երջանկություն: Մեր աղոթքն ու մաղթանքն է եան, որ Աստվածահայտնության 2000 թվականը նշանավորվի Սիրով նվաճված հաղթանակներով և հոչակվի ու դառնա հաշտության և փոխադարձ վստահության տարի, որպեսզի մեր հոգիները լիարատվեն անցնող դարաշրջանի ողբերգություններից, նախորդ տարվա տագնապներից, ներկա կյանքի անարդարություններով ու դժվարություններով ամբարված դառնություններից ու անհանդուրժողությունից, որպեսզի ողորմածությունը, գթասրտությունը, արիությունն ու արդարամտությունը, ճշմարտության ոգին լինեն մեր կյանքի ուղեկիցները՝ օգնելով Հայրենի հողի վրա և Սփյուռքում նորոգելու հարանց մեր հավատքը, զորացնելու հայրենապաշտ մեր ոգին, շեն ու բարգավաճ դարձնելու անկախացյալ մեր Հայրենիքը, միաբանվելու համազգային իղձերի շուրջ՝ որպես մեկ Ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի՝ ի վկայություն և ի հաստատում, որ Աստվածահայտնությունը՝ Հիսուսի Սուրբ Ծնունդը, մշտապես իրական է մեր կյանքում:

«Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ.

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեզ և մեզ մեծ աւետիս»:

*

* *

Քրիստոսի Սուրբ Ծննդյան «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ավետիս-պատգամով ողջունում ենք ներկայությունը Հայաստանի

Հանրապետության մեծարգո նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ազգային ժողովի հարգարժան նախագահ Արմեն Խաչատրյանի, պատվարժան վարչապետ Արամ Սարգսյանի՝ հայցելով Երկնավոր մեր Տիրոջ իմաստությունը և Սուրբ Հոգու առաջնորդությունը բարձր և պատասխանատու իրենց առաքելության մեջ: Ողջունում ենք հայրենի պետական ավագանուն և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպաններին, օտարերկրյա կազմակերպությանց ներկայացուցիչներին:

Սուրբ Ծննդյան առիթով ի խորոց սրտի մեր աղոթքը և մաղթանքը առ Աստված բարձրացնելով, Ամենայն Հայոց Միածնաէջ Մայր Աթոռից եղբայրական սիրո ողջույն ենք հղում մեր Եկեղեցու նվիրապետության Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին: Հայրական օրհնությամբ ողջունում ենք Տիրախնամ մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին, թեմական և համայնքային վարչական մարմինների պատվարժան անդամներին, ուխտապահ եկեղեցականաց ողջ դասին և համայն մեր հավատացյալ ժողովրդին ի Սփյուռս աշխարհի:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին,
6 հունվարի 2000 թ.

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՆՈՐԻՆ ՍՐՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐ, ԲԱՑԻԿՆԵՐ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ
Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԷ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք
Նորին Սրբություն
ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք
Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻՅ Բ (Մոսկվա)

Անտիոքի և Համայն Արևելքի Ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՋԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս
Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք
Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏ (Բուխարեստ)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու
Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱՋԻՄ Դ (Դամասկոս)

Սերբիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՊԱՎԵԼ (Բելգրադ)

Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Նիկոզիա)

Տուրկուի և Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս
Նորին Գերաշնորհություն
ՋՈՆ ՎԻԿՍՏՐՈՄ

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք
Նորին Սրբություն
ՊԵՏՐՈՍ Է (Եգիպտոս)

Շվեյցարիայի Եկեղեցիների Միջօգնության Մարմնի
(EPER) քարտուղար
ՌՈՒԴՈԼՖ ՌԵՆՖԵՐ

*
* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Պատրիարք Հայոց Երուսաղեմի Նորին
Ամենապատվություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Պատրիարք Հայոց Կ. Պոլսի Նորին Ամենապատվություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սպամբուլ)

Թեմական առաջնորդներից և Թեմական խորհուրդներից ու համայնքներից:

Բացի հոգևոր պետերից, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

*
* *

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության նախագահ վսեմաշուք
ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի
նախագահ մեծահարգ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ
մեծահարգ
ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Սահմանադրական դատարանի նախագահ
մեծահարգ
ԳԱՅԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
նախագահ վսեմաշուք
ԱՐԿԱԴԻ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
վարչապետ մեծահարգ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական, համալսարանական անձնավորություններից, իրավագետներից և քաղաքաց գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից և հասարակական կազմակերպություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների Խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՆԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀՅՈՒՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 4 հունվարի 2000 թ.:

Հունվարի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հյուրն էին «Հայաստանի նոր անուններ» բարեգործական կազմակերպության պատանի երաժիշտները, որոնք իրենց գեղեցիկ կատարումներով եկել էին շնորհավորելու Վեհափառ Հայրապետի Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Գևորգյան հոգևոր ճեմարանի դահլիճում Վեհափառ Հայրապետը մեծ սիրով ունկնդրեց արդեն իսկ միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիրներ դարձած երաժիշտներին, որոնցից շատերին ծանոթ էր դեռևս առաջնորդության տարիներից:

«Այսօր, երբ հոգևորը և մշակութայինը ինչ-որ չափով դուրս են մղված մեր կյանքից, նման պահերի պարգևումը առանձնահատուկ բերկրանք է ու մխիթարություն»,- իր հայրապետական օրհնությունը հաղորդելով շնորհալի երաժիշտներին՝ ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով նրանց նոր դափնիներ ու նոր բարձունքներ:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև կազմակերպության նախագահ Սիլվա Մեքինյանին ու բոլոր մանկավարժներին, որոնք իրենց ազնիվ աշխատանքով մեծ բեմերի ճանապարհ են հարթում տաղանդավոր փոքրիկների համար:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հայաստանի Ազգային Գրադարան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 5 հունվարի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Դայնկին Ո Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամենորոր շնորհավորելու նպատակով հունվարի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռայ Ասանդը, որի դիվանագիտական առաքելության 100-ամյակը Հայաստանում լրացավ վերջերս:

Զրույցի ընթացքում դեսպանը կարևորեց տարբեր կրոնների և ժողովուրդների համագործակցությունն ու համակեցությունը: Նա նշեց, որ Հնդկաստանն այն երկրներից է, որտեղ իրապես համերաշխաբար գոյակցում են տարբեր կրոններ ու եկեղեցիներ: Դրանց թվում է նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որի ներկայությունը Հնդկաստանում դարերի պատմություն ունի:

Ողջունելով պրն. Ասանդի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին այսօր ևս կարևոր դեր ունի հնդկահայ կյանքի կազմակերպման գործում: Միաժամանակ իր գոհունակությունն արտահայտելով երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առիթով՝ Նորին Սրբությունը վստահեցրեց, որ Հայ Եկեղեցին ըստ ամենայնի իր ներդրումը կբերի հայ-հնդկական դարավոր բարեկամության ամրապնդման գործին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 6 հունվարի 2000 թ.:

Հունվարի 5-ին, երեկոյան ժամը 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ճրագալույցի արարողությամբ սկսվեց Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը: Մատուցվեց Սուրբ Պատարագ: Տոնի խորհրդին հաղորդակցվելու նպատակով Մայր Տաճար էին եկել բազմահազար հավատացյալներ:

Հունվարի 6-ին, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամն ուղղեց բոլոր ներկաներին և համայն հայ ժողովրդին:

«Վերստին կանգնած ենք Աստվածահայտնության հրաշքի առջև և երկուհազարերորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» երկնառաք մեծ ավետիսին: Քրիստոս ծնվեց, սակայն ոչ այլուր, եթե ոչ մարդկանց՝ մեր հոգիներում, Իր Ավետարանի կենարար խոսքով ազնվացնելու մարդկանց մտածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտության և բարու արժեքներով իմաստավորելու մարդկային կյանքը»:

«Արդարև, Տիրոջ 2000 թվականը դիմավորում ենք հույսով, բարի ակնկալիքներով, որոնց երաշխիքը հայրենի մեր հողում Հայաստանում և Արցախում հաստատված խաղաղությունն է նաև որպես մեր ժողովրդի անցնող դժվարին փասնամյակի վաստակյալ ձեռքբերում, մեր զոհաբերությունների անուրանալի արգասիք»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր աղոթքը հղելով առ Աստված, որպեսզի անբեկանելի դառնա ձեռք բերված խաղաղությունը: Նորին Սրբությունը հորդորեց չթերանալ եղբայրասիրության մեջ, սատարել միմյանց, լինել միաբան և պահել ու շենացնել հող հայրենին՝ ժողովուրդների մեծ ընտանիքում հարատևելու հաստատուն կամքով:

Հավարտ Սուրբ Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն, որը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում ավանդա-

բար գնալի է ունենում Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնակատարության օրը՝ իրեն Քրիստոսի Մկրտության հիշատակություն:

Սուրբ Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Բաբայանը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Արամ Սարգսյանը, Ազգային Ժողովի պատգամավորները, կառավարության անդամները, նախարարները, Հայաստանում իավատարմագրված օտարերկրյա դիվանագետները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հայաստանում միջազգային, բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչները, բարձրաստիճան պաշտոնյաները, հյուրերը:

Սրբազան Պատարագի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցած պաշտոնական ընդունելության և հյուրասիրության ընթացքում Վեհափառ Հայրապետին Սուրբ Ծննդյան շնորհավորանքներ հայտնեցին բոլոր հրավիրյալները:

Սուրբ Պատարագի ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստատեսությամբ:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՅՔԼ ԼԵՄՈՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 13 հունվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը՝ անձամբ շնորհավորելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Ծննդյան տոնի առիթով և բարի ճանապարհ մաղթելու Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղեմ կատարելիք ուխտագնացությունից առաջ:

Հանդիպման ընթացքում ԱՄՆ դեսպանն անդրադարձավ Հայաստանի ներքաղաքական և տնտեսական իրավիճակին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ տարվող գործընթացներին:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնելով դեսպանին այցելության համար, ընդգծեց երկու երկրների համագործակցության կարևորությունը: Ի դեմս պրն. Լեմոնի, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայաստանում իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնող օտարերկրյա դեսպանների սրտացավ ու բարի մոտեցումը, որ ցուցաբերեցին Հայաստանի համար դժվարին պահին՝ աջակցելով երկրի կայունության պահպանման գործին:

Հայ ժողովրդի իմաստնության հանդեպ ունեցած հավատքով ու համոզվածությամբ, Նորին Սրբությունն իր վստահությունը հայտնեց երկրի հետագա կայունության պահպանման և ղարաբաղյան խնդրի բարեհաջող հանգուցալուծման առնչությամբ: Իր հերթին պրն. Լեմոնը կարևորեց Հայաստանի և հայ ժողովրդի պատմական դերակատարությունը տարածաշրջանում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՄԵԿՆԻ ՀՈՐԴԱՆԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 14 հունվարի 2000 թ.:

Այսօր, երեկոյան ժամը 9.15-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից կմեկնի Հորդանան, որտեղից սկսում է իր ուխտագնացությունը Տերունական Սրբավայրեր:

Ամենափառ Հայրապետի շքախմբի կազմում են Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպս. Զոլոյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Արրահամ եպս. Մկրտչյանը, Տ. Արշակ արդ. Խաչատրյանը՝ իրեն գահակալանակիր, և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Արշավիր Գարուճյանը:

Նորին Սրբությունը Մայր Աթոռ է վերադառնալու հունվարի 25-ին:

* * *

Հայրապետական տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ընթացիկ գործերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացակայության շրջանում կվարի Վանական խորհուրդը:

ՄԱՄԼԻ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵՐ ՈՒԽՏԸ ՆՈՐՈԳԱԾ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐԵԼՈՒ ԵՐԿՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 25 հունվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով ուխտագնացությունը Տերունական Սրբավայրեր, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Երեանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանության անդամներ:

Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, Վեհափառ Հայրապետի վերադարձը ողջունեց Մայր Տաճարի լուսարարապետ, Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

«Առաջին Մեր ուղևորությունը արտասահման, որ եղավ ուխտագնացություն Սուրբ Երկիր, Տերունական Սուրբ վայրեր, բարեհաջող, խանդավառող ու գոտեպնդող ընթացք ունեցավ, և այսօր գոհունակ սրտով մեր աղոթքն ենք հղում առ Աստված՝ մեր Եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր նվիրապետական Աթոռների պայծառացման և զորացման համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ այցելության մասին իր տպավորությունները կիսելով ներկաների հետ:

Ուխտագնացության ընթացքում Վեհափառ Հայրապետը եղավ Հորդանանում և Երուսաղեմում, այցելեց Տերունական բոլոր սրբավայրերը, Երուսաղեմում Հուլյան գոմարով եռեղիսապետրեց Սուրբ Ծննդյան արարողություններին, որին ներկա գտնվեց նաև ՀՀ նախագահը:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցավ նաև մի շարք պաշտոնական և կոմունիկե հանդիպումներ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդիպելու և Հայրապետական պատգամն ունկնդրելու գանազան առիթներ ունեցան հայ համայնքն ու տարբեր երկրներից ժամանած հայ ուխտավորները:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 29 հունվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընկերակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, իր առաջին պաշտոնական այցելությունը փվեց Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհուրդ:

Կրոնի գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանի հետ հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց խորհրդի գործունեությանը: Նորին Սրբությունը հորդորեց զարգացնել Եկեղեցի-պետություն համագործակցության այս օղակը և առավել հաճախակի դարձնել նմանատիպ հանդիպումները նաև թեմական առաջնորդների հետ:

Իբրև անդրանիկ այցելության հիշատակ, Վեհափառ Հայրապետը պրն. Մկրտչյանին նվիրեց հայկական մանրանկարչությամբ զարդարված խեցե մի ափսե:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 29 հունվարի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այսօր ընդունեց Եվրախորհրդի գլխավոր և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությանը:

«Ընդունելով Հայ Եկեղեցու դերը Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում մենք ցանկացանք լինել նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում»,- Վեհափառ Հայրապետին ներկայացնելով պատվիրակության այցի նպատակը՝ ասաց կոնգրեսի ներկայացուցիչ Կլոդ Կառագրանդը:

Պրն. Կասագրանդը, նշելով Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությանն օժանդակելու իրենց պատրաստակամությունը, դրվատանքով խոսեց ժողովրդավարացման ճանապարհին Հայաստանում արձանագրված առաջընթացի մասին, հետաքրքրվեց այս ասպարեզում Հայ Եկեղեցու դերակատարությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Եվրախորհրդի ներկայացուցիչների այցը հայոց հոգևոր կենտրոն, բարձր գնահատեց նրանց աշխատանքը Հայաստանում:

«Հավատում ենք, որ եթե Եկեղեցին մտնի ժողովրդի առօրյա կյանքի մեջ, դառնա քրիստոնեական բարոյականի կրողը, ապա ոչ միայն Հայաստանում, այլև ողջ մարդկության կյանքում ցավն ու կսկիծը նվազ կլինեն»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ կարևորելով Հայ Եկեղեցու առաքելությունը երկրի ժողովրդավարացման ասպարեզում: Այս առնչությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Եկեղեցի-պետություն համագործակցությանը՝ նշելով սակայն, որ այդ համագործակցությունն առավել գործնական ու օգտակար կարող է դառնալ անհրաժեշտ իրավական դաշտի ամրագրմամբ:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

(14 հունվարի 2000 թ.)

Սիրելի հոգևոր եղբայրներ, սիրելի սաներ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Սեղանի առջև, ուխտս կատարած ահա Տիրոջ կամոք մեկնում եմ Սուրբ Երկիր՝ նախագահելու Սուրբ Ծննդյան արարողությունները, որ տոնախմբվելու են հին տոմարով հունվար 18 և 19-ին: Մեկնում եմ հրավերքով Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի: Գոհություն եմ վերառաքում առ Աստված, որ հայրապետական մեր առաջին ուղևորությունը ուխտագնացության ճամփորդություն է ի Սուրբ Երկիր, ի մասնավորի՝ դարակազմիկ 2000 թվականին և մեր Եկեղեցու 1700-ամյակի նախաշեմին: Այնտեղ Սուրբ Ծննդյան տոնական արարողություններին մասնակցություն են բերելու ՀՀ նախագահը, Պոլսո Պատրիարքը, ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, մեր Եկեղեցու բարձաստիճան հոգևորականներ և մեծ թվով հավատացյալներ Միացյալ Նահանգներից, Պոլսից և աշխարհի տարբեր երկրներից: Մեկնում եմ հանգիստ սրտով, մեկնում եմ հավատքով, որ Աստուծո բարի հայացքի տակ մեր ժողովուրդն այստեղ՝ Մայր Հայրենիքում պիտի ապրի անվրդով ու խաղաղ: Մեկնում եմ՝ հոգուս մեջ ծրարած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, ձեր աղոթքները, մեր ժողովրդի դարավոր իղձերն ու երազները դնելու համար Տիրոջ Սուրբ Սեղանի առջև և հայցելու, որ Աստված ունկնդիր լինի Հայրապետի մեր խնդրանքին և պարգևի ժողովրդին հայոց երջանիկ, բարօր, ապահով ու անվրդով կյանք: Մեր աղոթքը պիտի լինի Սուրբ Ծննդյան այրում, Տիրոջ Սուրբ Գերեզմանի առջև, որպեսզի Տերն անսասան պահի Հայրապետությունը հայոց, Հայ Եկեղեցու նվիրապետության Աթոռները, զինվորյալ միաբանությամբ մեր ժողովրդին ի Հայաստան, ԻԱրցախ և ի Սփյուռս և Հանրապետությունը Հայաստան և Արցախ աշխարհների:

Մեր աղոթքը պիտի լինի նաև, որ Աստված անշեղ պահի մեր ընթացքը որպես Եկեղեցի, որպես քրիստոնյա ժողովուրդ 17(X) տարիների սրբազան իր ժառանգությունների ու ավանդության ծիրի մեջ: Թող Աստված սիրո և միասնության մեջ պահի նաև մեր Սուրբ Աթոռը, ձեզ ամենքիդ՝ կատարելու ձեր ծառայությունը՝ ի պայծառության և ի շինություն մեր Եկեղեցու, հուրախություն մեր բարեպաշտ ժողովրդի:

Մնացեք խաղաղությամբ: Ձեր աղոթքներում առավոտյան և երեկոյան հիշեցեք նաև ինձ, ես էլ իմ աղոթքներն առ Աստված վերառաքելիս՝ աղոթելու եմ ձեզ համար, մեր Եկեղեցու համար: Թող Աստված օրհնի մեզ ամենքիս և մեր ընթացքն առաջնորդի բարի ուղիով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

ՄԵԿՆՈՒՄ

14 հունվարի 2000 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ դեպի Տերունական Սրբավայրեր ուխտագնացությունը սկսվեց Մայր Տաճարի Իջման Սեղանից, ուր տեղի ունեցավ կանոնական աղոթք. համախմբվել էին ՀՀ բոլոր թեմերի առաջնորդները, ողջ միաբանությունը, Ճեմարանի սաները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալներ՝ բարի երթ մաղթելու իրենց հոգևոր Հորը, ուխտի իրենց բաժին մասունքը հանձնելու Հայոց Հայրապետին: Բոլորի անունից բարի մաղթանքներ կատարեց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: Նախքան մեկնելը Մայր Աթոռից, Վեհափառը գոհություն հայտնեց Աստծուն, որ իր առաջին ուղևորությունը ուխտագնացության ճամփորդություն է. «Մեկնում եմ խաղաղ սրտով, հավատքով, որ Աստծու բարի հայացքի տակ մեր ժողովուրդն այստեղ՝ Մայր Հայրենիքում, պիտի ապրի խաղաղ ու անվրդով, մեկնում եմ իմ հոգու մեջ ծրարած միաբանության աղոթքը, մեր ժողովրդի դարավոր իղձերն ու երազանքները դնելու Տիրոջ Սուրբ Սեղանին»:

Մեկնումից առաջ «Զվարթնոց» օդանավակայանում, ուր եկել էին պաշտոնատար անձինք, Վեհափառ Հայրապետը ներկա թղթակիցներին հայտնեց իր ուրախությունը, որ ՀՀ նախագահի և հազարավոր հայորդիների հետ պիտի լինի Տիրոջ Սրբավայրերում միասին աղոթելու մեր ժողովրդի և աշխարհի խաղաղության համար:

Երեկոյան ժամը 21.15-ին Վեհափառն իր շքախմբով մեկնեց Դուբայ, Հյուսիսային էմիրություններ: Վեհափառ Հայրապետին ուղեկցող պատվիրակության մաս էին կազմում Արարատյան Հայրապետական թեմի

առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Գուգարքի թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զույջյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Արբահամ եպս. Մկրտչյանը, վավագանակիր Տ. Աբրահամ արեղա Խաչատրյանը և Մայր Աթոռի գեղեցկարվեստական բաժնի տնօրեն Արշավիր Գարուճյանը:

ՎԵՀԱՓԱՌԸ ՀԱՅԱՍԻԱՆՅԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

15 հունվարի 2000 թ.

Վեհափառ Հայրապետի ուխտագնացության թեն մի քանի ժամվա, բայց գողտրիկ հանգրվան պետք է համարել Շարժան, որը վստահաբար անջնջելի ալիքի մնա գաղութի պատմության մեջ: Արդարև, ուշ գիշերին թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Սարգիսյանն ու Ազգային վարչության անդամներն օդանավակայանի պատվո սրահից Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հոծ բազմությամբ լի եկեղեցու մուտքին Վեհափառն օրհնեց աղն ու հացը և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցու ատյան, ուր գոհաբանական աղոթք կարդաց: Սեպուհ Սրբազանը հանուն Քուվեյթի և Արաբական Ծոցի թեմական ժողովի, Ազգային վարչության և հավատացյալների՝ ուրախություն և երախտագիտություն հայտնեց հայրապետական այս բացառիկ այցի համար: Նա աստվածային օրհնության նշան որակեց դա և գաղութը համարեց բախտավոր, «որուն ավելի մեծ նվեր չէի կրնար տալ»,- ասաց Սրբազանը:

Այնուհետև հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի՝ նա բարի գալուստ մաղթեց և հիշեց Վեհափառ Հայրապետի բառերը. «Վեհափառ, Ձեր տան մեջ, Ձեր ժողովրդին հետ զգացեք»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց այս զգացումների համար և ասաց. «Այս այցը ունի ուխտավորության իմաստ և նշանակություն: Գոհություն Աստուծո, որ այս ուխտագնացության ճանապարհը զարդարվում է գեղեցիկ, աստվածապարգև շնորհքով, աղոթքով անցնելու հայոց եկեղեցիներում մեր հավատավոր ժողովրդի հետ, միասին աղոթելու

տարբեր քաղաքներում, մինչև մեր Տիրոջ Ծննդյան վայրը, մինչև Բեթղեհեմի այրը»:

Վեհափառն իր գնահատանքն ու ուրախությունը հայտնեց՝ տեսնելով «պայծառ, բարեշեն այս ժպտացող եկեղեցին, տեսնելով այս եկեղեցու կամարների տակ ձեր դեմքերը: Ձեր այս բազմությունը, տարօրինակ կերպով ինձ այնքան ծանոթ է և այնքան հարազատ: Այս զգացումը փոխանցվում է այն պատճառով, որ այսպես ջերմորեն ընդունեցիք ձեր Հայրապետին»:

Վեհափառն իր խոսքը եզրափակեց՝ եղբայրական ջերմ ու անկեղծ ողջույններ հղելով Արամ Ա Կաթողիկոսին և իր բացառիկ գնահատանքը արտահայտելով Մեծուն Սրբազանին: Վեհափառն իր խոսքի ավարտից հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն նվիրեց Սուրբ Էջմիածնից բերված խաչքար, որը տեղ կգտնի եկեղեցու մեջ:

Այնուհետև Վեհափառն առաջնորդվեց եկեղեցուն կից Օհաննեսյան միջոցյա վարժարանի հանդիսասրահ, ուր տեղի ունեցավ սրտաբաց զրույց և Աջահամբույր:

Վաղ առավոտյան Վեհափառ Հայրապետը երաժեշտ տալով առաջնորդ Սրբազանին և Ազգային վարչության անդամներին՝ իր շքախմբով մեկնեց Ամման, Հորդանան:

ԺԱՄԱՆՈՒՄ ԱՄՄԱՆ

Առավոտյան ժամը 9.10-ին Վեհափառը ժամանեց Ամմանի Քուին Ալիա օդանավակայան: Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Հորդանանի հայոց առաջնորդ Տ. Վահան եպս. Թուփալյանը, Հորդանանի զբոսաշրջիկության նախարար պրն. Աբլ Բիլթաժին, որն ընկերակցելու է Վեհափառին իր՝ Հորդանան կեցության ամբողջ շրջանին, ԱԳՆ վարչակազմի տնօրեն պրն. Արեֆ Հալասեն, թեմի Ազգային խորհրդի անդամները, ՀՄԸՄ-ի, ՀՕՄ-ի և ԱՄՄ-ի ատենապետները և պաշտոնատար այլ անձինք:

Զրույցի առաջին իսկ րոպեին նախարարը Վեհափառին իր ցավակցությունները հայտնեց հոկտեմբերի 27-ին ՀՀ պետական այրերի սպանության առիթով: Ապա զրույց ծավալվեց քրիստոնյա-իսլամ ժողովուրդների համա-

կեցության, Միջին Արևելքի փարածաշրջանի կացության և ՀՀ-ում վերջին իրադարձությունների շուրջ: Վեհափառի համար փրամադրված թագավորական ավտոշարասյունն ուղղվեց դեպի Սուրբ Թադեոս եկեղեցի, ուր Թորգոմ Պատրիարքը Վեհափառին ողջունելուց հետո, նրան հրավիրեց իր օթևանության խոսքն ասելու ներկա հավատացյալներին: Վեհափառը փոխադրություն հայտնեց Աստուծո, որ իր առաջին հայրապետական այցելություններ Հայրենիքից դուրս ուխտագնացություն է Սուրբ Երկիր՝ Երուսաղեմ, որի համար հատուկ շնորհակալություն հայտնեց Պատրիարք Սրբազանին. «Ես Երուսաղեմ եմ գնում՝ ինձ հետ բերելով մեր ժողովրդի աղոթքը, մեր ժողովրդի բարի զգացումները, հայցը և մաղթանքը առ Աստված, որպեսզի Տիրոջ Ծննդյան Սուրբ Այրի մեջ հայցենք մշանուշ Հիսուսից պարգևելու աշխարհին խաղաղություն, բոլոր ժողովուրդներին՝ Աստուծո ողորմածություն, Աստուծո սերը և գորակցությունը»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՉԲԱՇՅԱՆ-ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վեհափառին, իր ժամանման առաջին իսկ վայրկյանից, հոգեկից պահ շնորհեցին Յուզբաշյան-Կյուլպենկյան վարժարանի մանկապարտեզի և նախակրթարանի սաներն իրենց՝ Ծննդյան, ազգային, հոգևոր երգերով, ասմունքներով և մաղթանքներով, որոնց մաքուր փուչջը զեղեցիկ նվեր էր Վեհափառի համար:

Գեղարվեստական հայտագրի ավարտին առաջնորդ Սրբազանը, դպրոցի 50-ամյա առաքելությունը հայոց լեզվի, Հայ Եկեղեցու ավանդույթների պաշտպան ներկայացնելուց հետո, Վեհափառ Հայրապետին հրավիրեց օրհնելու այս փոքրիկներին: Վեհափառն իր մասնավոր խոսքն ուղղեց աշակերտներին, բացատրեց նրանց, որ իրենց ձիրքերը և ազնիվ ոգին դրսևորեն համարձակորեն, հայրենասիրական մտոմով. «Այսօր երկինքը երկրին է միացած, և մեր հայրերի հոգիները բերկրանքով են լցված: Սիրելի բալիկներ, արտասանեցիք Վարդանի անունը, Մեսրոպ Մաշտոցի անունը, Ղևոնդ Երեցի անունը և այլ մեծ հայորդիների անուններ: Կուզեմ ասել, որ այդ մեծերը ծնվել են մեր պատմության մեջ, կերտվել, մեր ժողովրդի մեջ դերակատարություն ունեցել շնորհիվ այն սիրույն, որ նրանք տածել են

մանուկների նկատմամբ: Ձեր սերն է նրանց մեջ ոգի, կամք և պանծալի անուններ դարձրել»: Վեհափառը բարձր գնահատեց ավելի քան հիսուն տարի այս հարկի ներքո կատարվող անգնահատելի, նվիրական աշխատանքի սպասարկուներին:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառը հարցազրույց տվեց Հորդանանի պետական հեռուստարնկերությանն իր այցի նպատակի շուրջ և այս առիթով իր գնահատանքը հայտնեց Հորդանանի թագավորին, կառավարությանը և ժողովրդին՝ ցանկանալով բարօրություն և հարաճուն զարգացում:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կեսօրին Վեհափառը ճաշի հյուրն էր գբոսաշրջիկության նախարար Աբլ Բիլթաժիի, որն, ի՝ պատիվ Վեհափառ Հայրապետի, հրավիրել էր նաև եկեղեցական ներկայացուցիչների. հունաց պատրիարքարանից՝ Մեսրոպոլիտ Կոստանդինին և Սիլվեստրոս արքեպիսկոպոսին, լատիններից՝ Սալիմ Սայեղին, Վատիկանի ներկայացուցիչ Ռաուֆ Նաժժարին: Նախարարը բարի գալուստ ցանկացավ Վեհափառին, խոսեց երեք միաստվածյան կրոնների համակեցության մասին և կոչ արեց Վեհափառին՝ լինել խաղաղության և համակեցության պատգամաբերը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան, Մարիոթ հյուրանոցի ընդունելությունների դահլիճում տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի հանդիպումը գաղութի զավակների հետ: Եկել էին տարեցներ, երիտասարդներ և փոքրիկներ՝ իրենց ծնողների հետ, որոնք ցանկություն ունեին լսելու Հայաստանի, Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի մասին: Նախ խոսք առավ Ազգային խորհրդի անդամ Ներսես Ներսեսյանը, ապա՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքը, որ հիշեց Ցեղասպանությունից ճողոպրած այն սերնդին, որ հաստատվեց այս գեղեցիկ հողի վրա և մեր ժողովրդին առիթ տվեց բարեգործ դառնալու: «Հորդանանի կառավարական պաշտոնյաներուն դրական վերաբերմունքը մեր նկատ-

մամբ ոչ միայն ուրախություն է, այլև վկայություն, որ, իբրև հայ ազգի ներկայացուցիչներ, միշտ լավագույնը ցույց պիտի տանք այն երկրին, որ կապրինք: Վեհափառը, այս առաջին այցելությունը, որ կուտա, Հորդանանեն սկսելով Երուսաղեմ ուխտի, այս վկայություններով իրեն պիտի տա պատկերը մեր ժողովուրդի մասին և ոտախանա: Մենք պիտի շարունակենք այնպես, որ մեր անունին բարի ածական տրվի, հավատարիմ ածական տրվի, վստահելի և ցարծունյա ածական տրվի»:

Պատրիարքն այնուհետև հրավիրեց Վեհափառին իր պատգամը փոխանցելու ներկա ժողովրդին: Վեհափառ Հայրապետը գոհություն հայտնեց Աստուծո՝ այս բացառիկ պատեհության համար: Նա իր համակրանքը հայտնեց Թորգոմ Պատրիարքի նկատմամբ, որի մեջ տեսել է հշմարիտ եկեղեցականը, օրինապահ անձը: Նա անդրադարձավ ի մասնավորի Հորդանանի մեր ժողովրդի բարեմասնություններին, որը հարատևում է պահպանելով իր ժառանգությանը և մեր ավանդությունները: «Հավատով ենք լցված,- ասաց նա,- որ մեր ժողովրդի գավակունք Հայաստանում թե Արցախում, 10-ամյա տարիների ընթացքում անհուն դժվարությունների գնով կերտեցին անվախ մեր Հայրենիքը, հաստատեցին ազատ ապրելու կամքն ու իրավունքը»: Վեհափառը աղոթք առաքեց առ Աստված՝ աշխարհի և Միջին Արևելքի խաղաղության հաստատման համար, Հորդանանի թագավորի արնշատության համար: Վեհափառը եզրափակեց. «Մենք Հայրապետ ենք եղել ոչ թե Մեր ուժերին ապավինելով, ոչ թե նկատի առնելով Մեր կարողությունները, այլ մեր ժողովրդի սերը հանդեպ Հայոց Եկեղեցին, մեր ժողովրդի վստահությունը հանդեպ մեր եկեղեցականությունը, և հավատում ենք, որ ձեզ հետ, ձեր հավատին ապավինած, ձեր սիրույն, պիտի կարողանանք բարի ընթացքով դեպի մեր երազների խաղաղ հանգրվանն առաջնորդել Մեր զավակներին»:

ՀՈՐԴԱՆԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

16 հունվարի 2000 թ.

Առավոտյան ժամը 10-ին Հորդանանի հաշիմական թագավոր Ն. Վ. Ապտալլահ Բին Հուսեյնը Ամմանի իր արքունական ապարանքի մեջ ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին, որին ընկերակցում էին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Հորդանանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպս. Թոփալյանը, Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը:

Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանը երախտիքի իր խոսքը հայտնեց թագավորին՝ ասելով. «Ձեր հայրն ու մեծ հայրերը խաղաղության թագավորներ են եղել, հատկապես Ձեր հոր մեծ հայրը՝ Աբդալլահ իշխանը, որի հրահանգի շնորհիվ հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ պահպանել իր ազգային-եկեղեցական իրավունքները»: Երախտիքի իր կարճ խոսքից հետո Պատրիարք Սրբազանը Վեհափառին ներկայացրեց թագավորին՝ անդրադառնալով Վեհափառի ընտրությանը և այս ուղևորության նպատակին:

Այնուհետև հանդես եկավ Վեհափառը իր շնորհակալության ու երախտիքի խոսքով՝ ուղղված հաշիմական թագավորության բոլոր գահակալներին: «Հայերիս սրտի մեջ,- ասաց Վեհափառը,- հատուկ տեղ ունեն Հաշիմյան և Հորդանան անունները, որովհետև այն օրերին, երբ օսմանցիների ջարդերից ու հալածանքներից մազապուրծ հայերը անտեր ու անօգնական հասան Հորդանանի անապատ, Ձեր վսեմ անունը կրող Ապտալլահ իշխանը բացեց իր բարի սիրտը՝ հրահանգ տալով իր աշիրաթներին տեր կանգնել գաղթական ու տվյալ հայերին»: Վեհափառն աղոթեց, որ Աստված առաջնորդի արքայի քայլերը, ամրացնի իր բազուկը և ծաղկեցնի իշխանության իր գավազանը խաղաղ ու անվտանգ պահելու համար հյուրընկալ Հորդանանը:

Իբրև երախտիքի արտահայտություն, Վեհափառը թագավորին նվիրեց Սուրբ Էջմիածնի քանդակը կրող արծաթյա, նախշազարդ մի ափսե:

Թագավորը շնորհակալություն հայտնելով Վեհափառին՝ բարձր գնահատեց հայ համայնքի դերակատարությունը Հորդանանում, իրեն ակնիկ ու հավատարիմ բաղաքացիներ, և Վեհափառ Հայրապետի կուրծքը զարդարեց Հորդանանի բարձրագույն Ա կարգի շքանշանով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Առավոտյան ժամը 9.00-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Հորդանանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպս. Թուխալյանի, Սեպուհ եպս. Զուլֆյանի, Արբահամ եպս. Մկրտչյանի, պաշտոնական այցով հանդիպում ունեցավ Հորդանանի վարչապետ պարոն Արդու-Ռաուֆ Ռավայբեհին:

Պատրիարք Արբագանը վարչապետին ներկայացրեց Վեհափառի այցելության նպատակը և իր ուրախությունը հայտնեց՝ նշելով. «Վեհափառի ուխտագնացությունն սկսվում է Հորդանանից՝ հիշեցնելով մեզ հին ժամանակները, երբ մարգարեները Երուսաղեմ գնալու համար անցնում էին Հորդանանից: Մեզ համար ծանոթ են Ձեր կորովն ու ուժը. մենք վստահ ենք, որ թագավորի հետ խորհրդակցարար պիտի հաղթահարենք բոլոր դժվարությունները»:

Վեհափառը կարևորելով այս այցելությունը՝ իր երախտագիտությունը հայտնեց հաշիմական թագավորներին, որոնց հովանու ներքո մեր ժողովուրդը պահպանեց իր ազգային ու եկեղեցական ավանդույթները: Վեհափառը շնորհակալություն հայտնեց Վսեմաշուք թագավորին և կառավարությանը այն ուշադիր վերաբերմունքի համար, որ ընծայվեց իր անձի նկատմամբ: Շնորհակալություն հայտնեց նաև գբոսաշրջիկության նախարարին, որ տնապես ուղեկցեց Վեհափառին:

Պաշտոնական ու մտերմիկ այս հանդիպման ավարտին բարիգալստյան ու շնորհակալական խոսքով հանդես եկավ պարոն վարչապետը: «Շնորհավորում եմ Ձեզ Հայ Եկեղեցու Սուրբ Ծննդյան տոնի առիթով, մի Եկեղեցի, որ հնագույններից է»: Մեծ դրվատանքով անդրադառնալով հայ ժողովրդի մասին՝ նա նշեց. «Հայության մասին խոսել՝ նշանակում է խոսել հորդա-

նանցիների մասին և ոչ թե փոքրամասնության մասին: Այս երկրում խտրություն չկա, որովհետև հավատում ենք, որ Աստված մեկ է: Ձերդ Սրբությունից խնդրում ենք, որ խաղաղության քարոզիչը դառնաք, որպեսզի ապահովենք համագործակցությունը բոլոր կրոնների և ժողովուրդների միջև»:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը վարչապետին նվիրեց փայտյա նախշազարդ մի սափոր՝ իբրև երախտիքի և շնորհակալության արտահայտություն:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վարչապետի ու թագավորի հետ պաշտոնական այս հանդիպումներից հետո Վեհափառը ժամանեց Ամմանի Սուրբ Թադեոս եկեղեցի, ուր խառներամ հավատացյալները հպարտությամբ և ուրախությամբ դիմավորեցին Հայոց Հայրապետին: Մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Պատարագի ընթացքին քարոզեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ բնաբան ընտրելով «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ» փառաբանական մաղթանքը: Վեհափառն իր ուրախությունը հայտնեց հովվապետական այս այցելության համար, «որը Մեզ բերեց մի երկիր,- ասաց նա,- որի անունը կապված է Հորդանան գետի հետ»: Վեհափառը ուրախ էր նաև սրբազան այս արարողության ընթացքին իր ժողովրդի հետ լինելու համար: Անդրադառնալով Հայաստան, Արցախ և Սփյուռք համագործակցությանը, նա նշեց. «Որևէ ժողովուրդ չի կարող հարատևել առանց ազգային մեծ երազի, որ հույսերով ու բարի ակնկալիքներով սնում է նրա հոգին: Մեր մեծ երազն է, որ ազատ ու անկախ մեր հայրենի երկիրը վերագտնի իր խաղաղ, կայուն, ապահով ու անվտանգ կյանքը, համայն մեր ժողովրդի համախումբ ջանքերով վերականգնի արարումի իր ուժերը և այն ուղղի երկրի առաջընթացին: Եկել է ժամանակը, որ Սփյուռք-Հայաստան և Հայաստան-Արցախ կապերն առավել ամրանան, զորանան և ծառայեն նույն նպատակին»: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը, խոր հարգանքն ու շնորհակալությունն է հայտնում հյուրընկալ երկրին ու նրա ղեկավարներին, Հորդանանի հայոց թեմի

առաջնորդ Վահան եպս. Թոփալյանին, հորդոր տալով հավատարիմ նվիրվել ազգային ավանդություններին, մնալուպարտ սրբազան լեզվին:

Այս բարեբաստիկ առիթով Վեհափառ Հայրապետը եկեղեցու Սուրբ Սեղանի համար նվիրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերած մարմարակերտ մի խաչ, իբրև նշան հաղթության և երաշխիք գոյության, իսկ ի գնահատություն թեմի առաջնորդ Վահան եպս. Թոփալյանի ծառայության, նրա կուրծքը զարդարեց պանակնով, որպեսզի նա առավել արդյունավետ ծառայի իր հոտին և եկեղեցուն:

Պատարագից հետո Վեհափառը, Պատրիարքը, Սրբազանները ու թեմական ներկայացուցիչները, ընկերակցությամբ գրոսաշրջիկության նախարարի, մեկնեցին Ամմանից 45 կմ հյուսիս գտնվող Ջարաշ պարմական քաղաք, որի ավերակների մեջ, մի քարի վրա, կա Հայաստան անվան արձանագրությունը:

Նույն օրը, կեսօրից հետո, Վեհափառը հարցազրույց ունեցավ Հորդանանի միակ անգլիագրաբ «The Jordan Times» օրաթերթին՝ անդրադառնալով հայրապետական իր ուխտագնացությանը, կրոնների երկխոսությանը, Հայ Եկեղեցու բազմազան խնդիրներին, ապագա ծրագրերին, և փոխանցեց իր լավագույն տպավորությունները Հորդանանի ու հորդանանահայ համայնքի վերաբերյալ:

ՃԱՇԿԵՐՈՒԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նախքան Վեհափառի մեկնումը Հորդանանից, թեմի Ազգային տեղական խորհուրդը, երեկոյան ժամը 21.00-ին, Մարիոթ հյուրանոցի մեջ կազմակերպեց ողջերթի ճաշկերույթ: Բացման խոսքով հանդես եկավ Ազգային խորհրդի անդամներից Ներսես Ներսեսյանը, որը հպարտությամբ շնորհավորեց Վեհափառի՝ Հորդանանի բարձրագույն Ա կարգի շքանշանով պարգևատրվելը թագավորի կողմից: Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը առիթ ստեղծեց հանդիպելու բոլոր ներկաներին և զրուցելու նրանց հուզող բազմաթիվ հարցերի շուրջ:

Ճաշկերույթի ավարտին Երուսաղեմի Հայոց Պատրիարքը նշեց, որ հովվապետական այս այցելությունն իր նպաստն է բերում մեր ժողովրդին, որովհետև ամեն ոք հիշատակներ է պահելու Վեհափառից, ինչպես և Վեհա-

փառը, իր երթին, շատ հիշատակներ է տանելու իր հետ: Ապա հրավիրեց Վեհափառին՝ իր պատգամը հաղորդելու:

Վեհափառը թվարկեց բոլոր ուրախության և մխիթարության այն պահերը, որ վերջին երկու օրերին ապրեց Հորդանանում: Վեհափառը անդրադառնալով իր պարգևատրությանը և դիմելով ներկա հայ հավատացյալներին՝ ասաց. «Ես գիտեմ, որ այս շքանշանը ես չեմ վաստակել. վաստակել եք դուք: Ձեր տարիների ծառայության պատկերն է սա, և դա առավել ևս պատվաբեր է դարձնում կրել այս շքանշանը, որովհետև ձեր աշխատանքով, ձեր արդար քրտինքով, բարի համբավով այնպիսի անուն եք ստեղծել այս երկրի մեջ, որ ձեր անվամբ պատվվում են նաև ձեր մեծավորները, ձեր առաջնորդները: Այս շքանշանը ինձ կանգնեցնում է առավել պատասխանատվությունների առաջ»:

Նկատի ունենալով, որ սա Վեհափառի վերջին երեկոն էր Հորդանանում, ինքը ցանկացավ ներկայացնել Մայր Աթոռի գործունեությունն առաջիկա ծրագրավորումներով: Նոր հազարամյակի համար Վեհափառն առաջին հերթին կարևորեց մեր ժողովրդի հոգևոր կրթության խնդիրը, այնուհետև՝ եկեղեցաշինությունը և մեր ժողովրդին տիրություն անելու պատասխանատվությունը: Վեհափառն իր խոսքը եզրափակեց շնորհակալական և գնահատանքի խոսքերով՝ ուղղված Ազգային տեղական խորհրդին, ՀՄԸՄ-ին, ՀՕՄ-ին, ԱՄՄ-ին, այս այցելությունն ամենապատշաճ մակարդակով կազմակերպած Միացյալ հանձնախմբին, բարերարներին, Տեր Հորը, Սրբազանին, Ամենապատիվ Պատրիարքին և այլոց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ԱԲԼ ԲԻԼԹԱԺԻԻՆ

17 հունվարի 2000 թ.

Երկուշաբթի: Այսօր, առավոտյան ժամը 9.00-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախումբով և թեմական ներկայացուցիչներով պաշտոնապես այցելեց Հորդանանի զբոսաշրջիկության նախարար պարոն Աբլ Բիլթաժիին, որն

ամենաջերմ զգացումներով միշտ Վեհափառի կողքին էր: Հանդիպումներ ներկա էր նաև վեհանձնաբար գվեցին Ալիա Հայոց Հորան:

Թորգոմ Պատրիարքը վարանեցրեց նախարարին, որ Վեհափառը բարի հիշատակելով լեցուն է մեկնում այս երկրից: Նախարարն իր գոհունակությունը հայտնելով՝ ասաց. «Հորդանանը խաղաղություն սիրող բոլոր մարդկանց երկիրն է»:

Վեհափառը նախարարի ջերմ խոսքին պատասխանեց՝ ասելով. «Այս երկիրը սիրում էինք Աստվածաշնչով, այս երկիրը սիրել ենք պատմության էջերով, սիրել ենք բարեսեր թագավորների միջոցով, իսկ այսօր, երբ առնչվեցինք այս ժողովրդի և նրա ղեկավարության հետ, այդ սերն ավելի ուժգին դարձավ մեզ համար»: Ջերմ ու մտերմիկ զրույցից հետո Վեհափառը նախարարին նվիրեց վայրյայ եռաշտագարդ մի սափոր, իսկ նախարարը Վեհափառին նվիրեց Հիսուսի մկրտության քանդակը:

Պաշտոնական այս հանդիպումից անմիջապես հետո Վեհափառի թափորն ուղղվեց վերջին տարիներին Հորդանանի հողերում պեղումների արդյունք հանդիսացող այն սրբավայրը, որը կոչվում է Մկրտավայր: Ըստ մի շարք գիտնականների, այս է այն տեղը, ուր Հովհաննես Մկրտիչը քարոզում էր և կոչ անում ապաշխարության և մկրտում:

Սրբավայրում Վեհափառին և նրան ուղեկցող նախարարին դիմավորեցին շուրջ 500 հայորդիներ, որոնք առավոտից եկել էին մասնակցելու Վեհափառի ուխտի այս հանդիսությանը: Վեհափառը բավականին երկար շրջագայեց պեղման վայրերում և այդ աշխատանքները հսկող մասնագետներից տեղեկացավ այս վայրի հայտնաբերման և դրա մանրամասների մասին:

Հատուկ պատրաստված բեմի վրա կատարվեց Ջրօրհնյաց արարողություն, որից հետո Վեհափառը դիմեց ժողովրդին՝ շնչելով, որ աստվածային պատգամն այսօր ևս նույն ուժգնությամբ է հնչում. «Սա է որդի իմ սիրելի», և մեր ժողովուրդը երբեք չմոռացավ իր Տեր Հիսուսին ոչ տառապանքների, ոչ հալածանքների, ոչ դժվարությունների, և ոչ էլ ուրախությունների մեջ: Վեհափառն իր պատգամն ավարտեց՝ ասելով. «Մենք թողնում ենք ձեզ Մեր սերը, սերը մեր հայրենիքի, սերը հայրենաբնակ մեր ժողովրդի»:

Արարողությունից հետո Վեհափառը Մկրտության խորհրդի մասին հարցազրույց ունեցավ աստվածային լրատվամիջոցների մի շարք լրագրողների հետ և մի անգամ ևս հայտնեց իր շնորհակալությունը Հորդանանի թագավորին և հորդանանցի ժողովրդին:

Այս սրբավայրում տեղի ունեցավ Աջահամբույր, և ժողովուրդը կրկին առիթ ունեցավ զրուցելու Վեհափառի հետ:

Այս խորհրդալից հանդիպումից հետո Վեհափառը հրաժեշտ տվեց բոլոր ներկաներին և ցամաքով, Հուսեյն թագավորի անունը կրող կամրջով անցնելով՝ մեկնեց Երուսաղեմ:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Յաֆայի դարպասը՝ հին քաղաք տանող մուտքերից մեկը, և շրջապատը սպասումի ուրախությամբ էին լեցուն և հնչյունով բռնված: Նորին Սրբությանը դիմավորողների մեջ էին Մեծի Տաեն Կիլիկիո Կաթողիկոսության ներկա-

Հանդիպում Երուսաղեմի նախկին քաղաքապետի հետ

յացուցիչներ, Գերշ. Տ. Սահակ արքեպս. Այվազյանը, Գերշ. Տ. Վարուժան եպս. Հերկելյանը, Կ. Պոլսո Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Տ. Մեսրոպ

արքեպս. Գրիգորյան, Տ. Խաչիկ արքեպս. Պարսամյան, Տ. Վիգեն եպս. Այթագյան: Միաբանությունը, եկեղեցու պետերն ու նրանց ներկայացուցիչները, Սյունեաց նախարարի տեղակալը, պետական պաշտոնյաներ, դասերներ երկրներից ժամանած ուխտավորներ և հազարավոր հայորդիներ լցրել էին այս սրբավայրը: Սպասումն ինքը գնության վերածվեց, երբ ժամանեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընկերակցությամբ Թորգոմ Պատրիարքի և Հայաստանից Վեհափառին ընկերակցող շքախմբի: Սկաուտների շեփորների ու թմբուկների թեղաձայն նվագով թափորը որքան շարժվում, այնքան անշարժանում էր մարդկային հեղգեղեն խտացող հոծ բազմության պատճառով: Բակերը, դեպի Հայոց Պատրիարքարան տանող պատմական փողոցները, պատշգամբները լեցուն էին, որտեղից բարձրանում էին անկեղծ կանչեր ու կոչեր, «Մրքա՛», «Օրհնե՛ մեզ, Վեհափառ», «Աստված օգնական, Վեհափառ», և Վեհափառի հայացքը ամենքի հայացքին էր խառնվում, ու Վեհափառը հայացքի հետ խաչանիշ օրհնում էր աղոթող, արտասվող, ծնկոտոցյուններով խոսող բազմություններ, որի կոչերը միախառնվում էին շարականի բառերին. «Որ գխորհուրդ քո գայստեանց»: Ամենք մերթ-մերթ միանում էին թափորն առաջնորդող շեփորների ու թմբուկների արձագանքի պես հասնող ձայներին:

Թափորը շարժվում էր, բայց չէր հասնում Սուրբ Հակոբյանց վանք ու Տաճար: Հոտ ու հովիվ բայլում էին միասին: Հովվի ու հոտի հայացքները խառնվում էին միմյանց, և Վեհափառի շրթները ուրախությամբ զողդոջուն աղոթում էին. «Պահպանիչ և յոյս... Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛, փրկեա՛...»: Որքան թափորը մոտենում էր Սրբավայրին, տաճարի դռները այնքան նեղանում էին:

Տաճարում «Հրաշափառն» է՝ հայրապետական թափորին ուղեկցող մասնիկն ու այս թափորը ավետող շարականը: Բոցկլտացող կանթեղների ներքո Վեհափառը խնկարկում է. հազար ու մի կանթեղներից խունկը երկինք էր բերում Տաճար: Վեհափառի հոգին ցնծում է. «Ուրախ եղէ ես...»: Հավատացյալների կարոտը հագեցած չէ. «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի...», 25 տարիներ անց Հայրապետը կրկին թեց այցի է գալիս. ժողովուրդ:

Խորանի վրա է Վեհափառը՝ շրջապատված երկու Պատրիարք Սրբազաններով: Ամբողջ վեղարների բլուրների է վերածվել: Թորգոմ Պատրիարքն իր ուրախությունն է հայտնում այս բացառիկ առիթի համար, որ Ծննդյան այս տոներին Վեհափառը մեծաթիվ ուխտավորների և հայ համայնքի հետ է աղոթելու: Սրբազանը ողջունում է նաև ներկայությունը Կ.

Պոլսի Հայոց Պատրիարք. Ամեն. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչների:

Վեհափառ Հայրապետը փառք է տալիս Աստծուն, որ իր քայլերն առաջնորդեց հայկական հնագույն սրբավայր Երուսաղեմի և քրիստոնեական առաջին համայնքի կրոնապետ Հակոբոս առաքյալի տուն: Վեհափառն իր հատուկ շնորհակալությունն է հայտնում Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին, որ այս հրաշագործ սրբավայրի մեջ միասին են ողջունում նոր դարագլուխը: Նա ողջույններ էր բերել Սրբոց Հակոբյանց միաբանությանը և հավատացյալ ժողովրդին Միածնաէջ Լուսո խորանից, հայոց սրբավայրերից, Հայաստանի ժողովրդից, Լուսավորչի անմար կանթեղի և հայկական բանակի քաջարի զինվորներից, որպեսզի բոլորը ամուր մնան իրենց հավատքի մեջ: Վեհափառն ասաց. «Առաջիկա օրերին, երբ Մեր Ուխտը պիտի նորոգենք Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան Այրի մեջ, միասին աղոթենք, որ Աստված ապահով ու անվրդով պահի աշխարհը համայն, երկիրը Հայոց և Եկեղեցին Հայաստանյայց, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, հատկապես Երուսաղեմի Պատրիարքական այս հնամենի Աթոռը և Կ. Պոլսո Պատրիարքությունը Հայոց»:

Վեհափառի պատգամից հետո Տաճարի մեջ տեղի ունեցավ Աջահամբույր:

ԴԵՊԻ ԲԵԹՂԵՀԵՄ

18 հունվարի 2000 թ.

Հին տոմարով հայկական Ծննդյան ճրագալույցի տոնին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի, առաջնորդ Սրբազանների, Երուսաղեմի միաբանության, Վեհափառին ընկերակցող եկեղեցական պատվիրակության, մեկնեց Բեթղեհեմ: Ճանապարհին մեքենաների թափորը կանգ առավ հույների Սուրբ Եղիա եկեղեցու առջև, ուր Վեհափառին դիմավորեցին Պեյթ Ժալա և Պեյթ Սահուրի նահանգապետները և պաղեստինյան իշխանության ներկայացուցիչներ, որոնք ուղեկցեցին հայրապետական մեծ շքախմբին դեպի Բեթղեհեմ: Թափորն առաջնորդվում էր հեծյալներով: Բեթղեհեմում Վեհափառին ընդառաջ եկան

բաղաքապետ Հանեա Նասսարը, Պաղեստինի Ազգային Իշխանության զինվորական ընդհանուր հրամանատար գեներալ Մրու Բաքրը, Ազգային Անվտանգության բարձրագույն Մրու Ջիհատը, ոստիկանապետ Յուսեֆ Լեփտաքը, Ցասեր Արաֆաթի գլխավոր գրասենյակի ընդհանուր դեկավար Վալիդ Նասսարը, Հույն Պատրիարքի ներկայացուցիչ Անաստասիս վարդապետը, լատին Պատրիարքի ներկայացուցիչ հայր Իրրահիմը: Բազմահազար ուխտավորներ արդեն սպասում էին Վեհափառի ժամանմանը: Մկաուտների և մարաանության խիստ շարքերի առաջնորդությամբ Վեհափառը մուտք գործեց հայոց վանք, ուր առաջին հերթին Վեհափառին ողջունեց Բեթղեհեմի քաղաքապետը, որն ասաց. «Այս մեծ իրադարձության համար մենք երկար նախապատրաստվեցինք: Նախատեսել էինք նաև Ձերդ Սրբության ժամանումն ու մասնակցությունը: Այս առիթով խաղաղության իրագործման իմ ցանկությունն եմ հայտնում բոլորիդ»: Հույն Պատրիարքի ներկայացուցիչն ուրախությամբ նշեց, որ Վեհափառը Սուրբ Այրից պիտի սպասա Ծննդյան ավետիսն ու օրհնությունը և բաշխի բոլորին, ի մասնավորի՝ հայ ժողովրդին:

Վեհափառը շնորհակալություն հայտնելով այս բարի զգացումների համար՝ կոչ արեց խաղաղության և ասաց. «Մենք էլ ձեզ նման հասկանում ենք խաղաղության իմաստն ու նշանակությունը. այսօր աշխարհը կարոտ է դրան: Երկար կյանք պատնեշիցի ժողովրդին ու դեկավարությանը և փոխադարձություն՝ ձեր նպատակների իրագործման ճանապարհին»:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաև Բոյթեր լրատվական գործակալության հարցերին: Այնուհետև տեղի ունեցավ Աջահամբույր:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ԲԵԹՂԵՀԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐՈՒՄ

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ

Ժամը 14.00-ին հայրապետական թափորը շարժվեց դեպի Սուրբ Ծննդյան եկեղեցի՝ Սուրբ Այրում կատարելու Ծննդյան Ճրագալույցի Սուրբ Պատարագը: Սա Հիսուսի Ծննդավայրն է, որ հավասար իրավասություններով գործածելու իրավունք ունեն Հայ և Հույն Եկեղեցիները: Վեհափառ Հայրապետի ուխտագնացության առաջին Պատարագն էր:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԲԵԹՂԵՀԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐՈՒՄ

(18 հունվարի 2000 թ.)

«Փառք ի բարձունս Աստուծոյ,
եւ յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն»
(Ղուկաս Բ 14)

Սիրելի Ժողովուրդ Հայոց, որ ի Հայաստան, ԼԱրցախ և ի Սփյուռս աշխարհի.

Բեթղեհեմի Սուրբ ու նվիրական Այրից ի լուր աշխարհի արձագանքող հրեշտակաբարբառ այս ավետիսով Հայրապետական սիրո Մեր ողջույնն ենք հղում ձեզ և բերում ամենքիդ երկնային պատգամը՝ «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ», որին ունկնդիր եղանք հունվարի 6-ին Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնում, իսկ այսօր՝ այստեղ՝ Մանուկ Հիսուսի սնարի առջև:

Բերկրանքով է լցված Մեր սիրտը՝ տեսնելով, թե ինչպես փոքր մեր ժողովրդի մեծ հավատքը հեռավոր Հայաստանից, աշխարհի տարբեր երկրներից առաջնորդել է հայորդիներին դեպի Սուրբ Այրը Բեթղեհեմի: Ողջունում ենք ներկայությունը այստեղ Հայաստանի ազատ ու անկախ Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Պաղեստինի Ազգային ղեկավարման նախագահ Յասեր Արաֆաթի, որոնք եկել են Մեզ հետ աղոթելու խաղաղության աստվածային Իշխանին, որ որպես հույս աշխարհի ծնվեց այստեղ 2000 տարիներ առաջ:

2000 տարի «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երկնաձայն ավետիսը Բեթղեհեմի աստղափայլ երկնքից Լուսաստղի լույսով իջնում է երկիր և որպես Աստուծո փառաբանության աղոթք, որպես խաղաղության ու մարդկանց մեջ հաշտության հայց բարձրանում երկինք աշխարհի բոլոր հորիզոններից:

Երկու հազարամյակ բազում ժողովուրդների համար Լուսո Խորան է երբեմնի անշուք ու համեստ մսուրը Բեթղեհեմի, ուր Նախախնամության սահմանումով մարմնավորվեց Սերն Աստվածային, ծնունդ առավ որպես

խնամքի կարոտ մանուկ և Աստվածածնի գթոտ ձեռքերով խանձարուրվելով՝ դրվեց մսուրում: Մանուկ Հիսուսի «սրտի բնակութեան» խորհրդաշատ այս լուսաբանից ներս թռցաշունչ մարգարեի սրբախոս ձայնն է դողանջում առմիշտ՝ ժամանակի հեռուներից մեզ ավետելով. «Մեզ համար մանուկ ծնվեց» և «Նա պիտի ըլլայ բարին»: Աստվածային Իր Միրով Տերն այցի եկավ մեզ՝ ընդմիշտ բացելու մեր առջև փրկության ուղին, որպես Լույս աշխարհ եկավ՝ լուսավորելու ճանապարհը դեպի Բարին: Աստվածահայտնությամբ ժամանակի նոր պտույտը հեղափոխեց աշխարհը: Խոնարհ մսուրից ճառագած Լույսը թափանցեց տոս ծագերը մոլորակի՝ սիրելով սեր, խաղաղություն, եղբայրասիրություն ու համերաշխություն: Որքան միտիթարական է հավատալ, որ Աստված մեզ հետ է, իմանալ, որ բաց է ճանապարհը դեպի Տերը, հուսալ, որ մարդկային մեր կյանքով գործակիցներն ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փրկարար առաքելության:

Աստվածահայտնության տիեզերական խորհուրդը Փրկչի Սուրբ Ծննդյան 2000-րդ տարեդարձին համախմբեց քրիստոնյա երկրների հոգևոր ու աշխարհիկ պետերին Բեթղեհեմի Սուրբ Այրի մեջ, խոնարհվելու հայրադրությանն Իշխանի, Միրո Ավետարերի սնարին և Տիրառաք օրհնություն ստանալու՝ իրենց ժողովուրդն ու պետությունը առաջնորդելու դեպի բարի առաքելություն:

Գոհություն և փառք նմ մատուցում Բարձրյալին, որ որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Հաթոդիկոսական գահակալությունից երկու ամիս անց ինձ առիթ ընծայեց Իր Միածին Որդու կենսանորոգ մսուրում ուխտս նորոգելու առ Բարին Աստված, իմ ժողովուրդն ու Հայրենիքը, որոնց միջոցով նաև՝ առ համայն մարդկության ծառայության նվիրական խորանը:

Գոհություն և փառք քեզ, Տեր:

Այսօր աշխարհասփյուռ հայությունը և Հայաստանի պետական ավագանին, իր Հոգևոր Պետերի ու նորանկախ Հայաստանի նախագահի առաջնորդությամբ՝ հանուն 2000 տարի Քեզ հուսացյալ մեր ժողովրդի, ծնրադիր երկրպագությամբ քրիստոնեական 2000-ամյա մեր ժառանգության ամենաթանկ ընծաներն են մատուցում Փրկչիդ, ինչպես Տիրոջ ժրաջան մշակ, որ արդյունավորել ու բազմապատկել է իրեն վստահված մնասները: Հանուն մեր նախնյաց և ամենքիս՝ աղոթքով ընդունի՛ր մեր ուխտը սնարիդ առջև, գորացրո՛ ամենքիս, Տեր, մեր կոչմանն ու պարտքի մեջ, գորավիգ եղիր մեր առաքելության ճանապարհին:

Ազգ շնորհիրնակալ ենք, Տե՛ր:

Առաքյալներիդ լույս ուսնահետքերից հաղթական Խաչդ հառնեց հայրենյաց մեր հողին և կենաց Քո խորհրդով ծաղկեց մեր հոգիներում, մեր մատյաններում, մեր քարերին: 301 թվականին Նշանդ հաղթության Հայոց պետության դրոշով առաջին անգամ երկինք պարգեցինք, որ 1700 տարի եղավ մեզ ուղեկից Բարին արարելու և զորավիգ՝ պատմության քառուղիներում մեզ բաժին ընկած փորձություններին դիմակայելու: Խաչիդ լուսաբաղձ հավատքն է մեր ինքնությունը, Տե՛ր, ստեղծարար մեր կամքը, ճշմարտության, արդարության, խաղաղության մեր իղձը: Հարությանդ հավատքով բազմիցս խաչվել ենք գողգոթաներում, վերապրել եղեռն, աշխարհացունց երկրաշարժ, «մահ իմացնալ»-ով ենք պաշտպանել ազատության մեր իրավունքը և երկու աշխարհամարտ ապրած 20-րդ դարն ահա ավարտում ենք Հայաստանի նոր անկախության և Արցախի ազատ ապրելու արդար իրավունքի հաստատումով:

Միրելիներ մեր, նոր դարի շեմին, նոր հազարամյակի արշալույսին լիահույս է լավատես, միահոգի ու միասիրտ աղոթենք, որպեսզի լռեն պատերազմները և հնչեն սիրո, հաշտության ու խաղաղության շեփորները աշխարհում և մարգարեի կանխագուշակությամբ՝ ազգերը «սուսերներից խոփեր ձուլեն, սվիններից՝ մանգաղներ»: Թող Փրկչի Հայտնությամբ ծնունդ առնող Բարին ամեն տարեմուտ, որպես մանուկ, Աստվածածնի հոգածությամբ խանձարուրվի բոլոր հարկերից ներս, խնամվի ու զորանա Երկիր մայրակը բնակեցնող մեծ ու փոքր բոլոր ժողովուրդների բարի կամեցողությամբ, հանձնառու կամքով և ձեռաց գործերով:

Թող Տերը Ճշմարտության Հոգով զորացնի բոլոր պետությունների ղեկավարներին և առաջնորդի շինարար գործերում՝ հանուն մարդկության առջև ծառացած դժվարությունների հաղթահարման, զարգացման ու առաջընթացի, ի սեր բոլոր ժողովուրդների:

Ի խորոց սրտի աղոթք ենք վերառաքում արար եղբայր ժողովրդի համար, որ կարոտ է ամուր խաղաղության: Թող ամեն օր մի քայլով առաջ ընթանա Մերձավոր Արևելքի ժողովուրդների խաղաղության գործընթացը: Թող ամեն պանդուխտ վերադառնա իր Հայրենիք և շենացնի իր տունը: Մեր սրտի ջերմ աղոթքն ենք հղում առ Աստված հրեա ժողովրդի համար, որ խաղաղությամբ ապրի իր կառուցած Հայրենիքի մեջ՝ ի փառս Աբրահամի, Իսա-

հանկ և Հայրի Աստծո: Թող ազգերի միջև խաղաղությամբ բնորոշվի նրանց հազարամյակը, որի առաջին տարին սկսեցինք Դասկի քաղաքի մեջ:

Մարդազգայ Աստծո սեսրի առջև Հայրապետիս աղոթքով հայցում եմ, որ Ընդհանրի Սուրբ Այրից ծնունդ առնող Փրկչական սերը, խաղաղություն, արդարություն, բարին մշտամնա հանգրվանի նաև հայրենի մեր եկեղեցիներում, Հայաստանում և Արցախում, որ համայն հայության Սրբություն Սրբոց Սուրբ Էջմիածնի՝ Հայոց Ընդհանրի հավերժական օրհնության ներքո աշխարհասփյուռ ազգը հայոց Մայր Հայրենիքի աստվածապարգև հողից մշտապես առնի իր բազկի ուժը, իր մտքի թռիչքը, իր հոգու զորությունը:

Պահապան եղիր, Տե՛ր Ամենակալ, Հայոց պետությանը և ժողովրդիս հայոց ի սփյուռս աշխարհի, Հայոց Եկեղեցուն՝ նվիրապետության Աթոռներով ու գահակալներով և նվիրյալ միաբանությամբ: Խնամությամբ զորացրու փոքր ազգս Քո հուրի առաջնորդությունը ստանձնած ղեկավարներին, որ նավարկեն դեպի երջանկության խնդաղ նավահանգիստ:

Եղբայրական Մեր հարգանքն ու սերն ենք բերում Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, որի սիրալիր հրավերով այստեղ ենք այսօր:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը՝ Սրբոց Հակոբյանց ոխտապահ միաբանությանը, որ Կենաց ու Լույսի ակունք այս Տաճարում, Տիրոջ ուրնահնտքերը կրող նվիրական սրբարաններում 1500 տարիներ ի վեր հայաբարբառ արթուն աղոթք են բարձրացնում հանապազ:

Այս բերկրալի առիթով ուրախ ենք ծանուցել, որ ազգային բարերար Վայն Մանուկյանը հանձնառություն է ստանձնել Գանձատուն կառուցելու Սրբոց Հակոբյանց վանքի համար, որպեսզի, ի տես բազմազգ բոլոր այցելուների, իրենց ողջ շուքով ներկայացվեն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության գանձարանում պահպանվող մեր ժողովրդի հոգևոր արժեքները:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն»:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ: Մեզ և ձեզ մեծ աւետիս»:

Պատարագից հետո ժողովուրդը խմբվեց վանքի սրահում և ականջալուր եղավ Ծննդյան Ավետարանի ընթերցմանը՝ ստանալով Վեհափառի օրհնությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԱՐՈԶԵԼԻՍ

«ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՍՑԷ Ի ՔԵԶ»

ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԸՆԹՐԻՔ

Սրբազան արարողությունից հետո Բեթղեհեմում տեղի ունեցավ Ճրագալույցի ընթրիք՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, որին և երկու Պատրիարքներին սեղանակից էին լատին Պատրիարքը, պապական նվիրակը, դպտի, ասորի, մալաբար, ռուս և անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչները, Պաղեստինի Ազգային Իշխանության ներկայացուցիչներ, դիվանագետներ, միաբանությունը, հայ համայնքի ներկայացուցիչներ և ուխտավորներ:

Առաջինը ողջույնի խոսքով հանդես եկավ Մեսրոպ Պատրիարքը և ասաց, որ քրիստոնյա աշխարհը օրերս չորս անգամ նշեց Քրիստոսի Ծնունդը, բայց Աստվածահայտնությունը այնքան մեծ խորհուրդ է, որ ամեն օր պետք է տոնախմբել: Նա այս առիթով իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետի այս արարողություններին մասնակցելու և նախագահելու համար:

Քույր Եկեղեցիների անունից ողջույնի խոսք ասաց լատին Պատրիարք Միշել Սաբբահ արքեպիսկոպոսը, որը բարի գալուստ մաղթեց Վեհափառին Երուսաղեմում և Բեթղեհեմում, աստվածային շնորհքի առատությունը խնդրեց Վեհափառի համար, որպեսզի ընդերկար առաջնորդի Հայոց Եկեղեցին: Արքեպիսկոպոսն այս այցը որակեց օրհնություն հատկապես պաղեստինցիների համար, որոնք սպասում են խաղաղության և արդարության:

Եզրափակիչ խոսքը և օրհնությունը, բնականորեն, վերապահված էին Ամենայն Հայոց Հայրապետին, որն իր ուրախությունը հայտնեց Սուրբ Երկրում գտնվելու կապակցությամբ, որի հետ ծանոթությունն Աստվածաշնչական էր, սակայն Աստված շնորհ տվեց Վեհափառին Սուրբ Այրում երկուհազարերորդ անգամ ականջալուր լինելու Փրկչի Սուրբ Ծննդյան ավետիսին, և մաղթեց, որ մանուկ Հիսուս խանձարուրվի յուրաքանչյուրի հոգու մեջ, որպեսզի յուրաքանչյուրի հոգին մայրանա Սուրբ Ծննդյան ավետիսով: Վեհափառն ասաց. «Մենք հավատում ենք, որ նոր դարաշրջանը պիտի լինի խաղաղության, ժողովուրդների փոխըմբռնման, պետությունների համագործակցության մի ժամանակաշրջան: Այդ վստահությունը մենք ունենք, որովհետև քրիստոնյա Եկեղեցու բոլոր պետերը եկան այս սրբավայր, խոնարհվեցին այստեղ: Իմ աղոթքն եմ բարձրացնում առ Աստված՝ հայցելով Տիրոջ խաղաղությունը աշխարհին համայն, ի մասնավորի այս փարածաշրջանին,

հայցելով հան Սուրբ Հոգու առաջնորդություններ և Ամենակալ իմաստություններ բոլոր ազգերի ղեկավարին, որպեսզի երջանկություններ, խաղաղություններ միշտ ուղեկից լինեն մեզ»:

Վեհափառի պատգամից հետո Թորգոմ Պատրիարքն իր շնորհակալություններ հայտնեց Վեհափառին այս օրհնարար այցելության համար, որ Վեհափառն ապրող իր կան մեջ է զգում իրեն, և մենք բոլորս այս զգացումը պիտի տանք Վեհափառին:

Վերջում Վեհափառն օրհնեց յոլորին և տրվեց Սուրբ Ծննդյան ավետիսը ասելով. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ընթրիքը վերջ գտավ Տերունական աղոթքի երգեցողությամբ:

ՊԱՐԼԵՍՏԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՅԱՍԵՐ ԱՐԱՖԱԹԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Պատարագի արարողությունից հետո, երեկոյան ժամը 19.00-ին, Վեհափառ Հայրապետը Պատրիարք Սրբազանների և եպիսկոպոսական դասի ուղեկցությամբ, պաշտոնապես այցելեց նախագահ Յասեր Արաֆաթին: Նախագահական ապարանքում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին նախագահ Արաֆաթն ու ՀՀ նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանը, որ մեծ պատվիրակությամբ Երուսաղեմում էր գտնվում մասնակցելու հայկական Ծննդյան արարողություններին: Հյուրերի ներկայությամբ ընթերցվեց նախագահ Արաֆաթի հրամանը՝ Ամենայն Հայոց Հայրապետին «Բեթղեհեմ 2000» շքանշանով պարգևատրելու մասին: Նույն կարգի շքանշանով պատվվեցին նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո Հայոց Ամեն. Պատրիարքներ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանն ու Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Վեհափառն իր և Պատրիարք Սրբազանների անունից իր շնորհակալությունը հայտնեց այս պարգևատրությունների համար և ողջունեց մեծ ղեկավարին, որի իշխանության ներքո պաղեստինցի ժողովուրդը իմաստությամբ, արդար պայքարով և տոկուն կամքով իրականություն դարձրեց իր տուն, իր հայրենի հողին վերադառնալու մեծ երազանքը:

ՅԱՍԵՐ ԱՐԱՖԱԹԻՆ ՀՅՈՒՐ

ՂԱՏԳԱՆՅԵՐՆԱ ԽՈՓՈՒՄԻ ԱԺՍՂԵՂՆԱ Ի ՂԱՉՂԱՓԷՉ ՅԱՍԻՆԵՌՈՎ ՎՂԱՂԱԼԵԱՍԱ

Այս առիթով նախագահական նստավայրում տրվեց ընթրիք՝ ի պատիվ ՀՀ նախագահի և Վեհափառ Հայրապետի:

ԾՆՆԴՅԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 22.00-ին, սկսվեց Ծննդյան գիշերային ժամերգությունը՝ նախապատրաստելու հավատացյալ ուխտավորներին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը ողջունելու: Ժամերգությանը նախագահում էր Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր կողքին ունենալով Պատրիարք երկու Սրբազանների ու հոգևորականների դասին: Ուխտավորներն ուրախությամբ դիմավորեցին նաև նախագահներ Արաֆաթի և Քոչարյանի մասնակցությունը Ծննդյան արարողությանը: Այստեղ ներկա էր նաև Պաղեստինի Ազգային Իշխանության ողջ ղեկավարությունը:

Կեսգիշերին այս արարողությունների բարձրակետը տեղի ունեցավ Սուրբ Այրում, ուր Վեհափառ Հայրապետն ընթերցեց Հիսուսի Ծնունդն ավետող Ավետարանական երկու հատվածներ՝ երգելով նաև հրեշտակաբարբառ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» փառաբանությունը:

Արարողության ավարտին, ի լուր հազարավոր ուխտավորների, Վեհափառը Քրիստոսի Ծննդյան ավետիսով սկսեց իր պատգամը՝ «Ծնա՛ ձեզ այսօր Փրկիչ» բնաբանով: Վեհափառի այս քարոզի գլխավոր մտածումը խաղաղության գաղափարն էր, որ այնքան անհրաժեշտ է այսօր համայն աշխարհին, և Բեթղեհեմից Հայոց Հայրապետը իր պատգամով նշեց. «Երկու հազարամյակ բազում ժողովուրդների համար Լուսո խորան է երբեմնի անշուք ու համեստ մսուրը Բեթղեհեմի, ուր Նախախնամության սահմանումով մարմնավորվեց Սերն Աստվածային: Որքան մխիթարական է հավատալ, որ Աստված մեզ հետ է, իմանալ, որ բաց է ճանապարհը դեպի Տերը, հուսալ, որ մարդկային մեր կյանքով գործակիցներն ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար առաքելության»: Վեհափառը վերառաքեց հետևյալ մաղթանքը. «Բեթղեհեմի Սուրբ Այրից աղոթքով հայցում եմ, որ փրկչական սերը, խաղաղությունը, արդարությունը, բարին մշտամնա հանգրվանի նաև հայրենի մեր եզերքներում, Հայաստանում և Արցախում»:

Այնուհետև Սուրբ Այրում կեղի ունեցավ Ջրօրհնեքի արարողություններ, որը կատարեց Գուգարքի թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլֆյանը: Սուրբ Ծննդյան արարողությունները շարունակվեցին մինչև առավոտյան ժամերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

19 հունվարի 2000 թ.

Կեսօրից հետո, ժամը 15.00-ին, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Երևանի Համալսարանի հայագիտական ամբիոնի ուսանողների, նրանց դասախոսների՝ Մայրա Սթոունի և Ռոպերտա Ըրվի հետ: Ուսանողները գալիս էին Հայաստանից, Իրանստանից, ԱՄՆ-ից, Գերմանիայից և Հունգարիայից: Վեհափառն իր ուրախությունը հայտնեց, որ հայագիտական բաժին գոյություն ունի համալսարանում, որտեղ պետք է ուսումնասիրեն հայ ժողովրդի հազարամյակների խորք ունեցող մշակույթը: Վեհափառ Հայրապետը ուսանողներին մաղթեց եռանդ և համբերություն, իր գնահատանքը հայտնեց երկու դասախոսներին: Ուսանողների կողմից եղան հարցեր Հայաստանի ներքին իրավիճակի և Հայաստանում գտնվող աղանդների մասին: Վեհափառը պատասխանելով հարցերին՝ ասաց. «Հակառակ ստեղծված լարված վիճակին, մեր ժողովուրդը բանականությամբ հաղթահարեց այս դժվարությունը: Սա հարված էր նաև մեր վարկին, բայց ամեն ճիգ պետք է ի գործ դնել, որպեսզի ապահովենք երկրի կայունությունն ու անվտանգությունը»: Անդրադառնալով երկրորդ հարցին՝ Վեհափառը աղանդավորների տարածման գլխավոր պատճառ նշեց եկեղեցականների թերացումն իրենց առաքելության մեջ: Մի վերջին հարցի, թե «Ինչ է Ձեր գլխավոր նպատակը, որպեսզի մենք մեր աղոթքներուն մեջ հիշենք», Վեհափառը պատասխանեց. «Աղոթքը դարձնել մեր ժողովրդի կենցաղի մաս և Եկեղեցին կերտել ժողովրդի կյանքում»:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

1. **Պաղեստինյան ղեկավարության հետ**: - Նույն օրը, ժամը 16.00-ին, Հայոց Պատրիարքարանում Վեհափառին այցելության եկան Պաղեստինի Ազգային Իշխանության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Էմիլ Ժարժուի՝ Պաղեստինի ազատագրական կազմակերպության գործադիր մարմնի անդամ, և Ժըրյես Աթրաշի, նախագահ Արաֆաթի աշխատակազմի գրասենյակի տնօրենը, որպեսզի իրենց ժողովրդի և ղեկավարության սերը, այս այցելության համար իրենց ուրախությունը հայտնեն Վեհափառ Հայրապետին: Վեհափառն իր հերթին շնորհակալություն հայտնեց պաղեստինցի ժողովրդի ցուցաբերած այնքան ջերմ ընդունելության համար և իր անկեղծ զգացմունքը՝ նախագահ Արաֆաթի հանդեպ, իբրև մեծ հայրենասերի և անմնացորդ կերպով նվիրյալ մի մարդու: Հյուրերը բաժանվեցին՝ Վեհափառին կրկին տեսնելու ուրախությամբ և հույսով:

2. **Երուսաղեմում, Իսրայելի ղեկավարության հետ**: - Ժամը 16.30-ին իսրայելյան մի մեծ պատվիրակություն այցելեց Վեհափառին՝ գլխավորությամբ Երուսաղեմի նախկին քաղաքապետ Թեդի Կոլլեկի, Կրոնից նախարարության քրիստոնյա համայնքների հարցերի պատասխանատու Ուրի Մորի, Երուսաղեմի Foundation-ից՝ Դանիել Ռոսինգի: Հյուրերը Վեհափառին շնորհավորեցին Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առիթով: Այնուհետև զրույց ծավալվեց կրոնական համայնքների և խմբակցությունների մասին: Անդրադառնալով քաղաքական վերջին զարգացումներին՝ Վեհափառը մաղթեց փոխըմբռնում և համակեցություն՝ հակառակ բոլոր դժվարությունների, հասնելու համար ցանկալի խաղաղության:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Ժամը 17.00-ին Պատրիարքարան այցելեց ՀՀ նախագահ, պարոն Ռոբերտ Քոչարյանն իր Տիկնոջ և Երուսաղեմում Սուրբ Ծննդյան տոնակատարություններին մասնակցելու, Իսրայելի պետության հետ երկկողմ հարաբերություններ հաստատելու համար նրան ուղեկցող պատվիրակության անդամների հետ:

Կարճ ու մտերմիկ զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Պատրիարքարանին եվիրեց յուղաներկ մի կրաք: Այնուհետև Միաբանական սենյակում տեղի ունեցավ ընթրիք: Ընթրիքի ավարտին Թորգոմ Պատրիարքը խոսեց Պատրիարքարանի անցկացրած դժվարին օրերի և իրավիճակի մասին, որ հաջողվել է բարելավել և կանխել բացմաթիվ վիրավորներ՝ շնորհիվ հայության և միասնության ջանքերի: Նա հյուրերին ներկայացրեց Պատրիարքության առաջնությունը, բնութագրեց կրթական, մշակութային, համայնքի պահպանության, մեր իրավունքը հանդիսացող սրբավայրերի և եկեղեցիների, վանքապարկան կալվածքների և պետական հարաբերության հիմնական բնագավառները՝ ասելով. «Հակառակ բազմաթիվ դժվարություններու և կարիքներու, վերջին տարվա մեջ ոչ մեկ դիմում բրած ենք, որովհետև Հայաստանը առաջնային է, և օգնություն պետք է Հայաստան երթա»: Պատրիարքը Գ. Պոլսո Հայոց Պատրիարքին նվիրեց Ընթղեհեմի հայոց վանքի գմբեթի սաղաֆյա հարթաքանդակը, իսկ նախագահին Ընթղեհեմի ապրդի սաղաֆյա հարթաքանդակը: Նախագահը հայտնեց իր շնորհակալությունը և խոստացավ ամեն տարի ուղարկել մի բարձրաստիճան պատվիրակություն այս փոխադարձության առիթով, որպեսզի օժանդակած լինի Պատրիարքարանի այս դժվարին առաքելությանը:

Ընթրիքից հետո հյուրերը Հայոց Հայրապետի և նախագահի հետ առիթ ունեցան մոտիկից տեսնելու Սուրբ Հակոբյանց փաճարում պահված ազգային ու եկեղեցական մեր հարստությունները ու գանձերը:

Ժամը 20.00-22.00 տեղի ունեցավ ՀՀ նախագահի և Վենափառի հանդիպումը Ժողովրդի հետ: Թորգոմ Պատրիարքն իր ուրախությունը հայտնեց, որ մեր եկեղեցական ու պետական առաջին դեմքերն այստեղ են, և հրավիրեց նախագահին՝ իր խոսքն ասելու: Նախագահն իր այցի նպատակը բացատրելուց և Իսրայել-Հայաստան երկկողմ հարաբերությունները կարգավորելուց հետո անդրադարձավ հիմնական երեք հարցերի. Հայաստան-Սփյուռք հարաբերություն, Հայաստանի ներքին իրավիճակ և Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման բանակցությունների գործընթաց:

Նախագահի խոսքին հաջորդեց հարցուպատասխանի պահ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՏԱՃԱՐՈՒՄ

20 հունվարի 2000 թ.

Հինգշաբթի: Այսօր ննջեցյալների հիշատակի օրն էր: Առավոտյան տեղի ունեցավ հայրապետական Սուրբ Պատարագ: Ուխտավորների բազմությունը գնալով դառնում էր հոծ այս սրբավայրում, ուր տեղադրված է Սուրբ

«Խաղաղություն ամենեցուն»

Հակոբոս առաքյալի գլուխը, և այս իսկ պատճառով սրբավայրը կոչվում է Գլխադիր: Հայրապետական թափորն սկսվեց ավանդատնից: Տաճարում գոյություն ունեն բազմաթիվ խորաններ՝ նվիրված տարբեր սրբերի: Այս ավանդատան մեջ է գտնվում Սուրբ Մտեփանոս Սարկավագի և Նախա-

վկայի իրաբանը: Պատրաստի նրանցողությունը կատարում էին Ժառանգավորաց սաները և ԱՄՆ, Արևելյան թեմից իրեն ուղարկվորներ ժամանած «Սուրբ Հարություն» երգչախմբի անդամները՝ դեկավարությամբ Խորեն Մելիքսեթյանի: Պատրաստին ներկա էին նաև Եկեղեցիների ներկայացուցիչները:

Վեհափառը մի անգամ ևս անդրադարձավ մեր Տիրոջ Սուրբ Շնորհության խորհրդին և ասաց. «Նոր հազարամյակի շեմին համայն թիվ-տոնյա աշխարհի հետ, ի լույս Փրկչական Շնորհյան ավետիսի, լցված ենք վստահությամբ և հավատով՝ ժողովուրդների սիրով համագործակցության ու համերաշխության վերահաստատմանը»: Հաստատի ավարտին նա այս առիթով ողջույնի խոսք ասաց մեր Եկեղեցու եպիսկոպոսական Աթոռներին և նրանց գահակալներին, ի մասնավորի իր շնորհակալությունը հայտնելով Երուսաղեմի Հայոց Պատրիարքին՝ այս Սուրբ Երկրում լինելու հրավերի համար:

Պատրաստի ավարտին տեղի ունեցավ հոգևոր արարողություն՝ ի հիշատակ համայն նոր նահատակների:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՃԱՇ

Սա քրիստոնեական հին ավանդույթի շարունակությունն էր: Պատրաստից հետո Ժառանգավորաց սրահում տեղի ունեցավ հավաքական ճաշ, որին ներկա էին բոլոր Եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները, միաբանությունը, իսրայելյան ու պաղեստինյան պետական ներկայացուցիչներ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի Ընդհանուր հյուպատոսը, Ֆրանսիայի, Կանադայի, Իսպանիայի և մի շարք երկրների դեսպանական ներկայացուցիչներ: Ողջույնի խոսք ասացին. հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության՝ Մահակ արքեպս. Այվազյանը, Կ. Պոլսո Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը և բոլոր Եկեղեցիների անունից՝ Լատին Պատրիարք Միշել արքեպս. Սաբբահը: Ողջույնի խոսքերից հետո Թորգոմ Պատրիարք Մանուկյանը, շնորհակալություն հայտնելով բոլորին, միմյանց նկատմամբ հոգածու ու խնամատար ոգու կոչ արեց բոլորին և այս առիթով Բեթղեհեմում մի հայ վարպետի՝ հայկական ոճով բանողակված խաչքարը նվիրեց Վեհափառ Հայրապետին՝ իրեն սիրո արտահայտություն: Նա իր խոսքն օրհնեց

ներկայացուցիչներին ուղղելով՝ ասաց. «Մեր երկրի ձորերում, կիրճերում, լեռներում, եկեղեցիներում կան բազմաթիվ խաչքարեր. մեր երկիրը շատ է հարուստ խաչքարերով: Նույնը՝ Պարսկաստանում, բայց հարստությունը նրա մեջ է, որ ոչ մեկը մյուսի նման չէ»:

Պատրիարք Սրբազանի հրավերով Վեհափառն ասաց եզրափակիչ խոսքը:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնելով Պատրիարքին և ներկաներին՝ նշեց այն փարբերությունները, որ ունենք մենք. փարբեր լեզուներ, փարբեր փարազ և առանձնահատուկ ծես, «Սակայն այս բոլորով հանդերձ մենք մեկ ենք, նույն ենք, կապված ու շաղախված ենք միմյանց հետ Քրիստոսով: Ընդհանուրը մեր մեջ նորածին Մանուկն է, Հիսուս Քրիստոսն է, մեր Փրկիչը, որի առջև բոլորս, իբրև Եկեղեցու ներկայացուցիչներ, ունենք մեկ պատասխանատվություն. այդ պատասխանատվությունն իր արարչագործության հանդեպ է, մարդկային սիրո հանդեպ է, որպեսզի մարդկությունը զերծ պահենք աղետներից, որպեսզի նոր հազարամյակը լինի խաղաղության, Տիրոջ սիրո հաստատման մի նոր դարաշրջան: Ես աղոթք եմ բարձրացնում առ Աստված՝ մաղթելով, որ մարդկությունը ապրի խաղաղության մեջ, ի մասնավորի՝ Մերձավոր Արևելքում: Թող որ յուրաքանչյուրս գիտակցի, որ այս առաքելության մեջ մենք նույնպես ունենք մեր կարևոր մասն ու բաժինը, մեր ներդրումը որպես քրիստոնեական Եկեղեցի, որպես սպասավորներ Քրիստոսի»:

ՀԱՄԵՐԳ

Երևանյան Երուսաղեմի երաժշտական կենտրոնում տեղի ունեցավ մշակութային և երաժշտական միջոցառում՝ Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի հովանավորությամբ: Միջոցառմանը մասնակցում էին Պատրիարքարանի ՀԵՄ և ՀՄԸՄ կազմակերպությունների ակումբները, որոնք նախապատրաստել էին հայ մշակութային կյանքն արտացոլող բազմաբնույթ մի ծրագիր: Ծրագրում ընդգրկված էին պարային խմբերի, երգչախմբերի ելույթներ, աստունք և պատմական հայկական փարազների ցուցադրում: Յուրահատուկ զգեստավորմամբ հանդես եկավ Միացյալ Նահանգներից ժամանած ուխտավորներից և Հայոց Պատրիարքարանի

ճեմարանական ասեներից կազմված պարային խումբը՝ դեկավարությամբ խմբավար Խորեն Մելիքանջյանի:

Հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ

Վեհափառը բարձր գնահատեց ի մասնավորի ՀՄԸՄ-ի, ՀԵՄ-ի մենակատարների, Բարեսիրացի, Խորեն Մելիքանջյանի ջանքերը՝ կարճ ժամանակում բարձրարվեստ նման մի համերգ կազմակերպելու և մատուցելու համար:

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

21 հունվարի 2000 թ

Ուրբաթ օրը Վեհափառ Հայրապետը վաղ առավոտից Հայոց Պատրիարքարանում ընդունեց շնորհավորական այցելությունները բոլոր քույր

Եկեղեցիների պետերի և ներկայացուցիչների: Բոլոր հանդիպումներին էլ մասնակցում էին Ամենապատիվ Պատրիարքը, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն ու Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Տաճարի լուսարարապետ Տ. Նուրեան եպս. Մանուկյանը:

Հանդիպում քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ

Առավոտյան ժամը 9.30-ին Վեհափառ Հայրապետին այցելեց Հույն Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցչական խումբը՝ Պատրիարքական փոխանորդ Տ. Վասիլիոս Բլացոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Ներկա էին նաև Ռուս Եկեղեցու ներկայացուցիչներից Հայր Թեոֆանը և Հայր Այեքսանդր Վինոգրադսկին:

Շնորհավորական խոսքերից և բարեմաղթություններից հետո Վեհափառը Պատրիարքական փոխանորդին նվիրեց «Սուրբ Էջմիածնի Գանձեր» գիրքը:

Ժամը 10.00-ին Հայոց Պատրիարքարանում Վեհափառ Հայրապետին այցելեց Երուսաղեմի լատին Պատրիարք Տ. Միշել արքեպս. Սաբբահը: Այս

պատվիրակության մաս էին կազմում հույն կաթողիկե առաջնորդ Լութֆի Լուհամը, Մարոնի արքեպս. Պող Մայաիր և Երանցիսկյան ողջ միաբանությունը՝ սրբազան տեղապահի գլխավորությամբ: Վեհափառը նախ իր շնորհակալությունը հայտնեց այս դպրավոր ներկայացուցչության համար և մաղթեց, որ նոր հազարամյակը օրհնություն լինի բոլորիս համար: Ողջույնի խոսքով հանդես եկան բոլոր ներկայացուցիչները և իրենց խոր հարգանքը արտահայտեցին Հայ Եկեղեցու նկատմամբ:

Վեհափառն իր ույս այցելությունը հոգևոր հարստություն համարեց ոչ միայն Սուրբ Տեղեր այցելության համար, այլև բույր Եկեղեցիների շփման առումով, և ասաց, որ ինքը Մույր Աթոռ է վերադառնում նրանց պատկերը պահած իր հոգում, և վստահեցրեց՝ ասելով. «Երբ նայում եմ Ձեզ, ուրախանում եմ, որ այս Սուրբ Տեղերը ապահով ձեռքերի մեջ են»:

Հանդիպման ավարտին Վեհափառը լատին Պատրիարքին նվիրեց պատի մի փոքր խաչքար, հույն կաթողիկե և մարոնիտ առաջնորդներին՝ «Հայաստան-Հռոմ» գիրքը, իսկ Երանցիսկյան միաբանությանը՝ «Սուրբ Էջմիածնի Գանձեր» հատորը:

Ժամը 11.00-ին Հայ Եկեղեցու դավանակից Եկեղեցիների պետերի այցելությունն էր Վեհափառ Հայրապետին. Ղպտի Եկեղեցու առաջնորդ Մնրա Աբրահամը, Եթովպական Եկեղեցու առաջնորդ Մնրա Գաբրիելը և ասորի Եկեղեցու առաջնորդ Մար Սեսրիոս Մելքի Մուրատ Եպիսկոպոսը: Շնորհավորական ու շնորհակալական խոսքերից հետո Վեհափառն իր գնահատանքը հայտնեց, որ մենք՝ դավանակից Եկեղեցիներս, լավ ենք ներկայացված, և մաղթեց սեր, առավել համագործակցություն, նոր հազարամյակի շեմում շեշտեց խաղաղության ու սիրո հաստատման համար մեր ստանձնելիք պատասխանատվությունը և իր եղբայրական ողջույնները հղեց Հայ Եկեղեցու դավանակից երեք Եկեղեցիների պետերին:

Հանդիպման ավարտին Վեհափառը Եկեղեցու առաջնորդներին նվիրեց մեկական կավե ափսե՝ հայկական մանրանկարչական նախշերով զարդարված:

Ժամը 11.30: Վեհափառ Հայրապետին այցելեց Երուսաղեմում Պապական նվիրակը: Վեհափառը շեշտեց միջեկեղեցական հարաբերությունների կարևորությունը և այն ամուր կապերը, որոնք առավելաբար վերջին դասը դարերի ընթացքում ստեղծվել են Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև: Նա

Հուշանվեր-խաչքարի հանձնում Պապական նվիրակին

հիշեց նաև երջանկահիշատակ Գարեգին Ա-ի երկու այցելությունները Հռոմ և Պապի ցանկությունը՝ թեկուզ մեկ օրով այցելելու Վեհափառին Մայր Աթոռում:

Ժամը 12.00: Վեհափառ Հայրապետին այցելեցին Երուսաղեմում Անգլիական և Լութերական Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք շնորհավորական իրենց բարի զգացումները արտահայտեցին՝ ասելով, որ Վեհափառի այցելությունը կարևոր էր ոչ միայն հայ համայնքի համար, այլև ամբողջ քրիստոնյաների: Եկեղեցիների ներկայացուցիչները խոսեցին մի կարևոր երևույթի մասին. Երուսաղեմում քրիստոնյաների թիվը նվազում է, և այս առիթով խնդրեցին Վեհափառի խորհուրդներն ու աղոթքը: Վեհափառը ափսոսանք հայտնելով հանդերձ այս երևույթի կապակցությամբ՝ փոխանցեց իր

լավատեսություններ՝ ունենալով թրիստոնեական հավատքի, սիրո և եղբայրության վկայություններ այս երկրում: «Մեր սեթը այնքան մեծ է, մեր Տիրոջ նկատմամբ, որ ոչինչ էլ չի լինելու, մեր հավատքի զորությամբ աշխարհ կարողանանք ամրացնել ու շենացնել այս սրբավայրերը: Սրա մեջ է իմ լավատեսությունը: Քրիստոնեական մեր հավատքը փարատելու է ամեն տեսակի մտավոխություն, և Լավանը մեր Էկումենիկ ոգին է, որը պիտի զորացնենք»:

Հուշանվերների փոխանակում Երուսաղեմի Լատին Պատրիարքի հետ

Հանդիպման ավարտին Վեհափառը Պապական եվիդակին եվիրեց Սուրբ Էջմիածնից բերված մարմարյա խաչքար, իսկ Անգլիկան և Լութերական Եկեղեցիների պետերին եվիրեց մեկական կավե ափսե՝ հայկական մանրանկարչական նախշերով զարդարված:

Հետմիջօրեին Վեհափառը Պատրիարք Սրբազանի առաջնորդությամբ շրջագայեց Պատրիարքարանի շրջափակում գտնվող այն վայրերը, որոնք Պատրիարքարանի հոգևոր, մշակութային, կրթական և ազգային կառույցներն են: Այցելեց թանգարան, մատենադարան, Սուրբ Թորոս եկեղեցում տեղադրված ձեռագրատուն, Երանաշնորհ Պատրիարքների դամբարան ու

հայ համայնքի գերեզմանատուն, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի և Սուրբ Սարգսի գանձատուն: Վեհափառը մոտից հետևեց այս վայրերում տիրող կացությանն ու իրավիճակին:

Երեկոյան Վեհափառն այցելեց Ժառանգավորաց սաներին, որոնք Նորին Սրբության համար պատրաստել էին գեղարվեստական ծրագիր: Վարժարանի տեսուչը Վեհափառին և հյուրերին ներկայացրեց մի կարճ զեկույց՝ հոգևոր այս կրթօջախի կրթական, ուսումնական վիճակի և ուսանողության ներկայացրած պատկերի մասին:

Վեհափառն իր պատգամով կոչ արեց խուսափել անտարբերությունից, անկանոնությունից և հորդորեց լցվել պատասխանատվության գիտակցությամբ. «Հոգևոր ասպարեզը կոչում է և առաքելություն. մեր զգեստը արտահագուստ չէ, այն մեզ համար մեր էությունն է, մեր ոգին է, մեր առաքելության առանցքն է»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

22 հունվարի 2000 թ.

Շաբաթ օրվա առավոտը Վեհափառի և իր պատվիրակության անդամների համար վերապահվել էր լինելու Տերունական սրբավայրեր այցելության օր: Առաջին այցելությունն այնտեղ էր, ուր պահպանվել էր 4-րդ դարից հասած մի խճանկար, որի արձանագրությունը գալիս էր 5-րդ դարից:

Վեհափառն այստեղից ուղղվեց Զիթենյաց լեռ, որտեղ՝ մատռան մեջ, մի կտոր ժայռի վրա, գտնվում է Հիսուսի ոտնահետքը: Զիթենյաց լեռան շրջապատում գտնվում էր Հայր մեր-ի վանքը, որտեղ աշխարհի ամենատարբեր լեզուներով պատերի վրա հախճապակե տառերով գրված է Տերունական աղոթքը: Ավանդության համաձայն Հիսուս այս վայրում էր, որ իր աշակերտներին Տերունական աղոթքը սովորեցրեց: Հայկական արձանագիր «Հայր մեր»-ի առաջ կանգնած բոլորը արտասանեցին այդ աղոթքը: Մի քիչ հեռվում գտնվում էր մի ռուսական եկեղեցի, որի վանականները ենթակա էին 1920 թ. Նյու Յորքում հաստատված իրենց Սինոդին: Այս եկեղեցու արքեպիսկոպոսը, որին ենթարկվում են Բեռլինի, Մեծ Բրիտանիայի ռուսները,

Վեհափառին ներկայացրեց իրենց առաքելության բնագավառները և իրենց ունեցած դժվարությունները: Այս շրջափակում են գտնվում մի մեծ խնամակալ և Սյունյաց Արքական իշխանի մայր Շուշանիկի գերեզմանը:

Այստեղից Վեհափառն իր շքախմբով ուղղվեց Գեթսեմանիի Ձոր, ուր գտնվում է Սուրբ Աստվածածնի գերեզմանը: Վեհափառն այստեղ ծնկաչոր

Հանդիպում ռուսաց Եկեղեցու արքեպիսկոպոսի հետ

համբուրեց և կատարեց իր աղոթքը: Այս սրբավայրի իրավատերերը հայերն են և հույները, իսկ շաբաթը մեկ անգամ թույլատրվում է աղոթել նաև դպիրներին և ասորիներին: Այստեղ կան կարևոր երկու խորաններ. Սուրբ Առաքելոց և Ընծայման խորանը: Վերջինիս առաջ խումբը երգեց «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը: Այս սրբավայրի տնօրեն Հայրիկ Սրբազանը Վեհափառին նվիրեց մի սրբապատկեր և Էջմիածնի ոսկյա մեդալ: Հայոց վանք վերադարձի ճանապարհին Վեհափառն այցելեց Երուսաղեմում ռուսաց հոգևոր առաքելություն: Կատարված կարճ աղոթքից հետո եկեղեցու տնօրեն Վեհափառին առաջնորդեց գահասրահ, ներկայացրեց իրենց դիմագրաված դժվարությունները և այն ծրագրերը, որոնք մաս են կազմում իրենց առաքելության:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Շաբաթ օրը, կեսօրից հետո, Հայրապետական թափորը սկսուփների նվագախմբի առաջնորդությամբ Հայոց վանքից ուղղվեց Սուրբ Հարության Տաճար: Եկեղեցական թափորի առջևից, հին ավանդությունը պահպանելով, քայլում էին դավազները, որոնց հետևում էին Վեհափառն ու Պատրիարքը, հոգևորականները, ապա համայնքի հավատացյալների և ուխտավորների թափորը: Սուրբ Հարության Տաճարում ծիսակատարության իրավունք ունեն հույն, հայ և լատին Եկեղեցիները: Տաճարի մուտքին թափորը կանգ առավ, և Վեհափառը մենակ առաջացավ դեպի պատանատեղի, համբուրեց սրբաքարը, խնկարկեց սրբաքարը, հոգևորականներին ու ժողովրդին: Այնուհետև մոտեցավ այն մեծ սրբավայրին, որտեղ գտնվում է Հիսուսի Գերեզմանը: Վեհափառը այստեղ ևս շարունակեց խնկարկությունը, համբուրեց Տիրոջ գերեզմանաքարը և դուրս գալով՝ ավետեց. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Սա ավանդական պատգամն է, որը պետք է ավետել գերեզմանից դուրս գալուց հետո:

Այնուհետև եկեղեցականները զույգ-զույգ մոտեցան ու համբուրեցին Տիրոջ գերեզմանը: Այս սրբավայրից թափորն ուղղվեց Վերնատուն, երկրորդ Գողգոթա, որը հայոց իրավունքի բաժինն է: Այստեղ բարձրացող աստիճանների սեմին գտնվում է այն վայրը, որտեղ Աստվածամայրը նվաղեց: Այստեղ այժմ կառուցված է մի խորան Ցուղաբեր կանանց հիշատակին: Վերնատան մեջ սաղմոսասացությունից և կանոնական աղոթքից հետո տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն: Վերնատան խորանի ձախակողմում է Սուրբ Աստվածածնի խորանը, որտեղ Սուրբ Պատարագ է մատուցվում ամեն տարի, Վերափոխման տոնին հաջորդող կիրակի օրը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ

23 հունվարի 2000 թ.

Վեհափառ Հայրապետն իր ուխտի վերջին Պատարագը մատուցեց Սուրբ Հարության Տաճարում, Հիսուսի Գերեզմանի վրա: «Փառք Ցարութեան քո, Տէ՛ր, ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ» փառապրական երգի այս հատվածը Վեհափառն ընտրել էր քարոզի բնաբան: Սուրբ Հարության Տաճարի լույս

խորհրդի ներքո «Վեհափառը բոլորանվեր ծնրադրությամբ սա Աստված օրհնություն սաղմոսներգից՝ վասն Հայրենյաց և Ազգիս հայոց: «Հարության հաղթական այս բարձունքից առավել տեսանելի է մեր ապրած 20-դարյա ուղին, որը հինավուրց մեր ժողովրդի կենաց պատմությունն է վասն հավատի, վասն Հայրենյաց, մաքառումներով, խաչելությամբ յի արարումներով ու հարությամբ հաղթապսակ: «Ժամադրություններ Հիսուսի հետ» պահած նոր դարին հասել է Հարության շնչով Հարություն վերակերտած «Աստծու սեփական ժողովուրդ» որպես անկախ պետականության դրոշն ենք պարզել Հայաստանում և Արցախում: Անցյալ ու ներկա դժվարին մեր կյանքի բազում հարկայրանքներով մեր ժողովուրդը բաժանված է աշխարհագրական սահմաններով, ճակատագրով ու աշխարհընկալումներով, սակայն մենք նույնն ենք, մեկ ենք, և միակ շաղախը, որ միավորում է ամենքիս, միակ կամարը, որ կապում և համախմբում է բոլորիս, մեծ Սերն է, անձնազոհ Սերը հանդեպ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, անպայմանավոր սերը հանդեպ նորաբնակ Հայաստան և Արցախ հայրենի մեր երկիրը, նրա անցյալը, այսօրն ու ապագան»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

«Փառք յարութեան քո, Տէ՛ր,
եւ ոչ դադարեցայց օրհնել զՔեզ»
(Ժամագիրք)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սուրբ Հարության Տաճարի լույս խորհրդի ներքո Մեզ համար եվիրական այս պահին՝ համակված Տիրոջ երկյուղով ու փրկարար հույսով, սիրելի հավատացյալ ժողովուրդ, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, հոգուս բոլորանվեր ծնրադրությամբ «աղօթիք և խնդրուածովք» վասն Հայրենյաց և ազգիս հայոց օրհնություն ենք սաղմոսներգում սա Աստված:

Բեթղեհեմյան Այրի մեջ Մանուկ Հիսուսի Աշխարհգալստյան մեղեդին ունկնդրելուց հետո՝ առլեցուն զոտեպնդող ու քաջալերող զգացումներով, եկել ենք այս սրբավայրում Հարության կենարար շնչով Մեր ուխտը նորոգելու՝ հարուցյալ Քրիստոսին օրինակ առած ու Նրա կյանքի նույն հանգրվաններով անցած մեր ժողովրդի իղձերն ու նպատակները Մեր հոգում ծրարած:

Սիրելիք մեր. եկել ենք Հայաստան հինավուրց աշխարհից՝ Նոյյան տապանը հյուրընկալած բիբլիական Արարատի երկրից, երկիր, որ 2000 տարիների քրիստոնեական իր կյանքով, իր բառ ու բանով, հավերժախոս իր տաճարներով ու խաչքարերով, հայաբարբառ Քրիստոսով, Մեսրոպադրոշմ մագաղաթներով ու մատյաններով շարունակում է փառաց պսակ հյուսել Հարության կենդանարար խորհրդին՝ ճշմարտելով այն որպես երաշխիք համայն հայության հարատևության:

Եկել եմ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ուր 1700 տարիներ առաջ մեր հավատո Հայր Սուրբ Լուսավորչի անձկագին կանչով Աստվածորդին իջավ՝ շնորհելով մեզ խորհուրդը Սուրբ Էջմիածնի: «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»: Էջմիածնի Լույսը Սիրով շաղկապեց Հայոց պետությունն ու Եկեղեցին՝ ուղենշելով առաքելությունը Հայկյան մեր զարմի: Եվ ինչ է այս առաքելությունը, եթե ոչ՝ սեր առ Հայրենիք, սեր առ Եկեղեցի, որ դարերի փորձությանց հորձանուտներում մեր ժողովրդին առաջնորդել է դեպի փրկություն, փոխադարձելով սերն առ Աստված:

Բյուր օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ձեզ ամենքիդ, այս Տաճարին: Մեր ու ոչջույն մեր սուրբ հողից, դժվարությունների մեջ համբերող, հոգսերից չվհատվող, իրենց այսօրն ու վաղը կառուցող, մեր Հայրենիքի ապագան կերտող հայրենաբնակ մեր ժողովրդից:

Ուրախ ենք և մխիթարված, սիրելի ժողովուրդ Հայոց, որ Հարության այս լույս բարձունքին, սրբազան Տաճարիս կամարների ներքո, որպես միասնականության առհավատչյա՝ տեսնում ենք աշխարհի չորս ծագերից ուխտ ու աղոթքով, աշխարհին հաղթած Տիրոջ սուրբ Սիրով ի մի խմբված մեր զավակաց:

Հաղթական այս բարձունքից առավել տեսանելի է մեր ապրած կյանքի 20-դարյա ուղին, որը հինավուրց մեր ժողովրդի կենաց պատմությունն է՝ վասն հավատի, վասն Հայրենյաց՝ մաքառումներով ու խաչելությամբ լի, արարումներով ու հարությամբ հաղթապսակ:

Սիլարայով ու Մարդարապարով նեք արիացել, պետականություն հաճախ կորցնելով՝ իմաստնացել, մեր հայրերի Աստծուն և մեր սուրբ նախնյաց հավատքին ուպավինած, «ժամադրություն Հիսուսի հետ» հավատքատրմորեն սլահած՝ նոր դարին հասել և Հարության շնչով Հարություն վերակենդանացած «Աստծո սեփական ժողովուրդ» որպես՝ անկախ պետականության դրոշն նեք պարզել Հայաստանում և Արցախում: Մեր գավակաց կյանքի թանկ գնով ու արյան հեղմամբ վերահաստատել նեք ազգերի մեծ ընտանիքում ազատ, խաղաղ ու ստեղծագործ կյանքով ապրելու անօտարելի մեր իրավունքը:

Այո, անցյալ ու ներկա դժվարին մեր կյանքի բազում հաբկադրանքներով մեր ժողովուրդը բաժանված է աշխարհագրական սահմաններով, ճակատագրերով ու աշխարհընկալումով և նույնիսկ լեզվով: Սակայն մենք նույնն նեք, մեկ նեք, և միակ շաղախը, որ միախառնում է ամենքիս, միակ կամարը, որ կապում և համախմբում է բոլորիս, մեծ Սերն է: Մեծնագոհ Սերը հանդեպ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին՝ իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, անպայմանավոր Սերը հանդեպ նորանկախ Հայաստան և Արցախ հայրենի մեր երկիրը, նրա անցյալը, այսօրն ու ապագան:

Մեր աղոթքի և ուխտի սրբազան այս պահին անդրադարձումի այսպիսի խոհերով կրում նեք մեր հոգում համայն հայության՝ նահապետ ու ողջ, աշխարհասփյուռ ու հայրենաբնակ մեր բոլոր գավակաց բյուր աղոթքները և Լուսարնակ այս սրբարանում բարձրացնում առ Աստված՝ որպես նրախտիք Բարձրյալի Սիրո, որ խնամել է մեզ և առաջնորդել նարատնության և երկար ու ձիգ տարիներ արթուն աչքով հսկել ու պահպանել է Իր Միածին Որդու սրբաշունչ տեղիները՝ բազում մխիթարություններ պարգևելով նաև քրիստոնյա մեր «փտքր ածու»-ին:

Մեր աղոթքն նեք վերառաքում առ Բարին Աստված՝ Իր Աջի հովանին հայցելով հրեա և արաբ նորայր ժողովուրդներին, նրանց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներին, որ ազնվորեն աջակցել ու օժանդակել են քրիստոնեության այս բնօրրանի պահպանմանն ու բարեգարդմանը:

Քրիստոսի այս լույս գերեզմանից Հայրապետական ջերմ սիրով ողջունում նեք Նվիրապետության մեր երեք Աթոռներին և նրանց Գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և Կ. Պոլսի

Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին:

Հայրապետական գնահատականացս հավաստիքն ու ողջույններս եմ բերում Սրբոց Հակոբյանց զինվորյալ ռազ միաբանությանը, որ ավանդ է ստացել և մեծ ջանադրությամբ շարունակում է հոգացողություն ունենալ Տերունական վայրերի նկատմամբ՝ անխափան կարգապահությամբ սպասավորելով Հարուցյալ երկնավոր Փրկչի երկրավոր բնակարաններում: Հայրապետական մաղթանքս է, որ Ամենակարող Աստված մշտամնա խաղաղություն շնորհի այս հինավուց երկրին, որից հավատո լույսեր են ճառագում համայն աշխարհին:

Խաղաղության կոչով Քրիստոս աշխարհ եկավ և նույն խաղաղության պարգևով թողեց երկրավոր կյանքը. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»: Տիրոջ խաղաղությունը թող միշտ թևածի մարդկային կյանքի երկնակամարում: Թող Ամենախնամ Աստված բազմազգ ու բազմալեզու ժողովուրդների բոլորանվեր ուխտապահությունը որպես անամպ ու կապույտ երկինք անխաթար պահպանի համայն ազգերի և մեր Հայկյան սերնդի գլխավերևում՝ ի փառս Հարուցյալ Փրկչի և ի պայծառություն քրիստոսազարմ իր ժողովրդի:

«Օրհնութիւն Յարուցեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»:

Վեհափառ Հայրապետն իր քարոզի ավարտին հայրապետական ջերմ սիրով ողջունեց նվիրապետական մեր երեք Աթոռներին և նրանց Գահակալներին:

Պատարագի ավարտին Հայրապետական թափորը խաչի շարականների երգեցողությամբ երեք անգան պտտվեց Հիսուսի Գերեզմանի շուրջ և կանգ առավ Տիրամոր ուշաթափման վայրում, որտեղ երգեց «Այսօր քահանայապետ» շարականը և Հայրապետական մաղթերգը, որից հետո Վեհափառը օրհնեց ուխտավոր հավատացյալ ժողովրդին:

Նույն օրը, հետմիջօրեին, Վեհափառը Պատրիարք Սրբազանի և իր շքախմբի անդամների հետ այցելեց Երիքով պատմական քաղաք, Փորձության Լեռ, որտեղ Հիսուս իր առաքելության նախաշեմին քառասուն օրեր անցկացրեց, և Հորդանան գետ: Յուրաքանչյուր սրբավայրում Վեհափառն

աղոթեց և իր հոգևոր մտորումները փոխանցեց իր հետ գտնվողներին: Վանքի դուռը, Սրբոցդամ ինքնաշարժին, Վեհափառը հասցրեց տարբեր ուխտավորների և շնորհավորեց թոթորին այս բարեբաստիկ ուխտագնացության առիթով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

24 հունվարի 2000 թ.

Երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, հունաց Պատրիարք Դիոդորոս Ա-ի հրավերով Վեհափառ Հայրապետն այցելեց Հունաց Պատրիարքարան: Առողջական իր վիճակի պատճառով հունաց Պատրիարքը չէր կարողացել այցելել Վեհափառին: Նա իր ուրախությունը հայտնեց Նորին Սրբությանն այս հարկի ներքո ընդունելու համար և մնձապես կարևորեց այս այցը՝ այն համարելով քաջալերանք բոլոր քրիստոնյաների համար:

Վեհափառը նախ Պատրիարքի առողջության համար կատարեց իր բարեմաղթությունները, ապա խոսելով Հայ և Հույն Եկեղեցիների հարաբերության կարևորության մասին և գնահատելով քրիստոնյա Եկեղեցիների ցուցաբերած նախանձախնդրությունը Սուրբ վայրերում Պատրիարքին նվիրեց Էջմիածնից բերված մարմարյա խաչ, որպեսզի այն լինի անսպառ օրհնության աղբյուր:

Ժամը 11.00-ին Վեհափառին այցելեց Երուսաղեմի մուֆթի Շեյխ Արդլ Ազիմ Սալհարը՝ իր տեղակալներով և օգնականներով: Հոգևոր առաջնորդը բարձր գնահատեց Վեհափառի այցը և ցանկություն հայտնեց միասնաբար դիմագրավել բոլոր դժվարությունները, այս հարաբերությունները դարձնել օրինակելի: Վեհափառն իր շնորհակալությունը հայտնելուց հետո վկայեց արաբ ժողովրդի հոգու ջերմության մասին, որին ականատես էր դարձել: Նա ասաց. «Մենք հավատում ենք, որ նոր դարաշրջանը պիտի լինի հոգևոր արժեքների վերակենդանացման և տարբեր ժողովուրդների համերաշխության շրջան, որի ճարտարապետները մենք ենք լինելու»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՀԵՏ

Ժամը 12.00-ին Վեհափառ Հայրապետը Պատրիարք Սրբազանի հետ այցելեց երեա ժողովրդի ողջակիզման թանգարան և ծաղկեպսակ զետեղեց զոհերի հիշատակին:

Նույն օրը, ժամը 13.00-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Երուսաղեմից մեկնելուց առաջ այցելեց Սրբոց Հակոբյանց Տաճար, համբուրեց Գլխադիրի սրբավայրը և ատյանի մեջ կատարեց կանոնական

Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Եկեղեցիների հոգևոր պետերով, եկեղեցական ու աշխարհիկ ուխտավորներով

աղոթք: Բաժանվելուց առաջ անձնապես իր և իրեն ընկերակցող շքախմբի անդամների անունից առաջին հերթին շնորհակալություն հայտնեց Ամեն. Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին՝ այս հրավերի համար: Առ ի գնահատումն Թորգոմ Պատրիարքի, Վեհափառ Հայրապետը Սրբազանին նվիրեց Էջմիածնից բերված Սուրբ Սկիհ:

Երուսաղեմից Վեհափառը մեկնեց Յաֆա և այցելեց տեղի հայոց վանք, ուր գտնվում է Սուրբ Նիկողայոս եկեղեցին:

ՄԵԿՆՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

25 հունվարի 2000 թ.

Երեքշաբթի օրը Վեհափառ Հայրապետը իր շքախմբի հետ Թել-Ավիվով մեկնեց Թուրքիա:

Ստամբուլի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ընդառաջ էին եկել Ս. Պոլսո Հայոց Պատրիարք, Ամեն. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, Շահան արքեպս. Սվաճյանը, Արամ եպիսկոպոսը, հոգևոր հայրեր, Մայր Եկեղեցու և Ցեղիլ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու թաղական խորհուրդների անդամները: Վեհափառ Հայրապետը օդանավակայանից իր շքախմբով առաջնորդվեց Ցեղիլ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցի:

Մի քանի ժամ Ստամբուլում մնալուց հետո Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

(30 հունվարի 2000 թ.)

Լուսաբարապետ Սրբազան Հայր, սիրելի հոգևոր եղբայրներ, սիրելի հավատացյալներ և պաշտոնեություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի.

Փառք և գոհություն եմ մատուցում առ Աստված, որ առաջին մեր ուղևորությունը դեպի արտասահման, որ եղավ ուխտագնացություն Սուրբ Երկիր, Տերունական Սուրբ վայրեր, բարեհաջող, խանդավառող, գոտեպնդող ընթացք ունեցավ, և ահա այսօր մենք վերադարձել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ գոհունակ սրտով մեր աղոթքը վերստին առ Աստված բարձրացնելով մեր Եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր նվիրապետական Աթոռների պայծառացման և զորացման համար: Մենք ուղևորվեցինք Երուսաղեմ՝ հանդիպումներ ունենալով Արաբական Էմիրություններում և Հորդանանում ազգային կյանքով ապրող մեր ժողովրդի զավակաց, այնտեղի հայ համայնքների հետ, որոնք Հայրապետին Հայոց ընդունեցին մեծ խանդավառությամբ, ցնծությամբ ու բերկրանքով: Նրանց ուրախությունը, նրանց ջերմությունը բարձր գնահատանքի արժանացավ նաև տվյալ երկրների իշխանության ներկայացուցիչների կողմից: Հավանաբար բոլորդ արդեն գիտեք, որ արժանացանք Հորդանանի թագավորի գնահատանքին՝ երկրի բարձրագույն պարգևին՝ առաջին աստիճանի շքանշանին, որը, բնականաբար, մեր անձի նկատմամբ դրսևորված գնահատանքից ավելի հայ ժողովրդի, նրանց բազմամյա ծառայության, որպես ազնիվ քաղաքացիներ, իրենց մասնակցությունը բերած Հորդանան երկրի շինության ու բարեզարդումի վկայություն էր և գնահատություն:

Հորդանանից մենք ուղևորվեցինք դեպի Սուրբ քաղաք Երուսաղեմ: Դժվարանում եմ նկարագրել այն խանդավառությունը, այն ոգևորությունը, որ ապրում էր այդ պահին Հայոց Երուսաղեմը: Հորդանանում մեզ հետ էր Երուսաղեմի Հայոց Պատրիարքը և միաբաններ Սրբոց Հակոբյանց վանքի, իսկ Երուսաղեմում մեզ միացան նաև Պոլսո Հայոց Պատրիարք Մեսրոպ

արքեպս. Մութաֆյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության բարձաստիճան եկեղեցականներ, որպես ներկայացուցիչներ Արամ Ա Վեհափառ Հայրապետի: Ցնծալից օրեր ապրեցինք՝ մեր հոգում ընդունելով մեր Տիրոջ՝ Փառաց Քրիստոսի ծննդյան բարի ուսուցումը, բարի ավետիսը՝ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Առաջնակարգ խորհուրդ, իմաստ և նշանակություն ունեն այդ բառերը մեր հոգում հատկապես Սուրբ Տեղյաց մեջ, հատկապես Սուրբ Երկրում, ուր թե՛ արար, և թե՛ հրեա ժողովուրդներն այնքան կարիքն ունեն փոխհասկացողության, խաղաղ կյանքի և բարոյ կյանքի:

Մենք Պատարագներ մատուցեցինք ինչպես Սուրբ Ծննդյան մատրում, այնպես էլ Սրբոց Հակոբյանց վանքում և Սուրբ Հարության տաճարում: Ամեն տեղ մեր շուրթերից առ Աստված բարձրացող աղոթքը համայն աշխարհի մեր ժողովրդի համար մաղթանք էր, հայց էր ու աղաչանք, որպեսզի երրորդ հազարամյակը լինի խաղաղության տարի ազգերի և ժողովուրդների համար, շինության, շենության ու հզորացումի տարի մեր հայրենիքի և մեր ժողովրդի համար:

Ուրախությունը մեր մեծ էր հատկապես, որ Բեթղեհեմի Սուրբ Այրի մեջ աղոթքի լիև կանգնած մեր ժողովրդի աշխարհիկ իշխանավորները՝ գլխավորությամբ Հանրապետության նախագահի, և հոգևոր պետերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքը, Պոլսո Հայոց Պատրիարքը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ եկեղեցականներ: Ամենուրեք հպարտություն էր համակում մեր հոգուն, մեր շքախմբի յուրաքանչյուր անդամին, որովհետև վկաներն էինք դառնում այն մեծագույն սիրո, որ մեր ժողովրդի գավակունք 1700 տարիներ շարունակ տածել են մեր Փրկչի, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ, իրենց սերը մարմնավորելով որպես հոգևոր-մշակութային արժեքներ: Խորագույն հարգանքով մենք գնահատանքի էինք արժանացնում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությանը, Պատրիարք Սրբազան Հոր ներդրած ջանքերը, անձնական նվիրումն ու ծառայությունը՝ պահպանելու այն բոլոր արժեքները, որոնք անհուն գոհաբերությունների գնով կերտել են, ստեղծել են, ձեռք են բերել մեր ժողովրդի գավակունք:

Ահա այսպիսի ուրախ զգացումներով, մեր ուխտը նորոգած, զորանպինդ վերադարձել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ մեր ծառայությունը ամբողջանվեր բերելու մեր երկրի շենացման, մեր ժողովրդի երջանիկ, բարոյ

կյանքի կերտման համար: Առանձնակի ուրախություն է տեսնել մեր միաբաններին այս պահին համախումբ, շրջապատած Հայոց Հայրապետին, նաև մեր ժողովրդի հավատավոր զավակաց, այս սրբազան կամարների ներքո, որոնք նոր ոգևորություն, նոր լիցք, նոր ուժ, նոր խանդավառություն, նոր ոգի ու եռանդ էին ներշնչում մեզ՝ դեպի մեր Եկեղեցու վաղվա պայծառ օրը, դեպի մեր ժողովրդի վաղվա լուսավոր ապագան:

Մենք աղոթք ենք առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը սիրո մեջ ամրացնի մեզ՝ որպես ազգ, որպես Եկեղեցի շարունակելու մեր ընթացքը նույն փառքի հյուսմամբ մեր Տիրոջ անվանը դեպի նոր հազարամյակ, դեպի նոր դարեր շինության, դեպի նոր դարեր փառքի, որոնք և երաշխավորելու են հարատևությունը մեր ժողովրդի ու հայրենիքի:

Թող Աստված իր սիրո օրհնության ներքո պահի ազգը մեր, Եկեղեցին Հայաստանյայց և հայրենի պետությունը մեր՝ իր նվիրյալ իշխանավորներով, այժմ և հավիտյանս. ամեն:

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եթե ժամանակը հավիտենական է և որպես հասկացություն՝ հարաբերական, այս Նոր տարով այն դառնում է կյանքը խորհրդանշող մի իմաստություն:

Նոր տարին որպես ժամանակի մի հատված, մի հանգրվան է հանդիսանում, որ մարդը կանգնում և հաշիվ է տալիս ինքն իրեն: Այդ պահը կյանքի այն հատվածն է, երբ մարդը հետադարձ մի հայացք է գցում իր անցած ուղու և իր կատարած գործունեության վրա, բարի և չար արարքների վրա:

Դեկտեմբերի 31-ին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանության, ներքին թեմերի առաջնորդների ուղեկցությամբ, առաջնորդվում է նախկին Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների սրահ, որ Ճեմարանի դասախոսներն ու ուսանողները ծափոտոջյուններով դիմավորում են Նորին Սրբությանը:

Ամանորի երեկոն սկսվում է Տերունական աղոթքով, որից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները, ղեկավարությամբ Ճեմարանի երաժշտության դասախոս Ռուբեն Շարբաթյանի, կատարում են ՀՀ օրհներգը և Ճեմարանի քայլերգը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տնօրության անունից Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված խոսքով հանդես է գալիս Ճեմարանի փոխտնօրեն Տ. Բարկեն աբեղա Սալբիյանը.

«Վեհափառ Տեր.

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, պաշտոնեություն Մայր Աթոռի, սիրելի դասախոսներ, հյուրեր և շատ սիրելի սաներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի.

Իրոք մարդկային կյանքը նման է ակնթարթի: Կարծես երեկ էր, որ մեծ հանդիսությամբ դիմավորում էինք 1999 թվականը հույսերի և երազանքների կատարման մեծ ակնկալիքով, սակայն այսօր հրաժեշտ ենք տալիս նրան և մեր հայացքներն ուղղում դեպի գալիք նոր՝ 2000 թվականը:

Կարողացա՞նք արդյոք անցնող տարին արժևորել մեր կյանքում, թե ոչ, ցույց կտա ժամանակը, և պատմությունը կդառնա մեր դատավորը: Մի քանի ժամ հետո ժամացույցները կազդարարեն, որ 2000 թվականը մտել է իր

պարտականությունների մեջ, և մեզ համար բացվել է կյանքի, երազանքների ու հույսերի չգրված էջ, որը լցնում է մեզ Ամանորի խոհերով, երազանքներով, գործունեությամբ և աշխատանքի նոր հեռանկարներով:

Ժամանակի տեսակետից, հին և նոր տարին նույնն են՝ հավերժական և անփոփոխ, սակայն կյանքի մեջ էականը ոչ թե ժամանակի փոփոխությունն է մարդու համար, այլ կյանքի և մարդու փոփոխությունը, քանզի տարին նորանում է մարդու նո՛ր հավատով, նո՛ր խոհերով և նո՛ր գործերով:

Հուզիչ է կանգնել նոր տարվա շեմին վճռական այն որոշմամբ, որ գալիք տարում թոթափելու ենք մեր տկարությունները, հոգեպես վերանորոգվելու և ձգտելու ենք կատարելության՝ ապրելու մեզ Աստծո տրված ժամանակը որպես հոգով վերանորոգված մարդիկ, նոր իմաստ ու նպատակ տալու մեր կյանքին մեր բարի ու աստվածահաճո գործերով: Սա է մեր վճռական ուխտը նոր հազարամյակի լուսաբացին:

Վեհափառ Տեր, Ամանորի այս խաղաղ երեկոյին թույլ տվեք ի սրտե մաղթել Ձերդ Սրբությանը բազում լուսաշող տարիներ, որպեսզի Դուք որպես արդար Հովվապետ աննիրհ աչքով հսկեք Ձեզ վստահված հոտին:

Հաղթական ոգի ենք մաղթում Ձեզ հնի ու նորի անկրկնելի հանդիպման և անդարձ բաժանման այս ոստին, մաղթում ենք Ձեզ երջանիկ գտնակալություն, ծրագրերի իրագործման լուսաշող ապագա, և թող Ձեր առնական ուսերը չկքեն դժվարին ու հոգսաշատ լծի ծանրությունից: Թող Էլ ավելի ծաղկի մեր Մայր Եկեղեցին Ձերդ Սրբության ղեկավարության ներքո, ու թող Աստված անսասան և միշտ ծաղկյալ պահի մեր Ս. Եկեղեցին իր հավատավոր ժողովրդով ու հոգևոր սպասավորներով:

Այս մտածումներով ու խոհերով առաջնորդված, թույլ տվեք, Վեհափառ Տեր, համբուրելու Ձեր Սուրբ Աջը և ասելու.

«Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ»»:

Հայր Սուրբի խոսքից հետո Ճեմարանի երգչախումբը կատարում է «Ով զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական» շարականները:

Միաբանների անունից Վեհափառ Հայրապետին և բոլոր ներկաներին շնորհավորում է Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սիրելի ներկաներ.

Հայկազանյա մայրերությունն սիրտը կրկին բաբախում է. փարեվերջյան գարնանով՝ սկսելով Ռեթդեհենյան մսուրի հոգեպարար մեղեդուն և հաշակելով «մեծ ու սքանչելի իրողություն», սակայն այս անգամ ուրիշ ոգեորություններ ու պարտականության ուրիշ կոչումներ: Տարիները սահում են, և արդեն շուրջ երկու հազար փարեմուտներ են փոխվել այն օրից, ինչ մանուկ Հիսուս աշխարհ եկավ՝ այդ աշխարհի Լույսը դառնալու:

Մակայն այդ Լույսը, չդադարելով մաքրամաքուր ու հավիտենական Լույսը լինելուց, փակավին չի արժեորվել մարդկության կողմից:

Մարդկությունը շարունակում է. իր ընթացքը «աջ և ահեակ» խոտորումներով, «առ առուցեղն մեղանչելով և վերջնոցն չար նշաւակ գոլով», սակայն և չկորցնելով Հավիտենական Լույսի մեջ մխիթարություն ու տեսիլք գտնելու իր փափագը:

Ահա այսպիսի մի հազարամյակ էլ անցավ, անցավ այսպիսի մի փարի, որ ոչ միայն Հայաստանի, այլև ողջ աշխարհի համար եղավ խոշոր իրադարձությունների ու տեղաշարժերի փարի:

Դարձեալ Ավետարանական վախճանաբանական կանխատեսումների լրման մի փարի լիներ այս. պատերազմներ՝ աշխարհի փարբեր ծագերում, դավադրություններ, երկրաշարժներ ու ջրհեղեղներ, որոնք բազում կյանքեր խլեցին:

Նույնն էր պարագան նաև Հայաստանում, երբ մեր Մայր Հայրենիքի վերաշինության ու համայն հայության համախմբման միտված գործուն քայլերի կատարման ճանապարհին, ողբերգականորեն գոհվեցին Հայոց պետական անվանի այրեր:

Մակայն, ի հենուկս բազում փորձությունների ու դժվարությունների, անցնող փարին մեկ նաև ժպիտ պարգևեց. ժպիտ, որի մեջ թեև ուրախությունն անխառն չէր, բայց լավատեսության հույսը անբեկանելի էր:

Անցնող փարում Հայոց Եկեղեցու բոլոր զավակները, հոգևորականաց ու աշխարհականաց դասերով, մխիթարություն ստացան Աստծուց՝ Հայրապետական գահին բազմած տեսնելով նոր Հովվապետ՝ Ամենայն Հայոց նոր Հայրապետ՝ ի դեմս Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Չափազանց դժվարին ու պատասխանատու մի ժամանակաշրջանում Ամենայն Հայոց Հայրապետության ծանր լուծը ստանձնեց Վեհափառ Հայրապետը. մի ժամանակաշրջան, երբ, Վեհափառ հայրապետի խոսքերով

իսկ ասած, Լուսավորչի գահը բազում փշեր ունի, որոնք մշտապես մղում են ծառայության՝ առանց դադարի ու հանգստի:

Վստահ ենք, որ Հայոց Հայրապետը նոր հազարամյակում կարողանալու է Հայ Եկեղեցու ամբողջ ներուժը կենտրոնացնել, համախմբել ու ներգրավել աշխատանքի Հայ Եկեղեցու բոլոր գավակներին՝ նոր դարաշրջանում Եկեղեցին ևս առավել նորոգյալ ու բարեզարդ դարձնելու համար:

Երրորդ հազարամյակի նախաշեմին, հանուն Մայր Աթոռի ողջ միաբանության, Ամանորյա մեր շնորհավորանքներն ենք ուղղում Հայոց Հայրապետին՝ բազում տարիների քաջառողջ ու արևշատ կյանքի բարեմաղթանքներով:

Երջանկահիշատակ մեր նախորդ երկու Հայրապետները՝ Վազգեն Ա-ն և Գարեգին Ա-ն, իրենց նվիրումով բեղուն գործունեություն ծավալեցին. առաջինը՝ հատկապես եկեղեցաշինության, երկրորդը՝ Հայոց Եկեղեցու միջազգային հեղինակության բարձրացման մարզում:

Երրորդ հազարամյակի նախաշեմին, Վեհափառ Տեր, մեր Եկեղեցու առջև ծառացած դժվարագույն խնդիրը Հայ Եկեղեցու հասարակական դերի բարձրացումն է, և վստահ ենք, որ Ձեզ բնորոշ հերևողական աշխատանքով իրականացնելու եք Ձեզ բաժին ընկած այս ծանրությունը՝ ամենքիս աջակցությամբ:

Այս մտածումներով, միաբան եղբայրներիս անունից շնորհավորում եմ նաև ամենքիդ Ամանորը, այն համոզումով, որ նորոգ գործակցությամբ ու կամքով պարտինք նորեկ ժամանակաշրջանում սատարել Հայոց Հայրապետին՝ մեր երազների ու իղձերի Եկեղեցին կերտելու և մեզն ու տկարության մշուշը «ի սահմանաց մերոց ի բնակութենէս մերմէ» վանելու համար»:

Հայր Սուրբի խոսքին հաջորդում է Ճեմարանի երգչախումբի կողմից «Խընջույքի երգ»-ի կատարումը: Այնուհետև Հոգևոր Ճեմարանի դասախոսների անունից Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Ճեմարանի հայոց լեզվի դասախոս պրն. Դավիթ Գյուրջինյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, հարգարժան գործընկերներ և սիրելի սաներ.

Հանդիսավոր և խորհրդավոր է այս պահը: Դանցնեն դարեր, ժամեր, և մի անրես ձեռք կբացի նոր՝ 2000 թվականի դռները, և մենք, քիչ առ քիչ կմոտենանք նոր հազարամյակի սկզբին:

Համոզված եմ, որ բարի և հրաշագեղ մեղեդիներ են հնչում բոլորիս սրտերում՝ ուրախության հույսերով և հույզերով, նորանոր մտահղացումներով և անչար ցանկություններով:

Հույս ենք փայփայում, որ նոր դարում և այդուհետև խաղաղություն ապիրի թեածի Հայաստան աշխարհում և նրա Արցախ երկրամասում, հայ ժողովուրդը ապիրի վերագտնի իր ոգու կորովը, ու պիտի թեթևանան նրա հոգսերը, ավելի կշենանա ու կհզորանա Մայր Աթոռը, Աստված ուժ և կարողություն կտա Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսին՝ Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետին:

Համերաշխ մի ընտանիքի պես է ապրել Գնորգյան Հոգևոր Ճեմարանը: Լիաթոք ու հագեցած է եղել նրա առօրյան: Դասախոսներն իմաստության և բարեկրթության հուներ են ցանել, մեր ուշիմ և աշխատասեր ուսանողները ժամանակ չեն կորցրել գիտելիքներ ամրարելու, հոգևոր և բարոյական կատարելագործվելու համար՝ քաջ գիտակցելով, որ ուսումնառության այս դարիներն են կրթվելու ամենանպաստավոր ժամանակը: Իսկ մեր որոշ ուսանողներ ցանկանում են հենց այստեղ և այս պահին կրկին հորդորել, որ զգաստանան, լիարժեք օգտագործեն անդառնալիորեն հեռացող ժամանակը՝ մշտապես հիշելով Գնորգյան Ճեմարանի թե՛ փառավոր անցյալը և թե՛ ներկա բարի համբավը:

Ակնկալում ենք, որ նաև ճեմարանական կյանքի բարեհորոգում կլինի: Իսկ մենք այսուհետ ևս ջանք ու եռանդ չենք խնայի մեր պարտականությունները կատարելիս: Տա՛ Աստված, որ նոր հազարամյակ մտնենք արժանապատիվ կեցվածքով ավելի հզոր ու հպարտ:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ: Արևշատություն և երկա՛ր կյանք Վեհափառ Հայրապետին: Նորանոր հաջողություններ և երջանկության մաղթանքներ Ձեզ բոլորիդ, սիրելի՛ բարեկամներ»:

Ուսանողության անունից Վեհափառ Հայրապետի, տնտեսական-դասախոսական կազմի, միաբանության անդամների Նոր տարին շնորհավորում է Ճեմարանի Ջ լսարանի սան Հրանտ Կոստանյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, բարեշնորհ տարկավագներ, դասախոսներ և հյուրեր.

Երկունքի վերջին պահերն է ապրում անցնող տարին՝ մի քանի ժամից ծնունդ ու կյանք պարգևելու ամանորին: Տարեվերջին, խոկման զգացումներով համակված, հավաքվել ենք այստեղ՝ բարի ճանապարհ ասելու անցնող և պատմություն դարձող 1999 թվականին և բարիգալստյան մաղթանքներով դիմավորելու 2000 թվականը:

Նոր տարվա սեմին կանգնած, մենք՝ հուսացյալ հոգիներս, աղոթում ենք առ Աստված. «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Եթե ժամանակը հավիտենական է և որպես հասկացություն՝ հարաբերական, ապա նոր տարով այն դառնում է պարզ, խորհրդավոր, ժամանակը խորհրդանշող մի իմաստություն:

Պատմությունն այլ բան չէ, եթե ոչ՝ հիշողությունների շղթա, ինչպես անհատը, հիշելով անցյալը, անցյալում ձեռք բերածը, արժևորում է ներկան: Անշուշտ, հիշարժան բաներ պետք է եղած լինեն, որպեսզի դրանք իրենց հետքը թողնեն մեր մեջ, և անցնող տարին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի համար հարուստ էր մի շարք իրադարձություններով. ի Տեր հանգյավ Գարեգին Ա Կաթողիկոսը, բայց շնորհապարտ ենք Աստծուն, որ տարին անգլուխ չենք բոլորում, այլ մեզ առաջնորդ ունենք նորընտիր Գարեգին Բ Հայրապետին:

Որքա՜ն երջանիկ ենք մենք այսօր, շրջապատված ձեզնով, սիրելի դասախոսներ և Հոգևոր Հայրեր, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի: Եվ մենք վստահեցնում ենք ձեզ, որ մեր վերելքի ճանապարհին կլինենք համառ, հաստատակամ: Չենք ընկճվի դժվարություններից, կանգ չենք առնի ճանապարհի կեսին, կձգտենք միշտ դեպի գագաթ, միշտ դեպի բարձունք: Չէ՞ որ մեր ժողովրդի ու մեր Եկեղեցու պատմությունը մեր երկրի պես մի բլրաշատ լեռնաստանի է նման: Եվ որքան էլ շատ են անկումների ձորերը, որքան էլ խորն են պարտությունների վիհերը, նույնքան էլ առատ են հաղթանակների, սխրանքների բերած պարգևները:

Վեհափառ Տեր, մենք՝ Ճեմարանի սաներս, լավ սովորելով, մաքուր վարք ու բարքով և մեր հաստատակամությամբ ենք ցանկանում շնորհավորել Ձեր Ամանորը, քանզի քաջ գիտենք, որ մեր Եկեղեցու և ժողովրդի բարգավաճումը Հայոց Հայրապետի գերագույն ուրախությունն է:

Հիշտ է, որ մեր երկիրն այսօր ծանր իրավիճակ է ապրում, շատ բաներ չկան, վաղվա օրը նույնպես աղուր է, բայց առավել քան երբևէ մեր հոգիներն սպառազեն են Ձեզնով: Ձեր հայրապետության այս կարճ ընթացքում առաջինը, որ մենք նշմարեցինք, Ձեր լավատեսությունն է: Եվ իսկապես լավատեսություններ, ոգեկիր ոգեշնչող գոհունություններ, միշտ հաղթանակում է: Մեզ ոգեորում է Ձեր գոհունությունը, և մենք փորձում ենք մեր մեջ նույնպես կրել դրա մի մասնիկը:

Թույլ տվեք հանուն Հնմարանի սաների ջերմորեն շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին ու մաղթել Ձեզ երկար և բաջառողջ տարիներ՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու և ի մխիթարություն մեր ժողովրդի:

Ամենորի մեր ջերմ շնորհավորանքները նաև միաբան և քահանա Հայրերին, դասախոսներին ու հյուրերին: Մաղթում ենք Ձեզ հոգու արիություն, համբերություն և երջանկություն նոր՝ 2000-րդ տարում:

Շնորհավոր Նոր տարի»:

Ապա ճեմարանականները կատարում են «Սոնա յար» երգը:

Ավանդություն դարձած սրտամիտ կաղանդչեքների ընթերցումը թարմացնում է բոլոր ներկաներին, և նույն տրամադրությամբ էլ շարունակվում է Նոր տարվա նվերների վիճակահանությունը:

«Էջ Միածին ի Հօրէ» շարականի կատարումից հետո Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս օրհնության խոսքով: Նորին Սրբությունը շնորհավորում է ներկաների Նոր տարին, ապա խոսում միաբանությունից ունեցած իր ակնկալությունների՝ նոր տարվա իր ծրագրերի մասին՝ շեշտելով, որ այս տարին պետք է լինի «մեր ժողովրդի պահանջներն ու սպասումները բավարարելու» տարի:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունն օրհնում է ներկաներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, շաբաթ.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ: Սրբոցն Բարեղի Հայրապետին եւ եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Մեղրեսպրոսի Հռովմայ Հայրապետին եւ Արբայ Երիրեմի խուրին Սարուոյ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: Պատարագի ավարտին Հայրապետական մաղթանք կատարվեց, որից հետո պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Նորացուցեք զօրինությունն թագավորին հավիտենից» (Մեղեդի) բնաբանով:

Ապա ողջ միաբանությունը Վեհարանում շնորհավորեց Վեհափառ Հայրապետի Ամանորը: Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, հանուն Մայր Աթոռի միաբանության, շնորհավորեց Նորին Սրբությանը՝ նրան առողջություն, արևշատություն և գալիք տարում արգասաբեր աշխատանք ցանկանալով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նույնպես շնորհավորեց ներկաների Ամանորը և ցանկացավ, որ 2000 թվականին ամենքի համար ծրագրավորված աշխատանքի իրականացման տարի լինի:

Հունվարի 2-ին, կիրակի.-Զ. Կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև զպաստարն» (Ղուկ. ԻԲ 26) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վահափառ Հայրապետը:

Հունվարի 3-ին, երկուշաբթի.- Ե. օր Ծննդեան պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին «Հայաստանի նոր անուններ» բարեգործական կազմակերպության պատանի երաժիշտները, որոնք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում, իրենց գեղեցկահունչ կատարումներով, շնորհավորեցին Վեհափառ Հայրապետի Նոր տարին ու Ս. Ծնունդը (տե՛ս էջ 17):

Հունվարի 4-ին, երեքշաբթի.- Զ. օր Ծննդեան պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բալ Սնանդին, որի՝ Հայաստանում կատարելիք դիվանագիտական առաքելության 100-րդ օրը լրացավ վերջերս:

Հունվարի 5-ին, չորեքշաբթի.- Հրապարակ Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Արքեպս. Հայրը բարոյ խոսեց՝ «Ծնաւ նոր արքա ի Բեթղեհէմ քաղաքի. ողջիւ մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ» (Շարական) բնաբանով (Տե՛ս էջ 91): Ս. Պատարագից առաջ չորս սարկավագներ Ավագ Ս. խորանից բերեցին Դանիելի Թուղթը:

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին դեպի միաբանական սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու:

Հունվարի 6-ին, հինգշաբթի.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետն իր հայրապետական պատգամն ուղղեց հավատացյալներին՝ «Միաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» (Ղուկ. Բ 10) բնաբանով:

Ապա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր:

Հունվարի 7-ին, ուրբաթ.- Բ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր բեռ. Գրիգոյանը:

Ս. Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն համորեն ննջեցելոց:

Հունվարի 9-ին, կիրակի.- Դ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավագ քհն. Ֆրանկլյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Շահե արքեպս. Աճեմյանը՝ «Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ» (Հովհ. Ա 14) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 12-ին, չորեքշաբթի.- Է. օր Ծննդեան:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաք: Հավաքին Վեհափառ Հայրապետը միաբանների ուշադրությանը հանձնեց դեպի Սուրբ Վայրեր իր առաջիկա ուխտագնացության ծրագիրը:

Հունվարի 13-ին, հինգշաբթի.- Ը. օր Ծննդեան:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնին, որը եկել էր շնորհավորելու Վեհափառին Ս. Ծննունդյան տոնի առիթով և բարի ճանապարհ մաղթելու՝ Երուսաղեմ կատարելիք ուխտագնացությունից առաջ:

Հունվարի 14-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր, երեկոյան, Ս. Ծննդյան տոներին մասնակցելու նպատակով, Երուսաղեմ մեկնեց Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 16-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Քանզի գլուխ պատուիրանին՝ սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց, եւ յանկեղծատոր հաւատոց» (Ա Տիմ. Ա 5) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 23-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան» (Հովհ. Գ. 19) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 25-ին, երեքշաբթի.- Սրբոցն Վահանայ Դողթանացւոյ, Եւգինեայ կուսին եւ հարս նորա Փիլիպպոսի եւ Յովհան Զեղոնեայ եւ երկուց եղբարցն Սերգեայ եւ Սպիրոնի եւ երկուց ներքինեացն:

Այսօր, ժամը 16.30-ին, իր ոնտրագնացությունն ավարտելով, Երուսաղեմից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձաւ Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 29-ին, շաբաթ.- Սրբոյն Գրիգորի ասպուսածարանին:

Այսօր Վեհափառ Հայրապետը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական վիճակաւորդ Տ. Նավասարդ եպս. Զեհոյանի ընկերակցությամբ, իր առաջին պաշտոնական այցելությունը կատարեց Հայաստանի Հանրապետության Փրոնի գործերի պետական խորհուրդ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությանը:

Նոյեմբերի 30-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Ծնունդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Բարկեն արեղա Սայրիյան: «Հայր մեր»-ից առաջ խոսեց Վեհափառ Հայրապետը, որը Երուսաղեմ կատարած իր այցելության տպավորությունները հաղորդեց հավատացյալ հայորդիներին:

Նոյեմբերի 31-ին, երկուշաբթի.- Սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ քառասուն եւ հինգ վկայիցն եւ սրբոց կուսանացն Յուստինեանայ, Եւփեմեայ եւ Ղրիստինեայ:

Այսօր, ժամը 12.00-ին, Գեորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Թորգոմ արեղա Տոնիկյանի, Վահան սրկ. Զաքարյանի, Արարատ սրկ. Գափոյանի և Արա սրկ. Նալչաջյանի ավարտաճառների բանավոր պաշտպանությունը (տե՛ս էջ 87):

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունվարի 31-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանը 1997 թ. ավարտած Տ. Թորգոմ աբդ. Տոնիկյանի, Վահան սրկ. Ջաքարյանի, Արարատ սրկ. Գափոյանի և 1998 թ. ավարտած Մուշեղ սրկ. Հովհաննիսյանի ու Արա սրկ. Նալչաջյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նախապես կազմվել էր քննիչ հանձնաժողով, որը և հանգամանորեն ընթերցել ու իր գրավոր գնահատականն ու դիտողությունն էր կատարել յուրաքանչյուր ավարտաճառի մասին:

Քննիչ հանձնաժողովը գլխավորում էր Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Անդամներն էին Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը, Տ. Բաբկեն աբդ. Սալբիյանը, Տ. Արշակ աբդ. Խաչատրյանը և պրն. Անդրանիկ Հակոբյանը:

Հանդիսությունը բացվեց «Հայր մեր»-ով: Ապա խոսեց քննիչ հանձնաժողովի նախագահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ հոգևոր եղբայրներ, Հոգևոր Ճեմարանի սաներ, դասախոսական կազմի անդամներ և հարգելի հյուրեր.

Հոգևոր Ճեմարանը միշտ նմանեցվել է մեղվի փեթակի. ինչպես մեղուն բնության ծոցում օրնիբուն շրջում է՝ անցնելով ծաղկից ծաղիկ, դուք էլ՝ գրքից գիրք, նեկտարն եք քաղում ծաղիկների և ուսման ավարտին ներկայացնում ձեր աշխատանքի արդյունքը:

Նորընտիր Հայրապետի գահակալության առաջին ամիսներին՝ հունվար ամսվա վերջին օրը, հինգ շրջանավարտներ իրենց թեզերն են ներկայացրել, և քննիչ հանձնաժողովի անդամներս, ընթերցելուց հետո դրանք, երաշխավորել ենք՝ իբրև պաշտպանության արժանի: Այսօր նրանք հինգն են, բայց, վստահ ենք, առաջիկա ամիսների ընթացքում այս թիվը պիտի բազմա-

պատրիկի: Մենք սառաց վկայական հոգևորական չունենք և ունենանք մեր հոգևոր դասում»:

Այնուհետև հանձնաժողովի անդամ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը ներկայացրեց հանձնաժողովի կարծիքը Տ. Թորգոմ արդ. Տոնիկյանի ավարտաճառի վերաբերյալ: Իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ առաջիկա հանդես եկավ Տ. Թորգոմ արդ. Տոնիկյանը, որի աշխատանքի թեման էր «Գևորգ Զ Չորնեցյան. կյանքն ու գործունեությունը»:

Թորգոմ Հայր Սուրբի ավարտաճառի պաշտպանությունից հետո հանձնաժողովի անդամ Տ. Մակար վրդ.-Հովհաննիսյանը ներկայացրեց Վահան սրկ. Զաքարյանի ավարտաճառի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը, որից հետո իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Վահան սրկ. Զաքարյանը: Նրա ավարտաճառի թեման էր «Սուրբ Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» աշխատությունը»:

Այնուհետև հանձնաժողովի անդամ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը ներկաների ուշադրությանը ներկայացրեց հանձնաժողովի կարծիքը Արարատ սրկ. Գավոյանի դիպլոմային աշխատանքի վերաբերյալ, որից հետո իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Արարատ սրկ. Գավոյանը: Նրա աշխատանքի թեման էր «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական գերնգմանարան արձանագրությունների վերծանությունը»:

Հանձնաժողովի անդամ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը ներկայացրեց Մուշեղ սրկ. Հովհաննիսյանի ավարտաճառի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը: Իր աշխատանքի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Մուշեղ սրկ. Հովհաննիսյանը: Նրա աշխատանքի թեման էր «Արդի բնագիտության և աստվածաբանության փոխհարաբերությունը»:

Հանձնաժողովի անդամ Տ. Արշակ արդ. Խաչատրյանը ներկայացրեց հանձնաժողովի գրավոր կարծիքը Արա սրկ. Նալչաջյանի ավարտաճառի վերաբերյալ: Վերջինն իր աշխատանքի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Արա սրկ. Նալչաջյանը: Նրա աշխատանքի թեման էր «Հայոց Եկեղեցին»:

Հանձնաժողովի նախագահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հրապարակեց հանձնաժողովի կարծիքը ավարտաճառների բանավոր պաշտպանության վերաբերյալ և հայտնեց դիպլոմային աշխատանքների գնահատականները:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի և օրհնության խոսքն ուղղեց իրենց թեզերը հաջողությամբ պաշտպանած ճեմարանականներին.

«Կարծում եմ, որ յուրաքանչյուրիս հոգում այսօր բերկրանք կա և ուրախություն: Այստեղ նստած յուրաքանչյուրիս հոգում և սրտում այն կարող է տարբեր խտություններ, երանգներ կրել իր մեջ: Մանկավարժն իր հոգու ուրախությունը կարող է տարբեր կերպով ապրել, տարբեր երանգներ խառնել այդ ուրախությանը, տարբեր զգացումներ ներդնել, ուսանողները՝ տարբեր, պաշտպանող անձինք՝ տարբեր, բայց, կարծում եմ, յուրաքանչյուրս էլ ուրախության հետ միաժամանակ ապրում ենք հպարտության զգացում, որը բոլորիս է: Մանկավարժը, որ տարիների իր կրթության արդյունքում կարողացավ պատրաստել, հասցնել այսպիսի՛ մի անձ, մի անհատ, որն առաջին իր աշխատության վրա թողնում է իր անհատականության յուրահատուկ դրոշմն ու կնիքը: Իրենք հպարտ են, որ կարողացել են առաջին քննությունը պատվով բռնել և այստեղ մեր առջև ավարտաճառ ներկայացնել, մենք հպարտ ենք, որ այսպիսի բանիմաց երիտասարդներ դառնում են շրջանավարտ Հոգևոր Ճեմարանի և գալու են համալրելու շարքերը մեր եկեղեցականների:

Ես ուզում եմ շնորհավորել այս կապակցությամբ բոլորին անխտիր, առաջին հերթին՝ Ճեմարանի տեսչությանը, որ բարի պտուղներն է քաղում իր տարիների աշխատանքի: Նրանք իրենց գիտելիքները, Ավետարանի Սերմնացանի առակի օրինակով, շաղ են տվել հոգիներում, մտաց մեջ այս երիտասարդների, նաև մեր մյուս սաների, որոնք բարի նախանձով սպասում են, թե իրենք երբ պիտի հայտնվեն այս սեղանի եզերում՝ իրենց ավարտաճառերը պաշտպանելու: Մենք շնորհավորում ենք նաև մեր եկեղեցականությանը՝ մեզ, որ իրապես այն հույսը, այն հավատը, որ տածել ենք դեպի այս հաստատությունը, այսօր սերունդ է տալիս՝ մեր եկեղեցական առաքելության մեջ իր ծառայությունները բերելու: Շնորհավորանքս եմ ուզում ուղղել նաև մեր թե՛ ավարտաճառերը քննող հանձնախմբին, և թե՛ ղեկավարներին, որոնք գլխավորել են, ուղղություն են ցույց տվել, առաջնորդություն են ապահովել, որպեսզի ճիշտ ընթացքով կարողանան կազմակերպել իրենց ավարտաճառերը և այսօր ավարտուն վիճակով ներկայացնեն քննիչ հանձնախմբի դատին: Շնորհավորանքս կարծում եմ, որ այսօր առավելաբար ուղղված պիտի լինի պաշտպանող անձանց, որոնք բավականին քրտնել են,

բավականին հոգևոր են, հոգևոր են նաև, հավանարար, սպասելուց այս զրվուն, ինչպես ասացին, որովհետև գիտեմ, որ ավարտաճառներ կային, որոնք երկար ժամանակ դրված էին տնտեսության սեղանին և սպասում էին, թե երբ պիտի ներկայանան պաշտպանության օրը: Այսօր նրանք այդ առիթն ունեցան, պաշտպանեցին իրենց ներկայացրած աշխատանքը, գործերը և պաշտպանեցին իրենց տեսակետները ուրանալով «գերազանց» և «բաջալավ» գնահատականներ: Թող Աստված օրհնի ձեր կյանքը, ձեր ընթացքը Հոգևոր Ճեմարանի կրթական այս օջախի հարկից դուրս, և կարողանաք արդարացնել մեր ժողովրդի սպասումները, մեր Եկեղեցու սպասումները և Աստծո առջև ներկայանաք որպես բարի, արժանավոր, բաց մշակներ մեր Եկեղեցու և մեր ժողովրդի: Աստված թող օրհնի ձեզ»:

Ավարտաճառների պաշտպանությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՀՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Դեորգյան Հոգևոր Ճեմարանի
Ջլսարանի սան

ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի 2000 թ.)

«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»

(Շարական)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Նոր արքա ծնվեց Բեթղեհեմ քաղաքում, ով դուք ժողովուրդ, օրհնեցեք Աստծուն, որովհետև նա մեզ համար մարդացավ:

Մատթեոս և Ղուկաս ավետարանիչները հանգամանորեն մեզ նկարագրում են Հիսուսի ծննդյան պատմությունը: Ղուկաս ավետարանիչը հետևյալ ձևով է խոսում և ասում. Հռոմի Օգոստոս կայսեր ժամանակ, երբ Ասորիքի ղեկավարն էր Իրենիոս անունով մի իշխանավոր, իսկ Հրեաստանի թագավորը՝ Հերովդեսը, այդ ժամանակ Օգոստոս կայսրը հրահանգեց, որ բոլոր մարդիկ, իր կայսրության սահմանների մեջ ապրող, երթան որոշյալ մի տեղ, մասնակցելու համար մարդահամարին: Եվ որովհետև Հովսեփը՝ Մարիամի ամուսինը, Դավթի ցեղից էր և Գալիլիայի Նազարեթ քաղաքում էր ապրում, նյավ և ճանապարհվեց դեպի Բեթղեհեմ, որ մոտավորապես 60-70 կմ հեռավորության վրա էր, և գիտեր նա, որ Մարիամը հղի էր և նրա վերջին օրերն էին: Երբ Բեթղեհեմ հասան, օթևան չգտան: Մարիամը ծանր հղիության իր վերջին ժամերի մեջ էր և ստիպվեցան մի ախոռ, մի մսուր գտնել, և Մարիամը այնտեղ ծնունդ տվեց Աստվածորդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Շարակալանագիրը այսպես է նկարագրում. «Անբաւական երկնի և երկրի ի խանձարուրս պարեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ՝ ի սուրբ այրին բազմեցաւ»: Աշխարհի տերն ու տիրակալը, աշխարհի մեծագույն իշխանավորը՝ Աստված, խանձարարոտով պատրվեց, ասում է՝ նրա խոնարհությունը նկատի ունենալով, և Հորից չբաժանվելով, չանջատվելով Նա մսուրի մեջ ծնվեց, Ասպված խոնարհվեց՝ մարդանալով, և այս խոնարհությունը մեծագույն աստվածային սերն էր նշանակում մարդկության հանդեպ: Իսկ քիչ անդին, դաշտերի մեջ, հովիվներն իրենց հոտն էին արածեցնում, և աստղը երկնքի փայլում էր լուսաճաճանչ պայծառությամբ, իսկ հովիվները, հավանաբար զարմացած, իրենց ուշքերը հառել էին լուսացոլք աստղին: Հանկարծ հրեշտակներ երևեցան նրանց, նոր տեսան, սարսափեցան և վախեցան: Հրեշտակները նրանց ասացին. Մի՛ երկնչիր, մի՛ վախենաք, ձեզ լավ լուր ենք բերել. այսօր Բեթղեհեմում ծնվեց Հիսուս մանուկը,- հայտնեցին պարզ ու խոնարհ հովիվներին (Ղուկաս Բ 10): Երկինքն՝ այդ պահին բացվեց, երկնքից լոանդեն լակներ՝ հրեշտակներ գոնդ առ գոնդ իջան երկիր, ավետեցին այդ խեղճ ու կրակ հովիվներին, որ պատահել էր ժամանակների լրմանը այն հրաշքը, որ Իսրայելի մարգարեները դարեր շարունակ երազում էին ու ասում. Փառք ի բարձունս Աստուծո և երկրի վրա՝ խաղաղություն, մարդկանց մեջ՝ հաճություն, սեր, հարգանք, հասկացողություն և խոնարհություն (Ղուկաս Բ 14):

Միևնույն այս բոլորը պատահում էին, աստղի ճառագայթները հրապուրել էին նաև Արևելքում հայտնի թագավորներին: Այդ թագավորները, մոգեր կոչվելով, իրենց ուղտերի վրա նստած, օրեր շարունակ ճանապարհվեցին դեպի այդ լուսավոր աստղը, և երբ Երուսաղեմ հասան, Հերովդես թագավորի մոտ գնացին, նրա խորհուրդն ուզեցին իմանալ, ասելով, որ այս վայրում աստղի հայտնվելը նշանակում է, որ մի քաջառիկ մեկը՝ մի իշխանավոր, մի թագավոր է ծնվելու, աղոյո՞ք գիտեք նրա տեղը: Հերովդեսը խռովեց՝ կարծելով, թե ծնվող Հիսուսը թագավորությունն իր ձեռքից պիտի խլի, այդ պատճառով սարսափեց, խորամանկեց և ասաց նրանց. «Գնացե՛ք, զտե՛ք աստղի և ծնված մանկան տեղը և վերադարձին ինձ էլ հայտնեք, որպեսզի գնամ և երկրպագեմ նրան»:

Ինչ դավադիր խորամանկություն էր այս մեկը: Մոգերը, բնականաբար, հասկացան այդ: Նրանք գնացին աստղին հետևելով, գտան Հիսուսը Բեթղեհեմում, մսուրի մեջ ննջելիս, և անմիջապես իրենց թագերը իջեցրին գետին և խոնարհվեցին: Առաջինը՝ Մելքոնը, ոսկի տվեց, երկրորդը՝ Գասպարը, կընդ-

ռուկ տվեց, երրորդը՝ Բաղդասարը, նրան զմռուս ներկայացրեց: Առաջինը թագավորական իշխանություն էր՝ ոսկի, մաքուր, որ ոչ մեկ ձևով չի խաթարվում և ոչ մեկ իրերի կամ նյութերի խառնուրդից չի բաղադրվում: Աստվածային, երկար դարերից ի վեր բոլոր գիտնականները փորձում են այդ և չեն կարողանում. ոսկին իշխանություն էր, թագավորություն: Կնդրուկը քաղցր բուրմունքն էր՝ Քրիստոսի քարոզությունը աշխարհի վրա, և այդ քարոզությունը մարդկության փրկության ուղիներ ցույց տալու ձևն էր, բայց ո՞վ էր լսողը ճշմարտության ձայնին, իսկ զմռուսը, ինչ որ կանայք Հիսուսի թաղման առիթով գնացին գերեզման նրա մարմինը զմռսելու համար, այդ էր խորհրդանշում, որ մահվան միջոց էր, սակայն մահվան դեմ հաղթանակ էր նշանակում:

Սիրելի հավատացյալներ. ահավասիկ Քրիստոսի ծնունդը Հայաստանյայց Եկեղեցին փոնում է շուրջ 2000 տարիներից ի վեր: Ճիշտ է, եթե Քրիստոս ծնվել է մեկ թվականին, ապա Քրիստոս 1999 տարեկան պերք է լինի երկնքում, բայց երկնքում տարիք չկա, մեկ ժամը հազար տարի է, սահման չկա երկնքի ժամանակի հասկացողության, այդ իսկ պատճառով Հիսուս մեզ համար միշտ ներկա է, միշտ կենդանի, միշտ մանուկ, միշտ մեզի լուսեղեն օրինակ հանդիսացող ճշմարիտ Վարդապետ: Սակայն այդ Վարդապետի կյանքի ուղին դժվար ուղի եղավ, բայց միշտ հաղթանակներով պսակվեց և հաղթող Հարությամբ ամբողջացավ:

Այսօր, երբ Սուրբ Ծննդյան այս փառավոր հիշատակը փոնում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճրագալույցի այս երեկոյան, մեր մաղթանքը և աղոթքը այն է, որ Աստված մեր երկիրը ամուր, հաստատուն պահի, մեր ժողովուրդը բարօր պահի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին շինություն և պայծառություն պարգևի, Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսին երկար, քաջառողջ, շնորհներով լեցուն կյանք պարգևի, որպեսզի լուսեղեն ճանապարհներ բացվեն մեր առջև, և կարողանանք ճշմարտությամբ, հավատարմությամբ, անկեղծությամբ, սիրով ծառայել մեր Եկեղեցուն և մեր ազգին: Այսօր սրտեռանդ ասում եմ ձեզ, սիրելի հավատացյալներ, Քրիստոս իսկապես «ծնաւ և յայտնեցաւ. ձեզի, մեզի մեծ աւետիս»:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԱՅԼՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 18-ին տեղի ունեցավ Հռոմի պատերից դուրս գտնվող Սուրբ Պողոս Տաճարի դռան բացման արարողություն՝ նախագահությամբ Հռոմի Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Պապի:

Հանդիպում Սուրբ Պողոս Տաճարում

Արարողությանը մասնակցելու համար Վատիկան էին ժամանել 22 Եկեղեցիների պատվիրակություններ, այդ թվում Տիեզերական Պատրիարքության, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Ռուսաց, Սերբիայի, Ռումինիայի և մյուս Ուղղափառ Եկեղեցիների, Քենթրբերիի Արքեպիսկոպոսն անձամբ, Գերմանիայի Լութերական և այլ եվրոպական ու ամերիկյան բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Սուրբ Պողոս Տաճարի դռան բացումը մի էկումենիկ արարողություն էր, որ խորհրդանշում էր Քրիստոնյաների միությանը նվիրված մեկշաբաթյա աղոթքի սկիզբը:

«Այս Տաճարից ես իմ հայացքը գցում եմ դեպի նոր հազարամյակ, որտեղ տեսնում եմ մտրալուտ քրիստոնեական մի ապագա: Վերջապես սկսեցինք, որով կկարողանանք միասնաբար մեր քայլերն առաջ տանել որպես Քրիստոսի մեկ հոտ»,- այս խոսքերով Հռոմի գահակալը դիմեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին:

Արարողության ավարտին Սրբազան Քահանայապետը հյուրերի պատվին ճաշկերույթ տվեց:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՕԱՀԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԻՐՄԱՆ

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՏԵՏՐԱԿ ԱՂՕԹԻՑ»

Պատահմամբ ստացայ փոքրիկ գրքոյկ մը, որուն առաջին թերթերը կը պակսին: Գրքոյկին անունը գտայ յիշատակարանի վերնագիրին մէջ՝ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏԵՏՐԱԿԻՍ ԱՂՕԹԻՑ: Փառաբանութեան աղօթքէն ետք, յիշատակարանը արձանագրած է հետաքրքրական իրողութիւն մը. «Հաստատեցաւ տպագրատունս այս նոր ի նորոյ ի սուրբ եւ յաստուածակերտ Աթոռս Էջմիածին, ի ձեռն Սրբազանի Հայրապետիս մերոյ՝ Տեառն Սիմէօնի յոգնանիստ Կաթողիկոսիս Ամենայն Հայոց»: Թուականն է 1772 (ՌՄԻԱ) եւ երկրի վիճակը՝ խռովեալ, այն պատերազմի պատճառով որ սկսած է 1768-ին (ՌՄԺԷ) «ի մէջ երկուց մեծամեծ թագաւորութեանց»: Պարզ չէ, թէ ինչ պատերազմի կ՚ակնարկուի, որովհետեւ Վրաց Հերակլ թագաւորի արշաւանքը Հայաստան եւ պատերազմը Երեւանի պարսիկ կուսակալ Հիւսէյն խանի դէմ, որ չէր վճարած մի քանի տարիներու հարկը, աւելի ուշ է: 1779 թուականին է, որ Վրացական բանակը գրաւեց Երեւանը եւ թալանեց Հայաստանը: 1772 թուականի վիճակը նկարագրուած է յիշատակարանին մէջ շատ մութ գոյներով. «Վրդովեցաւ բոլոր աշխարհ ըստ մեծի մասին, տարածեցաւ մրրիկն ընդ ամենայն տեղիս եւ ալիքն խռովութեան պաշարեաց զամենեքումբք: Վասն որոյ բազմացան գողք եւ ելուզակք, ապստամբք եւ կողոպտիչք ի շէնս եւ ի յանշէնս, հատան ճանապարհք. խափանեցան առ եւ տուրք վաճառականաց...»: Այս վիճակին մէջ. Հայոց Հայրապետը կը զգայ ինքզինք «անկար» կացութեան վրայ ազդելու. կը դիմէ Աստուծոյ եւ ի լոյս կ՚ընծայէ «զայս աղօթից գրքոյկս»:

Յիշատակարանի արձանագրած տեղեկութիւններէն ամենէն հետաքրքրականն է նորահաստատ տպարանի մասին գրուածը. «Յիշեսջիք զգործակալ եւ զտեղապահ Վեհիս մերոյ զՄկրտիչ հանճարահրաշ արհիեպիսկոպոսն Շօռոթեցի, որ առանց հեղինակի եւ ուսուցանողի՝ աստուածատուր շնորհօքն իւրովք զամենայն այբուբենական գիրս մեր՝ եթէ զբոլորատառսն, եւ թէ զնօտրատառսն՝ հանդերձ գլխագրովք եւ ամենայն պարագայիւքն իւրեանց նոր ի նորոյ փորագրեաց ի պողովատս՝ էհար ի պղնձեայս եւ ի լոյս էած ի կապարեայս զգիրս այս գեղեցկատես...»: Մկրտիչ արքեպիսկոպոս Շօռոթեցին իրեն օգնական ունեցած է Յովսէփ վարդապետը եւ Եփրեմ սարկաւագը «զշարողսն գրոցս», եւ ուրիշներ՝ Մկրտիչ վարդապետը, Յովհաննէս աբեղան, Ներսէս սարկաւագը, «զյառաջընթաց Վարդանն» եւ ուրիշներ, որոնք, բացի պաշտամունքէն, «եղան սիրահար ըղձիւ եւ այս գործոյս»:

Յիշատակարանը երախտագիտութեամբ կը յիշատակէ հնդկահայ Զաքիկենց Միքայէլը եւ Մամախաթունը եւ անոնց զաւակները, որոնք յանձն առին «տալ զամենայն ծախս սորին ձրիապէս, որպէսզի հաստատուն մնասցէ յաթոռոջս տպագրատունս այս, ի յիշատակ յաւիտենական իւրեանց եւ իւրայնոց»:

Սոյն գրքոյկը ծանօթ եղած է Մաղաքիա արքեպս. Օրմանեանին եւ կը յիշատակուի Ազգապատումի Բ. հատորի թիւ 2123 հատուածին մէջ, իբրեւ ԶԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ: Ինչ անունով որ հրատարակուած ըլլայ փոքրիկ գոհարի նման այս գրքոյկը՝ ՏԵՏՐԱԿ ԱՂՕԹԻՑ կամ ԶԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ, այնտեղ մենք գտանք երկու գրութիւններ, արժանի հրատարակութեան: Անոնցմէ առաջինն է.

Ա. Դաւանութիւն Ճշմարիտ եւ Ուղղափառ Հաւատոյ՝ Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց, եւ իմ շարադրողիս իսկ: Եւ Վերջաբանական Աղօթք առ Սուրբ Երրորդութիւնն:

Արդ՝ ո՛վ ամէնօրհնեալ Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, զի որովհետեւ դո՛ւ ես սկիզբն եւ կատարած, առաջին եւ վերջին, յառաջացօղ եւ հանգուցանող ամենայնի, վասն որոյ զփոքրիկ եւ զլոմայասարաս բանս զայս աղերսանանողաց՝ ի քէն սկսեալ եւ ի քեզ աւարտեմ. խոստովանելով ի սմա ճշմարիտ զդաւանութիւն եւ զհաւատս իմ, որ առ քեզ:

Ուրեմն՝ խոստովանիմ եւ հաւատամ ճշմարիտ հաւատով. յուսամ աներկրայ յուսով եւ սիրեմ անարատ սիրով զՍուրբ եւ զանբաժանելի Երրորդութիւնդ՝ մի Աստուած, անսկիզբն եւ անվախճան. անուր, աներեւոյթ, անժամանակ եւ յաւիտենական: Մի միայն ստեղծող յոչնչէ ամենայն եղելոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց, մի տէր եւ թագաւոր ամենայն տիրանց եւ թագաւորաց: Մի նախախնամող եւ կառավարիչ ամենայն աշխարհաց, զրաղորիչ եւ աղբիւր ամենայն բարութեանց՝ ընաւից արարածոց, մի դատաւոր կենդանեաց եւ մեռելոց, մի պսակիչ արդարոց եւ դատապարտիչ մեղաւորաց, որում միայն կրկնելի է ծունր եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից:

Հաւատամ զնոյն եւ զմի Աստուածութիւնդ՝ բաժանեալ ի յերիս անձինս՝ յատկացեալս դիմօք, ի Հայր, ի յՈրդի, եւ ի Սուրբ Հոգի: Ո՛չ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի էութիւն, մի բնութիւն, մի կամք, մի տէրութիւն եւ մի իշխանութիւն: Ո՛չ ոմանդ մեծ եւ յառաջ եւ ոմանդ կրտսեր եւ յետոյ, այլ որքան Հայրդ՝ Հայր, ընդ քեզ եւ Որդիդ՝ որդի եւ Սուրբ Հոգիդ՝ Հոգի. էակից՝ բնութենակից եւ փառակից իրերաց:

Հաւատամ զՀայրդ Աստուած ճշմարիտ, անեղ, անծին եւ անսկիզբն, անսկզբնարար եւ անժամանակորէն՝ ծնօղ Որդւոյդ եւ բղխօղ Հոգւոյդ Սրբոյ:

Հաւատամ զՈրդիդ միածին Աստուած ճշմարիտ, անեղապէս եւ անսկզբնաբար ծնեալ ի Հօրէ նախքան զյաւիտեանս: Եւ ի ժամանակի՝ կամաւ Հօր եւ հաճութեամբ Սրբոյ Հոգւոյդ՝ քոյով յատկացեալ անձամբդ իջեր յերկիր յԱստուածածին Կոյսն Մարիամ եւ յամենամաքուր յարենէ նորին կազմեցեր քեզ մարմին եւ միաւորեցեր անճառապէս ընդ քումդ աստուածութեան:

Ապա՝ որ էիր ճշմարիտ եւ կատարեալ Աստուած. եղեր եւ նոյնդ՝ ճշմարիտ եւ կատարեալ մարդ, հոգւով՝ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ, մի կամք եւ մի բնութիւն, միաւորեալ անշփոթաբար յերկուց բնութեանց՝ յաստուածայնոյ եւ ի մարդկայնոյ: Ուստի եւ կոչեցար մի Քրիստոս, այսինքն Աստուած եւ մարդ: Յետ ինն ամսեայ ժուժկալութեանդ յարգանդի անարատ կուսին ծնար առեալ մարմնովդ անսերմն յղացմամբ եւ անապական ծննդեամբ: Եւ յետ երեսուն ամաց եկիր ի մկրտութիւն ի Յորդանան գետ ի Յովհաննու վկայութեամբ Հօր եւ իջմամբ Հոգւոյն Սրբոյ՝ դաւանեցար ճշմարիտ Աստուած եւ Որդի Աստուծոյ:

Ապա՝ նոյն Քրիստոս Աստուածդ մեր՝ սկիզբն արարեր 'ի կատարել զտնօրինականդ խորհուրդ, շրջեցար յերկրի խոնարհութեամբ, քարոզեցեր մարդկան զփրկութիւն, աշխատեցար, քաղցեար, ծարաւեցար մարմնով մարդկաբար եւ արարեր զսքանչելիս մեծամեծս աստուածաբար: Յետոյ եկիր կամաւ ի չարչարանս վասն մերոյ փրկութեան եւ միշտ կենդանի եւ անչարչարելի Աստուածդ՝ նոյնով առեալ մարմնովդ՝ չարչարեցար, խաչեցար, մեռար եւ թաղեցար, մարմնովդ եդար ի գերեզմանի եւ հոգւովդ իջեալ ի դժոխս ազատեցեր զհոգիսն: Եւ յետ երից աւուրց յարեար ի մեռելոց մարմնով եւ երեւեցար աշակերտացդ: Եւ յետ քառասուն աւուրց նովիմբ մարմնովդ համբարձար յերկինս եւ նստար ընդ աջմէ Հօրդ՝ յորմէ ոչ երբէք բաժանեցար:

Վասն զի Քրիստոս Աստուածդ իմ թէպէտ բնակէիր յարգանդի կուսին, ծնանէիր 'ի յայրին, շրջէիր յերկրի խոնարհութեամբ, կրէիր զչարչարանս, կայիր ի խաչին բեւեռեալ, եւ իջանէիր ի գերեզման որպէս զմեռեալ՝ առեցեալ մարդկութեամբդ. սակայն աստուածութեամբդ՝ անբաժանաբար ի Հօրէ եւ ի Հոգւոյն Սրբոյ, էիր ի յերկինս բազմեալ յաթոռ քրօբէական՝ եւ առնուիր զերկրպագութիւն յամենից արարածոց. որպէս եւ այժմ աստուածութեամբդ եւ մարդկութեամբդ երկրպագիս յաւիտեանս յաւիտենից:

Ուստի՝ որպէս ոչ էր սկիզբն աստուածութեան քոյ, նոյնպէս՝ եւ ոչ է վախճան մարդկութեան քոյ, զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան: Այլեւ՝ հաւատամ, զի նովին մարմնովդ ի կատարածի գալոց ես փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որ եւ յարութիւն իսկ է ամենայն մարդկան: Եւ հատուցանելոց ես իւրաքանչիւրոց ըստ գործոցն. արդարոցն զկեանս յաւիտենականս, եւ մեղաւորացն զտանջանս յաւիտենականս:

Հաւատամ եւ զՍուրբ Հոգիդ Աստուած ճշմարիտ, անսկզբնապէս եւ անժամանակաբար բղխեալ ի Հօրէ: Եւ ի ժամանակի իջեալ ի Յորդանան եւ ի վերնատունն, յայտնեցեր զաստուածութիւն էակցին քոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մխիթարեցեր զառաքեալսն եւ լցուցեր անճառելեօք շնորհօք: Խօսեցար ի յօրէնս ի մարգարէս եւ յԱւետարանս: Եւ լնուս միշտ եւ զարդարես զեկեղեցիս հաւատացելոց քոց զանազան շնորհօք եւ հոգեւորական պարգեւօք:

Արդ՝ այս է իմ հաւատ, որով հաւատամ, խոստովանիմ եւ երկիր պագանեմ ամենասրբոյ Երրորդութեանդ եւ միոյ Աստուածութեանդ՝

Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ. եւ միոյ երից անձանց Որդւոյ Աստուծոյ մարդացելոյդ ի ժամանակի վասն փրկութեան բնութեանս մարդկայնոյ:

Հաւատամ նաեւ՝ զմի միայն սուրբ կաթուղիկէ եւ առաքելական Եկեղեցի՝ հիմնեցեալ ի վէմդ Քրիստոս: Յորում պատարագիս Գառնդ Աստուծոյ ի յաշտութիւն Հօր՝ եւ ի բառնալ զմեղս աշխարհի: Յորում մկրտիմք յանուն ամենասուրբ Երրորդութեանդ, եւ ծնանիմք ի յորդէգրութիւն կենացն յափտենականաց: Յորում կատարին ներգործութեամբ Հոգւոյդ Սրբոյ՝ եօթանեքին սրբարարք եւ հոգեկեցոյցք խորհուրդք աւանդեցեալքն ի քէն: Որոց երեքն՝ այսինքն Մկրտութիւն, Դրոշմն եւ վերջին Ծնումն՝ ի վերաձնելութեան խորհրդածին՝ ըստ աւանդութեան Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց. եւ չորքն՝ այսինքն Ապաշխարութիւն, Կարգն, Պսակն եւ Հաղորդութիւն՝ ի յիւրաքանչիւրումն ժամանակի: Որովք ի սկզբնական եւ ի ներգործական՝ ի մահուչափ եւ ի ներելի մեղաց՝ ազատիմք եւ արդարանամք, զօրանամք եւ արիանամք ընդդէմ թշնամւոյն, պահպանիմք ի յորոգայթից նորին, լուսաւորիմք եւ կատարելագործիմք եւ միատրիմք հոգեւորապէս ի մի միշտ կենդանի գլուխդ Քրիստոս:

Եւ ի սոյն սուրբ եկեղեցւոջս տօնեմք զամենայն սուրբս եւ զսիրելիսն քոյ՝ զերկնաւորս եւ զերկրաւորս: Ի սմա հաւատամք գտանել զթողութիւն մեղաց, խոստովանութեամբ՝ ապաշխարութեամբ եւ բարեխօսութեամբ ամենից սրբոց տօնեցելոցն ի մէնջ, որքան եմք ի կեանս յայս:

Եւ ի ձեռն սորին հաւատամք մտանել ի վերինդ Սիօն՝ յեկեղեցիս անդրանկաց գրելոցն ի յերկինս: Այլեւ՝ հաւատամ եւ խոստովանիմ զամենասրբուհի կոյսն Մարիամ Աստուածածին՝ անսերմն յղացօղ եւ անարատ ծնօղ Քրիստոսի Աստուծոյդ մերոյ. եւ յետ ծննդեանն մնացեալ նոյնով անապական կուսութեամբն որ եւ է՝ համարձակ միջնորդ եւ բարեխօս առ իւրածին որդիդ վասն հաւատացելոց ի քեզ այսու հաւատով:

Արդ՝ ի վերջ դաւանական բանիս, աղաչեմ զքեզ՝ սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն. եւ խնդրեմ յամենառատ ողորմութենէդ, զի այսու հաւատովս պահեսցես զանարժան ծառայս քո ի կեանս յայս՝ անշեղ եւ հաստատուն. եւ տացես ինձ զգաստութիւն եւ արիութիւն, զի ստացայց նաեւ զգործս առաքինականս եւ քեզահաճոյս ի կենդանութիւն սոյնոյ հաւատոյս: Եւ յետ աստեացս տացես ինձ՝ սոյն

կենդանի հաւատովս գալ առ քեզ՝ եւ ընդունիլ ի քէն զյաւիտենական կեանսդ. եւ ընդ ամենայն սուրբս քոյ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ես, որ եմ ազգաւ հայ հաւատով՝ քրիստոնեայ, դաւանութեամբ եւ կրօնիւք՝ լուսաւորչական, զայս ճշմարիտ հաւատս եւ ուղիղ դաւանութիւնս (զոր ունիմ եւ ունելոց եմ ի կեանս ի մահ) ընկալայ ի ձեռն բազմերախտի եւ հոգեծնի հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ յատուկ վկային Աստուծոյ՝ չորեքտասան առաքելոյն Քրիստոսի, որ ծագեցաւ մեզ լուսաւորիչ ի Սրբազնից Առաքելոց եւ յառաջին Լուսաւորչացն մերոց՝ ի Թադէոսէ եւ ի Բարդուղիմէոսէ, որք էին երկուքն ի յերկոտասանից Գլխաւորց Առաքելոցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն:

Բ. Շնորհակալութիւնք առ Աստուած վասն յատուկ բարերարութեանցն, որք առ ազգս Հայոց եւ խնդրուածք դարձեալ, զի եւ ես ողորմեսցի եւ բարերարեսցէ:

Վերակրկնելով զպաղատանս իմ արդէն առ ողորմածդ Աստուած, խնդրեմ եւ վասն մնացորդացն ազգիս մերոյ: Այսինքն վասն վանորէից եւ եկեղեցեաց, եւ վասն եկեղեցականաց եւ վասն բոլոր ժողովրդեանս մերոյ. զի զորս պահեալ ես մինչեւ ցայժմ ի հաստատութեան եւ ի բարեկարգութեան, աղաչեմ մեծաւ թախանձանօք, զի եւ ես պահեսցես ի խնամս քոյ ի փառս անուանդ քում սրբոյ: Մի՛ հայիր ի մեղս իմ եւ յանարժանութիւնս իմ, այլ հայեա՛ց ի քոյ անսպառ սէրդ եւ յանբաւ մարդասիրութիւնդ: Եւ զորս խնդրեմ ես ըստ իմոյ սխալկոտ բնութեանս եւ ըստ տկար մտացս, դու կատարեա՛ զխնդիրս իմ քոյով ամենագէտ եւ անսխալ իմաստութեամբդ, որ լաւագոյն գիտես զպէտս եւ զօգուտս մեր՝ քան զոր մեք խնդրեմք եւ իմանամք:

Արդ՝ յառաջ քան զխնդրուածս իմ, իբր զաղերս տարածեալ առաջի Աստուծոյդ իմոյ զգլխաւոր եւ զմեծամեծ բարերարութիւնսդ, զորս արարեալ ես յատկապես ազգիս հայոց, յիշեմ մեծաւ շնորհակալութեամբ: Զի եթէ ո՛չ վասն մերոյ արժանաւորութեան, գոնէ ի նոսա խնայելով, գթասցիս ի մեզ, եւ ես ողորմեսցիս:

Արդ՝ նախապէս ի յիշումն ածեմ առ քեզ, ո՛վ տեր իմ Յիսուս Քրիստոս, զքոյակերտ եւ քոյահաստատ Աթոռդ՝ զլոյս հաւատոյ եւ ընտ հոգւոյ ծնօղն մեր զՍուրբ Էջմիածին, զոր քոյով իջմամբդ

հիմնարկեցեր, աստուածայնով լուսով ձեւակերպեցեր եւ ամենի-մաստ ճարտարապետդ կառուցեր եւ հաստատեցեր: Զ Սուրբ Էջմիա-ծին ասեմ, զոր իբրեւ զմի պայծառագոյն արեգակն ծագեցեր ի դաշտն Արարատեան եւ որպես զի զմի լուսատու եւ պատուական-ակն փայլեցուցեր ի քաղաքն Վաղարշապատ, զոր իբրեւ զմի շտեմա-րան անսպառելի շնորհացդ կազմեցեր ի յազգս հայկազեան եւ իբրեւ զմի մշտարուղխ աղբիւր հոգեպարար պարգեւացդ բղխեցուցեր ի վիճակս թորգոմեան: Վասն որոյ ցանկալի եւ նախանձելի զնա արարեր ի յաչս ամենայն ազգաց եւ աշխարհաց: Իսկ եւ զայս միակ՝ գերազանցագոյն, եւ անհամեմատ պարգեւս յատկական սիրով մեզ հայազգէիցս եւ բումդ փորու հօտիդ շնորհեցեր: Եւ ո՛չ միայն այս, այլեւ բազմօր եղանակօր յատկացուցեր զազգս մեր յատուկ սիրով ի մէջ ամենայն ազգաց: Վասնզի՝ են թէպետ իւրաքանչիւր ազգաց եւ ժողովրդոց Աթոռք եւ եկեղեցիք, սակայն ո՛չ են լուսաձեւ եւ աստուածակերտ՝ որպէս Աթոռն մեր Սուրբ Էջմիածին: Եւ թէպէտ այլոց ազգաց հաւատացեալոց հովուապետք եւ լուսաւորիչք սուրբք, սակայն ո՛չ են ի հնգետասան ամս ի բովս փորձութեան բազմատե-սակ չարչարանօք մաքրեալք, պարզեալք եւ ի մաքուն կենդանի մնացեալք, որպէս Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգորիոս: Են թէպէտ այլոց ազգաց գիր եւ տառ՝ մարմնացուցիչ անմարմնոյ եւ աստուա-ծայնոյ բանիդ, սակայն՝ ո՛չ են յատկապէս ի քէն շնորհեցեալ եւ մատամբ քով գծեցեալ որպես գիրս մեր: Կոչեցեր թէպէտ զազգս բազումս առ քեզ եւ հաւատացեալս քեզ արարեր, սակայն՝ քարոզու-թեամբ եւ վարդապետութեամբ սրբազանից առաքելոց եւ աշակեր-տացն քոց. բայց զազգս հայոց՝ (որովհետեւ էր յատուկ քեզ սիրելի) ոչ շատացար աշակերտօք եւ քարոզութեամբ առ ձեռն բերել. այլ որպես թէ՝ աշխատեցար անաշխատդ եւ ամենակարողդ Աստուած՝ եւ հոգացեր այնքան, մինչ զի բռնութեամբ եւ անօրինակ հրաշիւք առ քեզ կոչեցեր եւ քեզ սեփական ժողովուրդ արարեր: Այլոց ազգաց՝ թագաւորս եւ մարմնաւոր իշխօղս կարգեցեր, մեզ հայոցս ազգի եւ բումդ փոքր հօտի. դու ի՛նքնդ եղեր թագաւոր, տէր եւ իշխան. աւանդելով եւ մեզ թէ՝ իմ եւ իմայնոց թագաւորութիւն չէ յայսմ աշխարհի եւ թէ՝ որք քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց ի խաչ հանիցեն ըստ սրբոյն Պօղոսի հարազատին քոյ:

Եւ որ երբեմն տանջես զմեզ եւ խրատես ձեռօք այլազգեաց. այն եւս հայրականի եւ յատկականի սիրո՛յդ են ցոյցք. զի զոր սիրես.

խրատես եւ յանդիմանես: Որք ամենեքեան են նշանք եւ քարոզք քումդ յատկականի եւ գերազանցագունի սիրոյ եւ գթութեանդ, զորս ունիս առ խղճալի ազգս հայոց:

Ցիրաւի՝ ո՛վ Տէր իմ, ոչ այսպէս արարեր այլոց ազգաց եւ ժողովրդոց՝ որպէս արարեր մեզ: Արդ՝ այսքանեաց բարերարութեանց քոց զփոխարէնն զոչ այլ ինչ ունիմք հատուցանել քեզ. միայն թէ՝ զփառս եւ զգոհութիւնս շնորհակալութեամբ հանդերձ՝ քեզ անկարօտիդ Աստուած մատուցուք յաւիտեանս յաւիտենից:

Արդ՝ որ զմեծագոյնսն եւ զգերազանցագոյնսն արարեր, զփոքրագոյնսն եւ զհեշտականսն մի՛ խնայեր ի մէնջ, ո՛վ բարերար եւ ողորմած Աստուած՝ առ որ ամենայն ինչ կարելիք են եւ դիւրինք: Ուրե՛մն՝ աղաչեմ զքեզ, ո՛վ բարերար եւ ողորմած Աստուած, զքոյահաստատ Աթոռն եւ զմայրն մեր Սուրբ Էջմիածին (զոր իբր յատուկ փառք, պարծանք եւ մխիթարութիւն մեզ հայազնէիցս եւ լուսաւորչակրօն հօտիս շնորհեցեր) հաստատուն եւ անշարժ պահեա զնա ի վերայ անխախտելի վիմիդ՝ լոյս անսուտ խոստմանդ քոյ: Անպակա՛ս արա ի նմանէ զմշտագեղ եւ զհոգեպարար շնորհս Հոգւոյդ Սրբոյ մինչեւ ի կատարած աշխարհիս՝ ի մխիթարութիւն եւ ի զուարճութիւն մեզ եւ եկեղեցեացս մերոց:

Զնա՝ զոր հաստատեցեր ի մեզ, զօրացո՛ եւ պայծառացո՛ օրըստօրէ եւ փայլեցո՛ ընդ ամենայն ծագս երկրի ի փառս անուանդ քում սրբոյ: Զսուրբ Տեղին ոտից քոց միշտ փառաւորեա յաչս ամենայնի՝ ըստ ճշմարիտ խոստմանդ քոյ: Փշրեա՛ ամենակարող զօրութեամբդ եւ խորտակեա, որք հարցին ընդ վէմն այն, եւ կուրացո՛ զաչս այնոցիկ, որք նենգութեամբ հային ի նա: Զարդարուն եւ պե՛րճ պահեա զնա միշտ քոյաընտիր Հայրապետօք, շնորհափայլ Եպիսկոպոսօք եւ Վարդապետօք եւ ամենայն մանկամբք: Լե՛ր օգնական եւ ձեռնտու ներկայացելոյ Հայրապետին մերոյ (այս անուն) Կաթողիկոսին՝ յամենայնում ժամու ի յամենայն քոյահաճոյ գործս եւ յընթացս նորին: Պահեա՛ զնա խաղաղութեամբ եւ երկար ամօք՝ ի պայծառութիւն քումդ սրբոյ տան եւ ի մխիթարութիւն ծառայիցս քոց:

Եւ ընդ սրբոյ Աթոռոյն մերոյ պահեա՛ եւ զայլ ամենայն Վանորայս եւ զԵկեղեցիսս մեր հանդերձ Առաջնորդօք, Վարդապետօք, Քահանայիւք, Իշխանօք, Ժողովրդովք եւ ամենայն մանկամբք նոցին ի շինութեան, ի բարեկարգութեան, եւ ի խաղաղութեան, ազատ եւ անարատ յամենից օտար եւ ի թիւր աղանդոց: Զքո ամենայաղթ զօրու-

թիւնդ՝ զանկարտելի նշան սուրբ խաչիդ, զրանակս երկնային զի-նուորութեանցդ եւ զդասս ամենից սրբոց քոց կացո՛ պահապան մե-րոց սոցին մանկանց, զտիւն ողջոյն եւ զգիշերն ողջոյն եւ փրկեա՛ յամենից հոգեւոր եւ մարմնաւոր թշնամեաց եւ փորձութեանց, զի փառաւորեսցի ի նոսա անուն քո յաւիտեան:

Տէր Աստուած մեր, տո՛ւր հոգեւոր Հովուաց մերոց եւ Առաջ-նորդաց զբոյաշունչ իմաստութիւնդ, զբոյապատուէր հեզութիւն եւ զխոնարհութիւն, որպէսզի ըստ կամաց քոց հովուելով զհօտս քո, ի յերեւիլ հովուապետիդ, կարիցեն ասել համարձակութեամբ՝ Ահա ես եւ մանկունք իմ եւ ընդունիլ ի քէն զփառացն պսակ: Սպառազինեա՛ զնոսա զօրութեամբ եւ արիութեամբ՝ զի կարիցեն ընդդէմ կալ ոչխարամորթ գայլոց եւ ապականչաց եկեղեցեաց եւ կրօնից մերոց: Տո՛ւր բահանայից մերոց զգաստութիւն եւ մաքրութիւն, որպէսզի կարիցեն արժանապէս ծառայել քումդ սրբոյ խորհրդոյ եւ լինիլ համարձակ միջնորդ Աստուծոյդ եւ ժողովրդեան, զաղօթս նոցա քեզ մատուցանելով եւ զողորմութիւնս առ նոսա իջուցանելով, որք եւ լսելոյ հաճոյից քոց, շահելով զտուեալ մնասն քո, առցեն ի քէն զբազմապատիկսն: Տո՛ւր, Տէր, սարկաւագաց, դպրաց եւ ամենից մանկանց եկեղեցեաց մերոց՝ զպարկեշտութիւն եւ զուսումնասիրութիւն, որպէսզի՝ իւրաքանչիւրքն յոր կոչումն կոչեցեալ են, ի նմին կացցեն առանց արատոյ, արժանապէս ծառայեսցեն եկեղեցւոյ քում սրբոյ եւ կոչիցին ի քէն ծառայ բարի, ազնիւ եւ հաւատարիմ: Ընկալ, Տէր, զաշխատանս աշխատաւորաց եւ զնուէրս տոտղաց եկեղեցւոյ քում սրբոյ ի փառս եւ ի հաճոյս քոյ եւ տո՛ւր նոցա փոխարէն զբազմապատիկս լոյս հոգւոյ եւ լոյս մարմնոյ եւ արա՛ արժանի այնմ երանութեան, զոր ողորմածքն ժառանգեն:

Տո՛ւր, Տէր, իշխանաց եւ գլխաւորացն ժողովրդեանս մերոյ զբարեպաշտութիւն եւ զսերտ հաւատս՝ առ քեզ, զսէր եւ զմիաբանութիւն առ միմեանս եւ զգութ եւ զխնամածութիւն առ աղքատս եւ փորձանաւորս: Քաղցրացո՛ եւ սիրեցո՛ զնոսա յաչս ամենայն իշխողաց եւ բռնաւորաց, որպէսզի լինիցին՝ պարծանք եւ ուրախութիւն եկեղեցւոյդ քոյ, ձեռնտու եւ մխիթարութիւն հասարակութեան եւ հաճոյական ծառայք քեզ եւ առցեն ի քէն զվարձս ընդ ամենայն սուրբս քո:

Յիշեա, Տէր, զբոլոր ազգս մեր՝ զփոքրիկ հօտս քո զամենեսեան, ուր եւ իցեն, զմեծս եւ զփոքունս զարս եւ զկանայս եւ ա՛յց արա ամենեցունց վասն մեծի ողորմութեան քոյ: Տո՛ւր ամենեցունց կեալ

սիրով եւ խաղաղութեամբ, լուսաւորչաւանդ հաւատով եւ առաքինական գործով, ապահով կենօք եւ բարւոք կենցաղավարութեամբ: Լե՛ր ամենեցունց ձեռնտու եւ օգնական յամենայն ժամանակի՝ ի ննջել եւ յառնել, ի տան եւ ի ճանապարհի, ի ծովու եւ ի ցամաքի, ի յառս եւ ի տուրս, ի վարս եւ ի վաստակս եւ զամենայն օգտարար եւ անմեղաձին գործս նոցա յաջողեա՛ եւ ի բարին եզերեցո՛:

Այլեւ զհիւանդացեալսն եւ զցաւագնեալսն առողջացո՛: Զտրտմեալսն եւ զվշտացեալսն սփոփեա՛ եւ ուրախացո՛: Զբանտարկեալսն եւ զգերեալսն ազատեա՛: Զփորձանաւորսն փրկեա՛, պակասաւորացն լի՛ց զպակասութիւնսն հոգեկանօք եւ մարմնականօք: Ամենայն անճարից եւ անօգնականաց հա՛ս յօգնութիւն եւ ա՛յց արա: Զանդարձսն եւ զյամառեալսն ի մեղս դարձո՛ ի չար ճանապարհաց իւրեանց եւ ամենեցունց ողորմեա ըստ մեծի ողորմութեան քում եւ պահեա՛ ի խաղաղութեան, որպէսզի ամենեցունց ողորմելով, յամենեցունց փառաւորեսցիս միշտ:

Այլեւ խնդրե՛մ ի քէն, Տէր իմ եւ աստուած իմ, զի տացես ամենայն աշխարհաց զխաղաղութիւն, թագաւորաց՝ հաշտութիւն, ստորադրելոց՝ սէր եւ հնազանդութիւն, քաղաքաց, գաւառաց եւ գիւղորէից՝ շինութիւն եւ ապահովութիւն, այգեաց եւ անդաստանաց՝ պտղաբերութիւն եւ ամենայն լիութիւն եւ առատութիւն:

Այլեւ բարձցե՛ս քոյով ողորմութեամբդ յամենայն աշխարհաց եւ ազգաց, եւ մանաւանդ՝ յերկրէս եւ յազգէս հայոց, զամենայն ցասումն եւ գայլ ազգի ձախորդութիւնս՝ զհիւանդութիւնս եւ զպէս պէս ցաւս, զսով, զսուր եւ զմահտարաժամս եւ գայլս ամենայն վշտաբեր զվնասատու պատահմունս, որք յամենազօր հրամանէդ շարժեալք, գան ի վերայ մեր վասն մեղաց մերոց, որպէսզի յամենայնի եւ յամենեսեան անուն քո փառաւորեսցի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՊՈՂՈՍ ԼԵՎՈՆ ՋԵՔԻՃԱՆ

14-ՐԴ ԴԱՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ: ՆԱԽԱՔԱՅԼԵՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏԱԳԱ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ

14-րդ դարը իր բազմաթիվ կողմերով վճռորոշ եղավ Հայոց Եկեղեցու պատմության և, հատկապես, նրա հետագա եկեղեցական կառուցվացքի համար: Ոչ այն իմաստով, որ հիշյալ ժամանակաշրջանում այդ կառուցվացքը իսկապես ձևավորված էր (դա կլինի շատ ավելի ուշ), այլ այն իմաստով, որ այդ ժամանակաշրջանում ուրվագծվում են այն նախադրյալները, որոնք պետք է տանեին դեպի հետևողական զարգացում:

14-րդ դարում վերջնականապես ամրագրվում է Հայոց Եկեղեցու ինքնարձնութագրման հարցում նախապատվությունների առանցքի տեղաշարժը Բյուզանդիայից դեպի Հռոմ: Դարեր շարունակ, չնայած բուռն իրադարձություններին, վարդապետական ճշմարտության չափանիշներին և ծիսական ու կարգապահական առանձնահատկություններին, այդ Եկեղեցու ինքնագիտակցման համար վերաբերումի հիմնական բևեռ է եղել, գոնե մինչև 12-րդ դարի վերջը, Ուղղափառությունը և, մասնավորապես, բյուզանդական քաղկեդոնականությունը: Ընդհակառակը, 14-րդ դարից ի վեր վերաբերումի հիմնական և հաճախ միակ բևեռն է դառնում Հռոմի Եկեղեցին: 13-րդ դարը այդ տեսակետից հանդիսանում է անցման շրջան, որի որոշ նախանշաններ ի հայտ են գալիս նախորդ դարի վերջին տասնամյակների ընթացքում[1]:

Նախապատվությունների առանցքի տեղաշարժը, անկասկած, ենթադրում էր բանավեճի բովանդակության հիմնական նորությունը, այն է՝ Հռոմեական Եկեղեցու համար բնորոշ եկեղեցաբանության համաձայն Հռոմի Պապի իրավասական գլխավորության հարցը:

Չնայած այն բանին, որ Պապի գլխավորության հանդեպ հավատը սկզբունքորեն աստվածաբանական և բուն իսկ վարդապետական

հարց էր, այնուամենայնիվ այն հղի էր լուրջ իրավական հետևանքներով հենց եկեղեցական հասարակության կառուցվացքի համար: Այստեղից էլ ծագում է եկեղեցական իշխանության բևեռացման միտումը, որը հանգեցնում է լիակատար երկիշխանության հայ քրիստոնեության ծոցում, որը և բերում է հայ կաթողիկե նվիրապետության ստեղծմանը 1842 թ.: Նման բան չէր պատահել նախկինում (հայ-բյուզանդական քաղկեդոնական վեճերի շրջանում), եթե հաշվի չառնենք 6-7-րդ դարերի սահմանագծին ընկած շատ կարճատև ժամանակաշրջանը[2]:

Հետևաբար, այս զեկուցման նպատակն է բացահայտել հիշյալ զարգացումների առավել ակնառու պահերը դրանց նախնական շրջանում՝ գտնելու համար այն բանալին, որը մեզ հնարավորություն կտա պատմական և, միևնույն ժամանակ, աստվածաբանական տեսակետներից վերլուծելու դրանց հետևանքները թե՛ կարճատև, թե՛ երկարատև կտրվածքով:

1. ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԺՌՈՌՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ա) *Քաղաքական հանգամանքները և լատինների հետ շփումների ներտացումը*

Կիլիկյան դարաշրջանը ոչ միայն սաղմնավորում և ձևավորում է այն, ինչին պետք է հանգեր հայ քրիստոնեական աշխարհը իր եկեղեցական և նվիրապետական ճյուղավորումներով, այլև հանդիսանում է այն շրջանը, երբ ի հայտ են գալիս «հայկական հարցի» միջուկը կազմող հիմնական տարրերը: Մեզ թվում է, որ Ժոզեֆ Լորանը իրավացի կերպով (ի դեպ՝ բավականաչափ վիճելի մեկնաբանություններ շարքում) հայկական հարցի սկզբնավորումը վերագրում է Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանին[3]:

Փաստորեն հենց այդ ժամանակաշրջանից է, որ Հայաստանը և հայերը հայտնվում են մի դիալեկտիկայի կենտրոնում, որը գալիս է ուրվագծելու այն նոր կողմնորոշումները, որոնք կանխորոշեցին և՛ հայերի աշխարհաքաղաքականությունը, և՛ նրանց հավաքական քաղաքական մտապատկերացումները: Ահա դրանց երբ հիմնական կետերը.

Ի. Հայկական աշխարհաքաղաքականության Արևմտյան առանցքի տեղաշարժը Բյուզանդիայից դեպի Եվրոպա, ավելի շատ դեպի Արևմտյան Եվրոպա (գրեթե վերադարձ, որակական տարբերություններով հանդերձ, դեպի նախաբյուզանդական ժամանակաշրջանը, երբ Հայաստանի արևմտյան ուղենիշը Հռոմն էր):

II. Հայաստանի համեմատությամբ Արևմտյան իսլամական առանցքի ձևավորման սկիզբը, որն ինչ-որ չափով ուծվագծվում է (ոչ առանց երկիմաստության, սակայն արդյունավետ կերպով) եվրոպական Արևմուտքի քաղաքական իրականության մեջ՝ նախ Իկոնիայի Սելջուկյան սուլթանության, իսկ հետագայում՝ Օսմանյան կայսրության միջոցով (հմմտ. այս հարցում խաչակիրների երկիմաստ դիրքորոշումը Սելջուկյանների հանդեպ, որոնք օգտագործվում էին հակաբյուզանդական նպատակներով, Ֆրանցիսկոս Ա-ի դաշինքը օսմանցիների հետ, մինչև թուրք-գերմանական դաշինքը, որը մահացու հետևանքներ ունեցավ հայերի համար Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին):

III. Ամբողջովին դեպի հռոմեական քրիստոնեական Արևմուտքը ուղղված հայկական «մեսիականապաշտության» սկզբնավորումը, որը կարմիր թելի նման անցնում է հայերի՝ դարեր տևող ազատագրական շարժումների միջից[4]:

Հենց այդ գաղափարաքաղաքական համատեքստի շրջանակներում են ծավալվում հայերի հարաբերությունները Հռոմի Եկեղեցու հետ Կիլիկյան դարաշրջանում:

11-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում նախապատրաստված լինելով Գրիգոր Վկայասերի ուղղակի և շատ հնարավոր կերպերով Հռոմեական Եկեղեցու հետ[5], այս հարաբերությունները ծաղկում են ապրում Գրիգորիս Գ. Պահլավունու հայրապետության ժամանակ՝ կրելով շատ ջերմ բնույթ և զերծ մնալով հավակնություններից թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից այդ նախնական փուլում[6]:

Հայերին հասցեագրված պապական փաստաթղթերը բացահայտում են առանձնապես հարգալից և բարեկամական երանգ այդ սկզբնական շրջանում: Այդ փասպաթղթերում Հռոմի Հայրապետը սահմանափակվում է շատ ճկուն ոճով արտահայտված որոշ դիտողություններով և ցանկություններով, որոնցով կոչ է անում իր հայ պաշտոնակցին վերանայելու մի քանի սովորույթներ, որոնց նկատմամբ հռոմեացիները որոշ զգուշավորություն էին հանդես բերում:

Համենայն դեպս ակնարկ էլ չկա սխալների, հերձվածողության, սխալներից հրաժարվելու կամ դավանափոխության մասին, այն ամենի, ինչին մենք ավելի ու ավելի համառ ձևով ականատես ենք լինում 13-14-րդ դարերից սկսած: Եվ եթե նույնիսկ ակնարկներ կան, իբր արդյունք շրջող զրույցների, Հայոց Եկեղեցու ոչ քաղկեդոնական ուղղվածության վերաբերյալ, ապա Գրիգոր Է-ն հստակորեն հաստատում է, որ ինքը հավանություն է տալիս Հայոց Եկեղեցու հավատքին, որն իրեն էր ներկայացրել Վկայասեր Կաթողիկոսի ուղարկած պատվիրակը՝ Հովհաննես քահանան[7]:

Մենք կարծում էնք, որ 11 և 12-րդ դարերի պապական փաստաթղթերի այդ դիրքորոշումը, որն առաջին հայացքից բավականաչափ տարօրինակ է թվում հետագա զարգացումների լույսի ներքո, չի կարող վերագրվել պարզապես նախնական շրջանի նրբանկատությունը և զգաստությունը: Դա կարելի կլիներ բացատրել նրանով, որ Հայոց Եկեղեցու դավանաբանական հավատո հանգանակը և, մասնավորապես, քրիստոսաբանական հավատքը ըստ էության սխալ կամ «հերձվածողական» այնպիսի տարր չէր պարունակում, որը կարող էր վրդովել «բարեպաշտ ականջը»: Այսպես, այն հռոմեացիները, ովքեր տեղյակ չէին Հայոց Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների պատմական ենթախորքին, ունկնդրելով պարզապես հավատո հանգանակը՝ ոչ մի զայրացուցիչ բան չէին նկատում: Իրավիճակը փոխվում է հետզհետե, պատմական համատեքստին և դրա հետևանքներին հռոմեացիների ծանոթանալուն զուգընթաց և, կրկնելով իրենց բյուզանդացի նախորդների սխալը, նրանք ևս չեն կարողանում տարբերել իրական ուղղափառությունը դրա դավանաբանական ձևակերպումից: Մինչդեռ այդ տարբերակումը պարզորոշ կերպով առաջարկվել և կատարելապես ձևակերպվել էր 12-րդ դարի վերջում Ս. Ներսես Շնորհալու կողմից Մանվել Կոմնենոսի կայսերական պատվիրակ և աստվածաբան Թեորիանոսի հետ երկու Եկեղեցիների միությանը ուղղված բանակցությունների ժամանակ[8]:

Համենայն դեպս, նույնիսկ այդ նախնական փուլում, երբ Հռոմի Եկեղեցին դեռևս վարդապետական լուրջ առարկություններ չէր ներկայացնում Հայոց Եկեղեցուն, այնուամենայնիվ այն չէր թաքցնում, որ մտադիր է նրանց պարտադրել ծիսական և կարգապա-

հական որոշ չափանիշներ, որոնք նա իրավացիորեն անհրաժեշտ էր համարում եկեղեցական միության համար[9]:

Կիլիկյան իշխանության և թագավորության քաղաքագաղափարական համատեքստը, որ մենք ներկայացրինք հակիրճ կերպով, ազդեցվելով պապական պահանջների և անող հավակնությունների հետ, ծնունդ տվեց, մասնավորապես, հայ բարձրաստիճան կղերականության ծոցում, ոչ միայն Հռոմեական Եկեղեցուն համակրողների, այլև բառի բուն իմաստով «լատինասերների» կամ «հռոմասերների» մի ստվար բանակի: Այս միտումը իր գագաթնակետին հասավ ինչպես կղերականության, այնպես էլ արքունի ազնվականության շրջանում, հատկապես 13-րդ դարի վերջին տասամյակում. այդ միտման կարկառուն ներկայացուցիչներ հանդիսացան Հեթում Բ արքան (1289-1293, 1299-1301) և, գեթ մասամբ, Գրիգոր Է Անավարզեցի Կաթողիկոսը (1293-1307):

բ) *Միաբանող Եղբայրների շարժումը*

Նաև «Ունիթոր» անվանումով ծանոթ Միաբանող Եղբայրների պատմությունը հանդիսանում է Հայոց Եկեղեցու և Արևմուտքի հետ նրա ունեցած կապերի ամենաճանաչված և լավագույնս ուսումնասիրված էջերից մեկը, չնայած այն բանին, որ դեռևս գոյություն ունի արխիվային նյութերի չհետազոտված մի ստվար զանգված[10]: Մեր պատմության մեջ Միաբանող Եղբայրները ծանոթ են նաև լատիներեն համապատասխան «Ունիթոր» անվանումով:

Չնայած նրանց «քարոզչական» գործունեությանը տրված գնահատականներին, որոնք հետևանքն են ոչ միայն հետազոտողների տարբեր տեսակետների, այլև հենց իրենց՝ Միաբանողների գործունեության արդյունքի և ծավալի տարբերությունների, այնուամենայնիվ կասկած չի հարուցում այն բանը, որ նրանք սերտորեն կապված են քարոզչական գործունեությունը իբր լատինականացում ընթանող. կաթողիկե պատկանելիությունը իբր համայնակուլ գաղափարախոսություն ընկալող հայեցակարգի ամենապինդ կորիզի հետ. իր ծայրագույն հետևանքներին հասցնելով Ինոկենտիոս Գ-ի Մեկ հավատք, Մեկ կայսրություն իդեալը[11]:

Միաբանողների լատինականացնող համամիացման և ընդհանրականացման այս եռանդն իր առավելագույն չափազանցված արտահայտությունն է գտնում «լատինաբան հայերեն» լեզվաբանա-

կան երևույթի մեջ: Այս երևույթի նպատակն ու կանոնն էր հնարավորին չափ ճշգրիտ կերպով հայերենը հարմարեցնել լատիներենի չափանիշներին և օրենքներին: Այս երևույթը, ներշնչված լինելով լատիներենի՝ որպես կաթոլիկության անկրկնելի արտահայտչաձևի գերազանցության գաղափարով, լատինաբան հայերենի ստեղծումը բացատրվում է նաև այն բանով, որ լատիներենին էր վերապահվում աստվածաբանական ուղղափառության գերագույն երաշխիքը լինելու պատիվը[12]:

Քարոզիչ Եղբայրներից, այսինքն՝ Դոմինիկյան Կարգից առաջագայող Օրջուն Եղբայրների Կարգի ծնունդ եղող Միաբանող Եղբայրների միաբանության պաշտոնական հաստատումը Հայաստանում տեղի է ունենում 14-րդ դարի երեսնական թվականներին: Սա իր հերթին նախապատրաստված էր Մուրացիկ Կարգերի, հատկապես ֆրանցիսկյան քարոզիչների հարաճուն ներթափանցումով, որի փայլուն հետևանքը եղավ Հեթում Բ արքայի կրոնավորումը, որը հրաժարվեց գահից ֆրանցիսկյան գաղափարականի համար: Հետագայում Միաբանող Եղբայրները տարածվում և հաստատվում են բազմաթիվ շրջաններում, հատկապես Արևելյան Հայաստանում[13]:

Միաբանող Եղբայրների տարածմանը դիմակայելու համար նրանց հակառակորդների ծավալած աճռելի ջանքերը պատկերացում են տալիս նրանց ուժի և հմտաց գործունեության մասին[14]:

2. 14-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԵԾ ԺՈՂՈՎՆԵՐԸ

14-րդ դարի հայ եկեղեցական կյանքում աչքի են ընկնում չորս եկեղեցական ժողովներ՝ Սսի երեք (1307, 1342, 1361) և Ադանայի (1316)[15]:

Այդ ժողովները իրենց դիրքորոշումներով ներկայացնում են այդ ժամանակաշրջանում Հայոց Եկեղեցու կյանքը բնորոշող հիմնական եկեղեցաբանական կողմնորոշումը: Առաջին երկու՝ 1307 և 1316 թթ. եկեղեցական ժողովները, որոնք ներշնչված էին վախճանված Կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու գաղափարներով, որի եկեղեցական քաղաքականությունը և հիմնարար սկզբունքներն ընդունվեցին թագավորական ճնշման ներքո, ընդգծվեցին ոչ միայն Հռոմի Եկեղեցու հետ ընդհանրության գերակշռությունը, այլև ծիսական լատի-

նացման քիչ թե շատ առաջ մղված միտումները[16]: Այս ժողովներ սկզբից մինչև վերջ ներթափանցված էին Դր. Անավարզեցուն բնորոշ բոլոր վարանումներով և եկեղեցական ստորակայության բարդույթով[17]:

1342 թ. Սսի ժողովը այդ տեսակետից բոլորովին այլ պատկեր է ներկայացնում: Մխիթար Ա. Դոներցի Կաթողիկոսը (1341-1355), լատինների հակառակորդը չլինելով հանդերձ, այնուամենայնիվ իրեն չի դրսևորում որպես նրանց ծառան կամ ջատագովը, որպիսին էր, ընդհակառակը, Գրիգոր Անավարզեցին: Խոնարհաբար, բայց և միևնույն ժամանակ վճռականորեն Մխիթարը բողոքում է պապական արքունիքում հայերին վերագրվող սխալների դեմ: Սակայն նա չի դադարեցնում իր հարաբերությունները Հռոմի Եկեղեցու հետ և չի վիճարկում հայերին հարցեր ուղղելու նրա իրավունքը: Միևնույն ժամանակ Մխիթարը չի համարձակվում վերականգնել Հայոց Եկեղեցուն բնորոշ հին ավանդույթները: Միգուցե նա կցանկանա՞ր դա անել: Սակայն նա չի համարձակվում անել դա: Մխիթարն իրեն դրսևորում է որպես միջնորդության և որոշ հարցերում նույնիսկ որպես փոխզիջման գնացող անձնավորություն: Եթե նա միացել էր Հռոմին, ապա նա չէր ստրկացվել նրա կոմից, եթե նա բավականաչափ վճռականություն ուներ պաշտպանելու իր Եկեղեցու ուղղափառությունը, ապա այդ վճռականությունը բավարար չէր վերականգնելու համար նախորդ երկու ժողովների կողմից դատապարտված ամենաբնորոշ ավանդույթները, մի բան, որ անում է մի քանի տարի անց Մեսրոպ Ա-ն[18]:

14-րդ դարում Սսում տեղի ունեցած վերջին ժողովը իր հերթին մի նոր շրջադարձ էր նշանավորում: Այն վերականգնում և պարտադրում է հին հայկական ավանդույթների կիրառումը: Նախորդ ժողովների որոշումների հետևանքով բարձրացած հուզումներից դրդված, այն գումարում է Մեսրոպ Ա Արտազեցին (1359-1372) և կարգադրում հայկական ծիսական ավանդույթների վերականգնումը: Նա չի խզում հարաբերությունները լատինների հետ, նա նույնիսկ զարգացնում է դրանք, սակայն, միևնույն ժամանակ, նա սահմանազատում է մի կողմից եկեղեցական ընդհանրության, իսկ մյուս կողմից՝ ծեսի, յուրաքանչյուր Եկեղեցուն հատուկ ավանդույթների, էթնիկական, եկեղեցական և մշակութային ինքնության ոլորտը և իրավասությունները[19]:

Այստեղ, եզրակացություններ անելուց առաջ, զգալի է դառնում մի կարևոր հստակման անհրաժեշտությունը:

Հռոմի հետ բաց վերաբերումի, եկեղեցական հաղորդության, եթե կուզեք, նույնիսկ «միության» մասին խոսելիս, մենք նկատի ունենք այս ամենը լոկ պատմական հարթության և ոչ թե բառի բուն իմաստով աստվածաբանական կամ դավանաբանական հարթության վրա: Այսինքն այստեղ խոսքը այն մասին չէ, թե Հռոմի Եկեղեցու հանդեպ բաց դիրքորոշում ունեցող և նույնիսկ նրա հետ հաղորդությանը հակված Հայոց Եկեղեցու ներկայացուցիչները ինչպես էին իրականում պատկերացնում եկեղեցաբանական տեսակետից Հռոմի Պապի իրավասությունը:

Մենք շատ լավ գիտենք, որ այդ իրավասությունը դարեր շարունակ եղել է բավականաչափ տարբեր հայեցակետերի առարկա, որը վերաբերում է նրա իրավաբանական բովանդակությանը և իրականացման կոնկրետ ձևերին հենց Հռոմի Եկեղեցու ծոցում: Որքա՜ն մեծ տարբերություն կա Իննովկենտիոս Գ-ի կամ նույնիսկ Պիոս Թ-ի գահերիցության տեսությունների և այն տեսության միջև, որն ընդգծում է Վատիկանի 2-րդ ժողովի մշակած եկեղեցաբանությունը:

Մենք գիտենք նաև, որ նույնինքն Ուղղափառության ավանդույթներով Հռոմի Պապին էր վերապահվում և մինչ այժմ էլ վերապահվում է պատվո որոշակի առաջնություն, որն, ի միջի այլոց, դատարկ բառ չէ և ունի որոշակի պատմական ծավալ[20]:

Հետևաբար պետք է տարբերակել խնդրի երկու մակարդակ. ա) առաջինն՝ պատմական մակարդակը, որը վերաբերում է Հռոմի Եկեղեցու հետ հարաբերություններին և հարգանքի, բարեկամության, եղբայրության, խաղաղության կոնկրետ դիրքորոշումներին. բ) երկրորդ՝ աստվածաբանական մակարդակը, որը վերաբերում է այդ դիրքորոշումների եկեղեցաբանական մեկնություններին, ելնելով հենց իրենց՝ գլխավոր գործող անձանց հեռանկարներից և փաստագրված հայեցակարգերից:

Ի դեպ, մենք ոչ մի պատճառ չունենք ենթադրելու, որ բոլոր այն քրիստոնյաները, ովքեր ունեցել կամ ջանացել են քրիստոնեաբար խաղաղ հարաբերություններ պահպանել Իննովկենտիոս Գ-ի կամ Վոնիփակիոս Ը-ի հետ, պատրաստ էին անվերապահորեն ընդունելու նրանց եկեղեցաբանությունը, որը խարսխված էր Հռոմի գլխավորության ծայրահեղ պնդման վրա: Ընդհակառակը, անհրաժեշտ

կլինեն յուրաքանչյուր առանձին դեպքում ճշտել եկեղեցաբանության տիպը և, մասնավորապես, գլխավորության մասին լռելյայն կամ ենթադիր ընկալումը:

Եթե որոշ գիտնականների որդեգրած մեթոդաբանությունը, որը չարդարացված կերպով ոստում է կատարում պատմական հարթակից դեպի աստվածաբանականը, կամ էլ պարզապես մոռացության է մատնում դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունը, ունի աստվածաբանորեն ծայրահեղ բանականացման թերությունը, ապա նվազ կարևոր չէ խուսափել մեկ այլ մեթոդաբանական ծայրահեղությունից, որի վտանգը հաճախ է զգացվում, և որը կայանում է նրանում, որ այն որդեգրած գիտնականները փորձում են անտեսել աստվածաբանական դրդապատճառները հօգուտ զուտ պատմականացած մեկնաբանության. այն է՝ Հռոմի Աթոռի իշխանությունը թեկուզ մեղմորեն ճանաչող ցանկացած բանաձև պարզապես քաղաքավարական կամ նույնիսկ քաղաքական պատշաճության բանաձևի վերածել[21]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեզ թվում է, որ ուրվագծված պատմական համայնապատկերում, Հռոմի Կաթողիկե Եկեղեցու նկատմամբ դիրքորոշման տեսակետից, առանձնանում են չորս հիմնարար ուղղություններ, որոնք գոյություն ունեին Հայոց Եկեղեցու ծոցում:

Ա) Նախ և առաջ մենք տեսնում ենք լատինասեր մի հոսանք, որը Հռոմի Եկեղեցու հետ հաղորդությունը և միությունը հասկանում է բավականաչափ արմատական ձևով: Հռոմի Եկեղեցու բարքերին և սովորույթներին համապատասխանեցնելու հարցը այս հոսանքի կողմից դիտվում է որպես անհրաժեշտ կամ գրեթե անհրաժեշտ պայման եկեղեցական միության համար: Հեթում Բ թագավորը և Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսը կարող են դիտվել որպես այդ միտման հեղինակավոր ներկայացուցիչներ:

Բ) Երկրորդ խումբը ներկայացնում են նրանք, ովքեր ծայրահեղության են հասցնում լատինական ծեսին համապատասխանելու իրենց պահանջը: Նրանք, ի վերջո, ընդունում են այն, նույնիսկ թարգմանում հայերեն: Սա Միաբանող Եղբայրների խումբն է:

Գ) Այս լատինասեր հոսանքներին բուռն կերպով հակադրվում են նրանք, ովքեր չեն ցանկանում ընդունել կոնկրետ բովանդակությամբ և ոչ մի հաղորդություն Հռոմի հետ: Դրանք Հայոց Եկեղեցու լիակատար ինքնիշխանության կողմնակիցներն են: Նրանք հաճախ «ազգայնական» կամ պարզապես «ազգային» են անվանվում ոչ միայն իրենց Եկեղեցու ավանդույթները անաղարտ պահպանելու և այդպիսով դրա ինքնությունը պահանջելու ջերմեռանդության համար, այլև այն պատճառով, որ նրանք նույնացնում են Եկեղեցու բարձրագույն իրավաբանական միության ոլորտը ազգի ինքնության կամ մի ազգի հոգևոր սահմանների հետ՝ Հայոց ազգի առանձնահատուկ դեպքում:

Այս խումբը, որը շատ զորեղ էր Արևելյան Հայաստանում, իր ներկայությունը զգացնել էր տալիս նաև Կիլիկիայում և նույնիսկ արքունիքի որոշ շերտերում: Սակայն, այդուհանդերձ, այն իր պինդ դիմադրությամբ և օգտագործելով 1307 թ. Սսո ժողովին[22] հաջորդած հուզումները, կարողացավ ազդել 1361 թ. Սսո ժողովի դիրքորոշման վրա: Սա դեռևս վերջնական հաղթանակ չէր: Այդ հաղթանակը վրա կհասնի, մեր կարծիքով, միայն 18-րդ դարում, երբ Հայոց նվիրապետության բոլոր գահերի վրա վերջնական գերակշռությունը կանցնի Հռոմի դեմ հանդիման փակ լինելու միտման ներկայացուցիչների[23]: Սակայն 1361 թ. Սսո ժողովը հանդիսանում է այն շրջադարձային պահը, որը բացահայտ կերպով վերջ է դնում Հայոց բարձր նվիրապետության ծոցում լատինասիրության թեկուզ թույլ հակմանը:

Դ) Եվ, վերջապես, ուրվագծված համայնապատկերից առանձնանում է մի չորրորդ հոսանք, որի արտաքին ուրվագիծը նվազ պարզորոշ էր, իսկ ներքին տարբերակները՝ ավելի շեշտված: Դա նրանք էին, ովքեր, հավատալով հանդերձ Հայոց Եկեղեցու կատարյալ ուղղափառությանը և նրա ծեսերի ու ավանդույթների լիարժեք օրինականությանը, չէին բացառում տրամախոսությունը, նույնիսկ հաղորդությունը և միությունը Հռոմի հետ, հաղորդություն, որի աստվածաբանական կարևորությունը, այնուամենայնիվ, պետք է ճշտվեր յուրաքանչյուր առանձին դեպքում, ինչպես մենք արդեն դա նշել էինք:

Որպես այդ միտման ներկայացուցիչներ 14-րդ դարում մենք կարող ենք մատնանշել Կաթողիկոսներ Մխիթար Ա-ին և Մեսրոպ Ա-ին:

Մենք կարծում ենք, որ իրականում այդ միտումը ներշնչվել էր էկումենականության այն մեծ դասից, որը խորունկ աստվածաբանության էր վերածվել 12-րդ դարի Հայոց Եկեղեցու պայծառ դեմքե-

րի, նրկու Ներսեսների՝ Շնորհալու և Լամբրոնացու կողմից, որոնց ժամանակի և Հայրենիքի շրջանակներից դուրս եկող էկումենական գործունեությունը և աստվածաբանությունը անգերազանցելի են մնացել միջնադարյան քրիստոնեության ողջ ոլորտում[24]:

Այս չորս հիմնական հոսանքները, որ մենք առանձնացրեցինք Հայոց Եկեղեցու ծոցում 14-րդ դարի տասնամյակների ընթացքում, կպահպանվեն դարեր շարունակ՝ ավելի կամ պակաս հզորությամբ: Միաբանողների հոսանքը չի վերապրի 18-րդ դարը, իսկ մնացած երեքը հարմարվելով, թիչ թե շատ խորը կերպով ձևափոխվելով և տարբեր ուղիներով կհանգեն այն հիմնարար եկեղեցական տիպաբանություններին, որոնք կգերիշխեն Հայոց քրիստոնեական աշխարհում 18-րդ դարից սկսած և փաստորեն մինչ օրս[25]:

Ա) ինքնավարական տիպաբանությունը, որը մարմնավորում է Հայ Առաքելական Եկեղեցին և գերիշխող է հանդիսանում:

Բ) Միաբանողական տիպաբանությունը, որն իր արտահայտությունն է գտել Հայ կաթողիկե նվիրապետության ստեղծումով: Նախորդ դարերի լատինասեր հոսանքների ժառանգորդը հանդիսանալով հանդերձ՝ այն կզսպի դրանց միաբարական ծայրահեղությունները:

Գ) Մխիթարյան Միաբանության հիմնադիր Մխիթար Աբբահայր Սեբաստացու մխիթարյան տիպաբանությունը[26]: Այս տիպաբանությունը զետեղվում է Հռոմի հետ բաց վերաբերումը և Հայոց Եկեղեցու ավանդույթներին անսակարկ հավատարմությունը հաշտեցնել ուզող միտումների գաղափարական և պատմական շարունակականության մեջ: Այն երբեմն ունեցել է բավականին շատ համակիրներ նաև Մխիթարյան դպրոցից դուրս: Բավական է հիշել 1809 և 1820 թթ. Կոստանդնուպոլսում ծավալված շարժումները, որոնք հրահրվել էին Վենետիկի Մխիթարյանների և Առաքելական Եկեղեցու ծոցից ելած համակիրների միացյալ ջանքերով: Այս շարժումը անհաջողության մատնվեց երկու կողմերի, այն է թե՛ միաբարների և թե՛ ինքնավարության կողմնակիցների հուժկու ճնշումների հետևանքով[27]:

Այս տողերը վերջակետելիս մեր մաղթանքն այն է, որ այս խմբերը կարողանան անկեղծ և ազնիվ տրամախոսությամբ ապրել միասին և, անկախ հասած կամ հասանելիք աստվածաբանական արդյունքներից, միանան Քրիստոսի, մարդու և Աստծու հանդեպ տածած իրենց հավատքի, իրենց ընդհանուր և հարուստ ժառանգության և

իրենց ազգային ինքնության ներքո, որը սերտորեն կապված է նրանց պատմության հետ, պատմությանը հավատացյալ քրիստոնյաների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկա հոդվածի միջուկն է կազմում 1993 թ. հոկտեմբերին Պուատիեում կայացած և Լուսինյաններին նվիրված գիտաժողովին կարդացված զեկույցը: Նույն զեկուցման թեթևակիորեն լրացված տարբերակը հրատարակվելու է անգլերեն լեզվով Լևոն Ե-ի մահվան 600-ամյակի առթիվ 1993 թ. նոյեմբերի 12-14-ը Նյու Յորքում տեղի ունեցած «Կիլիկիայի հայոց թագավորությունը Խաչակրաց արշավանքների խաչմերուկում» թեմայով գիտաժողովի նյութերում:

1. Հարաբերությունները Հռոմի Եկեղեցու հետ սկիզբ են առնում 12-րդ դարից առաջ: Մեծ Հայքի թագավորության անկումից (1045) առաջ վկայված կամ ենթադրվող հարաբերություններից բացի, որոնք, անկախ իրենց պատմականության խնդրից, շարունակական բնույթ չեն կրել: Մեզ թվում է, որ 12-րդ դարի վավերականորեն վկայված շփումները նախորդվել են շատ հնարավոր շփումներով 11-րդ դարի ընթացքում:

Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ արքայի Հռոմ կատարած ուղևորության ավանդության վերաբերյալ տե՛ս Հ. Ս. Կոգյանի *«Հայոց Եկեղեցին մինչև Ֆլորենտյան ժողովը»*, Բեյրութ, 1961, էջ 103-105 (Հեղինակը, որը ներկայացնում է նաև հարցի տեքստային և քննական վիճակը, բացառում է, միգուցե գերքննական հոգածությամբ, ավանդության նույնիսկ հավանականությունը): Անապատական, *«Համառոտ պատմութիւն հայ-լատին հարաբերութեանց սկիզբէն մինչև 1382»*, 2-րդ հրատ., Անթիլիաս - Լիբանան, 1981, էջ 26-31: Պ. Անանյանը գրում է. «Benché il viaggio possa essere ritenuto un fatto storico, tuttavia nel Medio Evo esso diede origine ad una leggenda...» (Թեպետև ուղևորությունը ներկայացնում է ինքնին պատմականության փաստեր, այնուամենայնիվ դա պատճառ է դարձել, որ միջին դարերում դրա շուրջը մի առասպել հյուսվեր. «Gregorio Illuminatore», *Bibliotheca Sanctorum*, VII, Roma, 1966, սյուն. 183): Ինչ մեզ է վերաբերում, ապա մենք ոչ մի առարկություն չունենք ո՛չ պատմական համատեքստի, ո՛չ էլ տեքստային քննադատության նկատմամբ, քանի որ փաստը պատմված է ըստ Լուսավորչի Կյանքի (հունարեն) նախնական խմբագրության: Տե՛ս նաև **G. Garitte**, *Documents pour l'étude du livre d'Agathange* (Testi e Studi, 127), Città del Vaticano, 1946, պար. 181-189, commentaire, էջ 328-331. Եվսեբիոս և Սեղբեստրոս Պապերի խառնաշփոթի վերաբերյալ, նույնը, էջ 213, 233:

Նիկողայոս Ա Պապի և իշխան Աշոտ Բագրատունու ենթադրյալ նամակագրության վրա՝ տե՛ս **Պ. Անանյան**, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի և Աշոտ Իշխանաց իշխանի թղթակցությունը Փոտ Պատրի-

սարի և Նիկողայոս Ա. Պապի հետ (Հայագիտական Մատենադարան, «Բազմավեպ», 35), Վենետիկ-Ս. Ղազար, 1992, էջ 80-93:

11-րդ դարում եղած շփումների և, հատկապես, Դրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսին վերագրվող շփումների առնչությամբ տե՛ս A. Kalpakian-Konymjian, «Le catholicos Grégoire II le Martyrophile (Vkavaser) et ses pérégrinations», Bazmavep, CXXXII (1974), էջ 316-8 (306-325), վերատպված է նույնի «L'Egypte vue par les Arméniens (XI-XVII siècles)» գործում, Éd. de la Fondation Singer-Polignac, Paris, 1988, էջ 13-14 (7-19); **L.B. Zekiyan**, "Le colonie armene del Medioevo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la Storia degli armeni in Italia)", *Atti del Primo Simposio internazionale di Arte Armena*-ում, Venezia - S. Lazzaro, 1978, էջ 837-839: **Պ. Անանյան**, «Դրիգորիս Վկայասերը և հայ-հռոմեական հարաբերությունները», «Բազմավեպ», (1992, էջ 7-28, ֆր. ամփ. 29-30):

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Դրիգորիս Է.-ի 1080 թ. հունիսի 6-ի նամակը, որը հասցեագրված է "G. dilecto in Christo fratri Simandensi archiepiscopo", և որը նամակում հանդես է գալիս որպես Հայոց Եկեղեցու առաջնորդ, կարող էր ուղղված լինել միայն անձամբ Վկայասերին. հմմտ. MGH, Epistulae Selectae, t. II, fasc. 2; Gregorii VII Registrum, lib. V-IX, ed. E. Caspar, Berlin, 1920. VIII 1 (որոշ այլ դեպքերում ևս այդ ժամանակաշրջանի պապական նամակագրության մեջ հասցեատիրոջ անունը նշվում է միայն մեկ սկզբնատառով). Simnadensi-ի փոխարեն Simandensi ևս մեկ տարբերակ է, Fontes, Séries III, vol. I. Acta - Romanorum Pontificum, t. I, no. 380. "Simanda"-ն հավանաբար հայերեն «Ծամնդավի» հնչյունաբանական աղավաղումն է, ուր Վկայասերը կաթողիկոս է օծվել (տե՛ս նաև **M. Ormanian**, L'Eglise Arménienne. Son histoire, sa doctrine, son régime, sa discipline, sa liturgie, sa littérature, son présent. Constantinopole, 1910, 2e ed. revue et annotée. Imprimerie du Catholicossat Arménien de Cilicie. Antélias – Liban, 1954, p. 40):

2. Տե՛ս նաև **A. Ter-Mikelian**. Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV bis zum XIII Jahrhundert). Leipzig. 1982, p. 58; **Ormanian**, նշվ. գծ., էջ 33. **V. Inglisian**. "Chalcedon und die armenische Kirche". A. Grillmeier - H. Bacht-ի. *Das Konzil von Chalkedon: Geschichte und Gegenwart* երկում. vol. II. Wurzburg. 1953, էջ 382-383; **Կոգյան**. նշվ. աշխ., էջ 211, 215-224:

3. **J. Laurent**. "Les origines médiévales de la question arménienne". RÉArm I (1920), էջ 35-54, վերատպվել է Études d'Histoire Arménienne-ում, Peeters, Louvain, 1971, էջ 1-19: Լորանը ի միջի այլոց գրում է. «Հայը երբեք չի կարողացել եղբայրանալ հույնի հետ ... Բյուզանդական կայսրության մեջ նա մնացել է որպես չձուլված օտար տարր,

որը առիթը ներկայանալու դեպքում կարող էր վտանգավոր դառնալ» (էջ 47 (12-13): Ս. Ռանսիմանն այդ բառերը որակում է որպես «ֆանտաստիկ անհեթեթություն» (*The Emperor Romanus Lecapenus and his Reign, Cambridge*, 1929, էջ 165, ծան. 2): Ճիշտ է անկասկած այն, որ շատ հաճախ հայը «պահպանել է, գոնե իր անձնական կյանքում, իր լեզուն, իր սովորույթները, իր հագուստը և իր ազգային կրոնը» (**Լորան**, *անդ*), սակայն «այս ամենը կարող է ճիշտ լինել, եթե շեշտենք և ուշադրություն դարձնենք այն բանի վրա, որ հայերը Բյուզանդիայում առաջնակարգ դեր կատարելով, լիովին ներգրավված էին այդ երկրի քաղաքական և զինվորական կյանքի մեջ, նույնացնում էին իրենց շահերը այդ երկրի շահերի հետ և յուրացնում դրա մշակույթի կարևորագույն առանձնահատկությունները» (**J. Charanis**, *The Armenians in the Byzantine Empire*, Lisboa, 1963, էջ 57):

4. Այդ «մեսիականապաշտության» ժամանակակից ամենաբնորոշ գրական արտահայտությունն է **Ստոյն Եպիփանու** ասացեալ Ցաղագս Նեռինն (Հայկականք յաղագս վերջնումն ժամանակաց) (**Pseudo Epiphanii** Sermo de Antichristo (Armeniaca de Fine Temporum), Introduzione, testo critico, versione latina e note di G. Frasson, Venezia - S. Fine Lazzaro, 1976: Ստեղծագործությունը հրատարակչի կողմից թվագրված է 12-րդ դարով, միգուցե դրա առաջին կեսով (էջ XLII-LIV):

5. Տե՛ս վերը, ծան. 1:

6. Տե՛ս **L.B. Zekiyan**, նշվ. ծան. 1-ում, էջ 848-849, ուր տրված են նաև ընդարձակ մատենագիտական հղումներ:

7. "Unde nos illius Ecclesiae. Armeniorum scilicet, fidem, sicut ex hujus verbis didicimus comprobantes ..." (Բենեվենտոյի Ռոֆրեդ եպիսկոպոսին 1080 թ. Գրիգոր Է-ի գրած նամակը. **Gregorii VII** Registrum-ի մեջ, նշվ. վերը՝ ծան. 1-ի մեջ, VII, 28: Տե՛ս նաև **G. Hofmann**, "Papst Gregor VII und der christliche Osten", *Studi Gregoriani, raccolti da* G. B. Borino, vol. I, Abbazia di S. Paolo di Roma, 1947, II: "Armenien", էջ 174-175: Ճիշտ է նաև այն, որ նույն Պապը Հենրիկոս Դ կայսերը հասցեագրված 1074 թ. դեկտեմբերի 7-ի նամակում գրում էր. "Armenii enim fere omnes a catholica fide oberrant" (Registrum, lib. I-IV: MGH (նշված), II/1, էջ 167), սակայն, ինչպես ինքն է խոստովանում, նա հավանաբար փոխել էր իր կարծիքը հայերի ներկայացրած բացատրություններից հետո:

8. Տե՛ս **B. L. Zékiyan**, "Un dialogue **oecuménique** au XIIe siécle: les pourpariers entre le catholicos St. **Neréss** Shnorhali et le légat impérial Théorianos en vue de l'union des Églises arménienne et byzantine", Actes du XVe *Congrés* international *d'Études* Byzantines - *Athénes, Sept. 1976, IV. Histoire,* Communications, Athénes, 1980, էջ 420-441, վերատրպված է թեթևակի փոփոխություններով "St. **Nersés** Shnorhali en dialo-

gue avec les Grecs: un prophète de l'oecuménisme au XIIe siècle" վերնագրի տակ, **Armenian** Studes, Études Arméniennes in memoriam Haig Berberian, Lisboa, 1986, էջ 861-883: Նույնը, "St. Nesrés de Lambron Docteur de l'Église Arménienne et théologien de l'union des Églises", Jahrbuch der ***Oesterreicchischen Byzantinistik***, 31/Beiheft, XVI, Internationaler Byzantinistenkongress, Akten, I/Beiheft, Wien, 1981, էջ 2.1: Նույնը, "Les relations arméno- Byzantinnes, aprés la mort de St. **Nersés** Shnorhali", ***Jahrbuch der Oesterreichischen Byzantinistik***, 31/4 XVI ***internationaler Byzantinistenkongress***. Akten, II/4, Wien, 1982, էջ 331-337: Նույնը, "The Armenian Community of Philippopolis and the Bishop Joannes Atmunos Imperial Legate to Cilicia", ***Between the Danube and the Caucasus. Oriental Sources on the History of the Peoples of Central and South Eastern Europe***, Budapest, 1987, էջ 363-373: Նույնը, "Nersés de Lambron" և "Nersés Shnorhali", ***Dictionnare de Spiritualité***, XI, Paris, 1981 սյուն. 122-134, 134-150: **P. Ananian**, "Narsete IV Klayetzi", Bibliotheca Sanctorum, IX, Roma, 1967, սյուն. 705-753: **E Suttner**, " Eine " Oekumenische Bewegung im 12. Jahrhundert und ihr Bedeutendster Theologe der armenische Katholikos Nersés Shnorhali, Kleronomia, t. 7, fasc. 1, 1975, էջ 87-97: **H. Khatchadourian**, "The Christology of St. Nerés Shnorhali in Dialogue with Byzantium", ***Miscellanea Francescana***, 78 (1978), էջ 413-434.

9. Գր. Վկայասերին հասցեագրված Գրիգոր Է-ի վերը հիշատակված նամակը դրա պարզ վկայությունն է: 12-րդ դարի ամբողջ ընթացքում, սակայն, միաձնության այդ կամքը չի արտահայտվի այնքան վճռական ձևով, որքան հետագայում: Երբ ինքը՝ Գրիգոր Է-ն պահանջում էր Գր. Վկայասերից, որ Երեքսրբյանից բացառվեր քրիստոսաբանական բացականչումը՝ «Որ խաչեցար վասն մեր», ապա նա իր խնդրանքը պատճառաբանում էր գայթակղությունից խուսափելու մտահոգությամբ, առանց մտածելու, հավանաբար, որ լատինների Filioque (և յՈրդւոյ) միջարկումը պակաս գայթակղական չէր հույների համար:

10. «Հավատո Տարածման» (Propaganda Fide) ժողովի արխիվներում հատկապես:

11. Հեղինակների դիրքորոշումը Միաբանողների նկատմամբ բնորոշվում է ոչ այնքան նրանց դավանական պատկանելությամբ, այլ եկեղեցաբանական հայեցակետով: Ունիթորական շարժման ամենավճռական քննադատների շարքում էին ոչ միայն, բնականաբար, Ինքնագլուխ Եկեղեցու աստվածաբանները և պատմաբանները, այլև Վենետիկի Մխիթարյանները: Այլ դպրոցների կամ միտումների ներկայացուցիչ կաթողիկե հեղինակները հավանություն չտալով նրանց լատինականացնող չափազանցություններին, հիմնականում աշխատում են «հասկանալու» նրանց: Այդպես է վարվում, օրինակ, Ս.

Կոգյանը (նշվ. ծան. 1, էջ 481-483): Ցուրաքանչյուր հեղինակի հատուկ նրբերանգային տարբերություններով հանդերձ, հիմնականում հավասարակշիռ քննադատություն է հնչել առաքելական Գ. Սարգսյանի (*Introduction á la littérature arménienne chrétienne* (Cahiers d'Études Chrétiennes Orientales, II), Le Monde Non Chrétien, Paris 1964, էջ 36-37 (թարգմանություն անգլերենից՝ *A Brief introduction to Armenian Christian Literature*, The Faith Press, London, 1960, pp. 46-47), ինչպես նաև կաթողիկեներ Գր. Պետրովիչի (**G. Petrowicz**, "I Fratres Unitores nella Chiesa Armena", Euntes Docete, XXII, (1969), էջ 309-347) և Վարդան Մաթֆունյանի կողմից (**V. G. Matfunian**, "Die lateinische Mission in Grossarmenien bis zur Mitte des 18. Jahrhunderts", *Die Kirche Armeniens*, (Die Kirchen der Welt, Bd. XVIII), Evangelisches Verlagswerk, Stuttgart, 1978, էջ 165-174:

Հ. Լ. Միրզոյանը վերջերս փորձ է արել գնահատելու նրանց մշակութային ներդրումը, հատկապես փիլիսոփայության ասպարեզում: Տե՛ս նրա *«17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն»* երկում, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1983:

Թող թույլ տրվի մեզ հիշեցնել, որ մեր մի նախընթաց ուսումնասիրության մեջ մենք առաջ էինք քաշել հետևյալ միտքը. «Այնուամենայնիվ, չնայած այդ ծայրահեղություններին, որոնք արդարացնում են այդ քարոզչական շարժումը, ընդհանուր առմամբ, բացասական դատաստանը, չի կարելի չընդունել դրա թողած որոշ դրական հետևանքները: Նախ և առաջ քարոզիչները իրենց հետ բերեցին որոշակի փիլիսոփայական միտք, այն է՝ Արևմուտքի միջնադարյան սխոլաստիկան: Դա, միախառնվելով այլ գործոնների հետ, խթանեց Արևելյան Հայաստանի խոշոր վանական կենտրոններում, հատկապես 14-15-րդ դդ. գրական, փիլիսոփայական և աստվածաբանական ուսումնասիրությունների մի լուրջ զարթոնք» (**Zekiyan**, նշվ. ծան. 1-ում, էջ 921):

12. Ս. Կոգյանը ցանկանում է մեղմացնել լատինաբան լեզվի կրոնական կամ «աստվածաբանական» նշանակությունը, այն համեմատելով հունարենի հետ կապված նման մի երևույթի հետ, որն է հունաբան հայերենը 5-8-րդ դդ. ընթացքում: Հանգիտություն կա անկասկած, միայն թե այս դեպքում, եթե այն ինչ-որ բան է ապացուցում, արդեն շատ է ապացուցում, ինչպես ասում է փիլիսոփայական հին առածը (si quid probat, nimis probat): Փաստորեն հանգիտությունը վերաբերում է ոչ միայն լեզվաբանական գործառության մեխանիզմի տարբեր կողմերին (բառապաշարային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական), այլև խնդրո առարկա երևույթի բնույթին և ձևավորմանը: Երկու դեպքերում էլ խոսքը ակադեմիական, «արհեստական» լեզուների մասին է, որոնք ստեղծվել էին «առ այս» շատ որոշակի պատճառներով և նպատակներով: Ուստի, եթե հունաբան հայերենի ստեղծումը պատճառա-

բանվում է փիլիսոփայական և գիտական կարգի կարիքներով, ապա լատինարան հայերենի ստեղծումը պատճառաբանվում է տարա-մերժորեն եկեղեցական գաղափարախոսության հրամայականով:

Միշտ է անկասկած նաև այն, որ լատինարան հայերենը շուտ ի հայտ չի գալիս, և կարծես թե Միաբանողների միաբանության անմի-ջական արգասիքը չի հանդիսանում, այլ 17-րդ դարի երկրորդ կեսին Հռոմում աշխատող մի խումբ հայ եկեղեցականների գործունեության արգասիքն է (տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, Բ մաս, Երևան, 1945, էջ 310-323): Այնուամենայնիվ այս լեզուն հանդիսանում է Միաբանողների գաղափարախոսության իսկական շարունակու-թյունը, որով տոգորված էին այդ «ակադեմիական» լեզվի ստեղծող-ները:

13. Հիմնական մատենագրություն M-A VAN DEN OUDENRIN-Linguae Haicanae Scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum et FF. Armenorum Ord. S. Basilii citra Mare consistentium quotquot huc usque innotuerunt երկում, Francke Veri., Bern und München, 1960: Տե՛ս նաև Fr. TOURNEBIZE, *Histoire politique et religieuse de l'Arménie*, Paris, 1910, 320-337: R. **Loenertz**, *La Société des Frères Pérégrinants*, Rome, 1937, էջ 104-105, 141-150, 185-198; **G. Petrowicz**, նշվ. ծան. 11-ում, էջ 309-347: **V. G. Matfunian**, նշվ. ծան. 11-ում:

14. Տե՛ս ծան. 13-ի մատենագիտությունը: Հայկական «Սխոլաստի-կայի», կամ «Հակասխոլաստիկայի» մեծագույն ներկայացուցչի մտա-վոր ճիգի վերաբերյալ տե՛ս L. Arpee, History of Armenian Christianity, New York, 1946, ch. XIV, "Gregory of Datev and the Armenian Summa" 175-186: **M. De Durand**, "Une Somme arménienne au XIV siècle", Études d'Histoire Littéraire et Doctrinale, Quatrième série, (Université de Montréal. Publications de l'Institut d'Etudes Médiévales, XIX), Montréal-Paris, 1968. pp. 217-277.

15. Այդ ժողովներից առաջին երեքի վերաբերյալ տե՛ս **A. Balgy**, *Historia doctrinae catholicae inter Armenios unionisque eorum cum ecclesia Romana in Concilio Florentino*, Viennae. 1877, pp. 69-88: **Ս. Կոգյան**, նշվ. ծան. 1-ում, էջ 462-479: Չորս ժողովների վերաբերյալ՝ **Մ. Օրմանյան**, *Ազգապատում*, հ. Բ, Կոստանդնուպոլիս, 1914, պար. 1230-1236, 1253-1258, 1291-1315, 1322-1328, սյուն. 1784-1793, 1816-1825, 1868-1916, 1922-1932: **Անապատական**. նշվ. ծան. 1-ում, էջ 159-205: Բոլոր այս հեղինակները ունեն լուրջ ջատագովական մտահոգություններ: Ավելի «պատմական», սակայն չափազանց կրճատ շարադրանք է մեզ առաջարկել **G. Dédéyan**. Le temps de la croisade (fin XIe-fin XIVe siècle). *Histoire des Arméniens*, sous la direction de G. Dédéyan. Éd.s Privat, Toulouse. էջ 320-321:

16. Տե՛ս ծան. 15. **Balgy**. էջ 69-77: **Ս. Կոգյան**. էջ 468-472: **Մ. Օրմանյան**, նշվ. գծ. 1230-1258, սյուն. 1784-1825: **Անապատական**. էջ

164-170, 175-179:

17. Գր. Անավարզեցին այնքան էր համակված իր խղճով և բարդույթներով, որ ծածուկ ջուր էր լցնում պատարագի սկիհի մեջ, ինչպես ընդունված էր լատինների մոտ և հակառակ էր հայկական ավանդույթներին, հույս ունենալով, որ այդ սովորույթը կընդունվի հաջորդ ժողովի կողմից (**C. Galanus**, *Conciliationis ecclesiae Armenae*, t. 1, Rome, 1680, էջ 438: **Մ. Չամչեան**, *Պատմութիւն Հայոց*, հտ. Գ, Վենետիկ - Ս. Ղազար. 1786, էջ 290-291:

18. Տե՛ս անդ, էջ 339-347: *Ազգապատում*, պար. 1315, սյուն. 1913-1914: **Անապատական**, նշվ., էջ 195-199:

19. Տե՛ս **Չամչյան**, նշվ. ծան. 17-ում, էջ 353-354, 358: **Օրմանյան**, *անդ*, պար. 1321, սյուն. 1921:

20. Հռոմի առաջնությունը՝ գոնե պատվո առաջնությունը, չնայած այն բանին, որ այն պատճառաբանված էր քաղաքական շարժառիթներով, հատկապես ճանաչվել և հռչակվել է Կոստանդնուպոլսի և Քաղկեդոնի Տիեզերական ժողովների ժամանակ: Հետագայում բաժանումից, ինչպես նաև իրավական որևէ առաջնության հերքումից հետո, այդ ավանդույթի շարունակության և ընկալման մասին տե՛ս **J. Spiteris**, *La critica bizantina del Primato romano nel sec. XII*, (Orientalia Christiana Analecta, 208), Roma, 1979, pp. 1-24, 300-322, և հատկապես այն հեղինակները, որոնք մեջբերված են 3 և 5 ծանոթագրություններում, ուղղափառների արդի դիրքորոշման վերաբերյալ և 4 ծանոթագրությունում «չափավոր» կաթողիկեների դիրքորոշման վերաբերյալ: Ի միջի այլոց կարելի է նայել **J. Chrysostomus**, "Die Möglichkeit einer Vereinqunq der katholischen und orthodoxen Kirche"; **B. Schultze - J. Chrysostomus**-ում, *Die Glaubenswelt der orthodoxen Kirche*, (Wort und Antwort - Oekumenisches Gespräch / Bd. 26), Otto Müller Verl., Salzburg, 1961, էջ 191-209: **V. Peri**, *La "Grande Chiesa Bizantina. L'ambito ecclesiale dell'Ortodossia*, Queriniana, Brescia, 1981, էջ 12-14; **G. Pattaro**, *Corso di teologia dell'ecumenismo*, Queriniana, 1985, էջ 307-323: **A. Ducellier**, *Byzance et le monde orthodoxe*, Armand Colin, Paris, 1986 - իտ. թարգ.՝ *Bisanzio*, Einaudi, Torino, 1988, թթ. 93-96; **Y. Spiteris**, *La teologia ortodossa neo - greca*, Ed.ni Dehoniane, Bologna, 1992, էջ 52 (Mazarakis), 402-406 (Zizioulas):

21. Ներսես Շնորհալին բացառիկ պարզությամբ և խստությամբ դատապարտում է հավատքի դեմ դավաճանությունը քաղաքական կամ այլ շահերի համար: Նա 1165 թ. Մանվել Կոմնենոս կայսերն իր տեսակետների շարադրանքի վերջում գրում է. «Եթե մենք թաքցրել ենք ինչ-որ բան մեր հավատո հանգանակից և չենք գրել դրա մասին, կամ գրել ենք ավելին, քան մեր հավատո հանգանակն է, հաճոյանալու նպատակով կամ վախից և մարդկային հարգանքից դրդված, որպեսզի Ձեր աչքին ընդունելի ներկայանանք, ապա թող մենք կանգնենք Աստուծո դատաստանի առջև անհավատների և հերձ-

վածողների հետ միասին, քանի որ թարգրած կամ կեղծած հավատքը հետու չէ անհավատությունից» (Պատճառ խնդրոյ միարանութեան Թագաւորին Հոռոմց մանուելի և Սրբոց Կաթողիկոսացն Հայոց Ներսեսի և Գրիգորի. Թուղթքն զոր գրեցին առ միմեանս (Ընդհանրական Թուղթ Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց տպարան, 1871, էջ 106 - լատիներէն թարգ.՝ Sancti Narsetis Clajensis Armenorum Catholici Opera, studio et labore D. J. Cappelletti, vol. I, Venetiis, 1833, էջ 194): (Հմմտ. **Zekiyan**, "Un dialoque oecuménique", նշվ. ծան. 8-ում, էջ 436-437): Ի դեմս հայ էկումենականության խոշորագույն ներկայացուցչի այսքան պարզորոշ դիրքորոշման, անհրաժեշտ է մեծագույն զգուշավորություն ցուցաբերել, Հայաստանյայց Եկեղեցու ներկայացուցիչների եկեղեցական հաղորդության փափագն ու որոնումները հանգեցնելու, միշտ և որպես ամենակարևոր գործոնի, գուտ ներմնայուն (իմմանենտ), քաղաքական կամ այլ պատճառաբանության:

Այդուհանդերձ, այն սկզբունքը, որ մենք հենց նոր ձևակերպեցինք, չի նշանակում ցանկացած ներմնայուն նկատառման բացառում էկումենական տրամախոսության մեջ: Սեփական կրոնական համոզմունքներին չդավաճանելու պայմանով, եկեղեցական միությանը ձգտելու մեջ կարելի կլիներ դիտարկել, ի հարկե ստորադրելով դրանք եկեղեցական և աստվածաբանական պատճառաբանությանը, մարդկային կարգի պատշաճության փաստարկներ: Այս բանը պարզորոշ կերպով արտահայտել է հայ էկումենականության մեկ այլ ջատագով և Շնորհալու գաղափարների ժառանգորդ Ս. Ներսես Լամբրոնացին. «Ես չեմ շեղվի իմ ճառից, եթե ասեմ հետևյալը. հենենք մեր երերացող Եկեղեցին երկաթյա առանցքին. մեր գերյալ վիճակում ապահովենք մեզ համար Աշխարհի կենտրոնի օգնությունը: մենք հավատում ենք մեր վշտերի թեթևացմանը թագավորական նավակների շնորհիվ, և որ մեր խոովքը կհանդարտվի անհաս մի հանգրվանում... Ես կոչ չեմ անում հոգին ծախելու՝ մարմինը փրկելու համար: Չխեղաթյուրե՛ք իմ խոսքերը այդ իմաստով: Սակայն հաշվի առնելով ոմանց թուլությունը, ես, որպես Քրիստոսի աշակերտ, աշխատում եմ նմանվել Ուսուցչին, որը միացրել է հոգու բուժումը մարմնի բուժմանը (*Ատենաբանություն*):

Ես կցանկանայի վերջապես ճշտել, որ մենք օգտագործում ենք «էկումենական», «էկումենականություն» տերմինները՝ միայն նշելու համար եկեղեցական հաղորդության վերակերտմանը ձգտող մի որոնում, որի առաջնահերթ պայմանն է, որ սկիզբ առնի զուգահավասար տրամախոսությունից և որը հաշվի առնի տարբերությունը վարդապետության էության և դրա դավանաբանական ձևակերպման միջև (տե՛ս վերը, ծան. 8):

22. Տե՛ս Զամչյանց, նշվ. ծան. 17-ում, էջ 310-31: Անապատական, նշվ. ծան. 1-ում, էջ 178-179:

23. Տե՛ս **M. Abagian**. "La questione della communicatio in sacris". *Բազմավեպ*. CXXXIX (1981), էջ 129-162: CXLI (1983), 215-232:

CXLVI (1968), 155-172; CXLVII (1989), 244-258; CXLVIII (1990), 146-161. 413-418; CL (1992), 202-214; **B. L. Zekiyan**, "Venezia, gli Armeni e Mechitar", *Presenze ebraico-cristiane nelle Venezie*, Ed.ni del "Rezzara", Vicenza, 1993, pp. 115-118:

24. Տե՛ս վերը ծան. 8 և 21:

25. Բնականաբար, այս համատեքստում չի խոսվում բողոքական Ռեֆորմի մասին, որն սկսվում է ուսումնասիրվող ժամանակաշրջանից հետո, և այդ շարժման ներթափանցման մասին հայերի միջև, որը է՛լ ավելի ուշ է տեղի ունենում:

26. Տե՛ս **Abagian**, նշվ. ծան. 23-ում: **L. Zekiyan**, *Mechitar rinnovatore e pioniere*, Venezia - San lazzaro,1977, էջ 27-30: Նույնը, "Venezia", նշվ. ծան. 23-ում, էջ 120-124:

27. Տե՛ս **Ա. Ութունջյան**, Պոլսահայ համայնքի միության խնդիրը և Մ. Զամչյան, *Բանբեր Երևանի համալսարանի*, 1978, 3(36), էջ 201-212: **Ս. Ճեմճեմյան**, 1820-ի Պոլսո միութենական շարժումը և հ. Միքայել Զամչյան, «*Հանդես Ամսօրյա*», CL (1987), էջ 897-910: Նույնը, «Հայր Միքայել Զամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի արձագանքը, «*Բազմավէպ*», CL (1992), էջ 147-161, ֆր. ամփ. էջ 162:

ԽԱՉԻԿ ԱԱՄՎԵԼՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԿՈՂՄԻՑ

Ուրջ 300 տարի է անցել այն օրից, երբ Հոլանդիայի Ամստերդամ քաղաքի հայկական տպարանում մամուլի տակից դուրս եկավ Աստվածաշունչ կոչվող մատյանի վերջին պրակը:

Խոսել Աստվածաշնչի տպագրության մասին, այդ նշանակում է վերհիշել երեք դար առաջ հազար ու մի զրկանքներ կրած, հազար ու մի դառնություններ ճաշակած երախտավորներին: Մարդիկ, որոնք մերժելով կյանքի վայելքները, զրկված հարազատներից, հայրենիքից դուրս, բայց և հայրենիքի համար, մեծ նվիրումով ու անհատնում եռանդով, գալիք սերունդներին ավանդեցին այն, ինչն այսօր ազնիվ հպարտությամբ է լցնում անցյալի պատմամշակութային արժեքները գնահատող յուրաքանչյուր մարդու սիրտ:

Աստվածաշնչի լույսընծայումը ոչ միայն անցյալի մշակութային կյանքի լավագույն ավանդների աստիճանական զարգացումն էր, այլև եղել ու մնում է իբրև տպագրական գործի մի նոր վերելք, մի անանախադեպ զարգացում:

Այսօր երեք հարյուր երեսունամյա հեռավորությունից որքան ընդգծված է դառնում մեր գնահատման պատմական կողմը, այնքան ավելի է մեծանում այս գրքի հրատարակության հոգևոր-մշակութային արժեքն ու նշանակությունը:

Խոսելով Աստվածաշնչի տպագրության մասին, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նման մի աշխատության լույսընծայումը վեր է մի մարդու ուժերից: Այս կարգի մոտեցում ենք հանդես բերում ո՛չ բնավ նրա համար, որ ցանկանում ենք նսեմացնել մեծ երախտավոր Ոսկան Երևանցու փառքը զարդարող դափնեպսակի տերևները... Վարվելով այդպես, նպատակ ենք ունեցել ըստ արժանվույն գնահատել յուրաքանչյուրի վաստակն այս գործում: Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու կամքը, Մատթեոս Ծարեցու եռանդը, Ղլիճենց Ավետիսի ձեռներեցությունն ու Կարապետ Անդրիանացու գործադրած ջանքերն այն կարևոր գործոններն են, որոնց բացառումով անմեկնելի

կմնա ու թերի կդառնա Աստվածաշնչի տպագրության դժվարին ու մաքառումներով լի պատմությունը: Ոչ թե միտումով, այլ սովորության ուժով տարիներ շարունակ բանասիրության կողմից ստվերի մեջ են թողնվել վերոհիշյալ անունները այն դեպքում, երբ առանց նրանց աջակցության Ոսկան Երևանցին չէր կարող գլուխ բերել Աստվածաշնչի տպագրության դժվարին գործը:

*
* *

Շահ-Աբասի ձեռնարկած սուրգյունը և դրան հաջորդող թուրք-պարսկական կործանարար պատերազմները հարցականի տակ են դնում Հայաստան աշխարհի գոյության իրավունքն ու հնարավորությունը:

Ստեղծված կացության թելադրանքով Առաքել Դավրիժեցու պատմության մեջ առարկայական են դառնում Մովսես Խորենացու «Ողբը» հիշեցնող գրառումներ. «Եվ սոցին ամենեցուն առիթ, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ հեռացումն ի սուրբ զրոց և երկիւղէն Աստուծոյ, ոչ բնաւ ընթեռնին գիրս, այլ էին փակեալ և լռեալ մատեանք աստուածայինք, վասն զի էր խափանեալ ընթերցումն Սուրբ Գրոց, որք էին արհամարհեալ յաչս նոցա, հողով և մոխիրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք, վասն զի ոչ զգիրս զիտէին և ոչ զզօրութիւնս գրոց՝ ըստ Տեառն բանի»[1]: Այս ամենով հանդերձ 1639 թվականին կնքված թուրք-պարսկական խաղաղության դաշինքը կենդանություն ու զարթոնքի որոշ հույսեր ու երաշխիքներ է ներշնչում այդ պատերազմներում թատերաբեմ դարձած Հայաստան աշխարհի և սակավաթիվ ապրողների համար: Խաղաղության դաշինքով ստեղծված այս նոր երաշխիքը հոգևոր ու աշխարհիկ իշխանավորների հոգեբանության մեջ առաջ է բերում ապրելու ձգտում և դրությանը տեր դառնալու մտահոգություն: Աստվածաշունչը տպագրական եղանակով բազմացնելու և ժողովրդի լայն խավերի մեջ աստվածաշնչային գաղափարները ընդհանրացնելու խնդիրն այդ ժամանակշրջանում գրեթե բոլոր կաթողիկոսների ու իշխանավորների համար դառնում է հետապնդվող մտահոգություն:

---

[1] Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատությամբ Լ. Ա. Խանլարյանի, Ե., 1990, էջ 242:

Սկսած 1579 թվականից մինչև 1637 թվականն ընկած ժամանակահատվածում, վեց տասնամյակի ընթացքում, հայոց կաթողիկոսների ու միջոց ունեցող իշխանավորների կողմից կիրառվել է Աստվածաշունչ մատյանի տպագրությունն իրականացնելու մեկ տասն-

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
ՀՆԱՑ ԵՒ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՆ
ԳԱՆԵԱՑ ՆԵՐ ՊԱՐՈՒՆԵԱԿՈՂ: ՀԱՅԵ
ԿԵՐԳՈՒ-ԹԵՔԵԱՆԻ ՆԵԽՆԵԱՑՆ
ՄԵՐՈՑ ԵՒ ԾՀԱՄԱՐՏԱՍԻ
ՐԵՑ ԹԵՐԳՄԱՆՉԵՑ·
ՑԱՄՍՏԷՐԴԱՄ

յակից ավելի փորձեր[2], սակայն գործնականում միջոցների բացակայության և ապա Հռոմի Հավատի տարածման ժողովի նվիրակների ու գործակալների կողմից ձեռնարկված խոչընդոտների ու արգելքների պատճառով այդ փորձերից և ոչ մեկը չի կարողացել իրականություն դառնալու կայուն երաշխիք ստանալ:

[2] Գալեսքյարյան Հ. Գ., Աստվածաշնչի տպագրության ջանքերը Ոսկանեն առաջ, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1914, էջ 7-18:

Հայության կողմից նման չընդհատվող ձգտումներն ու փորձերը Հռոմի հոգևոր իշխանության ներկայացուցիչների համար դառնում են օրվա հարց ու մտահոգության առարկա, ուստի Հավատի տարածման ժողովի կարդինալները 1637 թվականի դեկտեմբերից մինչև 1638 թվականի հունվարի 30-ը տեղի ունեցող նիստերի ընթացքում քննարկման առարկա են դարձնում հայերեն Աստվածաշնչի տպագրության բնագրի ընտրության հարցը[3]:

Բազմակողմանիորեն քննարկման ընթացքում հայտնի է դառնում, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն իրականացված է «Յոթանասնից» օրինակի հիման վրա: Այս բացահայտումից հետո նիստերում կայացված որոշման հիման վրա հայերեն Աստվածաշնչի տպագրությունը համարվում է անընդունելի: Հենվելով ավելի վաղ՝ 1546 թվականի ապրիլի 8-ին Տրիտենդյան ժողովի 4-րդ նիստում կայացված որոշման վրա, ըստ որի ամբողջ Արևմուտքի համար օրինականացվել էր Վուլգատայի օրինակը[4], ուստի այս նիստում ևս իբրև որոշում արձանագրվում է, որ հայերեն Աստվածաշնչի տպագրության համար կարող է օրինական համարվել միայն ու միայն Վուլգատայի բնագիրը:

Ահա՛ մի որոշում, որը տարիներ շարունակ արգելառիթ է դառնում Հռոմի իրավասության ոլորտում ձեռնարկվող հայերեն Աստվածաշնչի տպագրության բոլոր տեսակի փորձերի ճանապարհին:

Հռոմի ձեռնարկած խոչընդոտներին զուգընթաց Հայաստան աշխարհում հոգևորականության միջավայրում, նրանց գործելակերպի ու հոգեբանության մեջ տեղի են ունենում նոր տեղաշարժեր: Երկրում որքան առաջ են գնում Շահ-Աբասի պատճառած վերքերի ապաքինման աշխատանքները, այնքան ավելի է մեծանում Աստվածաշունչ մատյանի տպագրության անհրաժեշտությունը: Հռոմի կիրառած խոչընդոտները, նրանց հետապնդած նպատակադրումները հետզհետե հայտնի են դառնում Աստվածաշնչի տպագրության գործը նախաձեռնողներին, ուստի մշակվում ու ձեռք են առնվում համապատասխան միջոցառումներ՝ ստեղծված կացության պայմաններում տպագրության գործը առաջ տանելու ուղղությամբ:

Այս առումով, իբրև առաջին քայլ, խիստ ուշագրավ է Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացու կիրառած նախաձեռնությունը: Հայտնի է, որ 1636-1637 թվականների

---

[3] Ամատունի Կ., Ոսկան վարդ. Երևանցի և իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 18:

[4] Նույն տեղում:

ընթացքում Փիլիպոս Հաղբակեցի Կաթողիկոսի հանձնարարությամբ և Խաչատուր Կեսարացու ջանքերով Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում հիմնադրվում է տպարան, ուր և 1638 թվականի ընթացքում հաջողությամբ լույս է ընծայվում 604 էջ ծավալ ունեցող մի «Սաղմոսարան»:

Նոր Ջուղայում տպարանի հիմնադրման իրականացումը հետապնդում էր որոշակի նպատակ, այն է՝ Հռոմի ենթակայության սահմաններից դուրս իրականացնել հայերեն գրքերի տպագրություն և նախադրյալներ ստեղծել Աստվածաշնչի տպագրության համար:

1639 թվականի դեկտեմբերին, տպագրական արվեստի մեջ կատարելագործվելու հանձնարարականով, Խաչատուր Կեսարացին Եվրոպա է ուղարկում իր աչքաբաց աշակերտ Հովհաննես վարդապետ Ջուղայեցուն[5]:

Վերջինս հասնելով Վենետիկ, ոչ միայն ուսումնասիրում է տպագրական գործը, այլև հետամուտ է լինում հայկական տպատառեր ձեռք բերելու գործին: Այստեղ չգտնելով հուսադրող պայմաններ, Ջուղայեցին մեկնում է Հռոմ, ուր բազմարնույթ գործունեություն է ծավալում Խաչատուր Կեսարացու հանձնարարությունն իրականացնելու համար: Հռոմում ծավալած գործունեության ընթացքում Ջուղայեցին վաստակում է մեծ թվով հակառակորդներ: Դիվանագիտորեն շրջանցելով ձախողումները, նա կարողանում է ձեռք բերել համապատասխան քանակի տպատառեր ու տպարանական սարքավորումներ: Այդ ամենը տեղափոխելով Լիվոռնո, այնտեղ նա հիմնադրում է տպարան և լույս ընծայում շուրջ 400 էջ ծավալ ունեցող մի Սաղմոսարան: Այնուհետև իր հետ առնելով տպարանական սարքերն ու տպատառերը՝ 1645 թվականի աշնանը, վեց տարվա բացակայությունից հետո, նա վերադառնում է հայրենիք: Ամենափրկիչ վանքում Հովհաննես Ջուղայեցին ընթացք է տալիս տպագրական գործի աշխուժացմանը և 1650 թվականին ձեռնարկում վաղուց սպասված Աստվածաշունչ մատյանի տպագրությանը: Սակայն, հակադիր ուժերի կողմից նյութված սադրանքների հետևան-

[5] Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Ե., 1988, էջ 29:

քով, խափանվում է տպարանի գործունեությունը, ուստի և ընդհատվում է Աստվածաշնչի տպագրությունը[6]:

Փիլիպոս Հաղբակեցու մահվանից հետո, 1655 թվականին, գահ է բարձրանում Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը: Վերջինս մեր պատմության մեջ աչքի է ընկնում նաև նրանով, որ իր գործունեության ընթացքում հետևողական վերաբերմունք է հանդես բերել Աստվածաշունչ մատյանի տպագրության համար: Նոր Ջուղայի տպարանի խափանման հանգամանքներին լավատեղյակ Հակոբ Ջուղայեցուն ո՛չ միայն չի վհատեցնում Աստվածաշնչի տպագրության հետ կապված անհաջողությունները, այլև եղածն իր մաքրամասնություններով նրա համար դառնում է յուրատեսակ փորձության քար: Ուստի 1657 թվականին նա հատուկ հանձնարարականով Եվրոպա է ուղարկում Փիլիպոս Կաթողիկոսի նոտար, ատենադպիր և ծաղկող գրիչ Մատթեոս Ծարեցուն:

Որոշակի գրառումներ չկան, սակայն անուղղակի փաստերը հիմք են տալիս ասելու, որ Մատթեոս Ծարեցին կաթողիկոսի հանձնարարությունը պետք է իրականացներ իտալական հողի վրա: Հայտնի է նաև, որ երկու տարվա համառ ու ապարդյուն ջանքերից հետո Ծարեցին լքում է Հռոմը և մեկնում Ամստերդամ:

Հիմնադրել հայկական տպարան՝ այդ նշանակում էր ամենից առաջ ունենալ շարվածքային տպատառեր: Ուսումնասիրելով տեղական պայմանները՝ Ծարեցին կարողանում է գործնական կապեր հաստատել Հոլանդիայում հրատարակչական գործի մեջ մեծ անուն հանած Էլզեվիր եղբայրների հետ և բանակցության մեջ մտնելով՝

---

[6] Աստվածաշնչի տպագրության խափանման գործում չպետք է անտեսել ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի հաղորդած տեղեկությունները: Հովհաննես Ջուղայեցու «... հայերեն գրատպությունը,- գրում է վերջինս,- բուռն հուզմունք էր առաջացրել իր դեմ, որքանով սպառնում էր զրկել հայոց բազմաթիվ այն մարդկանց, որոնց ապրուստի աղբյուրը գրչության արվեստն էր»: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ե., 1959, Գիրք երկրորդ, էջ 167: Մեր խորին համոզմամբ տպարանի խափանման գործում չպետք է անտեսել Աստվածաշունչ մատյանը ձեռագրով բազմացնող բողոքական գրիչների մասնակցության հավանականությունը: Իբրև լրացուցիչ փաստարկ պետք է ավելացնենք, որ, ըստ հավաստի աղբյուրների, այդ շրջանում ձեռագրով արտագրված Աստվածաշունչն արժեցել է հազար ծեքի: Տե՛ս Մեմենեվյան Հ. Սահակ, Հայ տպագրությունը և Հռոմը, Վենետիկ, 1989, էջ 25: Անհավանական չէ, որ Աստվածաշնչի տպագրության խափանման առիթով տպարանի փակման գործում դեր կատարած լինեին նաև Հռոմի Հավատի տարածման ժողովի գործակալները:

սրանց համար տառեր փորագրող Քրիստոֆիլ վան Դեյկի հետ պատվիրում է իր գործի համար համապատասխան տեսակի ու քանակի շարվածքային տպատառեր[7]:

Ջնոր ընդելով պատվիրած տպատառերը՝ Մարեցին Ամստերդամի Ռումսլութ փողոցի վրա ստեղծում է հայկական առաջին տպարանը[8] դրանով կայուն ու գործնական հիմքի վրա դնելով Աստվածաշնչի տպագրության գործը, ինչը պետք է համարել Հակոբ Ջուղայեցու հանձնարարության առանցքը: Այս հանգամանքն իրավունք է տալիս Մատթեոս Մարեցուն Ոսկան Երևանցու հետ կիսելու այն խանդաղատանքն ու համակրանքը, որ տարիներ շարունակ մեր բանասիրության կողմից տրվել է միայն վերջինիս:

Իրրև ձեռնարկված գործի առարկայական սկիզբ՝ Մարեցին «յաղագս տեսութեան և փորձառութեան» տպագրության է տալիս Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» վերնագրով պոեմը: Այս գրքի մեզ հասած օրինակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մարեցու հիմնադրած տպարանը և պատվիրած տառերն ի վիճակի էին ի կատար ածելու Հակոբ Ջուղայեցու կամքը՝ տպագրելու Աստվածաշունչ մատյանը[9]:

Տակավին ավարտված չէր «Յիսուս Որդի» գրքի տպագրությունը, երբ Մարեցին հիվանդանում է: Երկյուղ կրելով, որ չի կարողանա ավարտին հասցնել սկսած գործը և վճարել դրամական պարտքերը, իր լիազորությունները տպարանի հետ մեկտեղ հանձնում է Ամստերդամում գտնվող Ոսկան Երևանցու եղբորը՝ վաճառական

---

[7] Մատթեոս Մարեցին 1658 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրով Քրիստոֆիլ վան Դեյկին պատվիրում է «Գ ազգ Լերեք տեսակ-չափի Գիր բոլոր յոյժ կատարեալ քանակութեամբ և որակութեամբ զանազանեալ, յորոց մինն և իրրև միջին կերպ է 14 կետաչափի, որը եվրոպական տառադարձությամբ հայտնի է միտել անունով։ այս զոր տեսանէք առաջիկայդ. զոր յաղագս տեսութեան և փորձառութեան տպեցաք «Յիսուս Որդի»: Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Ե., 1989. էջ 36:

[8] Տե՛ս. Առաքել Սարուխան. Հոլանդիան և հայերը. Վիեննա. 1926. էջ 85:

[9] Պետք է դիտարկենք. որ Հակոբ Ջուղայեցու կողմից Մատթեոս Մարեցուն տված հանձնարարականներում. մեզ հասած գրառումների մեջ. Աստվածաշնչի տպագրության մասին որոշակի հավաստիացումներ չկան:

Ղլիճենց Ավետիսին[10], և 1661 թվականի հունվարի 22-ին կնքում իր մահկանացուն:

Նորջուղայեցի վաճառական Ղլիճենց Ավետիսը վճարում է Մատթեոս Ծարեցու պարտքը և, ըստ ստորագրված պայմանագրի, այդ օրվանից սկսած տեր դառնում Ամստերդամում Ծարեցու հիմնարդած Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս Ջորավորի անունը կրող տպարանին: Դառնալով սեփականատեր՝ Ղլիճենց Ավետիսը նամակ է գրում Ուշի, եղբորը՝ Ոսկան Երևանցուն, և առաջարկում գալ Ամստերդամ և տեր կանգնել իր սեփականությունը հանդիսացող տպարանին:

Առնելով այդ լուրը, Ոսկան Երևանցին եղբոր նամակը ներայացնում է Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն և իրավունք ստանում տպարանում գործը շարունակելու համար Ամստերդամ ուղարկել իր աշակերտ Կարապետ Ադրիանացուն:

Ավելի ուշ, Ամստերդամից Ավետիսի գրած նամակի շարժառիթով, 1662 թվականի ամռանը (հավանաբար օգոստոսին) Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին Էջմիածնում գումարում է ազգային ժողով՝ նվիրված Աստվածաշնչի տպագրությանը[11]: Նկատի ունենալով տպագիր գրքի, հատկապես Աստվածաշնչի հանդեպ ժողովրդի մեջ ծայր առած պահանջարկի բավարարման խնդիրը, կաթողիկոսը որոշում է այդ նպատակով Եվրոպա ուղարկել Ոսկան Երևանցուն: Հակոբ Ջուղայեցին միաժամանակ Ոսկան Երևանցուն հանձնարարում է (թերևս թույլատրում է) իր հետ Ամստերդամ տանել Հեթում

---

[10] Թեև այդ մասին գրավոր հավաստիացումներ չկան, մեր խորին համոզմամբ Ղլիճենց Ավետիսի հայտնվելն Ամստերդամում չպետք է վերագրել պատահականության: Հավանականն այն է, որ նա Ամստերդամ էր եկել իր եղբոր՝ Ոսկան Երևանցու հանձնարարությամբ և Ծարեցու գործերին սատար էր կանգնում, միաջմտում էր՝ նրա ցուցումներով:

[11] Այս ժողովի մասին մեզ չհաջողվեց հայկական աղբյուրներում հայտնաբերել որևէ տեղեկություն: Ինչպես հայտնի է, Առաքել Դավրիժեցին իր աշխատության մեջ դեպքերի պարբերականության շարադրանքն ընդհատում է 1662 թվականի հուլիսի 4-ին: Տե՛ս Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990, էջ 345: Տրամաբանական է, որ այստեղ չէր կարող անդրադարձ լինել ավելի ուշ՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տեղի ունեցած ժողովի մասին: Դրան հակառակ այդ մասին հպանցիկ տեղեկություններ են պահպանվել օտար աղբյուրներում: Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1891, N6, էջ 162: Տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1966, N 7-9, էջ 343-347:

թագավորի Աստվածաշնչի ձեռագիրը[12]: Այդ ձեռագիրը Ղազար Բարբերդացու (Վալարեցու)՝ ըստ Վուլգատայի խմբագրած Աստվածաշնչի հետ մեկտեղ ժամանակին Զաքարիա վարդապետ Վաղարշապատցին գնում է Կարինում: Նվիրարերելով Հովհաննավանքին, վերջինս անեծքով բանադրում է բոլոր նրանց, ովքեր կհանդգնեն գողանալ կամ վանքից դուրս տանել այդ ձեռագրերը: Պետք է ենթադրել, որ կաթողիկոսը լուծարում է բանադրանքը, և նրա գնած ձեռագրերը (երկու միավոր) Հովհաննավանքից բերվում են Էջմիածին: Անհավանական չէ, որ այդ ձեռագրերի միջև տարբերության առիթով տեղի է ունեցել տարակարծություն և մտքերի փոխանակություն: Հետևանքը լինում է այն, որ Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին Ոսկան Երևանցուն հանձնարարում է իր հրատարակելիք Աստվածաշունչը «Դիխատել և տնատել ըստ Դաղմատականաց» (ընդգծումը իմն է - Խ. Ս.): Կաթողիկոսի հանձնարարությունը Ոսկան Երևանցին իր համար դարձնում է ոչ միայն սկզբունք, այլևս իրականացնում իր հրատարակած Աստվածաշնչում: Գիտակցելով, որ այդ մոտեցումը հետագայում կարող է իր համար բարդացումների ու բանավեճային մեղադրանքների առիթ դառնալ, նա, ավելի ուշ, կաթողիկոսի հանձնարարականը մի նախադասությամբ ամրագրում է իր տպագրած Աստվածաշնչի տիտղոսաթերթում[13]:

Այդ ժողովից հետո Ոսկան Երևանցին կաթողիկոսից ստանում է եպիսկոպոսական աստիճան և ապա մեկ-երկու շաբաթ անց, «Ուշխանութեամբ ու հրամանաւ Վեհափառի... յաղագս տպման մատենիս այսօրիկ աստուածայնոյ...», մեկնում Եվրոպա:

Հակոբ Ջուղայեցին միաժամանակ համապատասխան կոնդակ է տալիս Ոսկան Երևանցուն՝ ուղղված Լիվոռնոյի հայությանը, որպեսզի նրանք նյութական օգնությամբ սատար կանգնեն վերջինիս՝ հրատարակչական գործունեություն ծավալելու համար:

Եվ այսպես, 1662 թվականի սեպտեմբերի 27-ին կաթողիկոսական նվիրակ Ոսկան Երևանցին, դուրս գալով Էջմիածնից, հետիոտն, բանուկ ճանապարհով մեկնում է Զմյուռնիա, իսկ այնտեղից ծովային

---

[12] Տակավին փաստարկված չէ, սակայն մենք համոզված ենք, որ Ոսկան Երևանցին Հեթումի Աստվածաշնչի հետ Ամստերդամ է տարել նաև Ղազար (Վալարշեցու) Բարբերդացու Վուլգատայի հիման վրա խմբագրած Աստվածաշնչի ձեռագիրը: Այդ երկու ձեռագրերն այժմ գտնվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատանը և հանգրվանում 180 և 201 համարների տակ:

[13] Տե՛ս լուսանկարում:

երթուղով հասնում Լիվոռնո: Այստեղ նա հանդիպում է իր եղբորը՝ Ավետիսին, և նրանից վերցնում տպարանի սեփականատիրացմանը վերաբերվող փաստաթղթերը: Իբրև իրավատեր նա Լիվոռնոյից Կարապետ Անդրիանացուն տալիս է համապատասխան հանձնարարականներ և ապա, տեղի համայնքից չստանալով ակնկալվող նյութական օգնությունը, մեկնում Հռոմ: Այստեղ նա աշխատում է իրականացնել իր ստանձնած պարտավորությունները, դիմում այլևայլ միջոցների, սակայն հանդիպելով Սուրբ Գրոց հրատարակությունների առիթով վերը նշված անհաղթահարելի դիմադրությանը[14], նորից մեկնում է Լիվոռնո:

1665 թվականի փետրվարի 20-ին Ոսկան Երևանցին Լիվոռնոյում ջուղայեցի վաճառականներ Ստեփանոս Խաչենցի, Թեոդորոս Քթոշեցու և Պետրոս Ջուղայեցու հետ կնքում է պայմանագիր, որով հիշյալ վաճառականները հանձն են առնում կատարել Աստվածաշնչի տպագրության համար պահանջվող ծախսերը: Ձեռք բերելով ակնկալված գումարի մի մասը՝ Ոսկան Երևանցին շտապով մեկնում է Ամստերդամ: Կարապետ Անդրիանացու հետ իրականացնելով «Ծարակնոց» կոչվող գրքի տպագրությունը, ինչպես նաև հրատարակելով մի քանի այլ գրքեր, Ոսկան Երևանցին սկսում է զուգահեռաբար լրջորեն զբաղվել Աստվածաշնչի տպագրության նախապատրաստական աշխատանքներով: Զբավարարվելով նախկինում իր կատարած աշխատանքներով, Աստվածաշունչը շարվածքի տալուց առաջ Ոսկան Երևանցին իր ձեռքի տակ եղած ձեռագիրը համեմատում է Վուլգատայի նաև լատիներենի բնագրի հետ և գտնում այն ոչ լիակատար, «այլ ծաղկաքաղ և համառոտ», ուստի թարգմանում է «... զբանն Յեսուայ որդւոյ Սիրաքայ», «զչորրորդ գիրս Եզրասայ» և այլ հատվածներ: Թարգմանում է նաև լատինական Աստվածաշնչի ցանկը, որպեսզի «... ընթերցողն դիւրաւ գտանէ ի մէջ գրոց

---

[14] Պետք է ենթադրել, որ Ոսկան Երևանցին Եվրոպա էր մեկնել դատարկ գրպանով (Էջմիածնում վիճակն այդպիսին էր): Նա հույս ուներ կաթողիկոսի տված գրության ձիրան վրա Լիվոռնոյում ստանալ որոշ աջակցություն: Սակայն, ինչպես վերը ասացինք, այդ հույսերը չեն արդարացվում, և Ոսկան Երևանցին ստիպված է լինում մեկնել Հռոմ: Այստեղ նա դիմում է այլևայլ միջոցների: Հանգամանքների թելադրանքով աղերսագիր է ուղարկում Հավատի տարածման ժողովին, ապա նաև՝ Հռոմի Պապին: Դիմում է նաև դիվանագիտական այլևայլ քայլերի, թեև ստանում է մասնակի օժանդակություն ու խոստումներ, այսուհանդերձ դրանք չեն կարողանում արմատական լուծում տալ նրա նպատակների իրականացմանը, ուստի երբ տեղեկություններ է ստանում Լիվոռնոյի վաճառականների բարյացակամության մասին, առանց վարանելու լքում է Հռոմը և մեկնում Լիվոռնո:

գիսնորեին իրս»[15]: Բաժանելով գլուխները ենթավերնագրերից, կազմում է նաև այբբենական ցանկ, լուսանցքային ծանուցումներ (համարաթարը) և այլն[16]:

1666 թվականի մարտի 11-ին Ամստերդամում Աստվածաշնչի ձեռագիրը հանձնվում է տպարան՝ շարվածքն իրականացնելու համար: Փորձանմուշների վրա Ոսկան Երևանցու գործադրած համառ ու տքնաջան աշխատանքից հետո, վերջապես, 1668 թվականի հոկտեմբերի 13-ին Ամստերդամում ավարտվում է Աստվածաշունչ մատյանի հայ հոգևորականության միտքը գրեթե մեկ դար զբաղեցնող տպագրությունը[17]:

Աստվածաշունչը, ըստ մեր ունեցած դիտարկումների, ունեցել է մինչ այդ նախադեպը չունեցող տպաքանակ և լայնորեն տարածվել ինչպես Հայաստան աշխարհում, այնպես էլ այլուր՝ կաթողիկե դավանանքին հարող հայության մեջ:

Այս առիթով անհրաժեշտ ենք համարում ուշադրության ներկայացնել մի իրողություն: Ոսկան Երևանցին Աստվածաշնչի «Նոր Կտակարան» կոչվող բաժնի տպագրությունն իրականացրել է երկու

---

[15] Տե՛ս Աստվածաշունչ. Ամստերդամ, 1668, էջ 831-833:

[16] Մենք նպատակ չենք ունեցել անդրադառնալու Ոսկան Երևանցու կողմից Աստվածաշնչի բնագրում կատարած թարգմանական ու խմբագրական աշխատանքներին, առավելապես այն դեպքում, երբ այդ մասին հրապարակում կան հանգամանալից ու մանրագնին ուսումնասիրություններ: Տե՛ս Գարեգին Նպիսկոպոս, Ոսկանի Աստվածաշունչը, ակնարկ բնագրի վրա, «Հասկ», Անթիլիաս, 1966, N 3-5, էջ 135-152: Անասյան Հ. Ս., Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», 1966, N 11-12, էջ 71-97: Սուրեն Քոյանչյան, Հեթում Ռ-ի ձեռագիր Աստվածաշունչը և Ոսկանի հրատարակությունը, նույն տեղում, էջ 98-129:

[17] Մեր պատմաբաններն ու բանասերները և առհասարակ բոլոր անդրադարձողները թյուրիմացաբար Աստվածաշնչի լույսընծայման ժամանակացույցը կապում են 1666 թվականի հետ, այն դեպքում, երբ այդ գրքի լույսընծայումն իրականացվել է դրանից երկու տարի յոթ ամիս հետո, 1668 թվականի հոկտեմբերի 13-ին: Այդ մասին Ոսկան Երևանցին փաստական գրառում է թողել գրքի հիշատակարանում, որից մեջ ենք բերում բառացիորեն. «... Գրովք զսկիզբն արարաք ներ թուջն որպէս գրեալ է ի սկզբան» (նկատի ունի գրքի անվանաթերթում եղած գրառումը) «Եւ յաւարտ սորին ժամանեցաք... (ընդգծումը մերն է - Խ. Ս.)-գրում է Ոսկանը շարունակության մեջ,- ներ թուջն Քրիստոսի հազարորդի վեցհարիւրորդի վատսներորդի ութերորդի. յամսեանն հոկտեմբերի, որոյ էին ատուրք երեք տասաներորդ» (Տե՛ս Հայ գիրքը 1500-1800 թվականներին, Ե., 1988, էջ 50սա: Այս հավաստիացումը փաստարկում է, որ ավարտը, ուստի՝ լույսընծայումը տեղի է ունեցել 1668 թ. հոկտեմբերի 13-ին: Այս պարագայում ունենք ետին թվով մի ասելիք, թերևս ճիշտ կլիներ, որ Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին նվիրված համազգային տոնակատարությունը կատարվեր ոչ թե 1966, այլ 1968 թվականին:

տարբերակով: Հայաստան ուղարկվող գրքերն ունեցել են 808 էջ ծավալ, իսկ կաթողիկե դավանանքին հարող հայության մեջ վաճառքի հանված օրինակներն ունեցել են 834 էջ՝ 26 էջի հավելում[18]: Ընդ որում, այս տարբերակում Ոսկան Երևանցին ավելացրել է «Աղօթք Մանասէ արքայի Յուդայի» և «Գիրք Եզրասայ չորրորդ» գլուխները, որոնք «Յոթանասնից» թարգմանության մեջ, ուստի նաև Հայաստան ուղարկվող տարբերակում, համարվել են պարականոն:

* * *

Աստվածաշնչի տպագրության սկզբնավորման պատմությունով ծայր առավ և լույս ընծայման դրվագի փաստարկումով ավարտվեց մեր խոսքը, սակայն այդ ամենի պարզաբանումով ոչ թե ավարտվում, այլ սկիզբ է առնում այդ բացառիկ մարդու վաստակաշատ գործունեության աշխատանքային տառապանքը, որի մասին պետք է որ ամենից շատ խոսվեր այս պարագայում:

Դժվարին մաքառումներով լի է եղել Ոսկան վարդապետ Երևանցու անձնական ու մշակութային կյանքը: Նոր Ջուղա, Երևան, Էջմիածին, Լեհաստան, Պոլիս, Ծամախի, Հոլանդիա, Ֆրանսիա,- ահա՛ այն երկրների ու քաղաքների ո՛չ լրիվ ցանկը, որտեղ սովորել, գործել ու մաքառել է հայ տպագրության բազմաչարչար երախտավորը:

Ոսկան Երևանցին շատ է տարբերվում իր ավագ ու կրտսեր ժամանակակիցներից... Որքան ծանր, նույնքան էլ արգասավոր է եղել նրա գործունեությունն այդ երկրներում: Նա գիտակցված հավատով է նվիրվել աստանդական կյանքին ու նվիրումով էլ կնքել իր հայրենաբաղձ մահկանացուն:

Հայրենիքի համար հայրենակարոտ է մնացել Ոսկան Երևանցին... Բայց ի վերջո նվաճել է այն փառավոր տեղը, որ վերապահված էր նրան գրավելու մեր հոգևոր կյանքի 1700-ամյա պատմության նշանավոր գործիչների փաղանգում:

---

[18] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Քնարիկ Կորկոտյան, Նինել Ոսկանյան, Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը և դրա տարբերակը, «Էջմիածին», 1966, հ. 11-12, էջ 168-175:

Երբեք դար է անցել նրա գործունեության ժամանակներից, սակայն մոռացության երկար ու ձիգ տարիները ոչ միայն չեն մարել, այլև ավելի պայծառ ու համբավավոր են դարձրել նրա հոգևոր-մշակութային անունը:

Այսօր մեր հոգևոր կյանքի 1700-ամյա պատմության հոլովույթում որքան բանական է դառնում մեր գնահատման պատմական կողմը, այնքան ավելի նշանակալից է դառնում և մեծ կշիռ ձեռք բերում Ոսկան վարդապետ Երևանցու հոգևոր-մշակութային կյանքի գործունեությանը նվիրված գովասանքի խոսքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Հայ երաժշտության պատմության մեջ Մակար Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատության վերաբերյալ Կոմիտաս վարդապետի քննադատական հոդվածի դրդապատճառները ըստ էության չեն բացահայտվել:

Հայտնի է, որ այդ հոդվածը առիթ է դարձել երկու արվեստագետների անձնական հարաբերությունների սրման:

Այս փաստը երաժշտագետների կողմից արժևորվել է միակողմանիորեն՝ առանձնապես կարևորելով հոդվածի խիստ քննադատական բնույթը:

Նման մոտեցումը, անշուշտ, արտահայտությունն էր իշխող գաղափարախոսության, ըստ որի՝ Մակար Եկմալյանը պիտակավորված էր որպես «Հայ Եկեղեցու գաղափարախոս»[1], և արգելված էին նրա ստեղծագործությունները[2]:

Ինչպես հայտնի է, Կոմիտաս վարդապետը 1898 թվականին Բեռլինից վերոհիշյալ քննադատականը ուղարկում է Ս. Էջմիածին՝ «Արարատ» ամսագրում տպագրելու համար:

Հոդվածը հրատարակվել է նույն թվականի մարտ-ապրիլ ամիսների համարում, իսկ դրան հաջորդել է Մակար Եկմալյանի պատասխան նամակը: Վերջինս խիստ և անհանդուժողական կեցվածք էր ընդունել քննադատականի հանդեպ: Նա գրում է. «Հ. Կոմիտասի երկար հոդվածը թող չցավի - զուրկ է որևէ կարևորությունից մեր աչքում: Իսկ եթե երաժշտության անծանոթ մարդիկ նրա բազմաթիվ

---

[1] Այդ գնահատականի արտահայտությունն է Մակար Եկմալյանի հանրաճանաչ աշակերտներից ոմանց հուշերում կոմպոզիտորի բնութագիրը վերապահումով ներկայացնելը:

[2] 1963 թ. հունիսի 2-ին էր, որ Շարա Տալյանի համար ջանքերով Երևանում առաջին անգամ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ (գեղ. ղեկվար՝ Հովհաննես Չեքիջյան) կատարվեցին Մակար Եկմալյանի՝ հայ ժողովրդական և հայրենասիրական երգերի մշակումները: Մենակատարը Շարա Տալյանն էր:

երաժշտական տերմիններից շշկլվելով նրան երաժշտագետ կհամարեն՝ թող այս անգամ բավականանա այդ պատվով»:

Կոմիտաս վարդապետի քննադատականը գրված է քսանութ տարեկանում, երբ նա ուսանում էր Բեռլինի կոնսերվատորիայի երկրորդ կուրսում: Այն շարադրված է ուսանողի բարեխիղճ և մանրազնին վերլուծմամբ ու առավելագույն խստությամբ:

Ուշագրավ է, որ Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատության մեջ Կոմիտասը բացահայտել է երաժշտական և խոսքի շեշտերի ոչ միասնականության փաստեր[3]:

Ձեռք գարնելով Եկմալյանի աշխատության գիտական վերլուծությանը՝ երիտասարդ Կոմիտաս վարդապետը հավանաբար նպատակ է հետապնդել ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանցին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Մկրտիչ Խրիմյանին ցուցադրելու Բեռլինում ձեռք բերած գիտելիքների պաշարը՝ որպես ապացույց վերլուծելով բարերարներին քաջ հայտնի և նրանց կողմից բարձր գնահատված Մակար Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատությունը[4]՝ դրանով հավաստելով իր բարերարներին, թե իր ուսման համար նրանց վատնած գումարները ծառայել են նախատեսված նպատակին:

Հոդվածի շարժառիթ կարող է համարվել նաև այն, որ Կոմիտասը, լինելով հոգևորական, այն կարծիքին է եղել, որ «Պատարագի» մշակումն ու բազմաձայնումը նախ և առաջ հոգևորական-երաժշտագետի իրավունքն է: Չի բացառվում, որ Կոմիտասը նախօրոք մտադրված է եղել բազմաձայնելու «Հայոց Պատարագը»:

Քննադատականի պատճառներից կարելի է համարել և Կոմիտաս վարդապետի երիտասարդական ռոմանտիկ մտածելակերպը:

Եթե Կոմիտասի հասուն տարիքում հրատարակվեր Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատությունը, ապա մեծ երգահանի վերաբերմունքն անկասկած այլ կերպ կարտահայտվեր[5]:

Բայց չմոռանանք նաև, որ քննադատելով Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատությունը, Կոմիտասը, ի վերջո,

---

[3] Մակար Եկմալյանը, ուսանելով Պետերբուրգի կոնսերվատորիայում, արդյո՞ք այդ երևույթի մասին տեղեկություն չուներ:

[4] Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Մկրտիչ Խրիմյանի կոնդակը, որ տպագրված է Մակար Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատության սկզբում, էջ 5-6: Լայպցիգ-Գրեյտկոպֆ և Հերտել - Վիեննա, Մխիթարյան տպարան, 1896:

[5] Հնարավոր է, որ Կոմիտաս վարդապետը նույնիսկ չանդրադառնար Եկմալյանի «Երգեցողությունք Ս. Պատարագի» աշխատությանը:

արժանին է հատուցում արվեստի այդ շքեղ կոթողին. «Հարգելի երաժիշտ Պրն. Մակար Եկմալյանը մեր երաժշտության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ Հայերս այժմ կարող ենք պարծել, թե մենք էլ հետ չենք մնացել վսեմ գեղարվեստի և կատարելագույն երաժշտության զարգացումից»:

Հետևաբար՝ Կոմիտաս վարդապետի քննադատականն արտացոլում էր հայ երաժշտության ճակատագրով մտահոգված երիտասարդ արվեստագետի տագնապը հանուն ազգային երաժշտության ավանդույթների անաղարտ պահպանման և սերունդներին փոխանցելու ձգտման, մի բան, որ թյուրիմացաբար ընկալվել է որպես միտումնավորություն:

Խմբագրության կողմից. Խմբագրությունը վերապահումով է մոտենում հոդվածի մեջ բերված փաստի՝ Հ. Դարբինյանի գնահատմանը:

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ

(14-15-րդ դդ.)

Միջնադարյան հայ մշակույթի, ինչպես և հայ գրչության ամենարեղուն օջախներից մեկը եղել է Սյունիքը:

Սյունյաց 12 գավառներից ամենամեծը Վայոց ձորն էր: 13-14-րդ դարերում Վայոց ձորի ուսումնագիտական նշանավոր կենտրոնը, ինչպես գիտենք, Գլաձորի համալսարանն էր (1282-1338 թթ.), որտեղ ուսուցվող կարևոր ճյուղերից մեկը գրչության, մանրանկարչության արվեստն էր:

Մեր նպատակից դուրս է Գլաձորի համալսարանի մանրանկարիչներին անդրադառնալը: Այստեղ վաղուց ճանաչված անուններ են Մոմիկը, Թորոս Տարոնացին, Ավագը, Մատթեոսը և ուրիշներ:

Վայոց ձորում վանքապատկան դպրոցներ էին հիմնադրվել նաև Հերմոնում, Եղեգիսում, Հոլորքերդ անապատում, Ամաղուի և Վերին Նորավանքերում, Ծատին անապատում և այլուր: Հիշյալ վանքերի գրչատներից կուզենայինք անդրադառնալ միայն Հերմոնում և Եղեգիսում ընդօրինակված ձեռագրերի մանրանկարչությանը և ներկայացնել հատկապես այն նկարիչների գործերը, որոնք մինչև այժմ չեն արժանացել ուշադրության:

Հայտնի է, որ Հերմոնի դպրոցը հանդիսացել է Գլաձորի համալսարանի անմիջական շարունակողներից մեկը: Հերմոնի ուսումնակրթական գործունեության մասին մեզ հասած առաջին գրավոր տեղեկությունը վերաբերում է 14-րդ դարի սկզբներին: Գլաձորի համալսարանի դաբուռնի Տիրատուր Կիլիկեցին 1338 թվականին, Եսայի Նչեցու մահվանից հետո, մի խումբ սաների հետ տեղափոխվեց Հերմոնի վանք, որը գտնվում էր Սյունյաց Բուրթել իշխանի և նրա որդիներ Պեշգենի ու Իվանեի հովանավորության ներքո:

Տիրատուրը եղել էր կիլիկյան մի շարք գրչատներում, ապա՝ Գլաձորում և այնուհետև Հերմոնում, որտեղ նրա անունը հիշվում է

որպես «Մեծ և երիցս երանելի հռետոր, առ որ կամք դեգերեալ ի վարժ կրթութեան»[1]:

Տիրատուրի ընդօրինակությամբ հայտնի է մեկ Ավետարան՝ գրված 1309 թ., Գլաձորում, որի նկարազարդումը վերագրվում է իրեն[2]:

Անշուշտ Տիրատուրը մեծ դեր է կատարել Հերմոնի մանրանկարչական արվեստի ձևավորման գործում:

Հերմոնի դպրատան մասին մեզ հասած մատենագիտական տվյալներով, 14-15-րդ դարերում ստեղծված ձեռագրերից պահպանվել են 32-ը, որոնցից 4-ը 14-րդ դարից են, իսկ 28-ը՝ 15-րդ: Մաշտոցի անվան Մատենադարանում կան 18 ձեռագիր, իսկ մնացածը՝ դրսի հավաքածուներում: Այս ձեռագրերից մեկում հիշատակվում է գրիչ և ծաղկող Գրիգորի անունը: Նա նույնպես եկել էր Գլաձորից, եղել էր Տիրատուր Կիլիկեցու աշակերտներից և ընդօրինակել մի քանի մատյաններ, որոնցից մեկի գրիչ Սիոնը գրում է. «Արդ, եղև սկիզբն և կատարումն սորին ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառս որ կոչի Ջոր Վայոց, ի մենաստան Հերմոնի վանս անուանեալ, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ի թուականութեանն Հայկազեանս տոհմի եաւթն հարիւր իննսուն և եաւթներորդի (1348), ձեռամբ Սիոնի, ի դառն և անբարի ժամանակի...»[3]: Ավետարանի Հովհաննես ավետարանչի նկարի ներքևում նկարիչը գրում է. «Ջծաղկող Սուրբ Աւետարանիս զփցուն Գրիգորս յիշեայ, ով Սուրբ Հայր...»: Իսկ չափածո հիշատակարանում Գրիգորը գրում է.

«Նուաստ Գրիգորս որ գրեցի,
Ջծաղիկս ու գիրքս կազմեցի,
.....
Եւ վատատէս յաչիցս էի,
Բայց հարկ արին ու ամաչեցի»[4]:

Հայ միջնադարյան մանրանկարչությունն ուսումնասիրելիս մասնագետների ուշադրությանն են արժանացել նաև արվեստի այնպիսի

---

[1] Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 303: Տե՛ս նաև՝ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 125:

[2] Ավետիսյան Ա., Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 83:

[3] Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ եկեղեցու, Վիեննա, 1970, ձեռ. 48:

[4] Նույն տեղում, էջ 224բ:

արժեքներ, որոնց ոչ միայն ծաղկողների անուններն են անհայտ նաև, այլև՝ գրչության վայրն ու որոշակի ժամանակը: Այդպիսի ձեռագրերից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի 6305 Ավետարանն է: Անվանի արվեստաբան Լ. Ա. Դուրնովոն, բարձր գնա-

Ձեռ. 6305, թ. 2ա. Ավետարան. Հերմոնի վանք. Նկարիչ՝ Գրիգոր

հատելով ձեռագրի արվեստը և ելնելով նրա ոճական ընդհանրություններից, որ նկատել էր Գրիգոր Տաթևացու նկարազարդած Ավետարանում, հիշյալ ձեռագիրը վերագրեց Տաթևի դպրոցին, իսկ նկարները՝ Գրիգոր գրչին[5]: Արվեստաբան Ա. Միրզոյանը ձեռագրի նկար-

[5] Դուրնովո Լ. Ա., Հայկական մանրանկարչություն, ալբոմ, Երևան, 1967, էջ 202-203, նկ. 62, 63:

ները վերագրեց Անանուն Սյունեցուն[6]: Մինչդեռ գրիչն իր մասին հիշատակում է. «Եւ զգծող սրբոյ Աւետարանիս զԳրիգոր պիտակ քհյ.»[7]:

Ձեռ. 9552, թ. 6բ. Ավետարան, Հերմոնի վանք, գրիչ՝ Հովհաննես

Ո՞վ էր այս Գրիգորը: Հայտնի է դառնում, որ Գրիգորը եղել է Գլաձորի համալսարանի սաներից: 1335 թ. Գլաձորում նա ընդօրինակել է մի ժողովածու, որի օրինակը շնորհել էր Եսայի Նչեցին: Այնուհետև գալով Հերմոնի վանք և աշակերտելով Տիրատուրին,

[6] Միրզոյան Ա., Գրիգոր Տաթևացի և Անանուն Սյունեցի, ալբոմ, Երևան, 1987:

[7] Ձեռ. 6305, թ. 126բ:

1338 թ. ընդօրինակել է Դիոնիսիոս Արիսպագացու մատյանը, որտեղ հիշատակում է. «...գծագրեցաւ ի նահանգիս Վայոց ձոր, ի վանս Հերմոնի...»[8]:

«Դծող», «գծագրող» բառերը նշանակում են նկարող[9], և ծաղկողները իրենց թողած մակագրություններում երբեմն իրենց մասին հիշատակում են այդ կոչումներով: Ուրեմն դժվար չէ հետևցնել, որ 6305 ձեռագրի ծաղկող Գրիգորը Տիրատուր բարուճապետի սանն էր, շնորհալի գրիչ և նկարիչ ու հավանաբար վերը հիշված 1348 թ. Ավետարանի միևնույն ծաղկողը, որն արդեն գանգատվում էր տեսողությունից: Սակայն այդպես էլ անհայտ էր մնում Ավետարանի ընդօրինակման ժամանակը:

Մատենադարանում մեզ հայտնի դարձավ մի թղթյա Ավետարան, որն ընդօրինակվել էր Հերմոնի վանքում, 1423 թ., գրիչն է՝ Հովհաննեսը[10]: Դա բարուճապետ Հովհաննես Կոլոտիկի ժամանակ էր: Առաջին իսկ հայացքից դժվար չէր նկատել, որ այս Ավետարանի տերունական նկարները սերտորեն առնչվում էին 6305 ձեռագրի նկարների հետ: Դրանց հորինվածքային և ոճական աղերսները համոզում են, որ ստեղծվել են միևնույն գրչատանը՝ Հերմոնի վանքում:

Հովհաննես գրիչը 1415 թ. գրչագրած ժողովածուում գրում է. «Գրեցաւ տխեղծ մատամբ Յովհաննէս պիտակ ետի, ի թուականիս ՊԿԴ (1415), ի վանքս Հերմոնի, առ դրան Սուրբ Լուսաւորիչիս և Սուրբ դամբարանաց սուրբ վարդապետաց Տիրատրոյ, Գրիգորի և այլոց»[11]: Հերմոնում պահպանված Գրիգորի տապանաքարի վրա մակագրված է. «Այս է հանգիստ Գրիգորի քահանայի, որ փոխեցաւ առ Քրիստոս, տարաժամ հասակի թվ. ՉՂԷ (1348)»[12]: Քանի որ Գրիգորի նկարազարդած 6305 Ավետարանի՝ Հին Կտակարանին վերաբերող նկարներն անավարտ են մնացել, նշանակում է, ձեռագիրը հավանաբար գրվել է այդ ժամանակաշրջանում՝ մահվանից քիչ առաջ: Հետագա տարիներին 6305 Ավետարանը պահվել է Հերմոնի վարժատան գրքերի արկղների մեջ և գաղափար օրինակ դարձել 9552 ձեռագրի համար: Գրիչ Հովհաննես Մեծոփեցին 1394

---

[8] Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1950, էջ 303:

[9] Աղայան Է., Արդի հայերեն բացատրական բառարան. Երևան, 1976:

[10] ՄՄ., ձեռ. 9552:

[11] ՄՄ., ձեռ. 1128, էջ 192բ.:

[12] Ղարիբյան Ի., Գլաձոր. Երևան, 1983, էջ 54, 59:

թվականին Հերմոնում ընդօրինակած ձեռագրում հիշատակում է, որ այդ ժամանակ Հերմոնի դպրոցը տնօրինում էր Ծերուն բաբունապետը, և որ ձեռագրի ընդօրինակման համար գաղափար օրինակը վերցրել է վանքի հին վարժարանի գրքերի արկղների միջից. «...Գտեալ եղև ի զարկեղս գրոց ի հին վարժարանի ի Հերմոնի վանս կոչեցեալ առ ոտս Ծերուն բաբունոյ...»[13]: Սակայն, ծանոթանալով 6305 և 9552 ձեռագրերի ընդօրինակման արվեստին, որտեղ ակնհայտ են հորինվածքների նմանությունները, այնուամենայնիվ դրանք լուսանկարչական պատճենահանումներ չեն և նկատվում է նկարիչներից յուրաքանչյուրի ստեղծագործական հնարանքների միջամտությունը: Համեմատության համար ծանոթանանք այս երկու ձեռագրերում եղած մի քանի տերունական պատկերագրությունների հետ:

Հերմոնի այս երկու ձեռագրերում էլ «Ավետումը» ներկայացված է այն տարբերակով, որտեղ Գաբրիել հրեշտակը Մարիամին հանդիպում է աղբյուրի մոտ: Սյունիքի մանրանկարչությանը բնորոշ է հենց այս տարբերակը: «Քրիստոսի ծնունդը» պատկերագրությունը նույնպես երկու ձեռագրերում էլ համարյա միևնույն հորինվածքն ունի, որտեղ Քրիստոսի լոգանքի պատկերումը, որը հայտնի է օտար աղբյուրներից (սիրիական, բյուզանդական), Հերմոնի նկարիչ Գրիգորի համար հավանաբար գաղափար օրինակ է հանդիսացել «Թարգմանչաց» Ավետարանը, որը սեփականությունն էր Հերմոնի վանքի հովանավոր Սյունյաց Գրիգոր իշխանի[14]: 6305 ձեռագրում Աստվածամոր ձեռքում պատկերված պտուղն ունի տարբեր մեկնաբանում. ա. որպես նուռ, որը խորհրդանշում է Եսայի մարգարեի գուշակումը՝ կույս Մարիամից որդի ծնվելու հանգամանքը: բ. Ենթադրվում է, որ Մարիամի ձեռքին խնձոր է՝ այս անգամ կապված ժողովրդական ավանդության հետ, որը դարձյալ խորհրդանշում է Մարիամի կուսությունը:

«Մուտք Երուսաղեմ» հորինվածքը նույնպես հիմնականում կրկնվում է, իսկ որոշ մանրամասներ, հատկապես Երուսաղեմի պատկերը, ներկայացված է փոքր-ինչ խորքի ճարտարապետական կառույցի տարբերակով:

---

[13] Խաչիկյան Լ., ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 608:

[14] ՄՄ., ձեռ. 2743:

«Ղազարոսի հարություն» ավանդական պատկերագրությունում սովորաբար Քրիստոսի ետևում կանգնած են նրա աշակերտները, իսկ Ղազարոսի քույրերը՝ Քրիստոսի ոտքերի մոտ: 6305-ում Ղազարոսի քույրերը կանգնած են դիմացը՝ ժողովրդի հետ: 9552 ձեռագրում, հավանաբար տեղի սղության պատճառով, Քրիստոսի աշակերտները կանգնած են դիմացը, Ղազարոսի քույրերի հետ, իսկ ժողովուրդը բացակայում է:

Քրիստոսի հարությունը.– Սյունիքի մանրանկարչությանը հարազատ է նաև Քրիստոսի հարությունն ավետող, փողհարող հրեշտակների առկայությունը, որի օրինակը հանդիպում է Մոմիկի 1302 թ. Նորավանքում ընդօրինակած Ավետարանում: Նման ընդօրինակություն պատկերված է նաև Հնրմոնի այս երկու Ավետարաններում որոշ տարբերակով: 9552 ձեռագրի Հարության պատկերում բացակայում են գերեզմանը հսկող գինվորները և գերեզման այցելող յուղարեր կանայք:

Սակայն հորինվածքի վերին մասում պատկերված է Քրիստոսի և Մարիամ Մագդաղենացու հանդիպման պահը: Հովհաննես ավետարանչի մոտ ասվում է, որ Մարիամը տեսավ հարություն առած Քրիստոսին, որն ասաց. «Մի դիպչիր ինձ, որովհետև չեմ վերելեալ առ հայրն իմ» (Հովհ. Ի 1-17): Նկարիչը Քրիստոսին պատկերել է պարտեզում, բոլորովին պատանի, սպիտակ զգեստով, որը խորհրդանշում է նրա համբարձումը, իսկ նրանց միջև ընկած տարածության վրա պատկերված նոնաձառը խորհրդանշում է առաքյալներին և համապատասխան է Մարիամին հղված նրա խոսքին. «Բայց դու գնա իմ եղբայրների մոտ և նրանց ասա. ես վերեմ ելնում իմ Հոր մոտ և ձեր Աստուծո մոտ»:

Ուշագրավ են 9552 ձեռագրի անվանաթերթերի ձևավորումները, որոնք տարբերվում են 6305 Ավետարանի հարուստ բուսական զարդամոտիվներից: Այստեղ հիմնականում զարդը միահյուսված է խորհրդանշական պատկերով: Օրինակ. Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի կիսախորանի կենտրոնում Աստվածամայրն է մանկան հետ: Մարկոս ավետարանչի «Ս» առյուծագիր սկզբնատառից բացի, անվանաթերթում պատկերված են Քրիստոսի զորեղությունը խորհրդանշող առյուծները: Ղուկասի մոտ՝ խաչի աջ և ձախ կողմերում եզներ են, որոնք խորհրդանշում են Քրիստոսի պատարագը: Հովհաննեսի մոտ՝ Քրիստոսի պատկերը պահել են զույգ արծիվներ՝

որպես Քրիստոսի անմահության խորհուրդ, որն, ըստ Ավգուստինոսի մեկնության, «արծվի նման սավառնում է մարդկային անզորությունը հավաստող ամպերի վրա»:

Ավետարաններում երբեմն լինում են նկարներ, որոնց բովանդակությունը վերցված է Հին Կտակարանից՝ նպատակ ունենալով պահպանել Հին և Նոր Կտակարանների կապը նաև պատկերների միջոցով: Այդ կապի ստեղծման համար նկարիչները նախընտրել են պատկերագրական դրվագներ «Ծննդոց Գրքի» արարչագործությունից՝ Ադամի և Եվայի մեղսագործությունն ու դրախտից արտաքսումը, իսկ Վասպուրականի Ավետարաններում՝ դրա հետ մեկտեղ լայն տարածում է գտել Աբրահամի զոհաբերման պատկերը՝ կապված Քրիստոսի խաչելության հետ, մարդկությանը մեղքերից փրկելու համար:

Գրիգոր Տաղկողի 6305 Ավետարանի՝ Հին Կտակարանին վերաբերող նկարներն անավարտ են և չեն ընդօրինակվել 9552 ձեռագրում: Նկարիչն այդտեղ չորս ամբողջական էջեր նվիրել է Ադամին ու Եվային: ա. Աստված Ադամի կողից ստեղծեց Եվային – Սա արարչագործությանը վերաբերող ընդունված պատկերագրություն է: բ. Ադամն ու Եվան դրախտում – նկարիչը Ադամին ու Եվային պատկերել է պալատական համազգեստով ու թագով, իսկ նրանց մեջտեղում կենաց ծառն է: Բացառիկ մի նկար, որն աստվածաշնչական կանոնիկ պատկերաշարում մեզ հայտնի չէ: Ինչպես երևում է, նկարիչն ընտրել է Աստվածաշնչի այն ավանդումը, երբ Աստված հաստատեց նրանց ամուսնությունը, և Ադամն Աստծու կողմից հրաման ստացավ իշխելու երկրի վրա ստեղծված բոլոր արարածներին, քանի որ նա ստեղծվել էր որպես բնական իմացական և հոգևոր դիրքերով օժտված, և Տերը նրան փորձելու համար դրել էր Եդեմա դրախտում իբրև թագավոր[15]: Առանձին էջով ներկայացված է մեղսագործության պատկերը, այս անգամ միևնույն ծառի մոտ, Ադամն ու Եվան մերկացած: Ուշագրավ է նաև դրախտից արտաքսման ինքնատիպ պատկերը:

Հերմոնի այս երկու ձեռագրերում էլ կիրառվել են գրքի գեղարվեստական հարդարման միևնույն եղանակները. նկարները տեղավոր-

---

15 Ա. Միրզոյանի նշված ալբոմում, այս նկարը ներկայացված է իբրև Բյուզանդական Կոստանդին կայսրն իր մայր Հեղինեի հետ:

ված են բնագրի տարբեր էջերում: Բացի այդ, երկու ձեռագրերում էլ խախտված են նկարների հերթական կարգը: 9552 Ավետարանի հետագա հիշատակարանից (1652 թ.) տեղեկանում ենք, որ այն եղել է գերության մեջ. «...մանաւանդ և ես՝ Յովհաննէսս Գ-ի դկ. (3000) դնկա) տվի, զԱւետարանս թափեցի գերութենէ»[16]: Հավանարար դա է եղել պատճառը, որ գերությունից ազատված, քայքայված ձեռագիրը հետագայում վերակազմվելիս խախտվել է նկարների դասավորությունը: Հնարավոր է, որ 6305 ձեռագրի նկարները նույնպես տեղաշարժվել են միևնույն պատճառով:

Սակայն բանն այն է, որ, ինչպես տեսանք, մանրանկարների համեմատությունը որքան էլ մոտեցնում է նրանց պատկերագրական, ոճական, կերպարների կառուցողական նմանությունը, այնուամենայնիվ դրանց հորինվածքները երբեր նույնությամբ չեն կրկնվում, այլ՝ կարծես մեկը մյուսին լրացնող միջոցներ են, նկարչի ստեղծագործական ներշնչանքի արտահայտման հնարանքների միջամտություններ: Միևնույն հորինվածքի որոշ մանրամասնի տարբերակումը, կարծում ենք, օրինաչափ երևույթ է յուրաքանչյուր ստեղծագործ նկարչի համար: Նմանությունը պետք է փնտրել ոճական առանձնահատկության մեջ, և այս է, որ ակնհայտ է այս երկու ձեռագրերում:

Ինչ վերաբերում է Լ. Ա. Դուրնովոյի կողմից նկատված 6305 ձեռագրի նկարների ոճական ընդհանրությանը Գրիգոր Տաթևացու նկարազարդած 7482 Ավետարանի նկարների հետ, թվում է, որ այդ երկու ձեռագրերում նկատվում են հորինվածքային, ոճական ու գունային լուծման ակնհայտ տարբերություններ: Բայց քանի որ Հերմոնում նկարազարդված 9552 Ավետարանը հայտնի չի եղել և ընդհանրապես գրչության այդ կենտրոնից գեղարվեստական հարուստ ձևավորում ունեցող մատյան ուշադրության չի արժանացել, այդ իսկ պատճառով Լ. Ա. Դուրնովոն, 6305 ձեռագրի նկարազարդման մոտավոր աղերսները տեսնելով Գրիգոր Տաթևացու մոտ, ձեռագիրը վերագրել է Տաթևի դպրոցին:

14-րդ դարի երկրորդ կեսին Հերմոնի վանքի աչքի ընկնող ծաղկողներից էր Եսայի Նաղաշը: Նա իր կրթությունն ստացել էր

---

[16] Հակոբյան Վ., Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ. Երևան, 1984, հ. Գ. էջ 508:

տեղում՝ աշակերտելով Սարգիս բաբունապետին: Նրա անունն առաջին անգամ հիշատակել է Գարեգին Հովսեփյանցը[17]: 1456 թ. նկարչին տեսնում ենք Վերին Նորավանքում, որտեղ նկարազարդել է Մատթեոս գրչի ընդօրինակած «Տոնականը»: Գրիչը Եսայուն անվանում է «Բանիբուն փիլիսոփա և անհաս նկարող, որ երփն-երփն գունով ծաղկափթիթ զարդարեաց ըզհրաշափառ մեծաշուք Սուրբ Տօնականս»[18]: Եսային 1473 թվականին նորից Հերմոնում էր: Նրա նկարազարդումներում զգալի նմանություն է նկատվում Գլաձորի մանրանկարչության հետ: Առանձին հմայք ունեն կիսախորաններն իրենց վարդյակներով ու բուսական զարդերով: Ավետարանիչներին պատկերելիս նկարիչը ցուցաբերել է ինքնատիպ մոտեցում: Առանձնապես աչքի են ընկնում նկարների գունային հագեցվածությունն ու նրանց տոնային լուծումը:

Հերմոնում ընդօրինակված գրչագրերի մեծ մասը, որոնք ունեն սակավ նկարազարդում (ժողովածուներ, մեկնություններ), դրանք պետք է որ լինեն գրիչների աշխատանքները:

Հերմոնի վանքի գրչատանն ստեղծված ձեռագրերի մինչև օրս անհայտ նկարիչների և նրանց գործերի հայտնաբերումն ու ուսումնասիրումը մեզ բերում է այն համոզման, որ այդ դպրոցը հանդիսացել է հայ մանրանկարչության արժեքավոր օջախներից մեկը: Այստեղ շարունակվելով գլաձորյան արվեստի որոշ ավանդները, միաժամանակ ստեղծվել են ինքնատիպ գործեր: Ուստի Հերմոնի մանրանկարիչները մեծ ներդրում ունեն Սյունիքի մանրանկարչական արվեստի զարգացման գործում:

Մի երկու խոսք Եղեգիսի շնորհալի նկարիչների մասին:

Եղեգիսում նկարազարդված և մեզ հասած ամենավաղ ձեռագիրը Թանատեցի գրիչ և ծաղկող Հովհաննեսի 1297 թ. Ավետարանն է[19]: Այստեղ մանրանկարչությունը ծաղկում է ապրել հատկապես 14-րդ դարի առաջին կեսին:

Հայտնի է Եղեգիսի անվանի նկարիչ Սարգսի անունը, որն այստեղ էր եկել Գլաձորից: Մատենադարանում է Սարգսի ընդօրինա-

---

17 Հովսեփյանց Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք, Անթիլիաս, 1970, էջ 277-ի ծանոթագրություն:

18 ՄՄ., ձեռ. 993, թ. 768բ:

19 Գևորգյան Ա., Հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն 9-19-րդ դդ., Կաիրե, 1998, նկարիչ 300, Ձեռ. 7482:

կած 1306 թվականի Ավետարանը, որտեղ նկարիչը ցուցարերել է հաստուն վարպետություն (Ձեռ. 10525): Մանրանկարների ուսումնասիրությունը կատարել է Սիրարփի Տեր-Ներսեսյանը, նոր ձեռագիրը Ամերիկայում էր[20]: Մատենադարան է բերվել 1972 թ., Մատենադարանի փոխտնօրեն երջանկահիշատակ Բ. Զուգասզյանի ջանքերով[21]: Դժբախտաբար ձեռագիրը մեզ է հասել խիստ անկանոն վիճակում. վեց տերունական նկարներից ամբողջական են մնացել միայն երեքը՝ «Հարություն Քրիստոսի», «Հարություն Ղազարոսի» և «Դժոխքի ավերումը»: Մնացած նկարներից պահպանված մասունքները փակցված են իրար վրա: Ամբողջական են նաև երեք խորանները: Այս մատյանը Մատենադարանում հարստացել է ժամանակին նրանից անջատված նոր մասունքներով, որոնք լրացուցիչ արժեքավոր տվյալներ են հաղորդում ծաղկողի արվեստի մասին: Ձեռագրում չափազանց կարևոր են նաև նկարների խորհրդարանական զուգարաժանումները: Նկատելով ձեռագրի արվեստի կատարելությունից, պետք է ենթադրել, որ դա նկարչի առաջին և միակ աշխատանքը չէր կարող լինել: Եվ իսկապես, պարզվում է, որ Լոս Անջելեսի համալսարանում պահվող ձեռագրերից մեկը Գլաձորում ընդօրինակված 14-րդ դարի Ավետարան է, որն ուսումնասիրության էր արժանացել Կալիֆոռնիայի հայագիտական ամբիոնի վարիչ Ավետիս Սանջյանի և Նյու Յորքի գեղարվեստի ինստիտուտի ճանաչված արվեստագետ դոկտ. Թովմաս Սեթիուսի կողմից[22]: Հայտնի է դարձել, որ ձեռագիրը նկարազարդել են մի խումբ նկարիչներ, որոնց թվում էր նաև Թորոս Տարոնացին, իսկ գլխավոր նկարիչը, ինչպես նկատել է Ս. Տեր-Ներսեսյանը, եղել է հիշյալ Սարգիսը[23]:

Եղեգիսի շնորհալի նկարիչներից մեկն էլ Բարդողիմեն է, որի անունը հայտնաբերվեց իր ընդօրինակած ձեռագրերի խորանազարդերում: Նա համարվել է «Ոսկեգիր գրչապետ»: Կրթությունն ստացել է Խաչատուր Կեչառեցու մոտ:

---

[20] Der-Nersessian S., Evangelie du Matenadaran N10525 de lan 1306 contribution a l'Etude de la miniature en Siwnik an XIV siecle, Revue, des etudes Armeniennes, Paris, 1982, 327:

[21] Զուգասզյան Բ., Հայերեն ձեռագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Բանբեր Մատենադարանի, հ. 12, Երևան, 1977, էջ 223:

[22] Sanjian A., Mathews T., The Gladzor Gospel Book of the Karlu Fountekuch at UCZA. Հայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային սիմպոզիում, հ. 4, 1981, էջ 24, 33:

[23] Der-Nersessian S., նշված աշխատությունը, էջ 343:

Բարդողիմեի 1314-1315 թթ. ընդօրինակած Ավետարանի հովանավորներն են եղել Սյունյաց իշխաններ Բուրթել և Բուղդա եղբայրները[24]: Ավետարանի գեղարվեստական հարդարանքն սկըսվում է խորաններով: Ոճական առումով սրանք ավելի հարազատ են քանդակագործական արվեստին՝ զուսպ գունաշարը, որտեղ գերիշխում է որդան կարմիրը՝ համադրված կապույտի հետ: Ավելի տպավորիչ են խորանների թե՛ քառանկյունների և թե՛ դրանց լուսանցազարդերի կենդանակերպերը՝ հյուսված բուսական զարդերի հետ, որոնք պատկերավոր խորհրդանշաններ են: Լուսանցքներից մեկում պատկերված է պտղաբերության հովանավոր վիշապապոչ-թռչնագլուխ կենդանի, որի ոճավորված թևի վրա վեր է խոյացել բուսական զարդը:

Համաբարբառի խորաններից հետո տեղադրված է հյուսածո խաչ, որի հիմքում ընկած է հյուսվածքազարդ վարդյակ. խաչի անկյուններում գրված է. ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ: Խաչի երկու կողմերում կիսալուսնաձև բուսական զարդի վրա կանգնած թռչունները խորհրդանշում են եկեղեցու անմահության գաղափարը: Հիմքի վարդյակի երկու կողմերում Բարդողիմեի գրած երկաթագիր չափածո տողերն են, որոնք վերաբերում են Քրիստոսի խաչելությանն ու Հարությանը: Խաչի՝ նման իմաստավորված ձևավորումը տարածում էր գտել Սյունիքի 11-14-րդ դարերի խաչքարային արվեստում (Ցախացքար, Հերհեր, Աղավնաձոր, Նորավանք, Քարագլուխ)՝ որպես Քրիստոսի խաչելության և փրկագործության խորհրդանիշ: Հարուստ են նաև անվանաթերթերի ձևավորումները: Ղուկաս ավետարանչի անվանաթերթի քառանկյան ներքևի ժապավենի վրա Բարդողիմեն թողել է իր մակագրությունը՝ «Բարդաղ»: Ձեռագրում պահպանվել են երեք ավետարանիչների պատկերները, որոնք աղերսվում են Մոմիկի ավելի վաղ՝ 1292 թ. Ավետարանի կերպարների հետ, որտեղ պահպանված են մոնումենտալությունը, գեղանկարչական միևնույն եղանակն ու գունային գամմայի լոկալիզմը՝ ընդհուպ մոտենալով որմնանկարչական արվեստին: Այս ընդհանրությունը թերևս բխում է երկու գրչատների՝ Նորավանքի և Եղեգիսի նկարիչների սերտ համագործակցությունից, որտեղ բացահայտորեն զգացվում է մեծ ուսուցչի՝ Մոմիկի ազդեցությունը: Բարդաղից պահպանվել է մեկ այլ Ավետարան՝ դարձյալ իրեն բնորոշ հարդարանքով, սակայն ցավոք ձեռագիրը մկնակեր է: Խորաններից երկուսի վրա պահպանվել են

---

[24] ՄՄ., ձեռ. 9721:

նկատի անվան հետքերը. «արդաղ հանդերձ ծնողաւք, յիշ///»[25], և ավետարանիչների որոշ մասը: Նկարիչ Բարդաղն իր արվեստով կարող է համարվել Այուցիքի մանրանկարչական արվեստի նրևելի վարպետներից մեկը: Այս դպրոցում են իրենց գործունեությունը ծավալել մի շարք նկարիչներ, որոնց անունները կա՛մ չեն հասել մեզ, կա՛մ էլ, որն ավելի հավանական է, հիշվել են որպես գրիչ, գծագրող և չեն դասվել նկարիչների շարքում:

Մի երկու խոսք էլ Ամաղուի Նորավանքի և Վերին Նորավանքի մանրանկարիչների մասին: Նորավանքի գրչատունը ծաղկում է ապրել դարձյալ 14-րդ դարում, Այուցյաց հոգևոր առաջնորդ Հովհաննես Օրբելու ժամանակ և նրա անմիջական ղեկավարությամբ: Այստեղ ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Նշանավոր մանրանկարիչ, ճարտարապետ ու քանդակագործ Մոմիկն իր գործունեությունը դրսևորեց հիմնականում Նորավանքում: Նրա մասին հրապարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Այստեղ ձեռագիր է ընդօրինակել նաև Մոմիկի գործընկեր Պողոս Ակնեցին, որը Կիլիկիայում արդեն ճանաչված նկարիչ էր և 1307 թվականին Հովհաննես Օրբելու պատվերով Նորավանքում գրչագրեց մի Ավետարան, որն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում[26]:

Գարեգին Հովսեփյանցը Պողոսին դասել է այն արվեստագետների շարքին, որոնք Կիլիկիայից Գլաձոր էին եկել որպես հասուն վարպետներ. «Սրանք իրենց հետ բերած արուեստն ու տեխնիկան պատուաստում էին Գլաձորի դպրոցին»[27]: Պողոսի մանրանկարչական արվեստին անդրադարձել է նաև Արամ Ավետիսյանը[28]: Պողոս Ակնեցու ձեռագրերից Գ. Հովսեփյանցին և Ա. Ավետիսյանին հայտնի են եղել երկուսը՝ ընդօրինակված Գլաձորում: Մինչդեռ հայտնի դարձավ ևս 14 ձեռագիր, որոնցից 7-ը ընդօրինակվել են Կիլիկիայում (1267-1284 թթ.), Ակներում, Սիոնկլայում, Արքակաղնում, Հոռանց անապատում, իսկ 7-ը՝ Այուցիքի տարբեր գրչատներում՝ Գլաձորում, Հերմոնում, Ամաղուի և Արատեսի վանքերում: Մատենադարանի ձեռագրերի շարքում մեզ հայտնի դարձավ Պողոսի 1280 թ. Արքակաղնում գրչագրած Ավետարանը, որի պատվիրատուն է Ակնեցի Դավիթ եպիսկոպոսը[29]:

---

[25] ՄՄ., ձեռ. 4096:

[26] Վենետիկ, Ս.Ղազարի Մատենադարան, ձեռ. 1917:

[27] Հովսեփյանց Գ., նշված աշխատությունը, էջ 270:

[28] Ավետիսյան Ա., նշված աշխատությունը, էջ 80:

[29] ՄՄ., ձեռ. 4446:

Նորավանքում ընդօրինակված շատ ձեռագրեր այժմ պահվում են տարբեր մատենադարաններում՝ Վրաստանում, Նոր Ջուղայում, Բրիտանական թանգարանում, նաև մեր Մատենադարանում:

Սյունիքում ունեցել ենք նաև Նորո վանք կամ Վերին Նորավանք: Քանի որ Ամաղուի Նորավանքը և Վերին Նորավանքը սերտորեն կապված են եղել և միևնույն առաջնորդանիստն են ունեցել, բնականաբար միևնույն ծաղկողները հանդիպում են երկու վանքերում էլ: Գրիչ և ծաղկող Պողոս Ակնեցուն տեսնում ենք նախ Գլաձորում՝ Մոմիկի հետ, ապա՝ Ամաղուի Նորավանքում, որը 1310 թ. ձեռագիր է ընդօրինակել Արատեսում[30]:

Մեծ է նկարիչ Պողոս Ակնեցու արվեստի դերը որպես Կիլիկիայի և Սյունիքի մանրանկարչության կապող օղակ:

Այսպես, շնորհիվ այն հանգամանքի, որ Սյունիքի գրչատները լայն հնարավորություն են ունեցել շփվելու թե՛ դրսի և թե՛ բուն Հայաստանի գրչատների հետ, և, իրենց գրչատներում ունենալով հարուստ հավաքածու, այստեղ ստեղծվել է գրքի գեղարվեստական ձևավորման ավանդույթները պահպանող բազմաբովանդակ ու բազմաոճ տեսականի, որտեղ նկարիչներից յուրաքանչյուրը ցուցաբերել է իր որոշակի մոտեցումը: Հենց սա էլ հարստացրել է Սյունիքի մանրանկարչությունը՝ արժեքավոր ներդրում կատարելով հայ մանրանկարչական արվեստում:

---

[30] ՄՄ., ձեռ. 4096:

ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽՅԱՆ. ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Վարդան Մախոխյանի համար շատ բնութագրական է «Հայտնի և անհայտ հանճարը» ասույթը: 20-րդ դ. առաջին տասնամյակներին նա Եվրապայի ամենահայտնի ծովանկարիչն էր. նրան համեմատել են Թյոռների, Կոնստերլի, Դելակրուայի, Լորենի, Մոնեի հետ: Նա արժանացել է Ֆրանսիայի ու Գերմանիայի կառավարությունների ու մշակութային հաստատությունների ամենաբարձր տիտղոսներին ու պարգևներին: Ֆրանսիացի Լուի Ռլենը գրում է. «Եթե նույնիսկ չսիրենք ծովը, Մախոխյանի նկարները մեզ պիտի սիրել տային: Մախոխյանը պատկերացնում է ծովն այնպիսի զորեղ բանաստեղծությամբ, որ ստիպում է կանգ առնել նրա կտավների առջև»[1]: «Գերմանացի և իտալացի վարպետները Վարդան Մախոխյանի մի քանի ծովային գործերը (նկատի ունի կտավները - Ա. Հ.) քննարկելու ատենին ուղղակի համեմատում են հայազգի քաջահմուտ ծովանկարիչ Այվազովսկու հետ»[2]: Եվրոպացի գեղագետ քննադատները նրան դասել են եվրապական հանճարների շարքում[3]: «Հզոր արվեստագետ մը է, որ իր ցուցադրած նկարներով ինքն իր փառքին պարծանքն կըլլա»,- կարդում ենք Ադոլֆ Սկարսելի մոտ[4], և այդպես շարունակ:

Եվ այս բոլորից հետո այսօր Եվրոպան ասես «բարեհոգի» լռության է մատնել հայ հանճարին: Թյոռների, Մոնեի, Այվազովսկու, Մատիսի, Գոգենի և մյուս մեծերի կտավները աճուրդներում վաճառվում են հարյուր հազարավոր դոլարներով, նրանց մասին շարունակաբար հրատարակում գրքեր ու ալբոմներ... իսկ Մախոխյանին

---

[1] «Վարանդեան». Թիֆլիս, 1933, հունիս 17:

[2] «Գեղարվեստ». 1908, հ. 1:

[3] «Վերանորոգում». 1933, հ. 215:

[4] «Շանթ». 1912, մայիս, հ. 22:

նույնիսկ շատերը չգիտեն: Մեր համոզմամբ Եվրոպայում փայլատակած հանճարը իր ոտքերի տակ չունեցավ ազգային հող: Նրա մահից հետո օտարացած Եվրոպան առիթ չի ունենում հիշելու:

Առ այսօր Վարդան Մախոխյանի մասին գոյություն չունի գեթ մի ամբողջական աշխատություն: 1958 թ. նկարիչ Ռաֆայել Ծիշմանյանը «Բնանկարն ու հայ նկարիչները» գրքում, ի թիվս տասնյակ այլ նկարիչների, ութ էջ էլ հատկացրել է մեծ ծովանկարչին[5]: Արվեստաբան Եղիշե Մարտիկյանը դրանից երեսուն տարի անց «Հայկական կերպարվեստի պատմություն» գրքի IV հատորում անդրադարձավ նաև Մախոխյանին[6]: Անշուշտ, և՛ Ռ. Ծիշմանյանը, և՛ Ե. Մարտիկյանը հնարավորության և անհրաժեշտության սահմաններում օգտվել են Մախոխյանի մասին մամուլում եղած նյութերից: Սակայն նրանց խնդիրը այլ էր:

Մենք ձեռնարկել ենք «Վարդան Մախոխյան» ծավալուն մենագրության պատրաստմանը, որը կհանդիսանա նաև ատենախոսության թեմա: Խնդիրը, բնականաբար, թելադրում է անդրադառնալ Մախոխյանի մասին եղած նյութերի մեծ մասին:

Ասենք նաև, որ Վարդան Մախոխյանի շուրջ մեկ տասնյակ ընտիր կտավներ պահպանվում են Ս. Էջմիածնի Վեհարանում: Փաստորեն առանց Վեհարանի հավաքածուի հնարավոր չէ ամբողջական խոսք ասել մեծ ծովանկարչի մասին:

Վարդան Մախոխյանը ծնվել է 1869 թ. մայիսի 31-ին Տրապիզոն ծովափնյա քաղաքում: Հայերը Տրապիզոնում հաստատվել են վաղ ժամանակներից: Նրանց թիվը ստվարացավ հատկապես 13-րդ դ. կեսերից՝ կապված մոնղոլական մահասփյուռ նվաճումների հետ: Արդեն 14-րդ դ. հայերը այստեղ հիմնադրում են մի քանի եկեղեցիներ՝ Ս. Աստվածածին, Ս. Ստեփանոս, Ս. Օգսենտ, Ս. Հովհաննես, Ամենափրկիչ: Հետագայում Տրապիզոնում հիմնադրվում է հայկական առաջնորդարան:

Վարդան Մախոխյանի ընտանիքը Տրապիզոնում հայտնի էր իր լայն հետաքրքրություններով և կրթության նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքով: Հայրը՝ Արիստակես Մախոխյանը, առևտրա-

---

[5] Ռ. Ծիշմանյան. Բնանկարն ու հայ նկարիչները (սկզբից մինչև խորհրդային շրջան). Երևան, 1958, էջ 283-304:

[6] Ե. Մարտիկյան. Հայ կերպարվեստի պատմություն, Դ, Երևան, 1989 թ.:

կան էր, որն այդ գործը ժառանգել էր իր նախնիներից՝ հայրը, պապը[7]: Արիստակեսը զարգացած մարդ էր ու վայելում էր իր միջավայրի հարգանքը: Ընտանիքում կար երկու աղջիկ և չորս տղա, որոնք բոլորն էլ ստանում են կրթություն:

1875-ին Վարդան Մախոխյանը ընդունվում է տեղի ազգային դպրոց, որը բացվել էր 1840-ին: Տրապիզոնն ապրել էր ազգային-մշակութային եռանդուն կյանքով: Արդեն 50-ական թթ. այստեղ կազմակերպվել էին զանազան ընկերություններ՝ Գայանյան, Հալկազյան, Սյունյաց Ս. Ստեփանոսի և Ռուսումնասիրաց մասնաճյուղերը: Հիմնադրվել էր հայկական տպարան, որտեղ լույս էին տեսնում «Խարիսխ», «Դեղջուկ», «Մոծակ», «Պոնտոս» և «Բժիշկ» պարբերականները: Քաղաքի առևտրի և արհեստագործության գրեթե բոլոր ճյուղերը գտնվում էին հայերի ձեռքին: Փաստորեն Տրապիզոնը դարձել էր Արևմտյան Հայաստանի առևտրա-մշակութային խոշոր կենտրոն: Մախոխյանը պատանեկան տարիներից գտնվում էր քաղաքակիրթ այդ միջավայրում՝ դաստիարակվելով թե՛ եվրոպական կրթության նորմերով և թե՛ ազգային ոգով:

Ժամանակակիցները վկայում են[8], որ, Տրապիզոնի ազգային դպրոցում սովորելիս, պատանի Վարդանը դրսևորել է իր ապագա մասնագիտության նախատարրերը: Վարժարանի դասընթացի մեջ մտնում էր նաև նկարչությունը: Նա շարունակաբար նկարել է. «Այդ հասակին մեջ Մախոխյանը խորապես տպավորված էր իր հայրենիքին մե՛ր խաղաղ, մե՛ր ահարկու փոթորկալից ծովեն, փառահեղ արևմուտքներեն ու միստիկ լուսնո ծնունդեն»[9]:

1882 թ. տասներեքամյա Վարդանին և ավագ եղբորը՝ Քրիստափորին, Արիստակեսը ուղարկում է Կարին՝ նորաբաց վարժարանում ուսանելու: Արևմտյան Հայաստանի պատանիներն իրենց կրթությունը շարունակելու համար սովորաբար դիմում էին սուլթանական Թուրքիայում գտնվող երեք նշանավոր հայկական վարժարաններ. Կ. Պոլսի Ազգային կենտրոնական, Սկյուտարի Բերբերյան և Կարինի Սանասարյան:

Կարինի վարժարանը հիմնադրվել էր Վարդանի՝ այնտեղ մեկնելուց մեկ տարի առաջ, 1881-ին. մեծահարուստ Մկրտիչ Սանասար-

---

[7] «Անահիտ», 1947, հ. 3-4:

[8] Ավո Պալերճյան. Նկարիչ Վարդան Մախոխյան. «Գեղարվեստ», 1939, հ. 1:

[9] Հ. Անդրեասյան. Նկարիչ Մախոխյան. «Հորիզոն», 1918 թ., հ. 2-3:

յանի միջոցներով: Որպես կանոն, այստեղ ընդունվելու էին գավառային դպրոցն ավարտած 7-11 տարեկան երեխաները[10]: Սանասարյան վարժարանի հիմնադրի և հովանավոր հոգևոր խորհրդի նպատակն էր դաստիարակել հայ մանուկներին Առաքելական Եկեղեցու ոգու և կանոնների համաձայն, ավանդել նրանց ընդհանուր ուսման և կրթության գիտելիքներ: Վարժարանը գավառական դպրոցների համար պետք է պատրաստեր որակյալ ուսուցիչներ և տեղական արհեստավորական կադրեր: Վարժարանում ուսուցման ընթացքը տևել է 5-6 տարի:

Մկրտիչ Սանասարյանը բաց անելով նոր վարժարանը՝ նկատի ուներ Պոլսի Ազգային և Սկյուտարի Բերբերյան վարժարանների լավագույն փորձը[11]: Պատահական չէ, որ անձամբ ինքը՝ Մկրտիչ Սանասարյանը, վարժարանի համար ապագա բարձրորակ դասատուներ պատրաստելու համար բարձրագույն կրթության նպատակով Եվրոպա էր ուղարկում շնորհալի և ընդունակ երիտասարդների: Այդպիսիք էին Սեդրակ Մանդինյանը, Փիլիպոս Վարդանյանը, Ալեքսանդր Սիմոնյանը, Պողոս Դելեփյանը և ուրիշներ, որոնք հետագայում դարձան հայ մանկավարժության պատմության խոշորագույն դեմքեր՝ հեղինակելով գիտամանկավարժական բնույթի բազմաթիվ գրքեր: Այդ գիտնական մանկավարժներից հատկապես չորսը՝ Գ. Աբուլյանը, Գ. Դելփյանը, Ե. Մադաթյանը և Ծ. Սողիկյանը, ավարտելով Յենայի և Ցյուրիխի համալսարանները, իրենց մանկավարժական-դաստիարակչական ողջ գործունեությունը կապեցին Սանասարյան վարժարանի հետ: Այստեղ երբեմն այցելում և իրենց շահեկան մասնակցությունն էին բերում նաև Սեդրակ Մանդինյանը և Փիլիպոս Վարդանյանը:

Սանասարյան վարժարանի մասին եղած գրականությունը[12] հնարավորություն է տալիս պարզելու, թե ուսումնական ինչպիսի դրվածք ու մեթոդներ են եղել վարժարանում: Դա, այսօրվա չափանիշներով, համազոր էր թերի բարձրագույն կրթության: Այդ մասին է վկայում

---

10 1892 ուս. տարվանից նրանց ընդունում էին 11-12 տարին լրանալուց հետո:

11 Մկրտիչ Սանասարյանը ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան վարժարանը և բնական էր, որ Ներսիսյան վարժարանի լավագույն ավանդներն էլ կցանկանար տեսնել այստեղ:

12 Քսանամեայ Տեղեկագիր Սանասարեան վարժարանի (1881-1901), Կ. Պոլիս, 1903: Հնգամեայ Տեղեկագիր Սանասարեան վարժարանի (1901-1906), Կ. Պոլիս, 1908: Տեղեկագիր Սանասարեան վարժարանի (1906-1910), Ղարաբիա, 1911 և այլն:

նաև այն փաստը, որ 1899-1900 տարեշրջանում Կարին քաղաքի Մետրիֆի վարչությունը (նահանգային կրթական բարձրագույն մարմինը) Սանասարյան վարժարանին պաշտոնական արտոնագիր է տալիս՝ նրան շնորհելով բարձրագույն նախակրթարանի աստիճան[13]: Վարժարանի գործունեության առաջին տասնամյակում, 1881-1891 թթ., որի ժամանակամիջոցին սովորել է Վարդան Մախոխյանը, այն ունեցել է «դերմանական դպրոցական ուղղվածություն (erziehungsschule) կոչված միջնակարգ վարժարանների համահավասար աստիճան»[14]: Ուսանողներին տրվում էին համակողմանի գիտելիքներ և հատկապես լեզուներ սովորելու հնարավորություն: Դասավանդվում էր կրոն (Սրբազան պատմություն, քրիստոնեական վարդապետություն և պատմություն Հայ Եկեղեցու), պատմություն, աշխարհագրություն, բնական գիտություններ (կենդանաբանություն, բուսաբանություն, հանքաբանություն, երկրաբանություն), հայերեն աշխարհաբար և գրաբար, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թվաբանություն, երկրաչափություն, եռանկյունաչափություն, տոմարագիտություն, գեղագրություն, գծագրություն, նկարչություն, ձայնական երաժշտություն, գործիքային երաժշտություն (դաշնամուր և ջութակ), մարմնամարզություն և շմշկասահք: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում (և հավանաբար հասկանալի նկատառումներով) եվրոպական լեզուներին: Վերջին հաշվով ընդունակ երեխաների մեծ մասն իրենց ուսումը շարունակել էին եվրոպական քաղաքներում: Այդ իսկ պատճառով, եվրոպական լեզուների ուսուցման համար հրավիրվում էին այդ երկրների ներկայացուցիչներ: Օրինակ, 1885-ից մինչև 1894 թվականը վարժարանում ֆրանսերեն լեզու հաջորդաբար դասավանդել են Ֆրանսիայից հրավիրված Լնիուս Լսդրիան, Ժան Տալիզմը, Ռիշար Վիկուրեոն, Ժան Ռընոն: Նույնը կատարվում էր գերմաներենի և անգլերենի կապակցությամբ:

Դրանից հետո միանգամայն պարզ էր, թե ընդհանուր գիտելիքների ինչպիսի մակարդակով և լեզուների ինչպիսի իմացությամբ էին ավարտում վարժարանը հայ երիտասարդները, որոնց համար Եվրո-

---

[13] Ջանանեան Տեղեկագիր..., էջ 6:

[14] Այդ շրջանում Արևմտյան Հայաստանի վարժարաններում ուսումնական գործընթացը նմանվում էր կենտրոնական կրթական համակարգին: Սանասարյանը հետևողականորեն էր վարում այդ գիծը:

պա մեկնելն ու եվրոպական համալսարաններում սովորելն այլևս խնդիր չէր[15]:

Իսկ Վարդան Մախոխյանն ամենաառաջադեմ սովորողներից մեկն էր:

Որքանով որ երևում է վարժարանի ուսումնական ծրագրից, նկարչության դասերը քիչ էին և հավանաբար կամավորական բնույթ են կրել (ֆակուլտատիվ): Նկարչության դասատուների մասին կա մի աղքատիկ տեղեկություն: Վարժարանի բացման օրվանից մինչև 1887 թվականը, ասել է թե՝ Վարդան Մախոխյանի ուսումնառության ողջ շրջանում, այստեղ որպես նկարչության (նաև դաշնամուրի) դասատու աշխատել է Մախոխյանի հայրենակից, տրապիզոնցի երիտասարդ ու տաղանդավոր Միսաք Ֆեթվաճյանը: Ցավոք, վերջինս իր մահկանացուն կնքել է 1887 թվականին[16], որից մեկ տարի անց պատանի Վարդանը պետք է հեռանար վարժարանից:

Վարժարանում առկա էր մի շատ կարևոր պարագա ևս, որը մեծապես նպաստելու էր պատանի Մախոխյանի հոգում արվեստի հավերժական կրակի բույն դնելուն, Մախոխյան երևույթի ձևավորմանը: Դա վարժարանի թանգարանն էր: Թանգարանի պատերից կախված են եղել այնպիսի մեծությունների գործեր, որոնք պատիվ կբերեին աշխարհի ուզածդ թանգարաններին: Թվարկենք մի քանիսը. Ռուբենս՝ «Հոլանդացի ամուսիններ», Հ. Այվազովսկի՝ «Կ. Պոլիս. Սուլթան Ահմեդի հրապարակը», «Ամերիկայի գյուտը», «Ծովանկար», «Կոլոմբոսը փոթորիկով բռնված», մի ծովանկար ռուս նկարիչ Առլովսկուց, նույնի՝ «Տեսարան Ղրիմից», Ստեփանոս Ներսիսյանի «Տեսարան Թիֆլիսի կյանքից», Ռիբերայի «Կլեոպատրան», Վերեշչագինի «Դղյակը», Պուսենի «Աբրահամ և Սառա» և զանազան

---

15 Վարժարանի ուսումնական գործընթացի լրջության մեկ այլ ապացույց Լ. տարեվերջի սովորական քննություններ: Դրանք կանոնավորապես տեղի էին ունենում հրապարակային ձևով: Քննություններին ներկա են եղել Կարինի հոգևոր առաջնորդը, երբեմն վարչության ղեկավարները, թաղային և գինվորական բարձրաստիճան պաշտոնյաները, նույնիսկ հյուպատոսության ներկայացուցիչները:

16 Ինձ կասկածում, որ տրապիզոնցի վաղամեռիկ Միսաք Ֆեթվաճյանը նույն տրապիզոնցի անվանի նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի (1866-1947 թթ.) եթե ոչ եղբայրը, ապա մտերիմ ազգականներից է եղել: Գուցե Արշակ Ֆեթվաճյանին և Վարդան Մախոխյանին Միսաքն է ոգեկոչել անմնացորդ նվիրվելու արվեստին:

այլ գործեր[17]: Վերջին շրջանում թանգարանը համալրվել է Այվազովսկու ևս մի նոր նվիրատվությամբ՝ «Նկար մը, որ կներկայացնե «Արևամուտը ծովի վրա» կտավը[18]:

Վ. Մախոխյանը յոթթակ նվագելիս

Սանասարյան վարժարանում սովորելու ընթացքում Վ. Մախոխյանի մոտ վերջնականապես ամրապնդվում է նկարիչ դառնալու համոզմունքը: Նրա ձիրքը բոլորի համար դառնում է ակնառու: Նրա կատարած գծանկարները արժանանում էին ուսուցիչների և իր դասընկերների հիացմունքին, մանավանդ ճենական մելանով և գրչածայրով կատարած ծովային նուրբ պատկերները:

Վարդան Մախոխյանը, սակայն, միայն նկարչության աստծո սպասավորը չէր: Նրա մասին եղած նյութերում նշվել է բարձրաճաշակ երաժիշտ լինելու հանգամանքը: Հավաստի տեղեկություններ չունենք, թե Տրապիզոնում եղած ժամանակ ընտանեկան միջավայրում կամ ազգային դպրոցում երաժշտության դասեր վերցրել է, թե ոչ: Շատ հավանական է, որ բարեկեցիկ վիճակում գտնվող այդ

[17] Քանանյան Տեղեկագիր Սանասարեան վարժարանի, էջ 71:

[18] Դույն տեղում, էջ 89:

ընտանիքում երեխաները ստանային երաժշտական նախնական կրթություն: Բայց որ Սանասարյան վարժարանում հնարավորին չափ սովորել է ու հմտացել երաժշտության մեջ, դա արդեն իրողություն էր: Վարժարանում առաջին դասարանից սկսած մինչև վերջին դասարանը դասավանդվել է երգեցողություն, ջութակ և դաշնամուր: Մախոխյանը եղել է ջութակի բաժնում և ուսման ողջ ընթացքում, շուրջ հինգ տարի (13-14-ից մինչև 18-19 տարեկան), իր ունակությունը զարգացրել այդ գործիքի վրա:

Մախոխյանի՝ Սանասարյանում սովորելու տարիներին այդտեղ ջութակ է դասավանդել մասնագիտական կրթությունը (ոչ միայն երաժշտական) Յենայի վարժապետանոցում և Ցյուրիխի համալսարանում ստացած պարոն Գ. Աբուլյանը: Դաշնամուր դասավանդել է նույնպես եվրոպական կրթություն ստացած պարոն Ծ. Սողիկյանը[19]:

Սանասարյան միջավայրում երաժշտական դասեր ընդունելը, այն էլ Մախոխյանի նման բացառիկ օժտված պատանու համար, հավասար էր պրոֆեսիոնալ կրթության: Ժամանակակիցների վկայությամբ, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Մախոխյանն այնքան խոր ընկալումով ու ճաշակով է նվագել, որ մանկավարժները տարակուսել են, թե արդյոք Վարդանը հետագայում երաժշտության մեջ պետք է շարունակի՞ իր կրթությունը, թե՞ նկարչության: Ավելի ուշ Վարդան Մախոխյանը գրել է. «Ինձ համարում եմ նկարիչ, միաժամանակ երաժշտությամբ զբաղվող, մինչդեռ ես երաժիշտ եմ, միաժամանակ զբաղվելով նկարչությամբ»[20]:

Զարմանալի մի զուգադիպություն. Հովհաննես Այվազովսկին ևս օժտված է եղել երաժշտական ընդունակություններով: Ե՛վ Այվազովսկին, և՛ Մախոխյանը ունեցել են երաժիշտ-ջութակահարի պրոֆեսիոնալ մակարդակ և նույնիսկ մտերիմ միջավայրում համերգներ տվել: «Պատմում են,- գրում է Հ. Լիլոյանը,- որ պատանի Հ. Այվազովսկին լուսնկա գիշերներին գնում էր ծովափ և ոգեշնչված ջութակ նվագում: Եվ ծովը ունկնդիր էր լինում գիշերվա մեջ ծնվող խորհրդավոր հնչյուններին»[21]:

---

[19] Նույն տեղում, էջ 36:

[20] Ե. Մարտիկյան. Հայկական կերպարվեստի պատմություն, Երևան, 1987, էջ 9:

[21] Հ. Լիլոյան. Ծովի բանաստեղծը. «Սովետական արվեստ», 1979, հ. 8:

Սանասարյան վարժարանի հինգ տարիները որոշակիորեն ձևավորեցին Մախոխյանին որպես բաղաքացի, հայ և արվեստագետ: 1887 թ. տասնութամյա Վարդանը վերադառնում է հայրենի Տրապիզոն և մի քանի տարի մնում այնտեղ: Հավանաբար այդ տարիները Մախոխյանի ընտանիքի, հատկապես խստապահանջ հոր և երիտասարդ Վարդանի ծրագրային հակառակությունների ու տարաձայնությունների շրջանն էր: Հայրը՝ Արիստակեսը, անպայմանորեն ցանկանում էր իր որդուն պահել Տրապիզոնում[22], որը պետք է շարունակեր ընտանիքի ավանդական առևտրա-տնտեսական գրասենյակի գործերը: Ժամանակը վերջնականապես կոտրում է ծնողների հույսերը. կարինից Տրապիզոն էր վերադարձել համոզված արվեստագետ:

Ուրջ երկուսուկես տարի Մախոխյանը անցկացրեց ծննդավայրում՝ ծովափնյա Տրապիզոնում: Նա ամբողջովին նվիրված էր նկարչությանն ու երաժշտությանը: Լինում էր քաղաքի տարբեր հատվածներում, նկարում զանազան, մեծ մասամբ դաշտային տեսարաններ: Նրան, բնականաբար, հոգեմոտ էին նաև քաղաքի ծովափնյա մասերը, որտեղ կատարում էր էտյուդներ, գրչանկարներ, մատիտանկարներ, ջրաներկ: Նոանդուն այդ աշխատանքների միջոցին նա միաժամանակ նախապատրաստվում էր ընդունվել գեղարվեստի ակադեմիա: Այդ նպատակով նա հավաքում էր առավել հաջողված նկարները: Նկարչությանը հավասար Վարդանն ամենայն լրջությամբ շարունակում էր զբաղվել նաև երաժշտությամբ: Յուրաքանչյուր առիթով, լիներ քաղաքային պաշտոնական հանդես, ազգային արարողություն (ակումբում և այլուր), թե ընտանեկան մտերմիկ միջավայր, նա հանդես էր գալիս համերգներով: Հետաքրքրական տպավորություններ ու հուշեր կան այդ մասին:

Վերջապես, 1891 թվականին, քսաներկուամյա Մախոխյանը մեկնում է Գերմանիա՝ ընդունվելու Բեռլինի Գեղարվեստի ակադեմիա[23]: Գերմանիա գնալը տրամաբանական էր, քանի որ արդեն իսկ Սանասարյան վարժարանում նա դաստիարակվում էր գերմանական

---

[22] Մյուս եղբայրներն արդեն գտնվում էին Եվրոպայում:

[23] Որոշ ուսումնասիրողներ Մախոխյանի Ռոյին Ակենյու տարեթիվը փոքր-ինչ կասկածելի են: Այսպես՝ «Հայաստանի կոչնակ» հանդեսի 1929 թ. հունվարյան Տիգրան Նազարյանը նշում է 1889 թվականը, Երիտ Մաղրիկյանը՝ 1892 թվականը (Հայկական կերպարվեստի պատմություն) և այլն: Նման անթաղությունների համար ոչ մի լուրջ փաստ չկա:

ուսուցման սիստեմով[24] և ոչ պակաս նպաստավոր նաև այն առումով, որ Բեռլինում էր գտնվում իր ավագ եղբայրը՝ Պետրոսը: Վերջինս սովորում էր Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Ակադեմիայում ներկայացնելով Կարլինում և Տրապիզոնում կատարած լավագույն աշխատանքները, ինչպես նաև հաճնելով օրի-

Փոթորկոտ ծովը

նական քննությունները, Մախոխյանն ընդունվում է Գեղարվեստի ակադեմիա՝ Բնանկարի բաժին: Այստեղ նա երեք տարի շարունակ աշակերտում է պրոֆեսորներ Եվգենի Բրախտին և նորվեգացի ծովանկարիչ Հանս Ֆրեդերիկ Գուդենին: Վերջինս, որը համբավ ունեցող ծովանկարիչ էր, 1886 թվականին էր հրավիրվել դասավանդելու Բեռլինի Գեղարվեստի ակադեմիայում: Ըստ ամենայնի, Հանս Գու-

[24] Ընդհանրապես 19-րդ դ. 2-րդ կեսին եայ գիտական և մանկավարժական միտքը կողմնորոշված էր դեպի գերմանական ուսումնական եաստատությունները: Նշանավոր շատ եայագետներ գերմանացիներ են. Ցոգեֆ Մարկվարտ (1864-1930), Հայնրիխ Հյուբշմանն (1848-1908), Ցոգեֆ Կարստ (1871-1942) և այլք: Մենք նաև, որ Գերմանիայում են իրենց մասնագիտական կրթությունը ստացել նաև եայ գեղարվեստագետներ Վ. Սուրենյանցը, Հ. Կոջոյանը...

ունն էր իր որոշիչ ազդեցությունն ունեցավ երիտասարդ նկարչի գեղագիտական նախասիրությունների վրա: Մախոխյանն այնպիսի արագությամբ է տիրապետում ծովանկարչության գաղտնիքներին, որ ամենակարող Դուդենն ստիպված է լինում ասել. «Այլևս սովորեցնելու բան չունեն քեզ», և իրրև փոքրիկ հիշատակ Մախոխյանին նվիրում է իր գեղեցիկ էտյուդներից մեկը: Ընդհանրապես Մախոխյանի աշխատասիրությունը, կազմակերպվածությունը, անսովոր ունակությունները գրավել էին ակադեմիայի դասախոսա-պրոֆեսորական կազմի ուշադրությունը:

Դեռևս ակադեմիայի ավարտական կուրսի ուսանող, Մախոխյանին թույլատրվում է գրաղվել բնանկարի ազատ ընտրությամբ՝ մասնավորապես պատկերելով արվարձանային ու ձմեռային տեսարաններ: Այդ շրջանում է, երևի վերջին կուրսում կամ ավարտելուց անմիջապես հետո, որ պրոֆ. Հանս Դուդեի խորհրդով Մախոխյանը ճամփորդում է հյուսիս՝ Բալթիկայի ափերը, Դանիա, Ցվեդիա՝ ծովային տարերքին մոտիկից հաղորդվելու համար: Նա հրապուրվում և պատկերում է Բորնհոլմ կղզու ժայռոտ եզերքները:

Ակադեմիան ավարտելուց մեկ տարի հետո, 1895-ին, Մախոխյանը մասնակցում է Բեռլինի նկարիչների տարեկան ցուցահանդեսին: 36-ամյա երիտասարդ նկարչի համար դա մեծ հաջողություն էր. գերմանական բարձր արվեստի միջավայրում դա պայքար էր ինքնահաստատման համար, որն ավարտվում է երիտասարդ նկարչի հաղթանակով:

Ինքնամոռաց նվիրում. սովորել և աշխատել գիշեր ու ցերեկ՝ առանց հանգստի ու քնի,- ահա ինչն էր բնորոշ երիտասարդ Մախոխյանի համար: Պատմում են, որ մի անգամ ձմռանը Բեռլինի շրջակայքում բացօթյա (պլեներային) աշխատանք կատարելիս այնքան է տարվում, որ չի զգում սառնամանիքը և ցրտահարվում է անզգայնության աստիճան: Միայն անցորդները տեսնելով երիտասարդի ուշագնաց վիճակը, նրան տանում են հիվանդանոց, որտեղ էլ փրկվում է մեծ նկարչի կյանքը:

ԱՒԱԳ ԱՐՔԵՊՍ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Առաջնորդ Իրաքի Հայոց

ԱՊՈՒ ՀԱՄԸՏ ԱԼ-ՂԱԶԱԼԻ ԵՒ «ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՁԱՓԱՆԻՇԸ» ԳԻՐՔԸ

Միստիցիզմի (Mysticism) կամ խորհրդապաշտ դպրոցի հիմքը կը հանդիսանայ այն հաւատը, զոր մարդ արարածը կը տածէ գերբնական ուժերու նկատմամբ: Այսպիսի մտածելակերպ ունեցող միստիկներու (Mystics) համար ծէսերը միջոց են խորհրդաւոր իրականութեան հետ (օր. Աստուծոյ հետ) հաղորդակցում հաստատելու: Միստիկ իմաստասէրներու ճանաչողութեան բարձրագոյն ձեւը «հոգեւոր փորձն» է: Ըստ այս հոգեւոր փորձի, Աստուած կը նկատուի աշխարհի առաջնահիմք ճշմարտութիւնը:

Միստիցիզմը կամ խորհրդապաշտ հայացքը եւ հոգեւոր փորձը իր անդրադարձը ունեցաւ նաեւ Իսլամութեան վրայ: Իսլամութեան մէջ կրօնա-միստիկական ուսմունքը սկիզբ առաւ 9-րդ դարու ընթացքին: Որպէս հոսանք կամ շարժում այն կրեց Սուֆիզմ (Sufism) անուանումը, Արաբերէն սուֆ, բուրդ բառէն յառաջացած:

Արաբական եւ իսլամական փիլիսոփայական մտածողութեան մէջ Միստիցիզմը զԱստուած կ'ընդունի որպէս միակ ճշմարտութիւնը, իսկ աշխարհի իրերն ու այլազան երեւոյթները՝ իբրեւ արտազեղում (Emanation):

Միստիկ իմաստասէրներու կեանքի բարձրագոյն նպատակն է մարդկային հոգիի միստիկական միացումը Աստուծոյ հետ: Միստիցիզմի աշխարհայացքին վրայ կարեւոր ազդեցութիւն գործեց նոր Պղատոնական (Neoplatonism) դպրոցի հիմնադիր Պլոտին (205-270) իմաստասէրը (Plotinus): Ըստ այս փիլիսոփային, Տիեզերքի ընթացքը սկիզբ կ'առնէ անարտայայտելի եւ անըմբռնելի աստուածային առաջնամիակ սկզբնապատճառէն, որուն առաջին արտահեղումը կամ արտազեղումը Տիեզերական միտքն է, յետոյ աշխարհի հոգի, այնուհետեւ եզակի հոգիներ, եզակի մարմիններ, մինչեւ նիւթը: Ըստ

Պլոտինի, մարդկային կեանքի նպատակն է բարձրանալ ու հասնիլ առաջնամիակին:

Նոր Պղատոնական աշխարհայացքը իր ազդեցութիւնը գործեց Իսլամ եւ Արաբ փիլիսոփայական մտածողութեան վրայ: Ալֆարապի (870-950) եւ Իպն Սինա (980-1037) Փիլիսոփաներուն համար առաջնամեակ եւ արտազեղում տեսութիւնները համընթաց նկատուեցան իսլամութեան հաւատալիքներուն: Ըստ իրենց, առաջնամեակը կարելի է փոխարինել Աստուծոյ գաղափարով, իսկ աշխարհի յոչէից ստեղծումը (Creation ex nihilo)՝ արտազեղում ընթացքով:

Դասական կամ ուղղադաւան իսլամութեան համար վերոյիշեալ տեսութիւնները անընդունելի էին, զի կը հակասէին Ղուրանի ուսուցումներուն, Մարգարէի կողմէ հաստատուած կարգաց եւ կանոնաց՝ համաձայն իր յայտարարութեանց եւ գործընթացքին եւ այս երկուքէն բխած օրէնքներուն:

Եթէ մէկ կողմէ դասական իսլամութիւնը ենթարկուեցաւ իսլամ Փիլիսոփաներու յառաջ բերած նոր գաղափարներուն, որոնց հիմքը յունական իմաստասիրութեան հանճարն էր, ինչպէս պիտի կատարուէր արարական փիլիսոփայութեան վաղ շրջանի Մութազիլիթներու=Մէկուսացածներու բանական աստուածաբանութեան ճանապարհով՝ աշխարհայացք մը, որը դուրս եկաւ զուտ կրօնական շրջանակներէն, միւս կողմէ քաղաքական անկայուն վիճակներն ու աղանդաւորական բազմատեսակ միտքեր պղտորեցին իսլամ հաւատացեալներու ուղղադաւան իսլամիզմը:

Ապու Համիտ Ալ- Ղազալին ծնած է ի Պարսկաստան, Խուրասան նահանգի Թուս քաղաքին մէջ 1058 թ. եւ այնտեղ ալ մահացաւ 1111 թ.: Ան դասաւանդեց Պաղտատի Նիզամիյա բարձրագոյն վարժարանին մէջ Նիզամ Ալ-Մուլք Սէլճուք նախարարի օրօք: Իր աշխատասիրութիւնները կարեւոր չափով հակազդեցութիւն էին ընդդէմ մինչեւ իր ժամանակը կատարուած շեղումներուն: Ալ-Ղազալին ինքզինք նկատեց որպէս բարեկարգիչ իսլամութեան: Այս հեռանկարով ան գրեց իր ծաւալուն աշխատասիրութիւնը «Կրօնական գիտութեանց վերակենդանացումը», որը կը բաղկանայ 4 մեծկակ հատորներէ. ամէն մէկ հատոր իր մէջ պարունակելով 10 գրքեր:

Ցոյն եւ իսլամ փիլիսոփաներուն դէմ Ալ-Ղազալիի պայքարը գաղափարական էր: Ապացուցելու միտումով իրենց՝ Պղատոնի, Արիստոտելի, Պլոտինի, Ալ-Ֆարապիի եւ Իպն-Սինայի միտքերու

տրամաբանական կառոյցի տկարութիւնները, Ալ-Ղազալի գրեց «Փիլիսոփաներու անհեթեթութիւնը» հատորը:

Ինչ կը վերաբերի «Գործունէութեան չափանիշը» գրքին, այս հատորը Ալ-Ղազալիի գրական կեանքի մօտաւորապէս վաղ շրջանին կը պատկանի: Ան կը միտէր յստակացնել Իսլամ հաւատացեալի մարդկային արարքներուն չափանիշը: Ի՞նչ պէտք է ըլլայ իսլամ բարեպաշտ մարդուն բարոյական որոնումը, իսլամ անհատը ինչպէ՞ս պարտի ապրիլ իր կեանքը:

Ըստ Ալ-Ղազալիի, կեանքի նպատակն է հաղորդ ըլլալ Աստուծոյ ներկայութեան հետ: Այս իրագործելու համար իսլամ անհատը պէտք է զսպէ եւ սանձէ մարմնական հակումները եւ ապա իր ճանաչողական եւ հոգեւոր ուժերը զարգացնէ: Այս ճանապարհին՝ իսլամ անհատին օրինակ կրնան ծառայել իրենց մարգարէն եւ սուֆիները, որոնք, ըստ Ալ-Ղազալիին, յաջողած են մարդկային արարքներու վերոյիշեալ գործընթացին մէջ: Ահա թէ ինչու ինք, թողլով աշխարհիկ կեանքի իր յաջողութիւնները, որդեգրեց սուֆի կեանքն ու ապրելակերպը:

Մեր թէզի վերնագիրն է՝ «Ապու Համըտ Ալ- Ղազալիի բարոյական որոնումը ինչպէս ուրուագծուած է «Գործունէութեան չափանիշը» գրքին մէջ»: Այս գիրքը հետաքրքրական է քանի մը պատճառներով.-

1. -Պղատոնական եւ Արիստոտելեան փիլիսոփայութեան՝ իտէալիստական, բնագիտական, տրամաբանական եւ բարոյագիտական հարցերու իւրացումը: Ալ-Ղազալին սոյն հարցերը կը քննարկէ յունական փիլիսոփայական մտածելակերպի եզրերով եւ ըմբռնումներով:
2. -Պատկեր մը կը յայտնէ այն օրերու Ապասեան Խալիֆայութեան մէջ տիրող կրօնական եւ փիլիսոփայական մտածելակերպի, աղանդներու գործած աւերը ուղղադաւան իսլամութեան նկատմամբ եւ Ալ-Ղազալիի քննադատութիւնը այդպիսի շարժումներու:
3. -Սուֆիզմի որդեգրած ընթացքը որպէս միստիկական հոսանք:

Մեր թէզը ի՞նչ նպատակներ հետապնդեց

Ա- Անգլերէնի թարգմանել «Գործունէութեան չափանիշը» գիրքը եւ տողատակ լայն բացատրութեամբ պարզաբանել ու յստակացնել

ճշուած անունները, կրօնական դպրոցները, դաւանական հոսանքները, իսլամական Աստուածաբանութեան ըմբռնումները եւ փիլիսոփայական եզրերը:

Բ- Ապացուցել, որ «Գործունէութեան չափանիշը» գիրքը Ալ-Ղազալիի գրչին կը պատկանի, զի կը կարծուի, որ սոյն աշխատութիւնը Ալ-Ղազալիի վերագրուած է, սակայն մեծաւ մասամբ իր հեղինակութիւնը չէ:

Դ- Ցոյց տալ, որ «Գործունէութեան չափանիշը» գիրքը հիմք ծառայեց ապագային գրուելիք «Կրօնական գիտութեանց վերակենդանացումը» ծաւալուն հատորներուն՝ իբրեւ ասոր ուրուագիծը:

Ապու Համիտ Ալ-Ղազալիի որոշ հայացքները 500 տարիով կանխեցին փիլիսոփայութեան նոր շրջանի հիմնադիր նկատուող Ռէնէ Տեկարտի (Rene Descartes, 1596-1650) որդեգրած մեթոտը: Ֆրանսացի այս իմաստասէրը արտայայտած էր այն գաղափարը, թէ ճանաչողութիւնը որպէսզի աւելի հիմնաւորուի, եւ իմացութեան հաւաստի սկզբունքները բացայայտուին, պարտ է մտածող մարդուն նախապէս կասկածիլ ամբողջ առկայ գոյութեան մասին: Ալ-Ղազալին իր «Գործունէութեան չափանիշը» հատորը կ'եզրափակէ հետեւեալ տողերով.

«Կասկածներն են, զորս կը հասցնեն ճշմարտութեան: Այն անձը, որ չի կասկածիր, չի տեսներ, եւ ան, որ չի տեսներ, չի հասկնար, եւ ան, որ չի հասկնար, կը մնայ կուրութեան եւ մոլորութեան մէջ»:

Եթէ ոեւէ անձ փափաքի գաղափար մը կազմել Ալ-Ղազալիի մասին, իրեն պիտի թելադրէինք կարդալ հեղինակի ինքնակենսագրական փոքրիկ երկը, զոր կը կրէ «Այն, որ կ'ազատագրէ մոլորութենէ» վերնագիրը:

Սոյն Ուսումնասիրութիւնը ներկայացուեցաւ՝
Պ.Հ.Ե.Ե. Միութեան 6-րդ Գիտական-
Մշակութային Համագումարին
Պաղտատ, Շաբաթ. 1 Մայիս. 1999

ՎԵՐՋԻՆ ՄՈՀԻԿԱՆԸ

(Ծննդյան 100-ամյա տարելիցի առթիվ)

Պատմում են, որ Բուխարայում նշանավոր փիլիսոփա Ավիցեննան խոր գլուխ է տվել մի ոտաբոբիկ փոքրիկ և գիսախոիվ տղայի: Զարմացած ընկերներին այսպես է ասել.

- Այս տղայի պապը իմ ուսուցիչն է եղել: Կենդանի մնամ՝ կխոնարհվեմ նաև նրա ծոռանը:

Սա՝ 11-րդ դարում:

Այսօր ուղղակի իմաստով ոչ ոք չի խոնարհվում իր ուսուցչի թոռանը, և դրա կարիքն ամենևին էլ չկա: Բայց մինչև հիմա էլ Ուզբեկստանում երբ պատվում են որևէ մարդու, նրա կողքին անպայման նստեցնում են նրա ուսուցչին: Դա հարգանքի իսկական տուրք է ուսուցչին, մի մարդու, որը բարի և խիստ է միաժամանակ, ուշադիր ու պահանջկոտ...

Եթե երբևէ հանդիպեի իմ սիրելի ուսուցչի՝ Աշոտ Պատմագրյանի թոռանը, անպայման խոր գլուխ կտայի՝ ի նշան երախտագիտության:

1920-ական թվականներին արվեստի աշխարհ եկավ հայ երաժիշտների մի փայլուն համաստեղություն, որը սկզբից իսկ լծվեց ստեղծագործական ու կատարողական, գիտական ու մանկավարժական մեծ ու ժողովրդանվեր առաքելության: Սփյուռքում այդ համաստեղության ամենից ավելի բազմաշխատ ներկայացուցիչներից է Ա. Պատմագրյանը, որը հայ երաժշտության պատմության մեջ իր յուրահատուկ տեղն ունի որպես երաժիշտ, երգահան, խմբավար, մանկավարժ, երգահավաք:

Ուղիղ գծով Առաքել Դավրիժեցու տոհմից սերված շառավիղը՝ Ա. Պատմագրյանը, ծնվել է Թավրիզում, 1898 թ. մայիսին: Նախնական

կրթությունն ստացել է ծննդավայրի Արամյան վարժարանում: 1912-ին, որպես ընդունակ աշակերտ, նրան բերում են Էջմիածին: Դեռոգյան հոգևոր ճեմարանում սովորելու ընթացքում դրսևորվել են նրա երաժշտական հակումները: Նա խորապես տոգորվել է տարին նոր առաջ նույն ճեմարանն ավարտած մեծն Կոմիտասի անձով, գործով, նպատակներով և նվիրվել նույն գործին: Ինքն էլ նույնքան հետամուտ է եղել երաժշտությանը թե՛ դասարանում, թե՛ ինքնուրույն պարապմունքների ժամանակ: Դեռևս 16 տարեկան, ճեմարանում կազմակերպել է իր առաջին երգչախումբը:

Ճեմարանն ավարտելուց հետո 20-ամյա պատանին վերադառնում է Թավրիզ և ուսուցչություն անում իր իսկ ուսանած վարժարանում: Միաժամանակ ղեկավարում է Սուրբ Աստվածածին եկեղեցու երգչախումբը, հորինում ու բեմադրում մանկական օպերետներ («Տերն ու ծառան», «Ունն ու կատուն», «Բրուտ ապերը», «Որբ Ալինան» և այլն):

1921 թվականին ուսումնատենչ պատանին մեկնում է Գերմանիա, ընդունվում Բեռլինի Գեթերնշեն մասնավոր կոնսերվատորիան՝ միաժամանակ հետևելով Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանի գեղագիտության և արվեստի պատմության դասընթացներին: Այդ օրերին ըմբռնում է այն միակ ճշմարտությունը, որ հարազատ ժողովրդին ծառայելու մղումը չի կարող անջատ լինել նորաստեղծ հանրապետությանը ծառայելու պատրաստակամությունից: Այդ համոզումը Ա. Պատմագրյանին դարձնում է տեղի Խորհրդային Հայաստանի բարեկամ հայ ուսանողների միության կազմակերպիչներից մեկն ու առաջին նախագահը: Այստեղ էլ հայ մեծատաղանդ բանաստեղծ Ե. Չարենցը գտնում է նրան, որ իրեն ծանոթացնի Բեռլին քաղաքին, և մի քանի օր հյուրընկալվում է նրա մոտ:

Ոչ թե անձնագրով, այլ հոգով իրեն զգալով Խորհրդային Հայաստանի քաղաքացի, 1924-ին ընդունում է Հայաստանի՝ Ֆրանսիայում բացվող ներկայացուցչության հրավերը, մեկնում Փարիզ և պաշտոնավարում որպես այդ ներկայացուցչության քարտուղար ու թարգմանիչ: Իր վերածնված հայրենիքի համար, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով, Փարիզում նա շատ ազգանվեր գործեր է կատարում: Տեղի ծուլարանններից մեկում հայտնաբերում է արձանագործ Ա. Տեր-Մարությանի քանդակած Խաչատուր Աբովյանի հոյակապ կիսանդրին և անմիջապես կազմակերպում դրա «փրկագնումն» ու առքումը Հայաստան:

Ուսումնական շրջանն ավարտելով, Ա. Պատմագրյանը նվիրվում է հայ երգի և երաժշտության ուսումնասիրության ու տարածման աշխատանքին: Ստեղծագործության և աշխատանքի ասպարեզը շատ մեծ էր: Դեռևս Բեռլինում Ա. Պատմագրյանն արդեն կանգել էր դիրիժորական նոտակալի առջև, վարել սիմֆոնիկ նվագախմբի համար իր մշակած հայ ժողովրդական մեղեդիների, այդ թվում՝ «Նինարի հարսանիքը» խորագրով ռապսոդիայի կատարումը:

1926-ին Փարիզում, դարձյալ Կոմիտասի օրինակով, կազմակերպում է «Գուսան» անունով ստվարանդամ երգչախումբը, որը մերթ ընդ մերթ բեմահարթակ է հանում սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ: Նման համերգներից մեկը խորհրդանշական մեծ իմաստ ունեցող իրադարձություն էր. 1928-ի ապրիլի 24-ի երեկոյան, երբ ամենուր տեղի էին ունենում սգահանդեսներ, Էյֆելյան աշտարակի ռադիոկայանից Օդիոնի հոչակավոր սիմֆոնիկ նվագախմբի ու «Գուսան» երգչախմբի մասնակցությամբ աշխարհով մեկ հնչում է Ա. Պատմագրյանի վարած հայկական համերգը՝ բոլորին ազդարարելով, որ հայ ժողովուրդն ապրում է ու ստեղծագործում:

Այնուհետև նա անվերջ շրջում է սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում՝ Լոնդոն, Կահիրե, Հալեպ, Բեյրութ, Թեհրան, Թավրիզ, Սպահան, Աբադան, ինչպես նաև՝ Հյուսիսային Ամերիկայի զանազան քաղաքներում: Երուսաղեմում աշխատում է նշանավոր մանկավարժ, գրող-գրականագետ Հակոբ Օշականի, ճանաչված բանաստեղծ Եղիվարդի (Եղիշե վարդապետ Տերտերյան), հանրաճանաչ անգլերենագետ-թարգմանիչ Պերճ Սանտրունու, Օհան Դուրյան քաղաքի և այլոց հետ: Դա եղավ Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի երանելի վերջին (1948) շրջանը: Երբ լսարան էր մտնում մեր սիրելի երգ-երաժշտության ուսուցիչը՝ Ա. Պատմագրյանը, վանականի լրջության ու լռության սովոր ճեմարանականները մեկ անգամից աշխուժանում, ոգևորվում էին, և սովորական բարևից հետո՝ ձեռքը շարժում էր ու ժպտախառն ասում՝ Հակոբո՛ս, երգի՛ր, տղա՛ս, և սկսվում էր հայկական երգը... ինչպիսի՜ երանություն...:

- Ճեմարանի սաների օթևանատան երկրորդ հարկում գեղեցիկ սենյակ էին հատկացրել նրան: Պատշգամբից նայում էր Թարգմանչաց վարժարանի աշակերտների խաղերին: Տան դուռը բաց էր: Ինչոր գործով ուզում էի տեսնել նրան: Դռնից նայեցի: Պատշգամբից հիացած նայում էր վազվզող երեխաներին: Ինձ չէր նկատել: Հան-

կարծ, երևի թե անկախ իրենից, հուզախառն ասաց. «Դե եկ, Աստված իմ, ուշժառանգ հնոցիր աշխարհից»: Երբ դուռը թակեցի, Ա. Պատմագրյանը նստ նայեց, սթափվեց ու բութ մատով մաքրեց խոշոր ու սև աչքերը:

Նրա աստանդական կյանքը իսկական մի «Լոդիսական» է՝ կարճատև, բայց նշանակալի դրվագներով՝ հին ու նոր աշխարհամասերի բառուղիներում: Այդ շրջապտույտները, անշուշտ, ինքնանպատակ թափառումներ չէին: Ամենուրեք, իր ուժերի ներածին չափով, աշխատել է կազմակերպել երգչախմբեր, հնչեցրել հայ երգը գաղութահայության մեջ:

Ա. Պատմագրյանը վաղ հասակից զբաղվել է կորստյան ենթակա հայ ժողովրդական երգերի հավաքման, մշակման ու ձայնագրման գործով: Այդ ներշնչանքը գալիս է հայ ժողովրդից, որը դարավոր տառապանքների միջով, թափառումների տատասկոտ ճամփաներին երբեք չի զցել իր ոգեղեն զավակը, այն ժամանակ, երբ հաճախ է ստիպված եղել զցել իր հարազատ որդուն...:

Իրավացի է Ա. Պատմագրյանը, որն ասում է, թե՝ «Արհավիրքի օրերին մեր գաղթական ժողովուրդը իրենց նյութեղեն հարստությունները՝ ոսկի, արծաթ, հայրենի տան նկուղներում թաղեցին, բայց իրենց հետ վերցրին, իրենց հետ տարագրեցին ոգեղեն հարստությունները՝ ձեռագիր Նարեկը, եկեղեցու քանդակազարդ դուռը»[1]:

Այդպես է. ժողովրդական երգը մի հոգևոր բարիք է, որ ժառանգաբար անցնում է սերնդից սերունդ, դառնում յուրաքանչյուրի հարազատը: Ձայնագրել, պահպանել բանավոր ստեղծագործության այս ոգեղեն հունձքը, նշանակում է ազգանվեր գործ կատարել:

Շնորհակալ աշխատանք է Ա. Պատմագրյանի խմբագրած «Գանձարանը»: Ալեքսանդրիայում հրատարակած այդ ձայնագրյալ երգարանի վեց պրակներում ամփոփված են 700-ից ավելի հայ ժողովրդական, ազգային-հայրենասիրական երգեր, որ մեր ժողովրդի սեփականությունն են, թեև այդ պրակներում կան որոշ անճշտություններ: Այս ամենով հանդերձ, Ա. Պատմագրյանի երգերի մի մասն աչքի է ընկնում հայ երաժշտության համար բնորոշ պարզ ու անպաճույճ ոգով, որը և նրանց գեղարվեստական արժանիքն է:

---

[1] «Քաբասանամյա Հոբելյան Ա. Պատմագրյանի», Բեյրութ, 1962 թ., խմբագրեց Պ. Սիմոնյան:

Ա. Պատմագրյանի գրչին են պատկանում և ինքնուրույն երգեր ու ժողովրդական երգերի մշակումներ: Նրա մշակած երգերից են՝ «Ցար գյուլա», «Դուդուլ», «Դիլբար», «Սարերի հովին մեռնեմ», «Լուսնակը ցոլաց. գնաց» և այլ երգեր: Ինքնուրույն երգերից են՝ «Իմ գարուն», «Օրոր», «Սիրտս», «Փափագ», «Ցնորք», «Սիրերգ» և այլն:

Անշուշտ պատահական չէ, որ Ա. Պատմագրյանի ստեղծագործության մեջ գերակշիռ տեղը երգային ժանրն է զբաղեցնում: Երգն է միայն, որ, միավորված բանաստեղծական խոսքի հետ, ամենից պարզ ու անմիջականորեն է խոսում մարդու սրտին, նամանավանդ՝ տարագիր հայի սրտին:

Ա. Պատմագրյանն ունի նաև ստեղծագործության անտիպ էջեր, ուր հանդիպում ենք այլ ժանրի երկերի՝ նվագարանային պիեսներ, օպերային երկերի ստեղծման փորձեր: «Հեքիաթ» կոչվող օպերան գրել է 1932 թվականին: «Պիժանը գիվը» օպերան, Ֆիրդուսու «Շահնամեի» մի հատված սյուժեով, Իրանի կառավարությունը պատվիրել էր Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ՝ 1935 թվականին:

Ա. Պատմագրյանի երգերի կատարման ու տարածման մեջ նշանակալից էր վաստակը նրա կնոջ՝ երգչուհի Ռոզ Պատմագրյանի: Ռոզ Պատմագրյանը ծնվել և նախնական կրթությունն ստացել է Թավրիզում, որտեղից, 1914 թվականի պատերազմի ժամանակ, ծնողների հետ գաղթում է Թիֆլիս: Այստեղ նա սովորում է Հովնանյան դպրոցում՝ միաժամանակ մասնակցելով կոնսերվատորիայի ձայնամշակման դասընթացներին: Այնուհետև նա 1921-ից ուսումը շարունակում է Լենինգրադում, պրոֆեսոր Երշովի ձայնամշակման դասարանում:

1925-ին Թիֆլիսում ամուսնանում է Ա. Պատմագրյանի հետ և մեկնում Փարիզ: Այդ օրվանից Սփյուռքում է ընթանում նրա ուսումը, ապա և հայրենանվեր երգչական կատարողական գործունեությունը:

1933-ին իր կյանքի ու գործի հավատարիմ ընկերուհու՝ երգչուհի Ռ. Պատմագրյանի հետ նա երեք տարով նորից է հանգրվանում Թավրիզում. դասավանդում է, կազմակերպում երգչախումբ, Թավրիզում առաջին սիմֆոնիկ նվագախումբը կատարում է իր ստեղծագործությունները, տարածում հայկական, ռուսական, արևմտաեվրոպական երաժշտական դասական արժեքները: Պարսկաստանի պատմության մեջ առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի համար

մշակում է իրանական ժողովրդական մեղեդիներ (ինչպես ինքն է գրում՝ «Ուր, Մահուր», «Հեզջազ գամմաներով»):

Բայց, ավա՜ղ, Ռուզ Պատմագրյանը երկարատև հիվանդությունից հետո վախճանվում է 1959 թ. օգոստոսի 25-ին, Փարիզում:

Աշոտ Պատմագրյանն ունի բազմաթիվ ուսումնասիրություններ հայ երաժշտության մասին: Դրանցից են՝ «Հայ ժողովրդական երգը», «Մեր երաժշտությունն անցյալից», «Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ նկեղեցական երգեցողության մեջ ԺԲ դարում» և այլն: Նա հանախ է այս թեմաներով զեկուցումներ կարդացել սփյուռքահայ հասարակության առջև, որը, անշուշտ, գաղութահայ պայմաններում օգտակար, հայրենանվեր գործ էր: Իր աշխատություններում բարձր, գնահատական է տալիս մեծն Կոմիտասի անմահ գործին: Նա գրել է. «Եվ այսօր իսկ իր մի քանի տետրակները հանդիսանում են մի տեսակ կանոնագիրք, մի տեսակ բերական, որ յուրաքանչյուր հայ երաժիշտ, ուր էլ լինի նա՝ հեռավոր Արևմուտքում թե Հայաստանում, պետք է ձեռքի տակ ունենա որպես ուղեցույց, եթե ուզում է, որ իր երգը հայերեն հնչի և հայ սրտերից ներս թափանցի... Այս է պատճառը, որ մեր երախտագետ ժողովուրդը Կոմիտասի համար կառուցեց իր ոգեղեն հոյակապ կոթողը: Եվ չպետք է փորձել այդ կոթողից նույնիսկ մի աղյուս տեղից շարժել արդիական երաժշտության լույսի տակ, ինչպես որ այդ չենք կարող անել Մեսրոպ Մաշտոցի համար՝ արդիական լեզվագիտության լույսի տակ, որովհետև թե՛ մեկը, թե՛ մյուսը անցել են մեր մշակույթի պատմության մեջ անջնջելի արդիականությամբ»[2]:

Ա. Պատմագրյանը մեծն Կոմիտասի նկատմամբ հատուկ պաշտամունք ուներ: Միշտ կրկնում էր նրա անունը դասընթացների ժամանակ և օրինակներ բերում նրանից...:

Գովելի է Ա. Պատմագրյանի աշխատանքը երեխաների երաժշտական կրթությանը ծառայելու ասպարեզում: Զորս տասնամյակից ավելի մանկավարժական աշխատանքով սեր է արթնացրել մանուկների մեջ դեպի երաժշտությունը, նրանց տվել երաժշտական գրագիտության առաջին դասերը (այդ թվում նաև՝ տողերիս հեղինակին): Նա ստեղծել է սոլֆեջիոյի բավականին հետաքրքիր մեթոդական

---

[2] 1958 թ. Փարիզից «Սովետական Հայաստան» ամսագրին ուղարկած իր հոդվածից:

տարրեր պարունակող ձեռնարկ, որը մեծ ընդունելություն է գտել հասարակության կողմից, օգտագործվել դպրոցներում:

Ա. Պատմագրյանը երկար ժամանակ զբաղվել է նաև խմբագրական գործունեությամբ: Դրանով նա կարողացել է համախմբել հայրենաբաղձ երիտասարդներին հայ երգի շուրջ, որը մեր ժողովրդի հոգեկան կորովի ու բարոյական առաքինությունների կազմակերպման ու դրսևորման ազդակներից մեկն է: Սփյուռքահայ ունկնդիրը, հեռու հայրենի հողից, ուծացումի սարսափելի վտանգի տակ, կառչած իր բուն ազգային երաժշտությանը, նրա մեջ տեսնում է ազգապահպանման մի զորավոր միջոց:

Ու այսպես սփյուռքահայ երգահանն իր ստեղծագործական գործունեության մեջ մի առաքելության մշակ է: Դա ազգապահպանման սրբազան գործն էր, որը թելադրում էր նրան իր երաժշտական լեզվով սերտորեն կապված ու միշտ մատչելի լինել տարագիր հայությանը: Մինչդեռ ստեղծագործական ձիրքով օժտված երգահանն անկարող էր մնալ միատարր շրջանակներում: Նա փորձում է ընդլայնել իր ստեղծագործական շրջանակները՝ ինքնատիպ զարգացման տարրերով: Բայց միշտ չէ, որ հաջողվում է մեծ երգահանին՝ Ա. Պատմագրյանին, գտնել ոսկե միջինը: Երբեմն նա կտրվում է ազգային մթնոլորտից, երբեմն մնում է այդ շրջանակներում, բայց այն մակարդակին, որը հեռու չէ բարձր գեղարվեստականության պահանջներից:

Լինելով բանիբուն ու փորձված մանկավարժ, նա 1937-ին Եգիպտոսում հրատարակում է ուսուցման նոր մեթոդներով շարադրված «Երաժշտարան» ձեռնարկը, որը լայնորեն տարածվում է սփյուռքահայ դպրոցներում որպես երգ-երաժշտության դասագիրք և արժանանում անվանի գրող Արշակ Չոպանյանի և այլոց դրվատանքին: 1963 թվականին նույն գիրքը լույս է տեսնում Թեհրանում պարսկերեն լեզվով:

Մանկավարժական ու երաժշտական-կատարողական գործունեության կողքին Ա. Պատմագրյանը լուրջ վաստակ ունի նաև որպես ստեղծագործող: Այստեղ նա իր տաղանդը հատկապես հեղել է խմբերգային ու մեներգային բնագավառում՝ առինքնող վարպետությամբ մշակելով հայ ժողովրդական երգերի մի հարուստ շարք կամ հորինելով ինքնուրույն երգեր ու ռոմանսներ: Լայն է նրա ստեղծագործության, աշխատանքային քարտեզը:

Ջերմ ընդունելության են արժանացել հատկապես Ափյուորում նրա մանկական օպերետները ու բալետային դրվագները, ինչպես նաև՝ սիմֆոնիկ էտյուդները: Այդ բոլորն ինքնին բիչ չէ հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ Ա. Պատմագրյանին բարձրադիրք տեղ հատկացնելու համար: Սակայն այդ տեղն ավելի ակնառու կդառնա, եթե հիշենք նաև նրա երաժշտագիտական գործունեությունը: Այդ գործունեության պսակներից մեկն է «Դանձարան հայ երգերի» չափազանց արժեքավոր վեցհատորյակը, որտեղ հեղինակը հավաքած, նոտագրած գտնելով է հայկական շուրջ 700 հին ու նոր երգ, ուղեկցել հեղինակների մասին տեղեկություններով ու հրատարակել:

Մյուս պսակը 1954-ին արևելագետների միջազգային համագումարում կարդացած զեկուցումն է՝ «Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգերի մեջ ԺԵ դարում»: Վերջապես հիշենք նաև «Հայ երգը դարերի միջից» մեծահատոր ուսումնասիրությունը, որտեղ վաստակաշատ հեղինակը հանգամանորեն անդրադարձել է հայ ժողովրդական, գուսանական, եկեղեցական, դասական ու մերօրյա երգարվեստի պատմությանն ու դեմքերին:

Որդիական նվիրվածությամբ հայրենավառ Ա. Պատմագրյանը կապված էր հայրենի երկրին: Հայաստանի գեղարվեստասեր հասարակայնությունը նրան շատ լավ գիտեր: Գիտեր մամուլում նրան նվիրված հոդվածներից, գործերի երևանյան կատարումներից, Հայպետհրատի հրատարակած նրա «Ռոմանսներ» ժողովածուից: Երևանում կազմակերպում են մեծարման երեկո, որին ինքն էլ ներկա էր. հրճվում էր, հուզվում, որ հայրենիքը գնահատում է իրեն...:

Վերջին անգամ Երևանից մեկնում է հաստատ համոզված, որ շուտով կդառնա Հայաստանի մայրաքաղաքի մշտական բնակիչը. դեռևս տարիներ կապրի ու կստեղծագործի: Արդեն արտոնված էր մեծ արվեստագետի ու հայրենասերի հայրենադարձությունը. Երևանում արդեն նրա համար բնակարան էին առանձնացնում և սպասում վերադարձին:

Բայց, ավա՜ղ, գալու փոխարեն նա գնաց. գնա՜ց ու այլևս չվերադարձավ: Նրա վերջին հանգրվանը եղավ Լիբանանի Բեյրութ քաղաքը: Նա վաստակաշատ երաժիշտների սերնդի վերջին մոհիկանը եղավ:

*
* *

Մի անգամ երգ-երաժշտության դասի ժամանակ նա իր հուշերից պատմեց.

-Պողոս Մակինցյանը մի տարի եղավ մեր ռուսերենի ուսուցիչը: Նա ամեն բան էր, բայց ոչ ուսուցիչ: Արդեն նա այդ տարիներին իսկ ճանաչված գրականագետ էր, մի բան, որ նրան դարձրել էր շատ հավակնոտ և շուրջիններին՝ ուսուցիչ կամ ուսանող, նայում էր բարձրից: Իր կյանքից հիշում եմ հետևյալ դրվագը:

Մեմարանը իր փոքրիկ հիվանդանոցն ուներ, ուր պառկում էին հիվանդ աշակերտները: Մի քանի օրով ես այնտեղ պառկած ժամանակ, այնտեղ էին նաև Ակսել Բակունցը և մի երրորդ լսարանական ուսանող: Պատահաբար Մակինցյանը այցելության էր եկել այդ երրորդ ուսանողին: Երկար նստեց և խոսակցության բռնվեց նրանց հետ: Ես լուռ հետևում էի նրանց խոսակցությանը: Խոսակցության նյութը Հոկտեմբերյան հեղափոխությունն էր, որ այդ օրերում բռնկվել էր: Ինձ շատ տպավորել է Մակինցյանի և Ա. Բակունցի միջև եղած այս մտքերի փոխանակությունը: Մակինցյանը այն միտքն արտահայտեց, թե՝ եթե միջազգային հեղափոխությունը պահանջի, որ հայ ժողովուրդը բնաջինջ լինի, չպետք է ցավել դրա համար, պետք է բնաջնջվի: Բակունցը իրենից դուրս եկած պատասխանեց՝ եթե հայ ժողովրդի ազատագրությունը պահանջի, որ միջազգային հեղափոխությունը կործանվի, չպետք է ցավել, թող կործանվի:

Մակինցյանը չկարողացավ հանդուրժել մի աշակերտի այս հախուռն արտահայտության, ջղայնացած հեռացավ հիվանդանոցից...:

ԳԵՎՈՐԳ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ

Մուսա լեռան հուշարձան-համալիրի տնօրեն,
Սարդարապատի ազգագրական
թանգարանի գիտխորհրդի անդամ

ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Տ. ԱՐՏԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(1931-1999)

Տ. Արտակ արքեպիսկոպոս՝ Աւազանի անունով Մկրտիչ Մանուկեան, ծնած էր 1931 Յունուար 22-ին, Պէյրութի Նոր Ամանոս (Քարանթինա) թաղին մէջ: Իր նախակրթութիւնը ստացած է թաղին Մեսրոպեան Ազգ. վարժարանին մէջ 1939-1944 թուականներուն: Ապա մուտք գործած է Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքը, ուր ուսանած է 1944-1951 թուականներուն: Ժառանգաւորաց բաժնի ուսմանց աւարտին սարկաւագ կը ձեռնադրուի 20 Յունիս 1948-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Դպրեվանքի վերատեսուչ Տ. Դերենիկ եպս. Փոլատեանին, օծակից ունենալով Տ. Վաչէ արեղայ Յովսէփեանը (այժմ արքեպս.): Ընծայարանի բաժնի աւարտին, իր դասընկեր Վաչէ սարկաւագին հետ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի 24 Յունիս 1951-ին, ձեռամբ Դերենիկ Սրբազանին և կը վերակոչուի Տ. Արտակ աբեղայ: Սարկաւագութեան տարիներուն իսկ կ'աշխատակցի Կաթողիկոսարանիս ՀԱԱԿ ամսագրին և բերթուածներ և գրական էջեր լոյս կ'ընծայէ: Կը ցուցաբերէ գրական շնորհք (ՀԱԱԿ, 1951. Յուլիս- Օգոստոս, էջ 259-260):

Երանաշնորհ Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին արտօնութեամբ կը յաճախէ Պէյրութի Յիսուսեան միաբանութեան համալսարանի գոլեճը, ֆրասերէն լեզուի մասնաւոր դասընթացքին հետևելով 1951 Հոկտեմբերէն սկսեալ: 1952-ին նոյն համալսարանին մէջ գիշերօթիկ ուսանողի հանգամանքով իր բարձրագոյն ուսումը կը շարունակէ՝ հետևելով աստուածաբանական ուսմանց: Ուսանողութեան համալսարանական ծախսերը կը հոգայ իր քահանայական ձեռնադրութեան կնքահայր Պրն. Լևոն Նազարեանը:

1952-53-ին ան կը վարէ ՀԱԱԿ ամսագրի Վարչական Բաժնի տեսչութիւնը և Կաթողիկոսարանի տպարանին փոխտեսչութիւնը: Միա-

ժամանակ 1951-1959 թուականներուն կը դասաւանդէ Դպրեվանքի մէջ Քրիստոնէական, Հայոց պատմութիւն, Ս. Գրոց պատմութիւն, Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, Կրօնից պատմութիւն, Աստուածաբանութիւն: ՀԱՍԿ-ին կ'աշխատակցի գրական և հոգևոր բովանդակութեամբ յօդուածներով:

Ս. Աթոռոս Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խաղ արքեպս. Աջապահեանին արտօնութեամբ 1953-ին կը ստանձնէ Պէյրութի Նոր Մարաշ թաղի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ պատուական քարոզիչի պաշտօն, որ կը վարէ մինչև իր Ֆրանսա մեկնումը: Ամէն Կիրակի անխափան ան կը քարոզէ այս եկեղեցւոյ մէջ, միաժամանակ կը դասաւանդէ Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց վարժարանին մէջ, հոգևոր արթնութեան առիթներ ստեղծելով մեր նոր սերունդին մէջ: Պատրաստած ըլլալով իր վարդապետական աւարտաճառը, ան Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խաղ արքեպս. Աջապահեանին ձեռամբ, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, վարդապետական աստիճան կը ստանայ 11 Հոկտեմբեր 1953-ին: Իր աւարտաճառին նիւթն էր «Հայ Ցարանուանութեանց ծագումը»:

Արևմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ Տ. Սերովբէ ծայր. վրդ. Մանուկեանին խնդրանքով և արտօնութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Սրբազան Հօր, Արտակ վարդապետ 11 Ապրիլ 1953-ին, ծովային ճամբով կը հասնի Լիոն և իբրև Հոգևոր Հովիւ կը ծառայէ Լիոն քաղաքին մօտ գտնուող Փօն տը Շերիէի հայաշատ կեդրոնին մէջ: Այս առիթով, Տեղապահ Սրբազան Հայրը վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք կը շնորհէ Հայր Արտակին: Հոգևոր Հովութեան պաշտօնին առընթեր ան մէկ տարի կ'ուսանի Լիոնի Յիսուսեաններու համալսարանին մէջ՝ հետևելով Աստուածաբանութեան և Հայրաբանութեան դասընթացքներուն:

Ս. Աթոռոյս Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խորէն արքեպս. Բարոյեանէն (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) Կաթողիկոսարան վերադառնալու հրահանգ ստացած ըլլալով, Հայր Արտակ 12 Փետրուար 1959-ին, Փարիզի ճամբով Անթիլիաս կը վերադառնայ, Վազգէն Ա. Կաթողիկոսին և իրեն ընկերակցող Պատուիրակութեան հետ:

Երան. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս Փայասլեանի ընտրութեան շրջանին և յաջորդ տարիներուն կը հանդիսանայ Ս. Աթոռոս գոյատևման և բարգաւաճման համար իրենց ծառայութիւնները անսակարկ շարունակող Միաբաններու խումբին և բանիւ, գրով ու գործով

իր լաւագոյն նպաստը կը բերէ՝ թէ՛ Դպրեվանքի գործունէութեան աշխուժացման, ՀԱՍԿ ամսագրի բովանդակութեան հարստացման, և թէ՛ Կաթողիկոսարանիս առաքելութեան լաւագոյնս կատարման: ՀԱՍԿ ամսագրի խմբագրութեան մաս կը կազմէ 1956-1959 թուականներուն և 1959-1960 տարիներուն կը ստանձնէ ՀԱՍԿ-ի խմբագիրի պաշտօնը:

Տ. Արտակ վարդապետ Զարեհ Վեհափառին արտօնութեամբ, ծայրագոյն վարդապետութեան աստիճանները կը ստանայ 17 Հոկտ. 1956-ին, Զորեքշաբթի սուաւոտեան ժամերգութեան աւարտին, ձեռամբ Կիպրահայոց թեմի առաջնորդ Դերջ. Տ. Վեռոնդ արքեպս. Զենպէլեանին:

Նրան. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս գնահատելով Մէզիրէի առաջն. փոխանորդ Տ. Տաճատ ծայր. վարդապետի և Տ. Արտակ ծայր. վարդապետի տարիներու ծառայութիւնները, զիրենք եպիսկոպոս կը ձեռնադրէ 21 Հոկտեմբեր 1956-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ: Արտակ Սրբազան վանքի մէջ կը կոչուի Լուսարարապետ, Ելեմտից տեսուչի և Դրան Եպիսկոպոսի պաշտօնին, զոր կը վարէ մինչև իր թեմական պաշտօնով Իրան մեկնիլը: Ան կը դասաւանդէ Դպրեվանքին մէջ:

Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովը 18 Օգոստոս 1959-ին միաձայնութեամբ թեմին առաջնորդ ընտրած ըլլալով Արտակ Սրբազանը, ան Թեհրան կը ժամանէ 1 Յունուար 1960-ին և կը ստանձնէ այս հայահոծ գաղութին ծառայելու ծանր և պատասխանատու պաշտօնը, զոր կը վարէ մինչև իր վախճանումը, անվհատ և աննկուն ջանասիրութեամբ և հետևողական աշխատանքներով, գնահատուելով հայ գաղութին և պարսիկ պետական իշխանութիւններուն կողմէ: Անթիլիասի Մայրավանքին մէջ իր վարած Դրան Եպիսկոպոսի, Դպրեվանքի ուսուցչի և ՀԱՍԿ-ի խմբագիրի պաշտօնները լաւապէս կատարած, ան Թեհրանի մէջ ևս կը ձեռնարկէ եկեղեցիներու և դպրոցներու կառուցման աշխատանքներուն և Թեհրանի մէջ հիմը կը դնէ Հայերէնագիտութեան գիշերային դասընթացքներուն, Հայոց վարժարաններուն մէջ պաշտօնավարող և հայագիտական նիւթեր դասաւանդող երկսեռ ուսուցիչներու թիւը համալրելու համար: Այս դասընթացքները տակաւին կը շարունակ-

ուին: Ան սկիզբէն իսկ սկսած էր դասաւանդել Հայերէնագիտութեան դասընթացքներուն[1]:

Գրական աշխատանքներու ալ ձեռնարկելով, կը խմբագրէ և կը հրատարակէ աւելի քան 25 հատորներ՝ գրական, կրօնական, պատմական և բացատրողական բովանդակութեամբ: Անոնցմէ ոմանք թարգմանուեցան պարսկերէնի, իսկ այլ հատորներ քանիցս վերահրատարակուեցան Թեհրանի և Երևանի մէջ: Իր քերթուածներէն շատերը հայրենի երգահաններու կողմէ մասնաւոր յօրինումներու շնորհիւ հանրութեան ներկայացուեցան: Այս աշխատանքներուն ի վարձատրութիւն, Երանաշնորհ Տ. Զարեհ Վեհափառը 22 Մարտ 1961 թուակիր սրբատառ կոնդակով արքեպիսկոպոսութեան տիտղոս և պատիւ կը շնորհէ Արտակ Սրբազանին:

Թեհրանի մէջ Արտակ Սրբազանը աւելի քան 15 երիտասարդներ քահանայ ձեռնադրեց թեմի եկեղեցիներուն և մեր ժողովուրդին ծառայելու համար: Իսկ Անթիլիասի մէջ, 26 Նոյեմբեր 1972-ին, կուսակրօն քահանայ ձեռնադրեց Թորգոմ սարկ. Դանիէլեանը և զայն վերակոչեց Տ. Անուշաւան աբեղայ (Այժմ ծայր. վարդ. և Հովիւ Նիւ Եորքի Ս. Սարգիս եկեղեցւոյ):

Ան 1970-ի Յունիսին, Աստուածաշունչի Միացեալ Ընկերութեան թարգմանիչներու խորհրդաժողովին մասնակցեցաւ Մեշեդի մէջ (Իրան), ընկերակցութեամբ Պրն. Ջանի Հանանեանին:

Տ. Արտակ Սրբազանին և Թեհրանի թեմին Թեմական Խորհուրդին նախաձեռնութեամբ Թեհրանի թեմին մէջ կատարուած են գնահատելի իրագործումներ, որոնցմէ կը յիշենք հետևեալները.

1. Նայիրի Ազգ. վարժարանին համար գնուած է 3.300 քառակուսի մէթր հողամաս մը, 5.000.000 ռիալի.

2. Ազգ. բարերար Թովմաս Թովմասեանի (Պապիկ) նուիրատուութեամբ ստացուած է 4.000 քառ. մէթր տարածութեամբ հողամաս մը՝ Օրիորդաց միջնակարգ վարժարանի մը համար, որուն հիմնարկէքը կատարուած է 28 Մայիս 1968-ին.

3. Կառուցուած է Թեհրանի Ազգային «Արաքս» վարժարանը, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան 100.000 տոլարի նուիրատուութեամբ.

---

[1] Միաժամանակ «Թեհրան» եամալսարանին մէջ, իր պատասխանատուութեամբ կը հաստատուի Հայագիտական Ամպիոն Գերլիսանս աստիճանով:

4. Թեհրանարնակ Ազգ. բարերար Ալեքսան Աւագեան, Ազգ. Առաջնորդարանին բով գտնուող շէնքը գնած և նուիրած է Ազգ. Առաջնորդարանին.

5. Տէր և Տիկին Մարտիկ և Ժանէթ Յովսէփեաններու ծախսով կառուցուած է Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիւսիսակողմը գտնուող Ռուշէշ դպրոցը.

6. Ազգ. բարերար Մարգար Մարգարեանին բարերարութեամբ շինուած է Ազգային Առաջնորդարանին եռայարկ արդիական շէնքը.

7. Ազգային Առաջնորդարանի հողին վրայ կառուցուած է Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին, բարերարութեամբ Դուրգէն և Վազգէն Սարգիսեան եղբայրներուն.

8. Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին մէկ միլիոն թուման նուիրատուութեամբ կառուցուած է Վահիդիէ թաղամասի Ս. Թարգմանչաց եկեղեցին.

9. Պետական շնորհումով ստացուած է 200.000 մէթր քառ. տարածութեամբ հողամաս մը, Խորասան տանող ճամբուն վրայ, որուն վրայ այժմ կը գտնուի Նոր Բուրսատան Ազգ. գերեզմանատունը: Հին գերեզմանատունը Դուլար թաղամասին մէջ կը գտնուի և նոր ննջեցեալներու համար միայն կ'օգտագործուի Նոր Բուրսատան գերեզմանատունը.

10. Իրանի Կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութեանց առիթով Իրանահայութիւնը՝ յատուկ Հանգանակիչ Յանձնախումբի կազմակերպութեամբ՝ յանձնառութեան տակ մտած էր 11 միլիոն թուման հանգանակել, ինչ որ յաջողութեամբ պսակուեցաւ:

11. Հայաստանի անկախացումէն (1992) ետք, Թեհրանի Ազգ. Առաջնորդարանի սեփական կալուածներէն մին տրամադրուեցաւ Հայաստանի դեսպանատան, որուն նորոգութիւնն ամբողջութեամբ կատարուեցաւ Ազգ. Առաջնորդարանի հաշուոյն: Յարդ սոյն դեսպանատան նիւթական կարիքներուն մեծ մասը կը հոգայ Թեհրանի Ազգ. Առաջնորդարանը:

Ան կատարած է հետևեալ ձեռնադրութիւնները.

2 Դեկտեմբեր 1972-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ. Արտակ արքեպս. սարկաւագ կը ձեռնադրէ Զարեհ Էքմէքճեանը (ապա վրդ., այժմ վախճանած): 28 Դեկտեմբեր 1958-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ ան քահանայ ձեռնադրեց Տիրց. Յովհաննէս Լափաճեանը, որ վերակոչուեցաւ Տ. Պարգև քհնյ. (Յովհաննէսեան), որ

ստանձնեց Ծիւնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Հովիւի պաշտօնը (այժմ վախճանած):

13 Յուլիս 1958-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, Արտակ արքեպս. կուսակրօն քահանայ ձեռնադրեց Սեդրակ սրկ. Լափաճեանը և Անդրանիկ սրկ. Էմիրզէեանը, զանոնք վերակոչելով Տ. Սմբատ աբեղայ (այժմ արքեպս.) և Տ. Խոսրով աբեղայ (ապա եպս., այժմ վախճանած ի Կ. Պոլիս):

25 Նոյեմբեր 1956-ին, Կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ Արտակ արքեպս. սարկաւագ ձեռնադրեց Յակոբ Եղիայեանը և Երուանդ Աբէլեանը: 26 Մայիս 1957-ին, ան Կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ սարկաւագ ձեռնադրեց Խաժակ Սարգիսեանը, Համազասպ Նաճարեանը, Մովսէս Քէշիշեանը և ուսուցիչ Սարգիս Բախտիկեանը: 12 Յունիս 1958-ին, Արտակ Սրբազան դարձեալ սարկաւագ ձեռնադրեց Հրայր Աշճեանը, Նշան Յովսէփեանը, Տիգրան Բալայեանը, Վարդգէս Գոճապապեանը և Յովսէփ Ումուտեանը, նաև Պէյրութի Հայկազեան Գոլէճի ուսանողներէն Սեդրակ Լափաչեանը:

Արտակ Սրբազանի պաշտօնավարութեան շրջանին, Թեհրանի մէջ կառուցուած են հետևեալ եկեղեցիները.-

1. 1964-ին, ապա աւելի նորը 1970-ին Վիլլա կամ Նեճաթոլլահի պողոտայի վրայ Ս. Սարգիս Մայր եկեղեցին.

2. 1968-ին՝ Սասուն-Վահիդիէի Ս. Թարգմանչաց եկեղեցին.

3. 1982-ին՝ Զէյթուն-Մաճիդիէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին.

4. Նոր Բուրաստան Ազգ. գերեզմանատան Ս. Ստեփանոս եկեղեցին՝ 1974-ին.

5. Արարատ մարզաւանի Ս. Խաչ մատուռը՝ 1985-ին:

6. Վերանորոգուեցաւ Թեհրանի Դարվազէ Ղազուին թաղի Ս. Գէորգ Ուխտատեղին, որ կառուցուած է 1790 և 1795 թուականներուն:

Թեհրանի մէջ այժմ պաշտօնավարող քահանաներուն ձեռնադրութիւնն ևս կատարած է Հոգ. Սրբազան Հայրը: Ձեռնադրութիւնները կատարուած են հետևեալ թուականներուն. 1966-ին՝ Տ. Վարազդատ ա. քհնյ. Տէրտէրեանը, 1969-ին՝ Տ. Միհրան քհնյ. Հայրապետեանը և Տ. Զարեհ քհնյ. Օհանեանը, 1978-ին՝ Տ. Տաճատ քհնյ. Մէլիքեանը, 1987-ին՝ Տ. Արսէն քհնյ. Աւետեանը, Տ. Գուրգէն քհնյ. Ներսիսեանը և Տ. Զաւէն քհնյ. Բաղումեանը, 1988-ին՝ Տ. Վազգէն քհնյ. Ծմաւորեանը, 1993-ին՝ Տ. Մեսրոպ քհնյ. Ռաթևոսեանը և Տ. Մուշեղ քհնյ.

Սեւանեանը, 1995-ին՝ Տ. Կոմիտաս քհնյ. Ղարախանեանը և 1999-ին՝ Տ. Խաչատուր քհնյ. Յարութիւնեանը: Ընդհանուր թիւը՝ 12:

1999-ի Սեպտեմբերին Արտակ Սրբազան Երևան մեկնեցաւ, մասնակցելու համար Հայաստան-Սփիւռք Համաժողովին, և Կիրակնի հիւրանոցին մէջ անհանգստացած ըլլալով, փոխադրուեցաւ Երևանի հիւանդանոցներէն մին, ապա օդային գծով փոխադրուած է Թեհրանի Իրան Մեհր հիւանդանոցը, ուր և մնաց 11 Հոկտեմբերէն մինչև 15 Հոկտեմբերը, և նոյն օրը վախճանեցաւ՝ հիւրաթ առաւօտեան ժամը 5-ին: 17 Հոկտեմբերին, Կիրակի օր, Թեհրանի բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան արարողութիւններ տեղի ունեցան:

Ս. Աթոռոյս վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Արտակ Սրբազանին Վերջին Օծման և թաղմանական արարողութեանց նախագահելու համար, յատուկ պաշտօնով Թեհրան ղրկեց Գերշ. Տ. Եփրեմ արքեպս. Թապաքեանը և Հոգշ. Տ. Վրոյր վրդ. Տէմիրճեանը: 19 Հոկտեմբեր 1999-ին, Երեքշաբթի օր, Ս. Սարգիս Մայր եկեղեցւոյ մէջ պատարագեց Գերշ. Տ. Եփրեմ Սրբազանը, Վերջին Օծման Կարգը կատարեց և դամբանախօսեց, ապա հաւատացեալներու հոծ բազմութեան ներկայութեան Հոգլ. Սրբազանին մարմինը փոխադրուեցաւ եկեղեցւոյ կից գտնուող հողամասին վրայ, ուր և դամբանախօսեցին Իրանա-Հնդկաստանի առաջնորդ Գերշ. Տ. Կորիւն արքեպս. Պապեանը և Ատրպատականի թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Նշան ծայր. վրդ. Թօփուզեանը: Դամբանախօսեցին նաև Ազգային ժողովականներ. պետական ներկայացուցիչներ, քոյր համայնքներու և Իսլամ համայնքին ներկայացուցիչները (ԱԼԻՔ, 20 Հոկտեմբեր 1999, Չորեքշաբթի):

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.

Թէև աւելի վերը յիշեցինք Սրբազան Հօր կատարած շինարարական աշխատանքներուն մէկ մասը, հարկ կը զգամ հետևեալ իրագործումներն ևս աւելցնել.-

1. Քուշէշ Մանկապարտէզը.
2. Նայիրի դպրոցի երրորդ յարկի կառուցումը և ընդարձակումը.
3. Սահակեան վարժարանի սրահներու կառուցումն ու ընդարձակումը.

4. Թունեան դպրոցի հիմնական փոփոխութիւնն ու կառուցումը: Շուրջ 24 դասարաններու ընդարձակումը.
5. Ց. Թովմասեան Օրիորդաց միջնակարգ դպրոցին կառուցումը.
6. Ա. Սողոմոնեան միջնակարգ տղայոց դպրոցի կառուցումը.
7. Ընդարձակում Մարիամեան դպրոցի.
8. Կառուցում Վաչէ Յովսէփեան տարրական դպրոցին.
9. Կառուցում Արաքս դպրոցին.
10. Կառուցում Սուքերեան Ազգային սրահի.
11. Կառուցում Ալեք Մանուկեան դպրոցի սրահին.
12. Ընդարձակում Ռոստոմ դպրոցի և կառուցում Ուղեցոյց դպրոցի.
13. Կառուցում «Նայիրի» Ազգային սրահի.
14. Կառուցում «Սասուն» Նարմաք թաղամասի մանկապարտէզին.
15. Կառուցում «Զէյթուն» Մաճիտիէ թաղամասի մանկապարտէզին.
16.Կառուցում Արաքի կամ Սուլթանապատի Ազգ. դպրոցին.

15 Հոկտեմբեր 1999
Անթիլիաս

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

1. ԽՕՍՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ: Թեհրան, տպրն. Մոդերն, 1961, Հրատարակութիւն Թեհրանի Հայ Եկեղեցւոյ Կանանց Միութեան, 36 էջ:
2. ԱԻԵՏԱՐԱՆԻ ՇՈՒՆՉՈՎ: Թեհրան, տպրն. Մոդերն, 1962, 132 էջ: Հրատարակութիւն Թեհրանի Հայ Եկեղեցւոյ Կանանց Միութեան:
3. ՀԱԻԱՏՔԻ ՀԱՐՑԸ ԱՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ: Թեհրան, տպրն. Մոդերն, 1963, 58 էջ:
4. ԱՊՐԻԼ 24: Թեհրան, տպրն. Մոդերն, 1965, 132 էջ: Մեկենաս Թովմաս Թովմասեան (Պապիկ):
5. ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԸ: Թեհրան, տպրն. Մոդերն, 1966, 179 էջ: Մեկենաս՝ Արշաւիր Բաբայեան: Կողքի ձեւաւորում՝ Գագիկ Մինասեան:

6. ԼՈՒՅՍ ԵՒ ՍՏՈՒԵՐ: Պէյրութ, տպրն. Սնան, 1971, 150 էջ: Մեկենաս՝ Մարտ. Ժենիա Աֆդանդիլեան: Կողքի ձեռագրում Լէդիկ Այվազեան:

7. ՋՈՒՐԸ ԿԻՐՈՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ: Թեհրան, տպրն. Ալիք օրաթերթի, 1973, 90 էջ: Մեկենասութեամբ Տէր և Տիկին Գրիգոր և Արծուիկ Փալանճեանցներու:

8. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՀԱՐՑԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆԱՆՔԻՆ ՄԷՋ: Թեհրան, տպրն. Նայիրի, 1976, 48 էջ: Մեկենաս՝ թեհրանարնակ Աշոտ Բալալեան: Դասախօսութիւն կարդացուած Թեհրանի Հայ Համալսարանականներու Միութեան մէկ հաւաքոյթին:

9. ԼՈՒՍԱՒՈՐ ՄԱՄՐԱՆՆԵՐ: Թեհրան, Նայիրի տպրն. 1976, 258 էջ: Մեկենաս՝ թեհրանարնակ Վարուժան Ասոյեան:

10. ԿԵՆՑԱՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ: Նոր Ջուղա, Ս. Ամենափրկչեան վանք, 1977, 156 էջ: Մեկենաս՝ Տիկին Շողակաթ Ղազարեան, շապիկի ձեռագրում Բիւզանդ Կոճամանեան:

11. ԿԻՐՈՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ: Նայիրի տպրն., Թեհրան, 1982, 78 էջ, տպաքանակ 2000: Մեկենաս՝ Միհրդատ Միրանեան:

12. ՄԻ ՔԱՀԻ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Նայիրի տպրն., Թեհրան, 1985, 102 էջ: Մեկենաս՝ Լեոն Աւետեան, տպաքանակ 2000:

13. ՅԻՍՈՒՍԻ Ս. ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ: Նայիրի տպրն., Թեհրան, 1987, տպաքանակ 5000, գունատիպ նկարազարդ: Հրատարակուած Թեհրանի Ազգ. դպրոցներու Կեդրոնական Հոգաբարձութեան կից Հայկական Պատմուածքներու Հրատարակչական Մարմին: Գործածուած է որպէս դասագիրք Թեհրանի Ազգ. վարժարաններուն մէջ:

14. ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ: Լոս Անճելոս. Երազ տպրն., 216 էջ: Մեկենաս՝ Տէր և Տիկ. Մարգար և Ալինա Սարգիսեաններ:

15. ԱՂՕԹՔ: Թեհրան, Ֆարաբի տպրն., 1991, 30 էջ. տպաքանակ 3000: Հրատարակութիւն Թեհրանի Հայոց Ազգային Դպրոցներու Կեդրոնական Հոգաբարձութեան կից Հայկական Պատմուածքներու Հրատարակչական Մարմին: Ս. Քրիստափորեան մատենաշար. թիւ 2: Նկարները՝ Լալիկ Թաշճեանի:

16. ԲՆՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ, ՄՏՈՐՈՒՄԻ ՇԻԹԵՐ: Թեհրան, Ֆարաբի, 1991, 30 էջ. տպաքանակ 5000: Հրատ. Ս. Քրիստափորեան

մատենաշարի, թիվ 3, նկարազարդ և գունատր: Հրատարակիչները նույն մատենաշարի Մարմինն է:

17. ԱՐԵՒ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄԷՋ: Քերթուածներ, Պէյրութ, Սևան, 1973, 58 էջ: Հրատարակութիւն Սևան Հրատարակչատան: Տպաքանակ 1200:

18. ՇԱՌԱԳԱՅԹԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ: Թեհրան, Նայիրի, 1981, 68 էջ, կողք՝ Բիւզանդ Կոճիկեանի: Տպաքանակ 1500: Մեկենաս՝ թեհրանաբնակ Խաչիկ Մատիկեան: Քերթողագիրք:

19. ԺԱՄԱՆԱԿԻ ԱԿՑԱՆԻՆ ՄԷՋ: Թեհրան, Նայիրի, 1985, 113 էջ, տպաքանակ 3000: Մեկենաս՝ Տիգրան Սարաճեան: Կողք՝ Արամազդ Նազարեանի: Քերթողագիրք:

20. ԱՍՏՂԱԼՈՅՍԻ ՈՏՆԱՀԵՏՔԻՆ: Քերթողագիրք: Լոս Անճելոս, Երազ, 1987, 126 էջ: Մեկենաս՝ Վահան Շամլեան: Գիրքը նուիրած է Հեղինակին մօր՝ տիրամայր Զարուհի Մանուկեանին:

21. ԲԱՋԿԱՏԱՐԱԾ: Քերթողագիրք: Թեհրան, Նայիրի, 1990, 155 էջ, տպաքանակ 1555: Մեկենաս՝ Վանիկ Յովակիմեան, կողք՝ Արամազդ Նաճարեան:

22. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Թեհրան, Նայիրի, 1983, 32 էջ:

23. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՕՆԵՐԸ: Թեհրան, Նայիրի, 1969, Բ. տպագրութիւն, 1980: 5-րդ տպագրութիւն, 1994, 224 էջ[2]:

24. ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ: Թեհրան, 1975:

25. ՇՈՂԱՐՋԱԿ: Թեհրան, Նայիրի, 1997: Տպրն. Ֆարաբի:

26.ՀԻՆԳ ՏԱՂԱՒԱՐՆԵՐ: Կրօնական Դասագիրք: Տպրն. Նայիրի, Թեհրան, 1974-1995: Պատկերազարդ: Մի քանի հրատարակութիւններով:

27. ՅԻՍՈՒՍ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է: Թեհրան, Ֆարաբի, 1998: Կրօնական դասագիրք, պատկերազարդ:

28. 1976 ԹՒԻ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹԻՒ: Յունիս 1976, 26 էջ: Թեհրան Նայիրի:

---

[2] Այս 5-րդ հրատարակութեան մեկենասներն են Դոկտ. Ստեփան Ստեփանեան, Ստեփանեան և Քոչարեան ընտանիքներ, ի յիշատակ իրենց մօր՝ Վարդանոյշ Ստեփանեանի:

Արտակ Սրբազանին կարգ մը գործեր թարգմանուած են պարսկերէնի, ինչպէս օրինակ.

1. ԹԵՀԵՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ: Թեհրան, 1975:

2. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Թեհրան, 1983:

3. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՕՆԵՐԸ, Ա. և Բ. տպագրութիւն, տպագրուած Թեհրան 1973 և 1982:

4. ՋՈՒՐԸ ԿԲՕՆԱԿԱՆ ՄԻԱԿԱՑԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ: Թեհրան, 1984:

Արտակ Սրբազանի մասին կան հինգ գիրքեր, որոնց մէջ նկարագրուած են իր կեանքն ու գործունէութիւնը.

1. ԱՐՄԱՆՏ - Արամ Անթոյնեան-ի «ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ», Թոուցիկ ակնարկ: 40 էջ, Թեհրան, Նայիրի, 1983:

2. ԼԻԴԱ ԲԵՐԲԵՐԵԱՆ, «ԳԵՐԾ. Տ. ԱՐՏԱԿ Ս. ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ, իր առաջնորդական պաշտօնավարութեան 25-ամեակին առիթով»: Թեհրան, Նայիրի, 115 էջ, 1985:

3. «ԳԵՐԾ. Տ. ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԹԵՀԵՐԱՆԻ ԹԵՄԻ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ ԵՒ ՆՄՈՅՇՆԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ»: 1985-ին, Թեհրան, Ճարապի, 1985, 250 էջ, պատկերազարդ: Հրատարակիչներն են Յոբելինական Յանձնախումբը:

4. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱԼԱՅԵԱՆ, «ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ԳԵՐԾ. Տ. ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ», Լոս Անճելոս, 1985:

5. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, «ԳՐՈՂ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ, Արտակ արքեպս. Մանուկեանի կեանքն ու գործը»: Հալէպ, Կիլիկիա, 1994, 192 էջ:

Արտակ արքեպիսկոպոս 1999-ի Սեպտեմբերին մտադիր էր հաւաքել ու մեկտեղել ՀԱՍԿ ամսագրի, ՍՓԻՒՌՔ (Պէյրութ), ՆՈՐ ԿԵԱՆՔ շաբաթաթերթերի (Լոս Անճելոս), ԱԼԻՔ օրաթերթի (Թեհրան) և այլ օրաթերթերու և ամսաթերթերու մէջ իր հրատարակած գրութիւնները, և զանոնք դասաւորելու համար կը յանձնէ Թեհրանի մտաւորականներէն միոյն, որ փոխանակ դասաւորելու

յոդուածները, զանոնք կը փճացնէ... սխալ հասկցած ըլլալով Արտակ Սրբազանին իրեն տուած թելադրութիւնը...:

Հոգ. Սրբազան Հայրը երկու տարիներ օտար Ընկերութեան մը կողմէ յայտարարուած էր ՏԱՐՈՒԱՆ ՄԱՐԴԸ, ի գնահատութիւն իր վարչական և գրական գործունէութեան և Թեհրանի թեմին մէջ իր ձեռք բերած ժողովրդականութեան:

Արտակ Սրբազանը 8 Յուլիս 1999-ին հրաւիրուած էր Հայաստանի Բնութեան և Հասարակութեան մասին Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի Հայկական Բաժինը, ուր նս արժանացաւ սոյն «Ակադեմիայի իսկական անդամ Հումանիտար Գիտութիւնների և Աստուածաբանութեան բաժանմունքի անդամի» տիտղոսին: Այս առիթով Ակադեմիայի կեդրոնատեղիին մէջ պաշտօնական արարողութիւն տեղի ունեցած է:

Սրբազան Հայրը անդամ էր նաև Հայաստանի Գրողներու Միութեան:

Հայրենի երգահան Գէորգ Աճէմեանը և իրանահայ երաժիշտներ, հիմք ունենալով Արտակ Սրբազանին բանաստեղծութիւնները, յօրինումներ կատարած են: Գէորգ Աճէմեանը լոյս ընծայած է ՂՈՂԱՆՋՆԵՐ երգաշարը, Սրբազանին բանաստեղծութիւններու հիման վրայ (տպ. Երևան), 1977: Այդ երգերէն մի քանին հռչակ հանած են ոչ միայն Երևանի ձայնասփիւռէն, այլ նաև պաշտօնական բեմերէ:

Մաղթելի է, որ հատորի չվերածուած իր շատ մը գրութիւնները ամփոփուին և առիթով մը լոյս ընծայուին, նախաձեռնութեամբ Թեհրանի Թեմական Խորհուրդին և Իրանահայ Գրողներու Միութեան:

ՎԱՐԴԱՆ ՍՐՔԵՊՍ. ՏԷՄԻՐՃԵԱՆ

20 Հոկտեմբեր 1999
Անթիլիաս

ՕՐ. ԼԷՅԼԱ ԳԱՐԱԿԷՈՉԵԱՆ
(1902 - 1999)

Ազգային Բարերարուհի եւ Հաուրրտ Գարակէօզեան Խնամակալութեան Նախագահուհի Օր. Լէյլա Գարակէօզեան, կարճատեւ հիւանդութենէ՝ մը ետք, մահացաւ Երկուշաբթի, 6 Սեպտեմբեր 1999-ին, երեկոյեան, Մանհաթընի իր բնակարանին մէջ: Թաղման արարողութիւնը կատարուեցաւ 10 Սեպտեմբեր 1999, Ուրբաթ օր Նիւ Եորքի Մէտիսընի փողոցի Ֆրէնք Քամբրոն Մեմորիալ Մեմորիալ մէջ եւ իր մարմինը ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

Ընտանեկան խոնարհ, բարեսիրտ եւ ազգասէր Բարերարուհին ծնած էր 1902-ին, Նիւ Եորքի մէջ: Ան դուստրն էր Տէր եւ Տիկին Միհրան եւ Զապէլ Գարակէօզեաններու, որոնք գորգի յայտնի առեւտրականներ էին: Կ.Պոլսոյ 25 Օգոստոս 1896-ի հայկական կոտորածներուն Արշակ եւ Միհրան Գարակէօզեանները հեռացան Պոլսէն եւ Անգլիա հաստատուեցան: Ապա անոնք վերջնականապէս Նիւ Եորք հաստատուեցան եւ շարունակեցին գորգի իրենց առեւտուրը: Միհրան եւ Զապէլ Գարակէօզեաններ կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Լէյլան, որ 1902-ին կը ծնի, եւ Հաուրրտը, որ 1904-ին կը ծնի: Սակայն ան 14 տարեկանին կը մահանայ:

Նիւ Եորքի մէջ Պրն. Միհրան Գարակէօզեան 1921-ին կը ստանձնէ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդր. Վարչութեան Գանձապահի պաշտօնը: 5 Նոյեմբեր 1921-ին Միհրան Գարակէօզեան Պոլսոյ Գուզկունճուք թաղին մէջ կը հիմնէ որբանոց մը: 1922-ի աշնան Քէմալական շարժման պատճառով ան կ՚որոշէ Ռումանիա փոխադրել այս որբանոցը, որ կոչած էր իր ղեռատի եւ մահացած որդւոյն՝ Հաուրրտի անունով: Ռումանիոյ մէջ յարմար վայր մը գտած չըլլալով, 1924-ին որբերը կը փոխադրէ Ֆրանսայի Լուար Շէր նահանգին Լա Կոտինիէր ղղեակը, ուր կը տեղաւորուին 200 որբերը: 1934-ին այս շէնքը այրեցաւ:

1936-1937-ին Հաուրրտ Գարակէօզեան Հիմնարկութիւնը Աթէնքի Ֆիքս կամ Տուրղութի թաղին մէջ նոր մասնաճիւղ մը բացաւ, ապա մասնաճիւղեր բացուեցան Սուրիոյ Հալէպ եւ Գամիշլի, Լիբանանի Այնճար հայաւանին եւ Պուրճ Համուտի մէջ: 1933-ին Միհրան Գարակէօզեան իր հաստատած այս մարդասիրական կազմակերպութեան Նախագահութիւնը կը փոխանցէ իր դստեր՝ Օր.

Լէյլա Գարակէօզեանին: Պրն. Միհրան մահացաւ 7 Հոկտ. 1948-ին ի Նիւ Եորք: 1973-ին Հ. Գարակէօզեան Հիմնարկութեան անձեռնմխելի գումարը դրամատուներուն մէջ կը հաշուէր չորս միլիոն տոլար, որուն տարեկան տոկոսը՝ 100.000 տոլար, կը յատկացուէր Հ. Գարակէօզեան Հիմնարկութեան բոլոր մասնաճիւղերու կարիքներուն:

Օր. Լէյլա Գարակէօզեան հարուստ էր, սակայն հարուստի կեանք չապրեցաւ: Համեստ ու ժուժկալ կեանքով գոհացաւ, աւելիով սատար հանդիսանալու համար հայ կարիքաւոր ընտանիքներուն: Ան հրեշտականման հոգիով եւ սիրայորդ սրտով տուաւ իր ունեցածը հայութեան անխտիր:

70 տարիներէ աւելի ան ծառայեց իր սիրած ժողովուրդին, մեծապէս օգտակար հանդիսանալով աղքատներուն, հայկական դպրոցներուն եւ հիւանդներուն (ԱՅԳ օրաթերթ, Կ. Ցարութիւնեան, 17-20 Նոյեմբեր 1973, Պէյրութ):

Հ. Գարակէօզեանի Աթէնքի կեդրոնը կը գործէ 1938-1995 թուականներուն: 1939-էն ի վեր մասնաճիւղեր հաստատած է Լիբանանի եւ Սուրիոյ մէջ՝ Պէյրութ, Այնճար, Մէժտէլ Այնճար, Հալէպ, Գամիշլի եւ Քէսապ: 1988-1992-ին Հ. Գարակէօզեան հաստատութիւնը Օր. Լէյլային նախաձեռնութեամբ դեղեր կը ղրկէ Հայաստան, նաեւ սննդեղէն: 27 Ապրիլ 1993-ին Հայաստանի մէջ պաշտօնապէս բացումը կատարուեցաւ Հ. Գարակէօզեանի մասնաճիւղերուն, որոնցմէ չորսը՝ Հայաստանի, եւ չորսը՝ Արցախի մէջ: Այս դարմանատուներուն մէջ 5-15 տարեկան պատանիներ ատամներու առողջութեան խնամք ստացած են, այս կեդրոնները միաժամանակ ատամնաբոյժներու վերապատրաստումի կեդրոններ կը հանդիսանան:

Սուրիոյ եւ Լիբանանի Հ. Գարակէօզեանի մասնաճիւղերէն բաւական թիւով պաշտօնեաներ ազատ արձակուեցան, պիտճէի խնայողութեան եւ հայրենիքի եւ Արցախի մէջ լայն հնարաւորութիւններ ստեղծելու համար մեր ժողովուրդին: Օր. Լէյլայի 75 տարիներու անսակարկ զոհողութիւններէն օգտուած են եւ կ՚օգտուին հազարաւոր հայեր եւ օտարներ, որոնց համար նախախնամական օժանդակութեան օճախներ կը հանդիսանան Հ. Գարակէօզեան դարմանատունները:

1954-ի Յունիսին, Օր. Լէյլա Գարակէօզեան Նիւ Եորքէն Պէյրութ ժամանեց լուծելու համար Հ.Բ.Ը.Միութեան մօտ հանգանակուած եւ Դպրոցաշինութեան տրամադրուելիք գումարին գործածութեան

շուրջ ստեղծուած տարակարծութիւնները: Կաթողիկոսարանիս Դաշ-
ինին մէջ, առիթով Ազգունիէի Ազգ. Ռուժարանի Խնամակալ Մար-
մինը Հաւաքոյթ մը կազմակերպեց իր գոհունակութիւնը յայտնելու
համար մեծ Բարերարուհիին, որ Ամերիկայի մէջ Ռուժարանի Օժան-
դակ Մարմնին ամենէն գործօն անդամներէն հանդիսացած էր: Սոյն
Հաւաքոյթին նախագահեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խաչ-
արքեպս. Աչքապահեանը (ՀԱՍԿ, 1954, Յուլիս-Օգոստոս, էջ 317):

Նիյր Իսթ Ռըլիֆի 1929-ի Հայ Ներկայացուցիչներու շարքին մաս
կը կազմէին Միհրան Դարակէօզեան, Վահան Քիւրքճեան եւ Տ.
Շահէ Ակրբ. Դասպարեան, որոնք Անթիլիասի Դպրեվանքին հաս-
տատման գործը դիւրացուցին: Անթիլիասի Դպրեվանքի պահպան-
ման համար եւս Միհրան Դարակէօզեան եւ Պատրիկ Կիւլպէնկեան
յանձն կ'առնեն հինգ տարիներ տարեկան 1500-ական տոլար տրա-
մադրել Դպրեվանքի Հիմնադրամին: Այս առիթով ԿՌՉ մը ալ լոյս
կ'ընծայեն Մ. Դարակէօզեան եւ Յարութիւն Կիւլպենկեան (ՀԱՍԿ,
1961, Հոկտ.-Դեկտ., էջ 369-374, 427-431, Ռ. Եղիայեան, «Ժամանա-
կակից Պատմութիւն Հայոց Կիլիկիոյ», Անթիլիաս, 1975, էջ 252, 330,
333-334):

Օր. Լէյլա Դարակէօզեան իր Լիբանան այցելութեանց, ուսումնա-
սիրութիւններուն եւ տեսակցութեանց իբրեւ գործնական արդիւնք,
1964 Յուլիսին համաձայնութիւն մը տալով Ս. Աթոռիս Երան. Տ.
Խորէն Ա. Կաթողիկոսին հետ, տրամադրեց 450.000 տոլարի պատ-
կառելի գումար մը, նպատակ ունենալով Ֆանարի մէջ Ժողովրդային
Բնակարաններու շինութեան յատկացնել: Խորէն Վեհափառը կազ-
մեց Ժողովրդային Բնակարաններու Շինութեան Յանձնախումբ մը,
որուն մաս կազմեցին Մեթր Խաչիկ Պապիկեան, Ճարտ. Խոսրով
Երամեան եւ Հ. Դարակէօզեան Հիմնարկութեան Լիբանանի Ներկա-
յացուցիչ Պրն. Նուպար Դաւիթեան:

Ցիշեալ Յանձնախումբը Ֆանարի մէջ 17.000 քառ. մէթր տարա-
ծութեամբ հողամաս մը գնեց 372.000 Լ. Ո. արժէքով: 11 Նոյեմբեր
1967-ին հիմնարկէքը կատարուեցաւ Ժողովրդային Բնակարան-
ներու, որ կը նախատեսէր 214 բնակարաններու, թաղային եկեղեցւոյ,
դպրոցին, հանդիսասրահին, խանութներու եւ հանրային պարտէզի
կառուցումը: Շինութեանց առաջին բաժնին՝ 110 բնակարաններու շի-
նութիւնը աւարտեցաւ 1968-ի առաջին կիսուն: Խորէն Ա. Կաթողիկոս
այս առիթով հաւաքոյթ մը կազմակերպեց 11 Յուլիս 1968-ին Պիքֆա-

յիայի հովոցին մէջ եւ Ազգ. Բարերարուհի Օր. Լէյլա Գարակէօզեան Լիբանանի Ազգային Կարգի Ասպետի շքանշանով պատուուեցաւ եւ այս առիթով Վեհափառ Հայրապետին խոստացաւ 70.000 տոլար յաւելեալ գումար մը Ֆանարոի մէջ Հայ վարժարանի մը կառուցման համար, 500 աշակերտներու բաւարարութեամբ:

Ժողովրդային բնակարաններու եոկրորդ մասը՝ 93 բնակարաններու կառուցումը աւարտեցաւ 1972-ին եւ 28 Հոկտեմբեր 1972-ին կատարուեցաւ պաշտօնական բացումը: Այս շրջանը կոչուեցաւ Լէյլաւան, եւ Ազգ. Մինրան Գարակէօզեան վարժարանը սկսաւ գործել 188 աշակերտներով: Անհանգստութեան պատճառով Օր. Լ. Գարակէօզեան չկրցաւ ներկայ գտնուիլ այս բացման հանդիսութիւններուն:

Ս. Աթոռոս այժմու Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Լէյլաւանի Թիւթիւնճեան կիսաւարտ ծերանոցին շենքին մէջ որոշեց 75 ժողովրդային բնակարաններ կառուցել, որոնց շինութեան աւարտը տեղի պիտի ունենայ 2000 թուականին: Օր. Լէյլա Գարակէօզեանը մէկ միլիոն տոլարի բարձրացուցած էր իր յատկացումը Լէյլաւանի հողամասի ընդարձակման եւ նոր բնակարաններու կառուցման համար, որուն համար ալ մեծ Բարերարուհին խորէն Ա. Կաթողիկոսին կողմէ արժանացաւ **Կիլիկիոյ Մեծ Խաչի Իշխանի** շքանշանին:

Օր. Լէյլա Գարակէօզեանին յիշատակը միշտ անմար պիտի մնայ Կաթողիկոսարանիս վերջին լիմանեակի պատմութեան մէջ, որ նիւթապէս եւ բարոյապէս միշտ նեցուկ կանգնեցաւ Ս. Աթոռոս հոգեւոր եւ ժողովրդային առաքելութեանց յաջողութեան եւ բարգաւաճման:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՄԻՐՃԵԱՆ

Անթիլիաս,
22 Հոկտեմբեր 1999

ՄԱՀ
Տ. ՆՇԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻ

Մարսիլիո հայ համայնքը ցավով լսեց Պուլվար Ռտտո թաղի Ս. Հակոբ եկեղեցվո հոգևոր հովիվ Տ. Նշան ավագ քհն. Գույումճյանի մահվան բոթը: Չիք այլևս մեր մեջ այդ բարի, ազնիվ, միշտ ժպտերես քահանան, որը երեսուն երկար ու ծիգ տարիներ եղավ անխոնջ մշակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Տեր Հայրը կրտսեր զավակն էր տարսոնցի Տեր Միքայել ավագ քհն. Գույումճյանի, ծնած Պեյրութ 1930-ին: Ավազանի անունն էր Մաղաքիա: Տակավին ութամյա մանուկ, 1938-ին կկորսնցնե հայրը՝ Տեր Միքայել ավագ քահանան, սակայն եկեղեցասիրության սերմերը ցանված ըլլալով մանուկ Մաղաքիայի հոգիին մեջ, ան իր կյանքի մեծ մասը կանցնե նախ Պեյրութի Ս. Երրորդություն, ապա Ս. Աստվածածին եկեղեցիներե ներս՝ նախ որպես դպիր, ապա՝ սարկավագ:

1965-ին երբ ճակատագիրն իր առջև կկեցներ օրիորդ Խաթուն Մաճունյանին, կկապե իր կյանքը անոր հետ այնպես, որ միայն մահը կրցավ զայն քակել: Իրենց սիրո արտահայտության որպես արդյունք Աստված անոնց կպարգևե երկու արու զավակ՝ Հրանտ և Խաչակ: Եվ այդ ամենուն մեջ Մաղաքիա սարկավագ կտեսներ Նախախնամության օրհնությունը: Եվ զԱստված փնտրելու ճանապարհին կոչումը կունենա ամբողջական նվիրումով հանձնվելու Աստուծո և ազգին: 1967 թ. կընդունվի Անթիլիասի դպրեվանք՝ հետևելու քահանայից մասնավոր դասընթացներուն:

1969-ին, դասընթացները ավարտելե վերջ. կմեկնի Մարսել, ուր նույն թվականին քահանա կձեռնադրվի ձեռամբ Արտավազդ արքեպիսկոպոս Թրթոյանի՝ վերանվանվելով Նշան քահանա: Ձեռնա-

դրութենե անմիջապես վերջ կստանանե Մարսիլիո Ս. Հակոբ եկեղեցվո հոգևոր հովվությունը, ուր և կպաշտոնավարե մինչև իր կյանքի վախճանը: Հովվական բարեխիղճ ծառայության համար 1998 թ. իրեն կտրվի քահանայական լանջախաչ, իսկ քահանայագործության 30-ամյա ծառայությունը կգնահատվի, միջնորդությամբ Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Մերեճյանի և հավանությամբ Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Բարձրաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանի, երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ կոնդակով, Ծաղկյա փիլոնի և Ավագության տվչությամբ:

Քահանայագործության իր երեսուն տարիներու ընթացքին Աստուծո և բարության սպասավորին սիրեցին ոչ միայն իր հոտի անդամ հավատացյալները, այլև շատեր, իսկ ավելի շատ սիրեց Աստվածը: Եվ երբ բոլորեցավ անոր յոթանասուն տարին, Հայրն ի վերուստ կանչեց անոր, երկրավոր ծառայութենե վերջ անցնելու երկնավոր ծառայության, մարմնավորեն անցնելու հոգեղենի:

Եվ 2000 թվականի հունվար 10-ին ան ալ որպես «հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի», որպեսզի իր գործոց հատիկներու հիշողության հասկերով կարենար ապրիլ հոս՝ մեր սիրտերու մեջ, և գնահատվիլ հոն՝ Երկինքի Արքայության մեջ:

Խունկ, աղոթք և Աստվածային օրհնություն քեզ, ով այր բարի և նվիրյալ մշակդ Աստուծո, որ կոչեցար Նշան ավագ քահանա Գուլումճյան:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Մարսել

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 2000)

ОФИЦИАЛЬНЫЙ ОТДЕЛ

1. Новогоднее обращение армянскому народу Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по национальному телевидению Республики Армении, 31 декабря 1999 (стр. 3-5)
2. Новогоднее обращение Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в Кафедральном Соборе Св. Эчмиадзина после полуночи, 1 января 2000 (стр. 6-7)
3. Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, произнесенное в трапезной Первопрестольного Эчмиадзина, 6 января 2000 (стр. 8)
4. Рождественская проповедь Католикоса Всех Армян Гарегина II в Кафедральном Соборе: "Навстречу чуду Богоявления", 6 января 2000 (стр 9-13)
5. Обмен приветственными и поздравительными письмами, открытками и телеграммами между Его Святейшеством Католикосом Всех Армян Гарегином II, Главами Христианских Церквей, Престолами Армянской Церкви и государственными официальными лицами в связи с Новым Годом и Рождеством Христовым (стр. 14-16)
6. Молодые музыканты благотворительной организации "Новые имена в Армении" в гостях у Католикоса Всех Армян, 3 января 2000 (стр. 17)
7. Чрезвычайный и уполномоченный посол Индии в Республике Армения Бал Ананд посетил Первопрестольный Эчмиадзин, чтобы поздравить Его Святейшество Католикоса Всех Армян Гарегина II с Новым Годом, 4 января 2000 (стр. 18)
8. Рождественские праздники в Первопрестольном Эчмиадзине, 5-6 января 2000 (стр. 19-20)
9. Чрезвычайный и уполномоченный посол США в Республике Армения Майкл Лемон посетил Первопрестольный Эчмиадзин, чтобы поздравить Его Святейшество Католикоса Всех Армян Гарегина II с Рождеством Христовым, 13 января 2000 (стр. 21)

10. Сообщение пресс-центра Первопрестольного Эчмиадзина об отправлении Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в Иорданию и Святые Места, 14 января, 21.13 часов (стр. 22)
11. Католикос Гарегин II: "Обновив Наш обет, Мы вернулись в Первопрестол, чтобы служить стране и народу". Возвращение Католикоса Всех Армян в Первопрестолный Эчмиадзин, 25 января 2000 (стр. 23-24)
12. Посещение Католикосом Гарегином II Государственного Совета Республики Армения по Религиозным Вопросам, 29 января 2000 (стр. 25)
13. Прием делегации конгресса местных и территориальных властей Евросовета Католикосом Всех Армян. 29 января 2000 (стр. 26)
14. Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, произнесенное в Кафедральном Соборе перед поездкой в Иерусалим, 14 января 2000 (стр. 27-28)
15. Поломничество Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по Святым Местам (Иордания и Иерусалим), 14-25 января 2000 (стр. 29-72)
16. Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в Кафедральном Соборе в связи с возвращением из Иерусалима, 30 января 2000 (стр. 73-75)
17. Предновогодние церемонии в Первопрестоле, 31 декабря 1999 (стр. 76-82)

В ПЕРВОПРЕСТОЛЕ

18. Церковные вести. Хроника Первопрестольного Эчмиадзина за январь месяц: Святые Литургии и проповеди в Кафедральном Соборе, а также другие церемонии в Первопрестоле (стр. 83-86)
19. **Грант Костанян** - Защита дипломов в Геворгянской Духовной Академии, 31 января 2000 (стр. 87-90)

РЕЛИГИОЗНЫЙ ОТДЕЛ

20. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна, произнесенная во время литургии в Кафедральном Соборе Св. Эчмиадзина в Сочельник, 5 января 2000 (стр. 91-93)

МЕЖЦЕРКОВНЫЙ ОТДЕЛ

21. Сообщение: 18-ого января текущего года под председательством Папы Римского Иоанна-Павла II в Риме была проведена церемония открытия ворот Кафедрального Собора Св. Павла (стр. 94-95)

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ОТДЕЛ

22. Архиепископ Шаге Ачемян - "Молитвенные записи" Католикоса Симеона Ереванци (исследование, подлинник) (стр. 96-105)
23. Погос Левон Зекиян - Религиозные споры 14-ого века. Предпосылки к дальнейшему расчленению Армянской Церкви и определению их статуса (исследование) (стр. 126-138)
24. Хачик Самвелян - Публикация Библии Восканом Ереванци (исследование) (стр. 106-125)
25. Ованес Дарбинян - Заметки об одной критике Архимандрита Комитаса (Об одном письме Архимандрита Комитаса) (стр. 139-141)
26. Астгик Геворгян - Миниатюристы Вайоц Дзора (14-15 веки), (исследование) (стр. 142-155)
27. Ара Акобян - Вардан Махохян - годы юности и учебы (исследование) (стр. 156-166)
28. Архиепископ Аваг Асатурян - Книга Апу Гамита Ал-Казари "Критерий деятелности" (исследование) (стр. 167-170)
29. Геворг Вртанесян - Последний из могикан (к 100 летию музыканта, композитора, дирижера и педагога Ашота Патмагряна) (стр. 171-179)

НЕКРОЛОГИ

30. **Архиепископ Вардан Темирчян** - Архиепископ Артак Манукян (1931-1999) (стр. 180-191)
31. **Архиепископ Вардан Темирчян** - Лейла Гаракиозян (1902-1999) (стр. 192-195)
32. **Архимандрит Комитас Овнанян** - Кончина старшего священника Ншана Гуюмджяна (1930-2000) (стр. 196-197)

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 2000)

OFFICIAL

1. New Year message of His Holiness Garegin II Catholicos of All Armenians to Armenian people on the national television of Republic of Armenia, 31 December, 1999 (pp. 3-5)
2. New year message of His Holiness Garegin II Catholicos of All Armenians delivered in the Cathedral after the midnight, 1 January, 2000 (pp. 6-7)
3. Message of His Holiness Garegin II Catholicos of All Armenians delivered in the refectory-hall of the Mother See, 6 January, 2000 (p. 8)
4. Sermon of Catholicos of All Armenians Garegin II delivered in the Cathedral: "Looking forward to the miracle of Epiphany", 6 January, 2000 (pp. 9-13)
5. Telegrams and letters of greetings and salutations on the occasion of the New Year and Christmas between His Holiness Garegin II Catholicos of All Armenians and the heads of Sister Churches, Hierarchical Sees of the Armenian Church and state officials (pp. 14-16)
6. Young musicians of the charity organisation "New names in Armenia" received by the Catholicos of All Armenians, 3 January, 2000 (p. 17)
7. The Indian Ambassador Extraordinary and Plenipotentiary in Armenia Bal Anand visited the Mother See to congratulate His Holiness Garegin II Catholicos of All Armenians on the occasion of the Yew Year, 4 January, 2000 (p. 18)
8. Christmas celebrations in the Mother See, 5-6 January, 2000 (pp. 19-20)
9. The USA ambassador Extraordinary and Plenipotentiary in Armenia Michael Lemon visited the Mother See to congratulate His Holiness Garegin II Catholicos of All Armenians on the occasion of St. Nativity, 13 January, 2000 (p. 21)
10. Communiqué of the press-centre of the Mother See on the coming visit of His Holiness Garegin II Catholicos of All Armenians to Jordan and Holy Land, 14 January, 2000 (at 21.13) (p. 22)

11. Garegin II Catholicos of All Armenians: "Having renovated the Vow, We returned to the Mother See to serve the country and the people". His Holiness Garegin II Catholicos of All Armenians returned to the Mother See Holy Echmiadzin, 15 January, 2000 (pp. 23-24)
12. Visit of His Holiness Garegin II Catholicos of All Armenians to the State Council of Religious Affairs of Republic of Armenia, 29 January 2000 (p. 25)
13. His Holiness Garegin II Catholicos of All Armenians received the delegation of the Congress of local and territorial authorities from European Parliament, 29 January, 2000 (p. 26)
14. Speech of His Holiness Garegin II Catholicos of All Armenians in the Cathedral before leaving for Jerusalem, 14 January, 2000 (pp. 27-28)
15. Pontifical pilgrimage of His Holiness Garegin II Catholicos of all Armenians to Holy Land (Jordan and Jerusalem), 14-25 January, 2000 (pp. 29-72)
16. Speech of His Holiness Garegin II Catholicos of All Armenians in the Cathedral after returning from Jerusalem, 30 January, 2000 (pp. 73-75)
17. New Year's Day's celebrations in the Mother See, 31 December, 1999 (pp. 76-82)

THE MOTHER SEE

18. Church pulpit News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See in January (pp. 83-86)
19. Vrent Kostanyan - Graduate thesis supporting in the Theological Academy, 31 January, 2000 (pp. 87-90)

RELIGIOUS

20. Sermon of Archbishop Nerses Bozabalyan delivered in the Cathedral of St Echmiadzine during the mass of Christmas Eve, 5 January, 2000 (pp. 91-93)

ECUMENICAL

21. Communiqué (Ceremony of opening of the gates of the Cathedral St. Paul

in Rome under the direction of Pope John Paul II. 18 January. 2000) (pp. 94-95)

ARMENOLOGICAL

22. **Archbishop Shahe Ajemyan** - " Book of Prayers" by Catholicos Simeon Erevantsi (study. original) (pp. 96-105)
23. **Pogos Levon Zekiyan** - Religious Arguments in the 14th Century. Presage to Further Divisions in Armenian Church and to Ecclesiastical Status (study) (pp. 106-125)
24. **Khachik Samvelyan** - Publishing of the Bible by Voskan Erevantsi (study) (pp. 126-138)
25. **Hovhannes Darbinyan** - On a Criticism of Archimandrite Komitas (in regard to a letter of Archimandrite Komitas) (pp. 139-141)
26. **Astghik Gevorkyan** - The Miniaturists of Vayots Dzor (14-15 Centuries) (study) (pp. 142-155)
27. **Ara Hakobyan** - Vardan Makhokhyan: The Years of Adolescence and Studies (study) (pp. 156-166)
28. **Archbishop Avag Asaturyan** - The Book of Aby Hamit Al-Khazari "The Criterion of Acting" (study) (pp. 167-170)
29. **Gevorg Vrtancsyan** - The Last of Mohicans (on the occasion of the 100th anniversary of musician, composer, conductor and pedagogue Ashot Patmagryan) (pp. 171-179)

NECROLOGY

30. **Archbishop Vardan Temirchyan** - Archbishop Artak Manukyan (1931-1999) (pp. 180-191)
31. **Archbishop Vardan Temirchyan** - Miss Leila Garagiozyan (1902-1999) (pp. 192-195)
32. **Archimandrite Komitas Hovnanyan** - Decease of Father Nshan Guyumjyan (1930-2000) (pp. 196-197)

I. "ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 2000)

OFFICIEL

1. Le message de SS. Garégnine II, Catholicos de tous les Arméniens au peuple Arménien a l'occasion du Nouvel an à la télévision nationale de la République d'Arménie, 31 décembre 1999 (pp. 3-5)
2. Message de Sa Sainteté Garéguine II Catholicos de tous les Arméniens prononcé dans la Cathédrale de Saint Echmiadzine à l'occasion du Nouvel An, après le minuit, 1 janvier 2000 (pp. 6-7)
3. Le message de SS. Garéguine 2, Catholicos de tous les Arméniens prononcé au réfectoire du St-Siege, 6 janvier 2000 (p. 8)
4. Sermon de Catholicos de tous les Arméniens prononcé dans la Cathédrale à l'occasion de la fête de la Sainte Nativité: "À la rencontre du miracle d'Epiphanie", 6 janvier 2000 (pp. 9-13)
5. Echange de télégrammes et de lettres de félicitations entre Sa Sainteté Garéguine II et les chefs des Eglises soeurs, les trois Sièges hiérarchiques de l'Eglise apostolique arménienne et les hautes personnalités d'État à l'occasion du Nouvel An et de la fête de la Sainte Nativité (pp. 14-16)
6. Catholicos de tous les Arméniens a reçu les jeunes musiciens de l'organisation de bienfaisance "Nouveaux noms en Arménie", 3 janvier 2000 (p. 17)
7. L'ambassadeur d'Inde en Arménie Bal Anand a visité le St-Siège pour souhaiter une bonne année à Sa Sainteté Garéguine II Catholicos de tous les Arméniens. 4 janvier 2000 (p. 18)
8. La fête de Nativité au Saint-Siège. 5-6 janvier 2000 (pp. 19-20)
9. L'ambassadeur des Etats Unis d'Amérique en Arménie Michael Lemon a visité à St-Siège pour faire ses compliments à Sa Sainteté Garéguine II Catholicos de tous les Arméniens à l'occasion de la fête de la Sainte Nativité, 13 janvier 2000 (p. 21)
10. Communiqué du centre de presse du St-Siège d'Echmiadzine sur la visite de Sa Sainteté Garéguine II Catholicos de tous les Arméniens en Jordanie et à la Terre du Seigneur (Sainte Terre), à 21.13 heures, le 14 janvier 2000 (p. 22)

11. Garéguine II Catholicos de tous les Arméniens: "Nous sommes retournés au Saint Siège après avoir renouvelé Notre Vœu". Catholicos de tous les Arméniens est rentré au Saint Siège, 25 janvier 2000 (p:23-24)
12. Visite de SS. Garéguine II, Catholicos de tous les Arméniens du Conseil d'État des affaires religieuses de la République d'Arménie, 29 janvier 2000 (p. 25)
13. SS. Garéguine II, Catholicos de tous les Arméniens à reçu la délégation du congrès des autorités locales et territoriales de l'assemblée européenne, 29 janvier 2000 (p. 26)
14. Message de SS. Garéguine II, Catholicos de tous les Arméniens prononcé dans la Cathédrale avant son départ à Jérusalem, 14 janvier 2000 (pp. 27-28)
15. Pèlerinage de SS. Garéguine II Catholicos de tous les Arméniens à la Terre Sainte (Jordanie et Jérusalem). 14-25 janvier 2000 (pp. 29-72)
16. Message de SS. Garéguine II, Catholicos de tous les Arméniens prononcé dans la Cathédrale à l'occasion de son retour de Jérusalem, 30 janvier 2000 (pp. 73-75)
17. Festivités du jour de l'An au Saint-Siège d'Echmiadzine, 31 décembre 1999 (pp. 76-82)

AU ST-SIEGE

18. Informations ecclésiastiques. Description des diffárentes messes, homélies, célébrations et cérémonies qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine et au Saint-Siège au mois de janvier (pp. 83-86)
19. **Hrant Kostanian** - Présentation des thèses de fin d'études au collège Guévorguian, 31 janvier 2000 (pp. 87-90)

VIE RELIGIEUSE

20. Sermon de l'archevêque Nerses Bozabalyan prononcé dans la Cathédrale de Saint Echmiadzine pendant le messe de la veille de Noël, 5 janvier 2000 (pp. 91-93)

VIE ŒCUMENIQUE

21. Communiqué (Cérémonie d'ouverture des Portes de la Cathédrale de Saint Paul à Rome sous la direction du Pape Jean-Paul II, 18 janvier de l'an courant) (pp. 94-95)

ETUDES ARMENOLOGIQUES

22. **Archevêque Shahé Ajémian** - " Cahier de prières" de Siméon Erevanzi (étude, texte original) (pp. 96-105)
23. **Poghos Lévon Zékiyan** - Controverses religieuses du 14e siècle. Les prémices de la division antérieure de l'Eglise Arménienne et du statut ecclésiastique (étude) (p. 106-125)
24. **Khatchik Samvelian** - Publication de la sainte Bible par Voskan Erevanzi (étude) (pp. 126-138)
25. **Hovhannes Darbinian** - Autour d'une critique de l'Archimandrite Komitas (sur une lettre de l'Archimandrite Komitas) (pp. 139-141)
26. **Astghik Guévorkian** - Les miniaturistes de Vajoz Zor (14-15e siècles, étude) (pp. 142-155)
27. **Ara Hakobian** - Vardan Makhokhian: Années d'adolescence et d'études (étude) (pp. 156-166)
28. **Archevêque Avag Asaturian** - Le livre " Critère de l'activité" de Apu Hamit Al-Kasari (étude) (pp. 167-170)
29. **Guévorg Vrtanésian** - Le dernier des Mohicans (consacré au 100e anniversaire du musicien, compositeur, chef d'orchestre et pédagogue Achot Patmagryan) (pp. 171-179)

NECROLOGIE

30. **Archevêque Vardan Témirjian** - Archévêque Artak Manukian (1931-1999) (pp. 180-191)
31. **Archevêque Vardan Témirjian** - Mademoiselle Leila Garakiozian (1902-1999) (pp. 192-195)
32. **Archimandrite Komitas Hovnanian** - Décès du père Nshan Gouiumjian (1930-2000) (pp. 196-197)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փարեմուտի պատգամը հայ ժողովրդին՝ հեռարձակված Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսությամբ 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում Նոր տարվա առիթով. կնոգիշերից հետո 6
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Աթոռի սեղանատան 8
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Սուրբ Ծննդյան քարոզը Մայր Տաճարում 9
Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և քրիստոնյա Եկեղեցիների պետերի. Հայ Եկեղեցու Եվրասիական Աթոռների. պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներ. բացիկներ ու հեռագրեր 14
«Հայաստանի նոր անուններ» բարեգործական կազմակերպության պատանի նրաժիշտները Վեհափառին հյուր 17
Հնդկաստանի դեսպանն այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին 18
Ս. Ծննդյան տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 19
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Մայքլ Լեմոնին 21
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կմեկնի Հորդանան 22
Գարեգին Բ Կաթողիկոս. «Մեր ուխտը նորոգած վերադարձել ենք Մայր Աթոռ՝ Մեր ծառայությունը բերելու երկրին և ժողովրդին» . . . 23
Գարեգին Բ Կաթողիկոսն այցելեց Կրոնի գործերի պետական խորհուրդ 25
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի պատվիրակությանը 26

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում, Երուսաղեմ մեկնելուց առաջ 27
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուխտագնացությունը Տերունական Սրբավայրեր 29
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում, Երուսաղեմից վերադարձի առիթով . . 73
Տարեմուտի հանդիսություն Մայր Աթոռում 76

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական լուրեր 83
Հրանտ Կոստանյան - Ավարտաճառների պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում 87

ԵՐՈՆԱԿԱՆ

Ներսես սրբազան եպիսկոպոս Պողոսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ճրագալույցի Պատարագին 91

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Հաղորդագրություն 94

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

Շահէ արքեպիսկոպոս Աճէմեան - Սիմէոն Երևանցի Կաթողիկոսի «Տեղրակ աղօթից» 96
Պողոս Լեոն Զերիյան - 14-րդ դարի կրոնական վեճերը: Նախաքայլեր Հայոց Եկեղեցու հնագույն բաժանումների և եկեղեցաբանական կարգավիճակի 106
Խաչիկ Սամվելյան - Ամփոփաշնչի հրատարակության իրականացումը Ոսկան Երևանցու կողմից 126
Հովհաննես Դարբինյան - Կոմիտաս վարդապետի մի քնարական շուրջ 139
Ասպոլիկ Գևորգյան - Վայոց ձորի մասրանկարիչները (14-15-րդ դդ.) 142

Արա Հակոբյան - Վարդան Մախոխյան. պատանեկության և ուսումնառության տարիներ 156
Սաաղ արքեպս. Ասպտուրեան - Ապու Համրտ Ալ-Ղազալի եւ «Գործունէութեան չափանիշը» գիրքը 167
Գևորգ Վրթանեսյան - Վերջին մոհիկանը 171

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Վարդան արքեպս. Տէմիրճեան - Տ. Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան 180
Վարդան արքեպս. Տէմիրճեան - Օր. Էյլա Գարակէոզեան 192
Կոմիտաս վարդապետ Հովնանյան - Մահ Տ. Նշան ավագ քահանա Գոյումճյանի 196
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосат . . 198
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 201
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine 204

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԳԱՍԻՉ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ